Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋՈՒՄ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

В. Р. ГРИГОРЯН

# ЕРЕВАНСКОЕ ХАНСТВО В КОНЦЕ XVIII СТОЛЕТИЯ

(1780—1800)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1958

9(47.925)
Գ-89

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 18-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋՈՒՄ

(1780—1800)

2195

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1958

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

17683

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Արևելյան Հայաստանի կենտրոնական մասը կազմող Երևանի խանության 18-րդ դարի վերջին երկու տասնամյակների պատմությունը իրենից ներկայացնում է որոշակի հետաքրքրություն և կարոտ է բազմակողմանի ու մանրազնին ուսումնասիրության:

Սույն աշխատության նպատակն է՝ հենվելով բազմաթիվ հայտնի ու անհայտ արխիվային նյութերի վրա, ինչպես նաև օգտագործելով եղած ուսումնասիրությունները, շարադրել այդ պատմությունը՝ նախապես տալով երկրի վարչական և բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի ընդհանուր ուրվագիծը:

Ուսումնասիրության սահմանափակումը 1780—1800 թվականներով նպատակահարմար ենք գտնում այն պատճառով, որ այդ երկու թվականներն էլ Երևանի խանության համար պատմական կարևոր նշանակություն ունեցող նոր իրադրության և քաղաքական նոր պայմանների սկզբնավորման տարեթվեր են հանդիսացել: Հայտնի է, որ 18-րդ դարի 80-ական թվականների սկզբին Ռուսական կայսրությունը ակտիվացրել էր իր քաղաքականությունը Անդրկովկասում նպատակ ունենալով գրավել նրա արևելյան մասը և ստեղծել իր հովանավորության ներքո կախյալ պետություններ: Այդ պատրաստությունները, ինչպես և վրացական Հերակլ Բ թագավորի հետ Երևանի խանի հաշտությունն ու 1783 թ. Գեորգիևսկի դաշնագիրը, չէին կարող նոր իրադրություն չստեղծել Արարատյան երկրի համար: Ճիշտ այդպես էլ քաղաքական մթնոլորտում չէին կարող լուրջ տեղաշարժեր չկատարել նաև 20 տարի հետո տեղի ունեցող դեպքերը՝ 1800 թ. կեսերին

պարսից գահաժառանգ Աբբաս Միրզայի կողմից Երևանի կրկին հնազանդեցումը կենտրոնական իշխանությանը և Ալեքսանդր Ա կայսեր 1801 թ. սեպտեմբերի 12-ի մանիֆեստը, որով Արևելյան Վրաստանը միացվեց Ռուսաստանին և սկիզբ դրվեց ռուսական տիրապետությանը Անդրկովկասում:

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Երևանի խանության 18-րդ դարի երկրորդ կեսի, հատկապես նրա վերջին քառորդի պատմությանը նվիրված հատուկ ուսումնասիրություն չկա, բայց այդ ժամանակ տեղի ունեցած մի շարք իրադարձություններ զանազան առումներով քննության են առնվել մի քանի պատմաբանների ու բանասերների ուսումնասիրություններում:

Ռևոլյուցիայից առաջ հրապարակված հայոց պատմությանը կամ հայ եկեղեցուն նվիրված աշխատություններում այդ ժամանակաշրջանի պատմությունը մեծ մասամբ բացակայում է, կամ էլ հիշատակվում մեկ կամ մի քանի նախադասությամբ: Բացառություն է կազմում միայն Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում»-ը, որտեղ հեղինակը, օգտագործելով Գյուտ Աղանյանցի հրատարակած «Դիվան հայոց պատմության» ժողովածուների նյութերը, հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում 18-րդ դարի վերջում Երևանի խանության մեջ տեղի ունեցած մի քանի իրադարձությունների մասին[1]: Բայց այդ ամենը նրա մոտ ֆոն է ծառայում եկեղեցու պատմության համար, էլ չենք խոսում երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունների նկարագրման, ազատագրական պայքարի և նման այլ խնդիրների մասին, որոնք հեղինակի տեսադաշտից ընդհանրապես դուրս են մնում:

18-րդ դարի վերջին տասնամյակների հայ-ռուսական հարաբերությունների, Անդրկովկասում Ռուսաստանի քաղաքականության և մի քանի այլ հարցերի մասին ուշագրավ տե-

[1] Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս, 1914:

դոկումենտներ կան նախասովետական շրջանի ռուս պատմաբաններ Պ. Բուտկովի և Ն. Դուբրովինի ուսումնասիրություններում¹: Առաջինի մոտ դրանք քիչ են, անկապ ու թվագրական սխալներով լի, իսկ Դուբրովինի մոտ հակառակն է նկատվում. վերջինս օգտագործել է արխիվային բազմաթիվ նյութեր և մի շարք դեպքերի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդել: Այնուհանդերձ, Դուբրովինի աշխատության մեջ այդ ամենը բավարար լուսաբանում չեն գտել, որովհետև հեղինակը, անտեղյակ լինելով ռուսական արխիվներում եղած հայերեն փաստաթղթերին, չի օգտագործել նաև ռուսերեն լեզվով եղածները: Նա անծանոթ է նաև տեղական նյութերին:

Մեր քննարկած ժամանակաշրջանի հայ-ռուսական հարաբերությունների մասին հետաքրքրական ուսումնասիրություն է կատարել Գ. Եզյանը: Նրա մոտ ուշագրավ տեղեկություններ կան հայոց կաթողիկոսի և ռուսական կառավարության փոխհարաբերությունների մասին²:

Արևելյան Հայաստանի նշված ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության ուղղությամբ վերջին տասնամյակներում լուրջ աշխատանքներ են տարվել: Քննության են առնվել նաև Երևանի խանության պատմության մի շարք հարցեր: Այս տեսակետից մեծ արժանիքներ ունի բազմավաստակ հայագետ պրոֆ. Լեոյի աշխատությունը³: Լեոյի ուշադրությունից չեն վրիպել շատ և շատ խնդիրներ (հայ-ռուսական հարաբերությունները, Ումմա խանի և Աղա Մահմեդ շահի արշավանքները և այլն): Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Երևանի խանության վարչական ու տնտեսական կյանքի վերաբերյալ նրա տվյալները: Բայց Լեոն չէր կարող հարկ եղած չափով խորանալ վերը նշված

¹ *П. Г. Бутков*, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год, ч. II, СПБ, 1869. Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. II, СПБ, 1886, т. III, СПБ, 1886.

² *Г. А. Эзов*, Начало сношений Эчмиадзинского патриаршего престола с русским правительством, Тифлис, 1901.

³ Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1946:



հարցերի մեջ, որովհետև նա բնավ չի աշխատել ռուսական արխիվներում, քիչ է օգտվել նաև հայկական արխիվային նյութերից:

Մի ուրիշ հեղինակ՝ Ե. Շահազիզը գրել է Երևանի պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից, բայց այնտեղ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանը ամբողջովին բաց է թողնված¹:

18-րդ դարի 80-ական թթ. հայ ազատագրական շարժման և հայ-ռուսական հարաբերությունների մասին արժեքավոր ուսումնասիրություն է կատարել Ա. Ռ. Հովհաննիսյանը²: Նա իր աշխատության մեջ հետաքրքրական տեղեկություններ է բերել Երևանի խանության վիճակի, խանի և Էջմիածնի կաթողիկոսի ռուսների հետ ունեցած կապերի, Երևանի հայության ազատագրական շարժումների ու շատ այլ հարցերի մասին: Հեղինակը օգտագործել է արխիվային բազմաթիվ նյութեր, որոնցից կարևորագույնները հրատարակված են աշխատության հավելվածում: Նա մեծ ուշադրություն է նվիրել նաև Մատենադարանի նյութերին և հատկապես Ղ. Կարնեցու և Հ. Արղությանի անտիպ կոնդակներին: Բայց քանի որ աշխատությունը նվիրված է հայ ազատագրական շարժմանն ու հայ-ռուսական հարաբերություններին, հեղինակը չէր կարող ծանրանալ Արարատյան երկրում տեղի ունեցած մյուս բոլոր իրադարձությունների վրա, առավել ևս չէր կարող քննել հետագա անցքերը, որովհետև գիրքը նվիրված է միայն 80-ական թվականների պատմությանը:

Այս նույն ժամանակաշրջանի հայ-ռուսական քաղաքական փոխհարաբերությունների պատմության համար արժեքավոր է նաև Մ. Գ. Ներսիսյանի ուսումնասիրությունը³, որն ընդարձակությունն է հեղինակի ավելի վաղ հրա-

¹ Ե. Շահազիզ. Հին Երևանը, Երևան, 1934:

² *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947.

³ *М. Нерсисян*, А. В. Суворов и русско-армянские отношения в 1770—1790 гг. Из истории русско-армянских отношений, кн. I, Ереван, 1956, стр. 9—116.

պարակած մի գործի[1]։ Առանձին հետաքրքրություն են ներկայացնում աշխատության հետ լույս ընծայված արխիվային փաստաթղթերը։

Արևելյան Հայաստանի, հետևապես և Երևանի խանության նշված ժամանակաշրջանի պատմությունը ընդհանուր, խիստ համառոտ, բայց և ճշմարտացի կերպով լուսաբանված է վերջերս հրատարակված հայ ժողովրդի պատմության դասագրքի և ՍՍՌՄ Պատմության ուրվագծերի մեջ[2]։

Համեմատաբար ավելի շատ աշխատանք է կատարված տնտեսական կյանքի և եկեղեցական հողատիրության ուսումնասիրության ուղղությամբ[3]։ 18-րդ դարի վերջում Էջմիածնի վանքի մեջ կատարված վերանորոգումների մասին արժեքավոր հետազոտություն է արել Գարեգին Հովսեփյանը[4]։

Անցնելով սկզբնաղբյուրներին, նախապես անհրաժեշտ ենք գտնում նշել, որ Երևանի խանության 18-րդ դարի վերջին տասնամյակների պատմության վերաբերյալ բազմաթիվ ու բազմազան նյութերի մեջ, որ կան Մատենադարանում, Մոսկվայի արխիվներում և ժամանակակից մի քանի հեղինակների գործերում, կարևոր տեղ են գրավում և անփոխա-

[1] Մ. Ներսիսյան, Ա. Վ. Սուվորովը և ռուս-հայկական հարաբերությունները 1770—1790 թթ., ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1943, № 2, էջ 27—47։

[2] Հայ ժողովրդի պատմություն, Ա մաս, Երևան, 1956, Очерки истории СССР (XVIII в., вторая половина), М., 1956.

[3] *С. А. Егиазаров*, Исследование по истории учреждений в Закавказье, ч. 1, Сельская община, Казань, 1889, Б. М. Арутюнян, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ереван, 1940, Ն. Գողոսյան, *Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանության մեջ 17—18-րդ դարերում և Էջմիածինը որպես խոշոր կալվածատեր (Պետ. համալսարանի գիտ. աշխատություններ,* հ. XIII, *Երևան, 1940),* *И. П. Петрушевский*, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Ленинград, 1948.

[4] Գարեգին Ա. կաթողիկոս, *Էջմիածնի նկարազարդումն ու ծաղկազարդումը ԺԷ—ԺԸ դարերում (Նիւթեր և ուսումնասիրութիւններ հայ արուեստի և մշակոյթի պատմութեան, պրակ Ե, Անթիլիաս-Լիբանան, 1951)։*



րինելի են Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի գրագրությունները, ուստի և նրանց նկարագրմանն ու քննությանը հատկացվելու է ավելի շատ տեղ։

Ղ. Կարնեցին ծնվել է 1723 կամ 1724 թ. Կարինի գավառի Կնդի կամ Քղի գյուղում, ուսում է առացել Էջմիածնի վանքում՝ դասեր առնելով Սիմեոն Երևանցուց։ Քահանա է ձեռնադրվել 1751 թ.։ Վարդապետ դառնալուց հետո, որպես նվիրակ շրջագայել է Ղրիմում և Թրակիայում։ 1763 թ. Ս. Երևանցու կողմից օծվել է եպիսկոպոս և հաջորդ թվականին առաջնորդի պաշտոնով ուղարկվել Զմյուռնիա, ուր մնացել է մինչև 1775 թ. վերջերը։ Ավելի ուշ նա ետ է կանչվել և դարձել կաթողիկոսի խորհրդականը։ Սիմեոն Երևանցու մահից հետո՝ 1780 թ. օգոստոսի 2-ին նա օծվում է կաթողիկոս[1]։

Ղուկաս Կարնեցին պաշտոնավարել է 19 և կես տարի՝ 1780 թ. օգոստոսից մինչև 1799 թ. դեկտեմբերը և այդ ժամանակամիջոցում իր կոնդակների և գրությունների մեջ, օր օրի վրա, մանրամասն կամ համառոտ կերպով նկարագրել է Հայաստանում և հարևան երկրներում տեղի ունեցած անցքերը։ Հետևելով իր նախորդի՝ Սիմեոն Երևանցու օրինակին, նա պահպանել է իր նամակների սևագրությունները և միաժամանակ հատուկ մատյաններում գրի առնել տվել նրանց բովանդակությունը։

Կաթողիկոսը շատ ժամանակ էր հատկացնում գրագրությունների գործին։ Նա այդ մասին երբեմն հիշատակություն է արել։ Օրինակ, իր մահից մի քանի ամիս առաջ՝ 1799 թ. սեպտեմբերի 17-ին գրել է. «...բայց ի բազմանէ գարնանն մինչև ցայժմ չեղև մեզ հանգիստ. ի մի կողմանէ զբաղմունք գրելեաց, և ի միւս կողմանէ ես վրդովմունքս»[2]։

Ղ. Կարնեցին նամակագրության մեջ էր հազարավոր մարդկանց հետ։ Նա նամակներ էր ստանում Թուրքիայում, Վրաս-

[1] Գ. Աղանեանց, Դիւան հայոց պատմութեան (այսուհետև՝ Դիւան), հ. Դ, էջ ԻԵ—Կ։ Նաև Մ. Օրմանեան, Ազգապատում, մասն Բ, էջ 3139—3141։

[2] Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Ձեռագրատուն (Մատենադարան), ձեռ. № 2922, էջ 62ա։

տանում, Պարսկաստանում, Ռուսաստանում, Ռումինիայում, Իտալիայում, Հոլանդիայում, Լեհաստանում, Ավստրիայում, Հնդկաստանում, Չինաստանում և այլ վայրերում բնակվող հայերից և բոլորին պատասխանում էր: Բացի դրանից, կաթողիկոսը նամակագրական կապերի մեջ էր նաև հեռու և մոտ երկրների շատ բարձրաստիճան անձանց՝ թագավորների, սուլթանների, շահերի, փաշաների ու խաների հետ: Նա առանձնապես շատ նամակներ էր ստանում Էջմիածնի նվիրակներից և հայ եկեղեցական գործիչներից:

Կաթողիկոսի գրությունները տարբեր բովանդակություն ունեն և բատ այդմ էլ կոչվում են, օրինակ, թուղթ ժողովարարական, կոնդակ գանձանակի, թուղթ շնորհավորական, թուղթ խաթրահարցական, կոնդակ նվիրակական, թուղթ օրհնության, կոնդակ մեռոնի, թուղթ մխիթարական, կոնդակ օրհնության և ծանուցական, կոնդակ բանադրական, կոնդակ առհասարակ: Ուղարկվում էին նաև բազմաթիվ զատկագրեր կամ ղավզագրեր (ստացագրեր), փուսուլաներ (երկտողներ), փոլիցագրեր (հանձնարարագրեր) և թամասուկներ (մուրհակներ):

Հասարակ մարդկանց ուղղված գրությունները, որ սովորաբար լինում էին օրհնագրեր, շնորհավորական կամ մխիթարական նամակներ, կազմվում էին այն ժամանակ ընդունված շաբլոնով և քիչ բան են տալիս ուսումնասիրության համար, իսկ նվիրակներին, առաջնորդներին կամ իշխանավոր անձանց ուղղված նամակների մեջ մեծ տեղ էր հատկացվում տեղական դեպքերի նկարագրմանը: Լինում էին ամիսներ, երբ Էջմիածնից ուղարկվող նամակների թիվը անցնում էր հարյուրից: Օրինակ, 1780 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 26-ը Էջմիածնից ուղարկվել է 141 նամակ[1], 1782 թ. հունիս ամսին՝ 142 նամակ[2]: Բնականաբար, այս ամբողջը չէր կարող անել նաև այլ գործերով ծանրաբեռնված կաթողիկոսը, ուստի նա պահում էր քարտուղարներ:

Չնայած Ղ. Կարնեցու նամակները մեծ նշանակու-

[1] Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 7բ—22ա:

[2] Նույն տեղում, էջ 151ա—163բ:



թյուն ունեն հայ ժողովրդի 18-րդ դարի վերջին տասնամյակների պատմության ուսումնասիրման համար, բայց նրանք երկար ժամանակ անուշադրության էին մատնված[1]: Ղուկասի մահից մեկ դար հետո միայն սկիզբ դրվեց այդ նամակների հրատարակության գործին: 1899 թ. լույս ընծայվեց «Դիւան հայոց պատմութեան» Դ հատորը, որը նվիրված էր Ղուկաս կաթողիկոսի գրագրություններին: Հարկ է նշել, որ «Դիւան»-ների հրատարակիչ Գյուտ քահանա Աղանյանցը մեծ գրկանքներով, տառապանքներով ու բազում դժվարություններով գլուխ բերելով այս, ինչպես և «Դիւան»-ի մյուս գրքերի հրատարակությունը, մեծ գործ է կատարել հայագիտության համար: Նա սեղանի վրա է դրել 13 մեծահատոր գրքեր՝ արխիվային փաստաթղթերով լի, որոնք նոր լույս են սփռել հայ ժողովրդի 18-րդ դարի երկրորդ կեսի և 19-րդ դարի սկզբների պատմության վրա:

Գ. Աղանյանցը Ղուկասի կոնդակները հրատարակելիս ձեռքի տակ է ունեցել կոնդակների սևագիր և մաքրագիր օրինակներ: Սևագրությունները ամփոփված են եղել մի մատյանի և վեց տետրերի մեջ, որոնք այժմ մի ընդհանուր կազմի տակ պահվում են Մատենադարանում:

Աղանյանցի հրատարակած նամակները Ղուկասի գրագրությունների մի փոքրիկ մասն են կազմում, շատ տարի-

[1] Հետաքրքրական է, որ ինքը՝ Ղ. Կարնեցին նպատակ է ունեցել իր գրառումներից մի քանիսը հրատարակել տալ: Պարզվում է, որ Աղա Մահմեդ շահի արշավանքի ժամանակ նա մանրամասն նկարագրում է երկրում ստեղծված դրությունը և այդ շարադրանքը ուղարկում Կ. Պոլիս հրատարակելու: Բայց այնտեղի Զաքարիա պատրիարքը խորհուրդ է տալիս այդ չանել: Վարդան Օձնեցու մոտ կարդում ենք. «...ապա մի ըստ միոջէ պատմարանօրէն գրեալ կաթողիկոսն զայսոսիկ ամենայն ծանուցանէ Զաքարիայ պատրիարգին հայոց ի Կոստանդնուպօլիս. պատուիրեալ նմա, զի հրատարակեսցէ զայնոսիկ ի լսելիս հասարակութեան, բայց ոչ հաւանեալ պատրիարգին զհրատարակելն, գրէ կաթողիկոսին, թէ չէ բարի գիրդ հրատարակել. մի գուցէ, ասէ, լուիցէ ուղղանողն ձեր, վերստին յարձակի ի վերայ ձեր և լինի յետինն չարը» (Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 85ա):

Ղ. Կարնեցին ընդունում է այս խորհուրդը և չի հրատարակում:

ների կոնդակներ այնտեղ բացակայում են, կամ էլ ներկայացված են մի քանի նամակով միայն:

Բացի այդ, Գ. Աղանյանցը հնարավորություն չունենալով իր ձեռքի տակ եղած բոլոր կոնդակները տպագրել, նրանց մեծ մասը, ավելի պակաս կարևորություն ունեցողները, դուրս է թողել. «...բայց որպէս զի,—բացատրում է նա,—անհետ չկորչին և դոքա, գրքիս մէջ իւրեանց տեղերում զետեղեցինք այդ բոլորի վերնագիրները ամբողջութեամբ»[1]:

Համեմատությունը ցույց տվեց, որ Գ. Աղանյանցը, իսկապես, չափազանց բարեխիղճ և ուշադիր ընտրություն է կատարել: Տպագրված են առավել ուշագրավ, իրենցից առանձին հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթերը (170 հատ), իսկ նամակների վերնագրերը (450 հատ) կարող են միայն որոշ պատկերացում տալ զանազան նվազ կարևոր հարցերի մասին:

Հետագայում Գ. Աղանյանցը ձեռք է բերում Ղուկասի շատ այլ նամակներ և ցանկանում է առանձին հատորներով տպագրել, բայց այդ նրան չի հաջողվում: Այնուամենայնիվ, նա «Դիւանի» Թ հատորում, Հ. Արղության նամակների հետ, տպագրում է Ղուկասի 25 նամակներ ևս[2]:

Ղ. Կարնեցու նամակներից հրատարակված են նաև հանգուցյալ դոկտոր Ս. Վ. Տեր-Ավետիսյանի «Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար» ուսումնասիրության մեջ[3]: Հեղինակը հրատարակել է Ղուկասի 14 նամակ և տեղեկություններ հաղորդել նրա արխիվի մասին: Բայց այդ նամակների հրատարակությունը Ս. Վ. Տեր-Ավետիսյանը կատարել է շատ անփույթ կերպով: Նա համարյա բոլոր նամակները տպագրել է կրճատումներով և շատ տեղերում բաց է թողել նամակներում մասամբ ջնջված, բայց ընթեռնելի տեղերը:

[1] Դիւան, հ. Դ, էջ ԺԷ:

[2] Դիւան, հ. Թ, էջ 69—78, 82—96, 109—116, 121—127, 133—148, 155—164, 218—232, 248—251, 255—270:

[3] Երև. համալսարանի գիտ. աշխատություններ, հ. XIII, Երևան, 1940, էջ 47—81:



Ղ. Կարնեցու նամակներից երեքը հրատարակված են Ա. Ռ. Հովհաննիսյանի գրքում[1]: Այդ նամակները ուղղված են գեներալ Գ. Պոտյոմկինին և մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները ուսումնասիրելու համար:

Այսպիսով, Ղ. Կարնեցու նամակներից հրատարակված են միայն 212-ը, իսկ մնացածները (մոտ 2200 նամակ և 3500 նամակի հակիրճ կամ ընդարձակ կազմված բովանդակություն) ձեռագիր վիճակում գլխավորապես կենտրոնացված են Մատենադարանում: Այդ նամակները պարունակող մատյաններն ու թղթապանակները Մատենադարանում պահվում են հետևյալ համարների տակ՝ 2803, 2922, 3738, 4449, 4481, 4482, 4483, 4501:

№ 2803 ձեռագրի մեջ, մի ընդհանուր կազմի տակ հավաքված է Ղուկասի 1782 թ. հունիսի 1-ից մինչև 1785 թ. օգոստոսը գրած 351 նամակի սևագրություն: Ձեռագիրն սկսվում է 1 էջից և վերջանում 818-ով, նյութը թուղթ է, կաշեկազմ, գրությունը միասյուն է, նոտրգիր է, չափսն է 23,5×16,5:

4501 համարի տակ, մի թղթապանակի մեջ հավաքված են յուրաքանչյուրը հարյուր էջից բաղկացած տաս մատյաններ, որոնք պարունակում են 706 նամակ (1785—1800): Նյութը թուղթ է, գրությունը՝ միասյուն, նոտրգիր է, չափսն է 33,5×23: Սկսվում է 915 էջից և վերջանում 2482-ով, մեջտեղից բացակայում են 1594-ից մինչև 1799 և 1898-ից մինչև 2287 էջերը, ընդամենը երեք մատյան: Գրիչը նույնն է, որ գրել է նախորդ ձեռագրի նամակները: № 4501 ձեռագրի նամակները կազմում են նախորդի շարունակությունը, բայց սրանց արանքում եղել է նաև մի ուրիշ մատյան (էջ 818-ից մինչև 915-ը), որը մեզ չի հասել:

№ 4501 ձեռագրի մատյաններից մեկը (էջ 1695—1798), որ պարունակում է 76 նամակ (1791—1793) պահվում է առանձին (տե՛ս ձեռագիր № 4483): № 4501-ի շարունա-

[1] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение.... стр. 231, 234, 253.

կությունն է կազմում մի այլ մատյան, որը Մատենադարանում պահվում է 2922 համարի տակ, այն վերնագրված է՝ «Օրինակք կոնդակաց և գրութեանց Դանիել կաթողիկոսի, միաբանեայց Էջմիածնի, Եփրեմ կաթողիկոսի և Ներսէս արքեպիսկոպոսի հայոց»։ Իսկապես, այնտեղ զետեղված են վերը նշված անձանց նամակները, բայց ձեռագրի հակառակ կողմից, շրջված ձևով, կարված է նաև մի այլ մատյան, ուր Ղ. Կարնեցու և նրա մահից հետո Էջմիածնի միաբանների գրած նամակներն են։

Մատյանը նախկին էջակալմամբ սկսվում է 2472 էջից և վերջանում 2573-ով։ Պարունակում է Ղ. Կարնեցու 37 և միաբանների ինը նամակի սևագրություն, որոնցից առաջինը թվագրված է՝ մայիս 1797 թ., վերջինը՝ հունվար 1801 թ.։

Ինչպես երևում է, №№ 4501, 4483 և 2922 ձեռագրերի մեջ պահվում են Ղուկաս կաթողիկոսի 1785 թ. մայիսից մինչև նրա մահը (1800 թ. դեկտեմբեր) գրած 815 նամակի սևագրություն և նրա մահից հետո Էջմիածնի միաբանների գրած 15 նամակ։ Այստեղ բացակայում են 1794—1795, 1796 թթ. գրված նամակները, որոնք հավանորեն եղել են բացակայող մատյանների մեջ։

Նամակների թվագրությունների մեջ մեծ խառնաշփոթություն է նկատվում։ Այսպես, Ա մատյանում զետեղված են 1785 թ. մայիսից մինչև 1787 թ. մայիսը գրված նամակների սևագրությունները, իսկ Բ մատյանում՝ 1785 թ. փետրվարից մինչև 1787 թ. ապրիլը։ Մի՞թե այս մատյանները զուգահեռ են օգտագործվել։ Դա բացառված չէ։ Բացի այդ, կոնդակների սևագրությունների վերջում գրված է ոչ թե նամակի սևագրման, այլ մաքրագրման և առաքման թվականը, մի բան, որը արվում էր սևագրելուց անմիջապես հետո և կամ շատ ուշ, դա կախված էր նամակը ուղարկելու ժամանակից։

№ 4482 ձեռագիրը բաղկացած է ինը մատյաններից, որոնք կազմված են միասին։ Հին էջակալման համարներն են 1-ից մինչև 1074-ը։ Սրանց մեջ բացակայում են 40-ից մինչև 185, 256-ից մինչև 341, 640-ից մինչև 831 էջերը։



Գրված է նույն ձեռագրով, ինչ № 2803 և № 4501 ձեռագրերը։ Նյութը թուղթ է, գրությունը՝ միասյուն, նոտրգիր է, չափսն է 29×20։ Պարունակում է 1791 թ. մայիսից մինչև 1799 թ. գրված 518 նամակի սևագրություն։

№ 4482 ձեռագրում կան Ղուկաս կաթողիկոսի 1791 թ. մայիսից մինչև 1799 թ. գրած 518 նամակի սևագրություն։

№ 4449 ձեռագիրը լաթակազմ մի նեղ տետր է, չափսն է 21,5×10։ Նյութը թուղթ է, գրությունը՝ միասյուն, հնում էջակալված չի եղել, ընդամենը 42 թերթ է (84 էջ)։ Պարունակում է 72 նամակի սևագրություն, որոնցից առաջինը թվագրված է հունիս 1790 թ., վերջինը՝ 1794 թ.։ Այս մատյանը վերը նշվածների հետ զուգահեռ օգտագործվել է ավելի պակաս կարևորություն ունեցող նամակների համար։

№ 3738 ձեռագրում գտնվում են Ղուկասի 1780—1783, 1791—1799 թթ. գրած 500-ից ավել նամակների սևագրություններ։ Այս ձեռագրից է օգտվել Գ. Աղանյանցը «Դիվանի» Դ հատորը հրատարակության պատրաստելիս։

№ 4481 ձեռագիրը պարունակում է իրար հետ մի ընդհանուր կազմի մեջ կարված 28 մատյան, որոնց մեջ գրի են առնված Ղ. Կարնեցու նամակների բովանդակությունները։ Ձեռագրի սկզբում բովանդակություն հանող գրիչը մի քանի բառով նկարագրել է Ղուկասի կաթողիկոս ընտրվելու հանգամանքները, ապա գալիս են բովանդակությունները։

Ձեռագրի 145ա էջում բովանդակություն հանող Գրիգոր սարկավագը հիշատակարանի նշանակության մասին արձանագրել է հետևյալ ուշագրավ տողերը.

«Եւ զի Յիշատակարան է այս, որովհետև յիշեցեալքն յայսմիկ՝ առ յապայն պիտոյացին, յորում ժամանակի լեալ, որոց հարկաւորի իմանալ, որոնեսցեն ի հոյս, թէ արդեօք այսինչ թուղթ ե՞րբ գրեցաւ առ այս ոմն. յի՞նչ միտս. և կամ վասն է՞ր։ Ուրեմն հարկ է մեզ նշանագրել ոչ երկարապէս, այլ կարճ ի կարճոյ. հանդերձ գրեցմամբ պատճառս և զթիւս ամաց և ամսոց առ ի դիւրագիւտ լինիլ յուզողացն։

Մատյանները նախկինում էջակալված չեն եղել, ներկա հաշվով 533 թերթ են (1066 էջ)։ Նրանց մի մասը 32×22



18644
2195
Отделение Общество

չափսի են, մնացածները՝ 30×20։ Գրված են նոտրգրով, միասյուն են, պահպանված են լավ։ Այս մատյաններում կան 1780 թ. օգոստոսից մինչև 1801 թ. նոյեմբերի 26-ը գրված նամակների բովանդակությունները։ Ս. Վ. Տեր-Ավետիսյանը գրում է, թե «Այս 4481 կոդոցը մի լիակատար ցուցակ է Ղուկաս կաթողիկոսի ժամանակ գրած թղթերի բովանդակության»[1]։ Բայց դա այդպես չէ, որովհետև այնտեղ բացակայում են 1782 թ. հուլիսից մինչև 1786 թ. դեկտեմբեր ամիսը գրված նամակների բովանդակությունները։

№ 4481 ձեռագրի մեջ եղած նամակների բովանդակությունները հանված են տարբեր մարդկանց ձեռքով. 1780 թ. օգոստոսից մինչև 1782 թ. մայիսը այդ գործը կատարել է Անանիա սարկավագը (ձեռագրի նմանությունը մեզ հիմք է տալիս ասելու, որ սա է գրի առել № 2803 և № 4501 ձեռագրերում եղած նամակները)։ 1782 թ. մայիսից գրել է Գրիգոր սարկավագը։ Հաջորդ թվականների մասին տեղեկություններ չկան։ 1785 թ. սկսել է գրել Զաքարիա սարկավագը։ Ձեռագրի մեջ կան Զաքարիայի կազմած բովանդակություններ, որ նա արել է մինչև իր մահը՝ 1794 թ. սեպտեմբերը։ Այնուհետև շարունակել է Գալուստ սարկավագը։ Վերջինիս մահից հետո (1795 թ. դեկտեմբերի 11) այդ գործը մինչև 1798 թ. վերջը կատարել է Հակոբ սարկավագը։ 1801 թ. գրված նամակների բովանդակությունները հանել է Ստեփաննոս սարկավագը։

№ 4481 ձեռագրում կան 3000—3500 նամակների բովանդակություններ, որոնք շատ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում այն ժամանակվա քաղաքական անցուդարձի մասին և լրացնում են արդեն հիշատակված ձեռագրերից պակասող նամակների բացը։

№ 4461 ձեռագրում հավաքված են Ղուկաս Կարնեցու 339 նամակների ցուցակներ։ Սրանք կազմված են չափազանց համառոտ կերպով, չունեն տարեթվեր։

[1] Երևանի Պետ. համալսարանի գիտ. աշխատություններ, հ. XIII էջ 46։



Ղուկաս կաթողիկոսի կոնդակներից ու գրություններից կան նաև Մատենադարանի արխիվային բաժնում[1]։ Նրանց որոշ մասը բնագրեր են, իսկ մեծ մասը հետագայում հանված պատճեններ. օրինակ, կաթողիկոսական դիվանի № 6 թղթապանակի 40-րդ վավերագիրը իրենից ներկայացնում է Ղուկասի 1793 թ. հունիսից մինչև 1796 թ. ապրիլի 8-ը գրած 179 կոնդակի պատճեններ, որոնք արված են 19-րդ դարի վերջում կամ 20-րդ դարի սկզբին։

Ղուկաս կաթողիկոսի 1780 թ. նոյեմբերին գրած մի քանի կոնդակների սևագրություններ պահվում են Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվում[2]։ Այդ նամակները հանված են սևագրությունների մի մատյանից և կրում են նախկին էջակալման համարները (էջ 118, 146, 147)։ Չորս նամակ պահվում է Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի արխիվում՝ Գ. Աղանյանցի ֆոնդի չմշակված մասում։ Նրանցից մեկը թվագրված է 17 մայիսի 1799 թ., մյուսները սևագրության մատյանից են (նոյեմբեր և դեկտ. 1793 թ.)։ Էջակալման համարներն են 1997—1998։ Նույն ֆոնդում են պահվում նաև Ղուկասի նամակներից Գ. Աղանյանցի արած մի քանի հազարի հասնող պատճենահանումները։

Բացի Ղուկաս Կարնեցու նամակներից, այս շրջանի մասին արժեքավոր տեղեկություններ կան Հ. Արղությանի թե՛ տպագրված[3], և թե՛ անտիպ նամակներում, որոնք ևս սևագիր վիճակում գտնվում են Մատենադարանում։

Հ. Արղությանի նամակների սևագրություններից պահվում են մի շարք ձեռագրերի մեջ №, 4496-ում կան 1782 թ. սկզբներից մինչև 1785 թ. վերջը, № 2946-ում՝ 1786 թ. սկզբից

[1] Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 28, թղթ. 6, վավ. 64, 149, 189, 164, թղթ. 243, վավ. 48, 51, 53—54, 57—66, 68—70, 72—73, 75, 77—80, 83—89, 241—242, 244, 275 և այլն։

[2] Центральный Государственный архив АрмССР. Архив католикоса всех армян, ф. 57, дело 2.

[3] Դիվան, հ. Թ։

մինչև 1790 թ. վերջը, № 2951-ում՝ 1792 թ. մինչև 1799 թ. վերջերը գրված նամակները: Սրանց թիվը հասնում է մի քանի հազարի: Նամակների մեծ մասը գրված է Հ. Արղությանի չափազանց դժվար ընթեռնելի ձեռագրով. առանձնապես վատ են ընթերցվում այն նամակները, որոնք նա գրել է հիվանդ ժամանակ՝ պառկած դիրքում:

Ուշագրավ նյութեր կան անհայտ հեղինակի գրած, այսպես կոչված, Ղուկաս կաթողիկոսի գավազանագրքում, որից առանձին մասեր հայտնաբերված և հրատարակված են Գ. Հովսեփյանի կողմից «Արարատ» ամսագրի 1901 թ. համարներում (էջ 183—190 և 326—330), իսկ հետո վերահրատարակվել են Անթիլիասում 1951 թ.: Գավազանագրքի այս մասերում ստուգապատում և լավատեղյակ հեղինակը բազմաթիվ նոր և արժանահավատ մանրամասներ է բերում Ղուկասի կյանքի, Հերակլ Բ-ի դեպի Երևան կատարած արշավանքների և Էջմիածնի վերանորոգման մասին[1]:

Արժեքավոր են նաև Էջմիածնի միաբանների նամակները, որոնցից մի քանիսը հրապարակված են «Դիվանի» մեջ, իսկ մեծ մասը անտիպ է և պահվում է Մատենադարանի ձեռագրային ու արխիվային բաժիններում:

Հետաքրքրական նյութեր կան նաև Էջմիածնի վանքի ելքի ու մուտքի մատյաններում[2]:

18-րդ դարի վերջերի պատմության, հատկապես Երևանի խանության սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրման համար մեծ կարևորություն ունի Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ը[3]:

---

[1] «Պատմութիւն ինչ գլխաւոր բանից հարկաւորաց ի ժամանակս Տեառն Ղուկասու Սրբազան Կաթողիկոսին եղելոց, շինարարութեանց և մեծագործութեանց նորին ի գաւազանագիրքս և ի շարս կաթողիկոսացն գրեալ և նախագիծ օրինակ», տե՛ս Գարեգին Ա. Կաթողիկոս, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ..., պրակ Ե, էջ 48—63:

[2] Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 1, թղթ. 3, վավ. 8, թղթ. 5, վավ. 36, թղթ. 7, վավ. 1:

[3] Ս. Երևանցի, Ջամբռ, գիրք որ կոչի յիշատակարան արձանագրուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և բոլոր շրջակայից վանօրէիցն, Վաղարշապատ, 1873:



Երևանի խանության մեջ 1797 թ. սկզբներին տեղի ունեցած իրադարձությունների և, մասնավորապես, ժանտախտի մասին մանրամասնություններ կան Մանուել Գյումուշխանեցու «Յաղագս մահատարաժամի, որ ի յերկրէն Թիֆլիզոյ և ի Էջմիածին և ի գիւղս Վաղարշապատ և վասն արքայի Վրաց Գէորգի խանին, ի խնդիր սուրբ Գեղարդին և վասն լինելոյն գաշ սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետին և հետևաբար լինելոյ դուռբ Գեղարդն և անդէն մնալոյ երկար ժամանակ յետ մահուան Ղուկասու» աշխատության մեջ[1]: Այդ աշխատությունը ռուսերեն թարգմանությամբ հրատարակված է „Кавказская старина" ամսագրի (Թիֆլիս) 1872 թ. № 2-ում:

Արևելյան Հայաստանի և նրա հարևան երկրների 18-րդ դարի վերջին տասնամյակների պատմության ուսումնասիրման համար մեծ կարևորություն ունի Հարություն Արարատյանի ինքնակենսագրական աշխատությունը[2]: Հ. Արարատյանը բազմաթիվ տեղեկություններ է հաղորդում այն ժամանակաշրջանի քաղաքական և տնտեսական կյանքի վերաբերյալ: Մեծ արժեք են ներկայացնում նրա աշխատության այն մասերը, որոնք նվիրված են Վաղարշապատ գյուղի բնակիչների կյանքի ու կենցաղի, տիրապետող դասակարգի կամայականությունների ու դաժան շահագործման, աշխատավորների դառն վիճակի նկարագրմանը:

Մեր քննարկած ժամանակաշրջանի պատմության համար արժեքավոր աղբյուր է նաև Գ. Խուբովի աշխատությունը, որի մեջ, ճիշտ է, համառոտ և երբեմն էլ ոչ այնքան ստույգ, բայց հետաքրքրական տեղեկություններ կան Երևանի բնակչության վիճակի, Աղա Մահմեդ շահի արշավանքի, Երևանի խանի և ռուսաց հրամանատարության և հայ-ռուսական հարաբերությունների մասին: Հեղինակը ան-

---

[1] Մատենադարան, Արխիվային բաժին, Աղ. Երիցյանի արխիվ, թղթ. 126, վավ. 142:

[2] Жизнь Артемия Араратского, уроженца селения Вагаршапат, близ горы Арарат, СПБ, 1813, т. I—II.

ձամբ որոշ դեր է խաղացել այդ հարաբերությունների մեջ[1]:

Չափազանց ուշագրավ է «Դիւանն»-ի Ա.-Բ հատորում հրատարակված Հովհաննես եպ. Շահխաթունյանցին (ծնվ. 1799) վերագրված պատմական մի երկ[2], որի առաջին մասը՝ «Վախճան Սիմէօնի կաթուղիկոսի և յաջորդութիւն Տեառն Ղուկասու» (էջ 1—42) գրելու համար հեղինակը մեծապես օգտվել է Ղուկասի կոնդակներից և հաճախ, անմիջական փոխառություններով, մեջբերումներ կատարել նրանցից: Հեղինակը, հավանորեն, շատ կոնդակներ չի ունեցել իր ձեռքի տակ, և այս պատճառով մի շարք տարիների ընթացքում (1780—83, 1787—88, 1791—93, 1798—1801) Երևանի խանության մեջ տեղի ունեցած քաղաքական կարևոր իրադարձությունների մասին լռություն է պահպանում, կամ էլ գրում միայն եկեղեցական խնդիրների ու հարևան երկրներում տեղի ունեցած անցքերի մասին:

Չնայած Շահխաթունյանցի կազմած այս ժամանակագրությունը չափազանց համառոտ, մեծ մասամբ անկապ տեղեկություններ է տալիս Արարատյան երկրի պատմության վերաբերյալ, բայց և՛ հեղինակի շնորհակալ աշխատանքը ակնբախ է, նա առաջինն է, որ փորձել է շարադրել այդ ժամանակաշրջանի պատմությունը և դրա համար օգտագործել է Ղ. Կարնեցու գրագրությունները:

Մեր թեմայի համար հետաքրքրություն է ներկայաց-

[1] *Егор Хубов*, Описание достопамятных происшествий в Армении, случившихся в последние тридцать лет, т. е. от патриаршества Симеонова (1779 г.) до 1809 г., СПБ, 1811.

[2] Շահխաթունյանցը իր մի ուրիշ աշխատության մեջ (Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատ. 2, Էջմիածին 1842, էջ 139) տվել է Երևանում իշխած խաների ցուցակը, որտեղ, սակայն, 18-րդ դարի վերջում իշխած խաների թվականները սխալ են: Այսպես, նա Հուսեյն-Ալի խանի իշխանությունը համարում է 1764—1778 թվականը. պետք է լինի 1762—1783, Ղուլամ-Ալի խանի սպանությունը կատարված է համարում 1778 թ., պետք է լինի 1784 թ., Մահմեդ խանի իշխանության անցնելը գրված է 1779 թ., պետք է լինի 1784 թ.:



նում նաև Վարդան Օձնեցու պատմությունը[1], որի մեջ հատկապես ուշագրավ են 1795 թ. արշավանքի ու նրանից հետո երկրում ստեղծված ծանր վիճակի նկարագրությունները:

Հետաքրքրական է նաև «Ցիշատակարան ազգային արդեան պատմութեան համար» պատմական երկը, որ հրատարակված է «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի 1862 թ. ապրիլի համարում (էջ 278—316): Բայց այնտեղ կան շատ սխալներ: Օրինակ՝ Ումմա խանի 1785 թ. արշավանքը նշված է 1782 թ. (էջ 281), Աղա Մահմեդ շահի եղբայր Ալիղուլի խանի արշավանքը՝ 1794 թ. (էջ 284), մինչդեռ դա տեղի է ունեցել մեկ տարի հետո: Քերիմ խանի մահը գրվում է Ղ. Կարնեցու կաթողիկոսության 2-րդ տարում, այսինքն 1781 թ. (էջ 283), պետք է լինի 1779 թ., և այլն:

Ուշագրավ նյութեր են պարունակում նաև ռուսական աղբյուրները: Ռուսաց հրամանատարությունը Անդրկովկասում ուներ բազմաթիվ գործակալներ, որոնք նրան պարբերաբար տեղեկություններ էին հաղորդում անդրկովկասյան երկրներում տեղի ունեցած իրադարձությունների մասին, բնութագրում տեղական իշխողներին: Հետաքրքրական են նաև ռուսական պաշտոնյաների, ինչպես նաև ռուսական հրամանատարության և տեղական իշխողների միջև եղած գրագրությունները: Այդ փաստաթղթերի մի մասը հրատարակված է Կովկասյան Արխեոգրաֆիկ հանձնաժողովի կողմից[2], մի շարք հետաքրքրական փաստաթղթեր զետեղված են Ա. Ռ. Հովհաննիսյանի գրքի հավելվածում: Բայց շատ փաստաթղթեր հրապարակված չեն և պահվում են ՍՍՌՄ Ռազմա-պատմական և Հնագույն ակտերի կենտրոնական արխիվներում: Այս տեսակետից մեծ կարևորություն ունեն Ռազմա-պատմական արխիվի Գ. Պոտյոմկինի ֆոնդը[3],

[1] Մատենադարան, ձեռ. № 4331: Սրա մասին տես Մ. Ներսիսյան, «Վարդան Օձնեցու ձեռագիր աշխատությունները» Հայկական ՍՍՌ ԳԱ Հասարակական բաժանմունքի «Տեղեկագիր», 1945, № 6:

[2] Акты, собранные Кавказской Археографической Комиссией (АКАК), т. I, 1866.

[3] Центральный Государственный Военно-Исторический архив СССР (ЦГВИА), фонд № 52 (ф. Потемкина).

Հնագույն ակտերի պետական կենտրոնական արխիվի «Պետական արխիվ» կոչված ֆոնդը[1]:

Մեր քննարկած թեմայի համար առանձնահատուկ նշանակություն ունեն երկար ժամանակ Վրաստանում ռուսական զորքերի հրամանատար եղած գեներալ Բուռնաշևի գրքերը, որոնց մեջ ուշագրավ տեղեկություններ կան Երևանի խանության ու նրա հարևանների քաղաքական-տնտեսական ու ռազմական վիճակի մասին[2]:

Քիչ ուշ շրջանի ռուսական աղբյուրները նույնպես արժեքավոր տեղեկություններ են պարունակում Երևանի խանության մասին: Դրանցից պետք է նշել Շոպենի շատ հայտնի ուսումնասիրությունը[3] և Ն. Նեֆեդևի ճամփորդական նոթերը[4]: Հետաքրքրական է պարսից տիրապետության ժամանակ Երևանի խանության քոչվորներից հավաքված հարկերի ցուցակը, որը մի շահեկան ուսումնասիրության հետ մեկտեղ հրատարակված է Ն. Բոգդանովայի կողմից[5]:

Վրացական աղբյուրներում ևս բազմաթիվ տեղեկություններ կան Երևանի խանության 18-րդ դարի վերջին տասնամյակների պատմության վերաբերյալ:

Այդ ամենը, ինչպես նաև, ընդհանրապես Հայաստանին և հայերին վերաբերող բաժինները վրաց պատմիչներից ու ժամանակագիրներից քաղված, խնամքով թարգմանված,

---

[1] Центральный Государственный архив древних актов СССР (ЦГАДА), фонд Государственный архив, реестр XXIII, дд. 9, 13.

[2] *С. Бурнашев,* Описание областей Адребижанских в Персии и их политического состояния, Курск, 1793; Картина Грузии или описание политического состояния царств Карталинского и Кахетинского, Тифлис, 1896.

[3] *И. Шопен,* Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской Империи, СПБ, 1852.

[4] Взгляд на Армянскую область из путевых записок Н. Нефедьева, СПБ, 1839.

[5] *Н. Богданова,* К вопросу о феодальной эксплоатации кочевников в Закавказском крае в первой трети XIX в., АН СССР, „Исторический архив", II, М.—Л., 1939.



ծանոթագրված և հրատարակված են Լ. Մելիքսեթ-Բեկի կողմից[1]:

Բազմաթիվ արխիվային փաստաթղթեր են հրատարակված Ցագարելու խմբագրած ժողովածուում: Վրացական, ռուսական և պարսկական պետությունների ղեկավար անձանց և այլոց գրագրությունների հետ մեկտեղ, այնտեղ զետեղված են նաև Երևանի խաների մի քանի նամակներ, ինչպես նաև Երևանի հայերի ուղարկած դիմումները[2]:

Երևանի խանության պատմության համար անվիճելի հետաքրքրություն են ներկայացնում պարսկերեն մի շարք փաստաթղթեր, որոնք պահվում են Մատենադարանի պարսկերեն ձեռագրերի ֆոնդում՝ 233 համարի տակ (140 թերթ): Այդ փաստաթղթերի ուսումնասիրությամբ զբաղվել, նրանցից կարևորագույնները թարգմանել ու ծանոթագրել է պատմական գիտությունների թեկնածու Հ. Փափազյանը[3]:

Այսպիսով, չնայած նյութերի առատության, Երևանի խանության 18-րդ դարի վերջին երկու տասնամյակների պատմությունը ուսումնասիրված է անբավարար չափով: Այդ ժամանակի շատ անցքեր և արժանահիշատակ եղելություններ ոչ միայն չեն ստացել իրենց պատշաճ նկարագրությունն ու լուսաբանումը, այլև մնացել են մշուշի մեջ:

---

[1] Լ. Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, հ. Գ, Երևան, 1955:

[2] Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся до Грузии, т. II, в. II (с 1769 по 1801 год), под ред. А. А. Цагарели, СПБ, 1902.

[3] Ընկ. Հ. Փափազյանը սիրալիր կերպով մեզ ծանոթացրել է այդ նյութերի և իր անտիպ ուսումնասիրության հետ: Նա թարգմանաբար մեզ է տրամադրել մի քանի փաստաթղթեր, որոնք օգտագործված են ներկա ուսումնասիրության մեջ: Այս ամենի համար հայտնում ենք նրան մեր խորին շնորհակալությունը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ ԵՎ ՆՐԱ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 18-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Այս գլխի բուն նյութին անցնելուց առաջ անհրաժեշտ ենք համարում մի թռուցիկ հայացք ձգել Երևանի խանության՝ մեր քննարկելիք ժամանակաշրջանին նախորդած պատմության, ինչպես և նրա կիսաանկախ վիճակ ձեռք բերելու խնդրի վրա, մի բան, որը կդյուրացնի երկրի վարչական և տնտեսական կյանքի պատկերը ներկայացնելը։

18-րդ դարում իր պետականությունից վաղուց զրկված Հայաստանը շարունակում էր բաժանված մնալ արևելյան երկու բռնակալ պետությունների՝ Թուրքիայի ու Պարսկաստանի միջև։ Նրա արևմտյան մասը գտնվում էր Թուրքիայի, իսկ արևելյանը՝ Պարսկաստանի տիրապետության տակ։ Երկու մասերն էլ ենթարկված էին այդ երկրներում գոյություն ունեցող վարչական բաժանման։ Արևմտյան Հայաստանում ստեղծվել էին փաշայություններ, իսկ Արևելյանում՝ խանություններ։

Երևանի խանությունը Արևելյան Հայաստանում եղած ամենամեծ և ուժեղ իշխանություններից մեկն էր։ Նա ընդգրկում էր իր մեջ Արևելյան Հայաստանի կենտրոնական մասը և տիրապետող դիրք ուներ իր հարևանների նկատմամբ։

Երևանի խանությունը, որպես առանձին վարչական միավոր, իր հիմնական տերիտորիայով հանդես է եկել սկսած 14-րդ դարի վերջերից[1]։ 15-րդ դարում Արարատյան երկիրը, կամ

[1] Հ. Փափազյան, Ագրարային հարաբերությունները Երևանի խանության մեջ 17-րդ դարում (թեկն. դիսերտացիա), Երևան, 1954, էջ 67։



ինչպես անվանում էին այն ժամանակ, Չուխուր-Սաադի (Սաադի-փոս) վիլայեթը գտնվում էր Կարա-կոյունլուների և Աղ-կոյունլուների տիրապետության տակ, իսկ 16-րդ դարի սկզբներին բաժին է ընկնում նորաստեղծ Սեֆյան Պարսկաստանին։

Ողջ 16-րդ դարի ընթացքում և 17-րդ դարի սկզբներին Արարատյան երկրում մեծ ու փոքր ընդհատումներով կատաղի պատերազմներ են տեղի ունեցել Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև, որոնց ժամանակ Արարատյան դաշտը ձեռքից ձեռք էր անցնում։ Ավերվում էին նրա բնակավայրերը։ Մի կողմից համաճարակներն ու սովը, մյուս կողմից բռնի տեղահանությունները ու գաղթը՝ ամայացնում էին երկիրը։ Առանձնապես ծանր էր պարսից Աբբաս Ա շահի իրականացրած բռնի տեղահանումը, որի հետևանքով 1604 թ. Արարատյան դաշտը հիմնականում զրկվեց իր բնակչությունից։

Պարսկա-թուրքական պատերազմների ժամանակ կնքված հաշտության պայմանագրերի համաձայն (1555 թ. և 1639 թ.) Չուխուր-Սաադի վիլայեթը բաժին է ընկնում Պարսկաստանին։

Արարատյան երկրի համար համեմատաբար խաղաղ վիճակ է ստեղծվում 17-րդ դարի 30—80-ական թվականներին, երբ պարսից պետությունը ոչ միայն խրախուսում, այլև ինքը միջոցներ էր ձեռք առնում Արարատյան դաշտի բնակչությունը համալրելու և այլ վայրերից բնակիչներ բերելու համար։ Աշխուժանում է տնտեսական կյանքը, բայց այս վիճակը երկար չի տևում, որովհետև պարսից տիրողները, իրենց մոտալուտ անկումը կանխելու համար, հարկային դաժան քաղաքականություն են սկսում վարել իրենց տիրապետության տակ եղած երկրների, որոնց թվում նաև Երևանի խանության նկատմամբ։

Պարսկական պետության քայքայումը սկսվել էր դեռևս 17-րդ դարի կեսերից՝ արտաքին ու ներքին մի շարք պատճառներով։ Պարսկաստանի ողջ տնտեսությանը մեծ հարված էր հասցրել նրա վրայով անցնող առևտրական ճանապարհների միջազգային նշանակության նվազումը, որը արդյունք

էր Եվրոպայից դեպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհի հայտնագործման: Պարսից շահերի եկամուտները պակասում են նաև Եվրոպայում տեքստիլ արդյունաբերության զարգացման հետևանքով, որովհետև եվրոպական երկրները, որ նախկինում մեծ քանակությամբ մետաքս էին ներմուծում Պարսկաստանից, այժմ իրենք են սկսում այնտեղ մետաքսե իրեր վաճառել[1]: Պատերազմների չգոյության պատճառով պետությունը զրկվել էր այլ երկրներ թալանելու հնարավորությունից և շահերը, իրենց հետզհետե մեծացող ծախքերը հոգալու և եկամուտների անկումը կանխելու նպատակով, ավելի են ուժեղացնում քաղաքային ու գյուղական աշխատավոր բնակչության ֆեոդալական շահագործումը: Եվ քանի որ դա չէր ուղեկցվում արտադրողական ուժերի աճով, ապա գյուղատնտեսությունն ու արհեստները անկում էին ապրում[2]:

Պարսից տիրակալները առավել դաժանորեն էին վարվում նվաճված ժողովուրդների հետ: Նրանք նորանոր հարկեր էին դնում նրանց վրա, արյան մեջ խեղդում դիմադրության որևէ փորձ: Բայց, այնուհանդերձ, նրանց դեմ սկսվում է զինված պայքար:

18-րդ դարի սկզբներին ամենամեծ ելույթը ավղաններինն էր, որոնց հաջողվում է ազատել իրենց երկիրը պարսիկներից: Այնուհետև նրանք հարձակվում են Պարսկաստանի վրա: 1722 թ. հոկտեմբերի 22-ին ընկնում է Սպահանը: Տապալված շահի որդի Թահմազը փախչում է երկրի հյուսիսային մարզերը և զորք հավաքում ավղանների դեմ կռվելու համար:

Պարսկաստանի դրությունը ավելի է ծանրանում, երբ նույն թվականին ռուսական կայսր Պետրոս Առաջինը սկսում է իր պարսկական արշավանքը, իսկ 1723 թ. թուրքերն իրենց զորքերը մտցնում են Անդրկովկաս: 1724 թ. գարնանը թուրքական զորքերը ներխուժում են նաև Երևանի խանություն:

[1] *М. С. Иванов*, Очерки истории Ирана, Москва, 1952, стр 76—79.

[2] Նույն տեղում:



Շատ չանցած, նրանք, հաղթահարելով Երևանի բնակչության հերոսական դիմադրությունը, գրավում են քաղաքը և սոսկալի կոտորած սարքում այնտեղ: Արարատյան երկիրը նորից ենթարկվում է ավերումների:

Ավելի քան տաս տարի Երևանի խանությունը թուրքական տիրապետության տակ էր, մինչև որ 1735 թ. Նադիր խանը մի շարք ճակատամարտերում թուրքերին հաղթելուց հետո, կարողանում է այն կրկին գցել պարսից տիրապետության ներքո:

1736 թ. Թուրքիայի և Պարսկաստանի միջև կնքված հաշտության համաձայն Թուրքիան ճանաչում է Պարսկաստանի իշխանությունը Արևելյան Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի վրա:

Պարսկական պետության քայքայումը շարունակվում էր և Նադիր շահի (1736—1747) ջանքերը միայն ժամանակավորապես են կանխում այն: Վերջինիս մահից հետո Պարսկաստանում սկսվում է անիշխանություն: Լավ է բնորոշել այդ վիճակը մի հայ անանուն պատմիչ.

«Այպս զկնի կենազրաւ լինելոյ սորի (Նադիրի) վեր ի վայր տապալեցաւ իշխանութիւնն պարսից և բոլոր Պարսկաստանն մի զմիով անկանէին, իւրաքանչիւր խանք և երևելիք յիւրաքանչիւր տեղեաց շարժեցան և յիւրաքանչիւր մասնաւոր գաւառ գրեթէ մի մի թագաւորութիւն ցուցին զինքեանս...»[1]:

Այդպիսի «թագավորություններ» էլ առաջացան Արևելյան Հայաստանում և Ադրբեջանում: Դրանք հետևյալներն էին՝ Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Խոյի, Մակուի, Ղարադաղի, Ուրմիայի, Գանձակի, Ղուբայի (1765 թ. հետո այս խանությանն է միացվում նաև Դերբենդի խանությունը), Բաքվի, Շիրվանի, Շաքիի, Թալիշի, Արդաբիլի, Մարաղայի, Սավուջ-Բուլաղի խանությունները[2]:

[1] Դիվան, հ. Ժ, էջ 157—158:

[2] *И. П. Петрушевский*, Очерки..., стр. 86.

Այնուհետև պայքար է սկսվում անկախացած Երևանի խանության համար, որում հաղթող է դուրս գալիս Արևելավրացական թագավորությունը։

Պարսկական տիրապետության տակ եղած Արևելյան Վրաստանում դեռևս 1744 թ. Նադիր շահի համաձայնությամբ կառավարիչներ էին կարգվել Բագրատունյաց հարստության վրաց ճյուղի վերջին շառավիղներից Թեյմուրազը և նրա որդի Հերակլը, առաջինը Քարթլիում, իսկ երկրորդը՝ Կախեթում։ Քարթլին ու Կախեթը համարվում էին վալիություններ, իսկ նրանց կառավարիչները՝ վալիներ և անմիջապես ենթարկվում էին պարսից շահին։

Վրաց վալիները, որ իրենց թագավոր էին հորջորջում, համեմատած անդրկովկասյան խաների հետ, ավելի արտոնյալ վիճակում էին, բայց նրանք ևս պարտավոր էին հարկեր ուղարկել շահին։ Վրաստանի դրությունը առավել վատթարանում է Նադիրի թագավորության վերջին տարիներին, երբ նորանոր հարկեր էին դրվել Վրաստանի վրա։ Բայց Նադիր շահի մահից հետո Քարթլին ու Կախեթը նույնպես անկախանում են և շատ չանցած կարողանում են իրենց հարկատու դարձնել Գանձակի և Երևանի խանությունները։

Արդ, ինչ պայմաններում և երբ է Երևանի խանությունը հարկատու դարձել վրացական պետությանը։

1749 թ., երբ երևանցիները մեծ ճնշումների են ենթարկվում ոմն Մահմեդ խանի կողմից և ուրիշ միջոց չունենալով նրանից ազատվելու համար, հարկատու դառնալու պայմանով, օգնություն են հայցում վրացական պետությունից։ Վրացական զորքը պարտության է մատնում Մահմեդին[1]։

1752 թ. վրացական զորքը նորից է արշավում դեպի Արարատյան դաշտ՝ այս անգամ Երևանը Ազատ խանից պաշտպանելու համար։ Վրացական զորքը հաղթում է Ազատ խանի զորքերին, վտարում նրանց Արարատյան երկրից և հետ դառնում։

[1] Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները..., հ. Գ, էջ 172 և 187։



Այս ժամանակ Վրաստանը դեռևս թույլ էր և Երևանյան երկրի նրան հարկատու մնալը հաստատուն բնույթ չէր կարող ունենալ։ Քարթլիի և Կախեթի միավորումից հետո վրաց թագավորը մի քանի արշավանքներով (1762 թ., 1765 թ.) կարողանում է Երևանի խանին իրեն հավատարիմ պահել, որը, սակայն, երկար չի տևում։ Հերակլ Բ-ը 1778 և 1779 թվականներին ստիպված է լինում նորից արշավել, որպեսզի ստիպի Երևանի խանին կատարելու իր վասալական պարտավորությունները։ Վերջին արշավանքի ժամանակ Հերակլ Բ-ը Երևանի խանին թուլացնելու համար Վրաստան է տեղափոխում Արարատյան երկրի ութ գյուղերի բնակիչների (այդ գյուղերն էին՝ Հախուեքես, Բյուր, Ալեթյու, Էվճիլար, Քյալագյարխ, Շահրիար, Ղուրդուղուլի, Աշտարակ)[1], որոնց բնակեցնում է Դիդուբեում, Հավլաբարում և Սղնախում[2]։

Այսպիսով, Երևանի խանությունը 18-րդ դարի կեսերին Պարսկաստանում սկսված անիշխանության հետևանքով անկախություն էր ձեռք բերել, բայց չկարողանալով պաշտպանել այն, դարձել էր վրաց թագավորի հարկատուն։ Երևանի խանության համար դա մի կիսաանկախ վիճակ էր, որովհետև խաները ներքին և երբեմն էլ արտաքին որոշ հարցերում միանգամայն անկախ էին վրաց թագավորից։

Մեր քննարկած ժամանակաշրջանում Երևանի խանությունը, ամբողջությամբ իր մեջ ընդգրկելով Արարատյան դաշտը, սահմանակից էր հյուսիսից՝ Վրաստանի տիրապետության տակ եղած Շորագյալի, Փամբակի, Շամշադինի սուլթանություններին, Ղազախի վեքիլությանը, հյուսիս-արևելքից՝ Գանձակի, արևելքից՝ Ղարաբաղի և Նախիջևանի խանություններին, հարավից՝ Խոյի խանությանը, Բայազետի փաշայությանը, արևմուտքից՝ Կարսի փաշայությանը։

Խանության սահմանը արևմուտքում ձգվում էր Արփաչայով (Ախուրյան), Ղըզլ-Քիլիսա գյուղի մոտից հյուսիսից հարավ, քիչ արևելյան թեքումով, մինչև Ախուրյանի ստորին հոսանքի վրա գտնվող Հաջի-Բայրամլու գյուղը,

[1] «[illegible] հայոց աշխարհին», 1862, № 4, էջ 280։
[2] Г. [illegible], Ираклий Второй, Тбилиси, 1948, стр. 104.

որտեղից անցնում էր գետը և ուղղվում արևմուտք ու հասնում մինչև Կարխ-դաղ լեռնաշղթան: Այնտեղ սահմանն անցնում էր Արաքսը և նույն լեռնաշղթայով ուղղվում դեպի հարավ-արևմուտք, մինչև Բլու-օղլի դաղը, հետո թեքվում էր սկզբում հարավ-արևելք՝ քիչ հարավային թեքումով, Հայկական պարի ջրբաժան բարձրություններով մինչև Փոքր Մասիսը, հետո՝ դեպի հարավ-արևմուտք, մինչև Արաքս: Կտրելով Արաքսը սահմանը ձգվում էր՝ Նախիջևանի և Շարուրի դաշտերն անջատող լեռնաշղթայով, ապա Վարդենիսի (Գյոզալդարայի) լեռնաշղթայով, Զանգեզուրի լեռների հյուսիսային հատվածով ու Արևելյան Սևանի լեռներով, Սևանի ավազանը ամբողջովին թողնելով Երևանի խանության մեջ: Այնուհետև սահմանը ձգվում էր Փամբակի լեռների և Արագածի հյուսիսային լանջերը Ախուրյանի հետ միացնող գծով և Բազարչիկ գյուղի վրայից անցնելով գնում հասնում էր Ղըզլ-Քիլիսա գյուղը[1]:

Հուսեյն-Ալի խանի օրոք (1762—1783) Երևանի խանության սահմանները ավելի ընդարձակ էին, որովհետև ընդգրկում էին իրենց մեջ նաև Շորագյալի շրջանը[2]: 1779 թ. Հերակլ Բ-ը, արշավելով Երևանի վրա, նվաճում է Շորագյալը և նրա սուլթան Ղահրամանին դարձնում իր հպատակը[3]: Դրանից հետո Շորագյալը կրկին Երևանին միացնելը դարձել էր Երևանի խաների մշտական մտահոգության առարկան:

1795 թ. Աղա Մահմեդ շահը Թիֆլիսը ավերելուց և Երևանի խանությունը կրկին Պարսկաստանին ենթարկելուց հետո, նպատակ ունենալով թուլացնել Վրաստանը, հատուկ հրամանագրով Փամբակը, Ղազախը և Բորչալուն հանձնում է Երևանի Մահմեդ խանին[4]: Վերջինս անմիջապես այդ շըր-

1 *Шопен*, стр. 351—353, տե՛ս նաև Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն (նյութեր), պրակ 3-րդ, Երևան, 1953, էջ 238:

2 АКАК, т. I, Тифлис, 1866, стр., 158.

3 Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները..., հ. Գ, էջ 178:

4 *Н. Дубровин*, История войны и владычества русских на Кавказе, т. III, стр. 65.



ջաններին բնակիչներից պահանջում է հնազանդվել իրեն, բայց, որովհետև շուտով սկսվում է ռուսական զորքերի արշավանքը և Աղա Մահմեդ շահը քաշվում է Պարսկաստանի խորքերը, այդ բանը տեղի չի ունենում:

1797 թ. գարնանը Աղա Մահմեդ շահը Հերակլից պահանջում է Փամբակը և Բորչալուն տալ Երևանի խանին, իսկ Շամշադինը և Ղազախը՝ Գանձակի Ջավադ խանին[1]: Բայց այս անգամ էլ հնարավոր չի լինում իրականացնել այդ նվիրաբերումը, քանի որ Երևանի խանը գերի է տարվում Պարսկաստան: Վերադառնալուց հետո նա Շորագյալի նկատմամբ հավակնություններ է ներկայացնում Վրաց Գիորգի ԺԲ թագավորին և 1801 թ. սկզբին զինված ուժով գրավում է այն[2]:

Խանության տերիտորիան բաժանված էր 12 մահալների (նահանգների): Այդ բաժանման հիմքում ընկած էին ռազմական սխեմաները, որոնք վճռական նշանակություն ունեին պաշտպանողականության համար: Այդ մահալներն էին.

1. Ղըրխբուլաղի մահալ—տարածվում էր Երևանից հյուսիս և հարավ, հարավում սահմանն էր Արաքս գետը, հյուսիսից՝ Դարաչիչակի մահալը: Արևմուտքից սահմանակից էր Սարդարապատի, արևելքից՝ Գառնի—Վեդիբասարի մահալները: 19-րդ դարի առաջին քառորդում այս մահալը հանդես էր գալիս որպես երկու մահալ՝ Ղըրխբուլաղի և Զանգիբասարի[3]: Որ այս մահալը 18-րդ դարի վերջում միավորել է իր մեջ թե Ղըրխբուլաղը, և թե Զանգիբասարը, երևում է Երևանի Մահմեդ խանին (1785—1803) պատկանած մուլքերի մի ցուցակից, որտեղ Զանգիբասարի շատ գյուղեր նշված են Ղըրխբուլաղի մահալի մեջ[4]:

1 Տե՛ս *Н. Дубровин*, История войны..., т. III, стр. 207.

2 Շորագյալը հպատակվում էր Երևանի խանին մինչև 1805 թ. գարունը, երբ ռուսական զորքերը, գեներալ-մայոր Նեսվետաևի հրամանատարությամբ, միացնում են այն Ռուսաստանին:

3 *Шопен*, стр. 442.

4 Մատենադարան, Պարսկական վավերագրերի ֆոնդ, թղթապանակ 1ե, վավերագիր 861: Այս փաստաթուղթը թարգմանաբար մեզ է տրամադրել Հ. Փափազյանը:

2. Գառնի-Վեդիբասարի— այս մահալը ևս հետագայում բաժանվում է երկու մասի՝ Գառնիբասարի և Վեդիբասարի մահալների[1]: Բայց մեր քննած ժամանակաշրջանում, համաձայն վերը նշված ցուցակի, այն եղել է մի միասնական մահալ և իր մեջ ընդգրկել Արաքսից հյուսիս ընկած հողերը, որոնք ոռոգվում էին Ազատ գետով (Գառնի-չայ), նաև Վեդի-չայի ու Կախան-չայի ավազաններում եղած հովիտները: Հյուսիսից սահմանակից էր Գյոգչայի մահալին, արևելքից՝ Շարուրի:

3. Շարուրի—գրավում էր Գառնի—Վեդիբասարի մահալի և Խոյի ու Նախիջևանի խանությունների միջև եղած տարածությունները: Արևելյան Արփաչայով բաժանվում էր երկու մասի[2]:

4. Սուրմալուի—գտնվում էր Արաքսից հարավ և իր մեջ ընդգրկում Արաքսի ու Հայկական պար լեռնաշղթայի միջև ընկած տարածությունները և խանության հարավ-արևմտյան վերջավորությունը՝ ամբողջությամբ: Հետագայում սրանից առանձնացվում է Դարաքենդ—Փարչենիսի մահալը, որն ուներ իր մեջ Փարչենիսի, Դարաքենդի և Փառնաուտի ձորահովիտները[3]:

5. Սահաթլիի—գրավում էր Սարդարաբադի ու Թալինի մահալների և Կարսի փաշայության միջև ընկած մի փոքրիկ տարածություն, ուր Արփաչայը խառնվում էր Արաքսին[4]:

6. Թալինի—հարավից սահմանակից էր Սարդարաբադի ու Սահաթլիի մահալներին, հյուսիսից՝ Շորագյալի, արևմուտքից՝ Կարսի փաշայությանը:

7. Սեյիդլի—Ախսախլիի—Թալինի մահալի սահմաններից տարածվում էր Արագածի հարավային և արևելյան լանջերով մինչև Ապարանի մահալը: Հարավից և հարավ-արևելքից սահմանակից էր Սարդարաբադի և Կարբիբասարի մահալներին:

¹ *Шопен*, стр. 442—443.
² Նույն տեղում, էջ 443:
³ Նույն տեղում:
⁴ Այս և մյուս մահալների մասին տե՛ս Շոպենի գիրքը, էջ 444—446:



8. Սարդարաբադի—խանության ամենամեծ մահալներից էր, գտնվում էր Արաքսի հյուսիսային ափին՝ Սուրմալուի մահալի դիմաց, արևմուտքից սահմանակից էր Սահաթլիի, արևելքից՝ Կարբիբասարի մահալներին:

9. Կարբիբասարի—արևելքից սահմանակից էր Զանգիբասարի, արևմուտքից՝ Սարդարաբադի մահալներին, իսկ հյուսիսից՝ Սեյիդլի—Ախսախլի մահալին: Այս մահալի մեջ էին մտնում Կարբի-չայի ոռոգած բոլոր հողերը:

10. Ապարանի—ընդգրկում էր իր մեջ Արագածից հյուսիս և հյուսիս-արևելք՝ Արագածի և Փամբակի լեռների միջև ընկած տարածությունները:

11. Դարաչիչակի—սրան սահմանակից էին՝ հյուսիսից Փամբակը, հարավից՝ Ղըրխբուլաղը, իսկ արևմուտքից՝ Ապարանը, արևելքից՝ Սևանա լիճը:

12. Գյոգչայի—ամենամեծ մահալն էր, ընդգրկում էր իր մեջ Սևանի ավազանը:

Յուրաքանչյուր մահալ իրենից ներկայացնում էր մի առանձին վարչական միավոր, որը կառավարվում էր մահալային նայիբների, մին-բաշիների կողմից, որոնք լինում էին ամենաշատը բեկեր, մելիքներ, սուլթաններ: Այս պաշտոնյաներին, սովորաբար, նշանակում էր Երևանի խանը՝ անորոշ ժամանակով: Բայց նրանք հաճախ, օգտվելով խանի թուլությունից կամ այլ նպաստավոր պայմաններից, մահալները դարձնում էին իրենց ժառանգական սեփականությունը[1]:

Մահալային կառավարիչների վրա դրված էին գլխավորապես վարչական և ոստիկանական պարտավորությունները: Նրանք պետք է մահալներում հսկեին կարգ ու կանոնին, ձերբակալեին հանցագործներին, բարեկարգ վիճակում պահեին ճանապարհները և այլն: Մահալային կառավարիչները իրավասու էին վճռելու ամեն տեսակ ոչ կարևոր քաղաքացիական գործեր, այլև գյուղերի միջև եղած զանազան վեճեր ու

¹ *С. А. Егиазаров*, Исследования по истории учреждений в Закавказье, ч. I, Сельская община, стр. 81.

հաշիվներ, նրանք կարող էին վարել միայն դատական այնպիսի գործեր, որոնց վճիռը չէր հասնում ծանր պատժի[1]։

Մահալների մեջ ընդգրկված էին բազմաթիվ գյուղական համայնքներ, որոնք կառավարվում էին մին-բաշիների նշանակած պատվավոր նայիբների, ընտրովի մելիքների և զինվորական յուզբաշիների (հարյուրապետ) կողմից։ Նայիբները և յուզբաշիները նշանակվում էին զուտ մուսուլմանական կամ խառը բնակչություն ունեցող, իսկ մելիքները՝ հայկական գյուղերում։ Գյուղերի կառավարիչները օժտված էին վարչական և, որոշ առումով, դատական իրավունքներով։ Ս. Ա. Եղիազարովը դրանց մասին գրել է.

«Գյուղական մելիքները և նայիբները միջնորդող օրգաններ էին մի կողմից առանձին համայնքների, մյուս կողմից՝ խանի կառավարիչների միջև։ Ամեն տեսակ հրամաններով և պահանջմունքներով խանը և նրանց ենթակա օրգանները դիմում էին նրանց և հազվադեպ էին խառնվում համայնքների ներքին կարգ ու կանոնին»[2]։

Մուլքադարական գյուղերում կառավարումը իրականացվում էր իրենց՝ մուլքադարների կողմից, սակայն միայն խոշոր մուլքադար-կալվածատերերն ունեին վարչական-դատական իշխանություն գյուղացիների նկատմամբ[3]։

18-րդ դարի վերջում խանության բազմաթիվ գյուղեր եղել են ավերված վիճակում։ Վրաց մի անանուն աշխարհագիր իր «Վրաստանին կից երկրների նկարագրությունը» գրվածքում Երևանի խանության մասին գրել է հետևյալը.

«Սա (Երևանը) ունի և՛ սար, և՛ դաշտ շատ, և պտղավետ-բերքավետ է։ Այստեղ բնակվում են շատ քրիստոնյաներ. դավանությամբ հայեր... սակայն անշեն տեղեր ևս շատ ունին»[4]։

Սա գրված է 1769 թ., հետագայում՝ Հերակլ Բ-ի և Երև-

[1] С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. I, стр. 82.

[2] Նույն տեղում, էջ 2—3։

[3] Նույն տեղում, էջ 3։

[4] Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները..., հ. Գ, էջ 153։



վանի խանի պատերազմների, այնուհետև ներքին կռիվների ու արշավանքների ժամանակ խանության գյուղերն ավելի են ավերվում։ Ըստ Շոպենի հաշվումների, 19-րդ դարի առաջին քառորդում խանության մեջ կար 831 գյուղ, որից 310-ը ավերակ վիճակում[1]։

Գյուղերի ավերման հետ մեկտեղ ավերվել էին նաև այդ գյուղերի հողերը ոռոգող ջրանցքները, որի հետևանքով հետագայում չափազանց դժվարացել է գյուղերի վերականգնումը։

Խանության բնակչության մեծամասնությունը եղել են հայեր, բացի նրանցից բնակվել են նաև ադրբեջանցիներ, քրդեր, թուրքեր ու պարսիկներ։ Ավերիչ պատերազմները, գերեվարությունները ու դրանց հետևանքով առաջացած արտագաղթը պատճառ են դարձել բնակչության նվազման։ Խանության մեջ մշտապես պակասել են աշխատող ձեռքեր։ 1784 թ. օգոստոսի 26-ին գրած իր մի նամակում Ղուկաս Կարնեցին հայտնում է, թե դժվարացել է իր համար վանքի վերանորոգման գործը՝ այն պատճառով. «...զի թէ ի հասարակ մարդկանց սովեալ է երկիրս, ապա որքան ի պէտանեաց և ի վարպետաց, որք բնաւ չգոն»[2]։

Անգլիացի դիվանագետ Ջեյմս Մորիերը, որը 1813 թ. եղել է Երևանում, խանության բնակչության թիվը համարում է 100 հազար, որից 25 հազարը քոչվորներ[3]։ Շոպենը մի քիչ ավելի ուշ շրջանի համար ավելի պակաս է տալիս՝ ընդամենը 17 հազար ընտանիք, յուրաքանչյուր ընտանիքը հաշվելով հինգ մարդու, խանության բնակչությունը պարսկական տիրապետության ժամանակ նա համարում է 85 հազար մարդ[4]։

Չնայած Երևանի խանը համարվում էր Պարսկաստանի վասալը, բայց նա իր երկրի ներքին հարցերում միանգամայն անկախ էր վրաց թագավորից։ Նա մի կատարյալ բռնակալ-միապետ էր, որն իր ձեռքն էր կենտրոնացրել երկրի վարչա-

[1] Шопен, стр. 510—517.

[2] Մատենադարան, ձեռագիր № 2803, էջ 271բ։

[3] Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Չ, Երևան, 1934, էջ 324։

[4] Шопен, стр. 542.

կան, զինվորական և իրավական ղեկավարության սանձերը։ Նա իրավասու էր վճռելու խանության կարևորագույն հարցերը։ Խանն անձամբ կարող էր դատ ու դատաստան տեսնել հանցագործության մեջ մեղադրվող բոլոր անձանց նկատմամբ. նա կարող էր տուգանելու, ֆիզիկական խոշտանգումների, անդամահատման կամ մահվան դատավճիռներ հանել, որոնք ի կատար էին ածվում անմիջապես։

Խանի պալատը պարսից շահերի պալատների նման հարուստ և շքեղ է եղել։ Այստեղ ևս եղել են նույն պաշտոնները, ինչպես շահերի ապարանքներում։ Պալատի գործերը կառավարել է խանը կամ նրա մերձավորներից որևէ մեկը։ Խանի խորհուրդը (դիվան) կազմված է եղել վեզիրից և մի քանի միրզաներից, որոնցից յուրաքանչյուրը գլխավորել է աշխատանքի մի առանձին բնագավառ[3]։ Եղել են զանազան պաշտոններ՝ ծախսարարության (սանդուխտար աղասի), շտեմարանապետության (ամբարդար աղասի), բերդի կառավարչի (ղալարբեկ), ֆինանսական գործերի (խազնեդար), խանի հրամանները ի կատար ածողի (մուհասիլ-բեկ) և այլն։ Զինվորական հրամանատարը եղել է խանը, իսկ նրա անչափահասության դեպքում՝ խնամակալը։

Երևանի խանության զորքերի թիվը տարբեր քանակով է նշված։ Վրաց անանուն աշխարհագիրը իր «Վրաստանին կից երկրների նկարագրությունը» (1769 թ.) երկում նշում է, որ Երևանը կարող էր դուրս բերել 2000 ապմիկ[1]։ Ռուսական գնդապետ Բուռնաշևը, որը ավելի տեղյակ էր Երևանի խանի զինվորական կարողություններին, գրում է, թե նա կարող էր դուրս բերել 5000 մարդուց բաղկացած զորք, որի 1/3-ը հայեր էին[2]։ Իհարկե, խաղաղ ժամանակ, անհնարին էր այսքան մարդ զենքի տակ պահելը։

Երկրի բոլոր կարևոր քաղաքացիական և քրեական գործերը ենթակա էին կամ խանի, կամ մուսուլմանական դատա-

[1] *Шопен*, стр. 451.
[2] *Լ. Մելիքսեթ-Բեկ*, Վրաց աղբյուրները..., հ. Գ, էջ 153։
[3] *С. Бурнашев*, Описание областей Адребижанских..., стр. 17.



րանի քննարկմանը[1], որը դատում էր ղորանի սկզբունքներով, կամ ըստ սովորությունների (հադիսա)։ Աշխատավոր բնակիչները և առանձնապես հայերը հազվադեպ էին դիմում «շարիաթի», խանի և մահալային կառավարչի դատաստանին, որովհետև դա շատ թանկ էր նստում նրանց։ Հայցվորները այս դեպքում պարտավոր էին դատարանին վճարել հայցի գնի մեկ տասներորդը։ Բացի սրանից, գործի ընթացքում նրանք անխուսափելիորեն ստիպված էին լինում կաշառքներ (ռուշվաթ) տալ դատարանի աշխատողներին։ Այս է պատճառը, որ քաղաքացիական գործերի մեծ մասը որոշվում էր համայնքների միջնորդ դատարաններում։

Գյուղական ամեն մի համայնք ուներ իր դատարանը, որը կազմված էր ընտրովի «ատենականներից» (հայերի մոտ), և «աղսաքալներ» կամ «ռիշսաֆիդ»-ներից մուսուլմանների մոտ[3]։ Այս դատարանները, որ դատում էին ըստ տեղական սովորությունների և առանց վարձատրության, միայն միջնորդի դեր էին խաղում։ Նրանց որոշումից դժգոհ կողմերը կարող էին դիմել մահալային կառավարչի դատաստանին, որի որոշումը բողոքարկման ենթակա չէր[4]։

Խանության կենտրոնը՝ Երևանը 18-րդ դարի վերջում Արևելյան Հայաստանի ամենամեծ քաղաքներից մեկն էր, որտեղ էր ապրում խանը իր բազմաթիվ պաշտոնյաներով։ Երևանը կառավարվում էր խանի կողմից նշանակված քաղաքապետի (դարուղա) կողմից, որին ենթարկվում էին յուզբաշիները (հարյուրապետներ), չաուշները (տասնապետներ) և ֆառաշները (ոստիկաններ)։

Չնայած որ Արարատյան դաշտը 18-րդ դարի 70—80-ական թվականներին և հետագա ժամանակներում ենթարկվել էր բազում արշավանքների ու ավերումների, բայց Երևան քաղաքը, ինչպես և Էջմիածինը այնքան շատ չէին

[1] *Гакстгаузен*, Закавказский край, ч. I, стр. 184.
[2] *С. А. Егиазаров*, Исследования..., ч. I, стр. 82.
[3] Նույն տեղում, էջ 88։
[4] Նույն տեղում։

տուժել և ավերմունքների այդ անապատում թվում էին օազիսներ։

18-րդ դարի վերջին Երևանի բնակչության քանակի մասին մեզ չհաջողվեց տվյալներ գտնել։ 19-րդ դարի առաջին քառորդի համար Շոպենը նշում է 11463 բնակիչ[1]. կարելի է ենթադրել, որ 18-րդ դարի վերջում Երևանի բնակչության թիվը, եթե ոչ այդքան, ապա 10 հազարից պակաս չի եղել։

Երևանը բաժանված էր երեք թաղամասի (մահլա), որոնցից ամենամեծը Շահարն էր (Հին քաղաք), նա բռնում էր քաղաքի հյուսիս-արևելյան մասը։ Մյուսը Թափաբաշն էր (Կոնդ)։ Երրորդը Դամիրբուլաղն էր (Երկաթաղբյուր)՝ հարավ-արևելյան մասում[2]։

Երևանի բերդը, որ հիմնադրվել է թուրքական Ֆահրադ փաշայի կողմից (1581 թ.) և հետագայում բազմիցս ավերվել ու կրկին նորոգվել, 18-րդ դարի վերջում բավական ուժեղ էր և լավ ամրացված։ Նա շատ անգամներ կարողանում է դիմանալ պաշարման փորձություններին։

Երևանի խանությունը Անդրկովկասում ամենահարուստ և եկամտաբեր իշխանություններից էր։ Դեռևս 18-րդ դարի սկզբին ռուսական դեսպան Վոլինսկին, լինելով Երևանում, գրել է հետևյալը.

«Ողջ Պարսկաստանում լավագույն գավառներ, սկսած Թուրքիայի սահմանից, ես համարում եմ Երևանը և Թավրիզը, որոնք հացով առատ են և առևտրով Պարսկաստանին շատ օգուտ են բերում»[3]։

Բայց Վոլինսկու ժամանակ և հետագայում, մինչև 18-րդ դարի կեսերը, Արարատյան դաշտի տնտեսությունը պատերազմների ու արշավանքների հետևանքով խիստ քայքայված, անկում է ապրում։ 1747 թվականից, երբ Երևանը անկախանում է Պարսկաստանից, մինչև Հերակլի արշավանքները, երկրի տնտեսության համար, համեմատած նախորդ տարիներ-

[1] *Шопен*, стр. 468.

[2] Նույն տեղում, էջ 461։

[3] *Евгений Зевакин*, Азербайджан в начале XVIII века, Баку, 1929, стр 11.



րի հետ, ստեղծվում են բարգավաճման որոշ հնարավորություններ։ Հերակլի արշավանքները վնասում են դրան, բայց 80-ական թվականներին, երբ համեմատաբար լավ հարաբերություններ են ստեղծվում Վրաստանի հետ, խանության տնտեսությունը սկսում է քիչ լավանալ, բացվում են առևտրական ճանապարհները, խանը հնարավորություն է ստանում Երևանում ծավալել շինարարություն։ Այսպես, հայտնի է, որ Երևանի Հուսեյն-Ալի խանը Խոյի Ահմեդ խանի գլխավոր ճարտարապետ (մեհմար-բաշի) Միրզա Ջաֆարին հրավիրում է Երևան՝ բերդը ամրացնելու և այլ շենքեր կառուցելու համար[1]։ Շինարարությունը շարունակվում է նաև Մահմեդ խանի օրոք։ Ղ. Կարնեցին 1789 թ. սեպտեմբերին Գեղարդից մոտ Նվիրակ ուղարկված Եփրեմ վարդապետին գրել է.

«Սակայն՝ ի ծագել գարնան մանուկ խանն մեր ի բերդն զմեծամեծ ապարանս հիմնարկեալ, զամենայն քարհատսն մեր տարաւ, որոց հնար չեղև արգելլույ»[2]։

Արարատյան երկրի բնակչության հիմնական զբաղմունքը եղել է հողագործությունը։ Մշակվել են բազմաթիվ կուլտուրաներ՝ ցորեն, գարի, բրինձ, կտավատ, բամբակ, խաղող և այլն։ Առանձնապես զարգացած է եղել բանջարաբուծությունը։ Տեղեկություններ կան այն մասին, որ հարևան երկրներից հաճախ էին ուղարկվում Երևան՝ բանջարանոցային կուլտուրաների սերմեր առնելու։ 1784 թ. Հերակլ Բ-ը ոմն Արղութեցի Զոհրաբի ուղարկում է էջմիածին՝ Ղուկաս կաթողիկոսի մոտ խնդրանքով, որ իրեն համար սերմեր ուղարկի։ Այս մասին էջմիածնի վանքի ծախքերի մատյանում գրված է հետևյալը.

«(1784 թ. մարտի 19-ին) Բօստանի սերմ առաք Երևանու, որ թագաւոր Հերակլ արքային, որ ինքն էր խնդրեալ յատուկ մարդով և գրով, զոր ի մարտի ԺԹ յղեցաք։ Որք էին՝ Ա լիտրը հաճի մարգաղւալի, գինն է ա՛ն եծ դիան, Գ չարեք գեօկ՝ ա՛ն աձծ դիան, կէս լիտր կիւլի փարչին, կէս լիտր սամթ՝ ա՛ն եծ դիան։ ...Դ խաւիլ պաղդոսայի՝ եծ դիան։ Ա լիտր այլ

[1] Մատենադարան, Ներսեսյան ձեռագրերի ֆոնդ, № 233։

[2] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 313բ։

սերմ խաշն՝ ՌՃԾ դիան: Ա լիտր թիլու սերմ՝ ամ ԴՃԾ դիան, չամ է էՌ բԾ դիան: Որ է բոլորն Ն լիտր»[1]:

Սերմեր են ուղարկվել նաև Բայազետ: Նույն մատյանում ասվում է, թե 1782 թ. մարտին Բայազետի Իսաք փաշայի խնդրանքով գնվել և Բայազետ են ուղարկվել հետևյալ սերմերը. «...Ե խալի դարալ դարբուզի սերմ՝ Ժ շահի: Ե խալի կեօվ դարփուզ՝ Ժ շահի, Ե խալի մարալ դալի՝ Գ ապասի: Գ խալի խյարի սերմ՝ ամ բԾ դիան, Ե խալի Ասպահանու շուտ հասնող գեարմակի սերմ՝ Է շահի: Գ խալի սուրահի դդմի՝ ԺԵ շահի: Գ խալի սէհանի՝ Ժ շահի: Գ խալի խինալի հունդ՝ ամ: Ե խալի բաղլճանի սերմ՝ բՌ, չամ է էՌ և Բ ապասի»[2]:

Ղուկաս Կարնեցու կոնդակների սևագրությունների մեջ հաճախ խոսվում է այն մասին, որ շրջակա փաշաներին էջմիածնից միշտ, նվերների ձևով, մեծ քանակությամբ մրգեր և բանջարեղեն է ուղարկվել: Այսպես, 1780 թ. սեպտեմբերին Կարս է ուղարկվել խաղող, սեխ, պորինջան, 1780 թ. հոկտեմբերին նույն մթերքներից ուղարկվել է Կարինի Յալի փաշային և մաքսապետին[3]: Բայազետի Իսաք փաշային ուղարկվում է գյուլաբ (վարդաջուր), բրինձ, քացախ, նաև մոմ, կտորեղեն և այլն[4]:

Արարատյան երկրում գյուղատնտեսական արտադրության հիմնական ձևերից մեկն էլ անասնապահությունն էր: Անասնապահությամբ զբաղվում էին թե՛ հարթավայրերի գյուղացիները, և թե՛ լեռնային շրջանների քոչվոր ու կիսաքոչվոր բնակիչները: Խանը մեծ եկամուտներ էր ստանում անասնապահների վրա դրված հարկերից: Ծանր էր հատկապես քոչվոր և կիսաքոչվոր անասնապահների վիճակը, որոնք բացի հարկերը վճարելուց, իրենց ձիերով և զենքերով պարտավոր էին զինվորական ծառայություն կատարել:

---

[1] Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 1, էջ 319:

[2] Նույն տեղում, էջ 290:

[3] Նույն տեղում, ձեռ. № 4481, էջ 29ա:

[4] Նույն տեղում, էջ 33բ:



Երևանի Հուսեյն խանի ժամանակ անասնապահներից գանձված հարկերի մասին Ն. Բոգդանովայի բերած ցուցակից կարելի է գաղափար կազմել խանության անասնապահների ֆեոդալական շահագործման մասին: Միայն Ջիլանի քրդերը (2000 ընտանիք) պարտավոր են եղել իրենց 100 հազար ոչխարից յուրաքանչյուր հարյուրի դիմաց խանին տարեկան տալ երկու ոչխար, իսկ ողջ հոտից՝ հինգ խալվար յուղ: Պետք է տային նաև 50 ուղտի սարք, հարկ եղած դեպքում զանազան աշխատանքների հանել 1000 եզ, 1000 զինված մարդ տալ զինվորական ծառայության[1]:

Բոլուք-Զորանքարա ցեղերից (300 ընտանիք) ընդհանուր հաշվով պահանջվում էր 100 թուման: Նրանցից 300 ձիավոր պետք է գնար զինվորական ծառայության: Խանը այս ցեղերին էր հանձնում իր անասունները պահելու: Պահանջի դեպքում նրանք անասունները պետք է վերադարձնեին լրիվ: Պահվող յուրաքանչյուր ոչխարի դիմաց խանին նրանք տալիս էին կես բաթման յուղ և պանիր: Բուրդը մնում էր նրանց՝ իբրև վարձատրություն[2]: Քոչվորները խանին պարտավոր էին հարկ եղած դեպքում տալ իրենց փոխադրական միջոցները, այլև հազարավոր բրդե պարկեր:

Սրանք միայն խանին տրվող հարկերն էին: Անասնապահ քոչվորները պարտավոր էին հարկեր վճարել նաև իրենց տեղական ֆեոդալներին, պարտադիր աշխատանքներ կատարել ֆեոդալների և նրանց ազգականների համար: Տոն օրերին նրանք պետք է նվերներ տային իրենց աղալարներին[3]:

Այս ամենից բացի, խանության քրդերը պարտավոր էին հարկեր վճարել նաև Հերակլ Բ-ին[4]:

Երևանի խանության մեջ չափազանց թույլ է զարգացած եղել արդյունագործությունը: Կողբի աղահանքերից և մի քա-

---

[1] *Н. Богданова*, К вопросу о феодальной эксплоатации кочевников..., стр. 235.

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 228—229:

[4] Դիվան, հ. Գ, էջ 208:

նի արհեստանոցներից բացի, երկրում արդյունաբերական այլ ձեռնարկություններ չկային։

Կողբի աղահանքերը, 18-րդ դարի վերջում, Նախիջևանի հետ բավարարում էին Անդրկովկասի աղի պահանջը։ Կողբից աղ էր ուղարկվում Վրաստան, Իմերեթիա, Ախալցխա և այլ վայրեր[1]։ Աղի արդյունահանումը կատարվում էր չափազանց պարզ միջոցներով։ Ցածր է եղել աղահանների վարձը։

Երևանում եղել են կաշեգործական արհեստանոցներ, որտեղ մշակվել է ոչ միայն տեղական, այլև դրսից (Բայազետից, Մակուից) բերված կաշեղեն[2]։

1776 թվականին հնդկահայ հարուստ Գրիգոր Խոջաջանյանցի ծախքով Էջմիածնում կառուցվել էր թղթի գործարան։ Մեր քննարկած ժամանակում այդ գործարանը կանգ էր առել և Էջմիածնի տպարանի կարիքները բավարարվում էին արտասահմանից՝ հիմնականում Կ. Պոլսից բերված թղթով[3]։ Թղթի գործարանը կառուցված էր Էջմիածնի վանքի պարիսպներից դուրս և արշավանքների ժամանակ ավերվել էր։ Նրա երկաթե և պղնձե գործիքները հափշտակվել էին[4]։

Խանության մեջ 18-րդ դարի վերջում գործել են բազմաթիվ ձիթհաններ, ջրաղացներ, դինկեր։

Երևանում եղել են տարբեր մասնագիտության հարյուրավոր արհեստավորներ՝ ներկարարներ, կոշկակարներ, դերձակներ, բրուտներ, ատաղձագործներ, դարբիններ, քարտաշ-

[1] Взгляд на Армянскую область из путевых записок Н. Нефедьева, стр. 72.

[2] *Шопен*, стр. 857.

[3] *Մատենադարան*, ձեռ. № 2803, էջ 81բ, 176բ։

[4] *Դիւան*, հ. Գ, էջ ճԿԶ—ճԿԷ։ Արտասահմանից թուղթ ուղարկելու գործը կապված է եղել շատ դժվարությունների ու ծախքերի հետ, ուստի այդ բանը կազմակերպող՝ Կ. Պոլսում Էջմիածնի նվիրակ Իսահակ վարդապետը 1784 թ. ապրիլի 27-ին կաթողիկոսին գրում է, թե ինքը նպատակ ունի փող հավաքել Էջմիածնի թղթի գործարանը վերանորոգելու համար։ Ղուկասը նրան պատասխանում է. «Իսկ վասն թղթատանն, որ յաւելով գրես, մի՞թէ մեք ոչ յաւխմք, այլ ժամանակս ձեռնտու չէ, մանաւանդ՝ խղճալի Նիկողայոսն եւ վախճանեցաւ և նորին արհեստին այլ գիտող ոչ գոյ...» (Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 218բ)։



ներ և այլն։ Արհեստավորները միավորված են եղել համքարությունների մեջ[1]։

Ուշագրավ է, որ Երևանում մեծ կարիք է եղել ժամագործ արհեստավորի, բայց տեղում այդպիսին չլինելու պատճառով հրավիրվել է Ախալցխայից[2]։ Խանը, կամենալով որ Երևանում էլ լինի այդ արհեստին տիրապետող, երևանցի ոսկերիչ վարպետ Իսրայելի հարեղբոր որդի Գևորգին, որը միաժամանակ աշակերտել էր ախալցխացի ժամագործին, ուղարկում է Կարին՝ այդ արհեստին կատարելապես տիրապետելու։ Այդ կապակցությամբ նա խնդրում է կաթողիկոսին նամակ գրել Կարինի հայ մեծամեծներին՝ օգնություն ցույց տալու այդ Գևորգին[3]։ Ղուկասը սիրով կատարում է այս խնդիրքը, նա Կարինի մեծամեծներին 1787 թ. մայիսին գրում է.

«Մանաւանդ սորա Տանս և մեզ եւս օգուտ է, որ յերկրուջս սահաթ սարքող դտանիցի։ Քանզի մեծամեծ տաճկաց շատոցն՝ մինչ սահաթքն սախաթին, առ մեզ ձգեն և ի մէնջ զնորն խնդրեն, բայց թէ սահաթսազ գտանիցի, փոքր մի տակաւք լինելոց են խնդրակքն»[4]։

Արարատյան երկրում 18-րդ դարի վերջում, չնայած բազմաթիվ խոչընդոտներին, առևտուրը եղել է զարգացած վիճակում։ Դրան մեծապես նպաստել են խանության վրայով անցնող առևտրական կարևոր ճանապարհները, որոնցից ամենանշանավորը Զմյուռնիայից դեպի Պարսկաստան, իսկ այնտեղից էլ Հնդկաստան և Միջին Ասիա տանող ճանապարհն էր։ 1785 թ. Փարիզում ֆրանսերեն հրատարակված Պարսկաստանի մի քարտեզի վրա շատ մանրամասն տրված են այդ, ինչպես և մյուս կարևոր ճանապարհները[5]։ Զմյուռնիայից Պարսկաստան գնացող ճանապարհը գալով Էրզրումի և Կարսի վրայով, մտնում էր Երևանի խանության տերիտորիան,

[1] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 78—82։

[2] *Մատենադարան*, ձեռ. № 4501, էջ 205բ։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում։

[5] Այդ քարտեզից մի օրինակ պահվում է Մոսկվայում (տե՛ս ЦГВИА, Коллекция ВУА, ф. 446, сд. хр. 56).

անցնում Էջմիածնով ու Երևանով, ապա Նախիջևանի և Ջուղայի վրայով գնում Թավրիզ: Այս ճանապարհի մասին դեռևս 17-րդ դարում չափազանց հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել Զաքարիա Ագուլեցին[1]: Ի տարբերություն 17-րդ դարի, 18-րդ դարի վերջում, անընդհատ պատերազմների ու արշավանքների հետևանքով, ինչպես նաև մեծ չափերի հասնող ավազակության, այս բանուկ ճանապարհով ավելի քիչ քարավաններ էին գնում, որի պատճառով և նվազել էին Երևանի խաների՝ ճանապարհից ստացվող եկամուտները:

Երևանից մի այլ ճանապարհ գնում էր դեպի Թիֆլիս, անցնելով հետևյալ վայրերով՝ Էջմիածին, Սարդարաբադ, Գյումրի, Համամլու, Ջալալ-օղլի, Շուլավեր, Թիֆլիս[2]: Այս ճանապարհը հնարավորություն էր տալիս կապ ունենալ Վրաստանի ներքին մասերի, Սևծովյան ափերի, Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի հետ:

Մի ուրիշ ճանապարհ էլ գնում էր դեպի Գանձակ, Շամախի, Դերբենդ, իսկ մի ուրիշը՝ դեպի Բայազետ, որտեղ այն բաժանվում էր մի քանի ճյուղերի, որոնցից գլխավորները դեպի Դիարբեքիր և Վան գնացողներն էին[3]:

Այս ճանապարհները զարկ էին տալիս ոչ միայն արտաքին, այլև ներքին առևտրին:

Երևանի խանությունը առևտրական լայն կապեր է ունեցել հեռու և մոտ շատ երկրների հետ: Երևանից բամբակ է արտահանվել Թիֆլիս, Էրզրում, Ախալցխա, Կարս, բրինձ է արտահանվել Թավրիզ, Խոյ, Բայազետ, Կարս, Էրզրում, Վան, բացի սրանցից արտահանվել է ցորեն, գարի և այլն[4]: Արտահանվել է նաև գինի, չորացած մրգեր, բանջարանոցային որոշ կուլտուրաներ և ծխախոտ: Սակայն մեր քննարկած ժամանակաշրջանում միշտ չէ, որ Երևանը կարողացել է մթերք-

[1] Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938, էջ 7—8:

[2] ЦГА АрмССР, ф. 90, д. 872, об. л. 2.

[3] ЦГВИА, коллекция ВУА, ф. 446, ед. хр. 56.

[4] Обозрение российских владений за Кавказом в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, ч. IV, СПБ, 1836, стр. 1284.



ներ արտահանել: Եղել է ժամանակ, երբ անհնարին է եղել հասած կուլտուրաները հավաքել դաշտերից և նրանք արոտվել են արշավող զորքերի ոտքերի տակ և բնակչությունը սովի է մատնվել:

18-րդ դարի վերջում խանության մեջ որոշ չափով զարգացած է նաև վաշխառուական կապիտալը: Վաշխառուական գործարքներով հանդես էր գալիս նաև Էջմիածնի վանքը[1]:

Անցնելով այս շրջանի ագրարային հարաբերությունների հարցին, ի սկզբանե անհրաժեշտ ենք գտնում ընդգծել, որ համեմատած նախորդ շրջանների հետ (17-րդ դարի վերջ և 18-րդ դարի առաջին կես) խանության հողատիրության ձևերի մեջ նկատվում են որոշ փոփոխություններ: Նախորդ շրջանում Արարատյան երկրի հողերի մեծ մասը պատկանում էր պարսից պետությանը և գտնվում պետական ֆինանսական օրգանների անմիջական տնօրինության տակ: Դրանք կոչվում էին պետական հողեր (դիվանի): Այս պետական հողերը, ինչպես ցույց է տվել Հ. Փափազյանը, բաժանվում էին երկու կատեգորիայի. 1) հողեր, որոնց եկամուտները լրիվին գնում էին պետական ծառայողների ու բանակի հրամանատարական կազմի օգտին, նրանք ղեկավարվում էին իրանական պետության կենտրոնական ֆինանսական գերատեսչության կողմից, 2) հողեր, որոնց եկամուտները տնօրինում էր խանի ադմինիստրացիան (խալիսե)[2]:

Շնորհիվ այն բանի, որ 18-րդ դարի երկրորդ կեսին Արարատյան երկիրը այլևս չէր հպատակվում պարսից պետությանը, տարբերությունը այս երկու կատեգորիաների միջև վերանում է և նրանք սկսում են համարվել Երևանի խանության պետական հողեր: Եթե նախկինում «դիվանի» հողերի կառավարումը իրականացվում էր շահի պաշտոնյայի (մուսթոֆի-ուլ-մամալիք) կողմից, ապա հիմա նրանք գտնվում

[1] *Б. М. Арутюнян*, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., стр. 183.

[2] *А. Д. Папазян*, Аграрные отношения в Ереванском ханстве в XVII веке. Автореферат кандидатской диссертации, Ереван, 1954, стр. 14.

էին Երևանի խանի չինովնիկներից մեկի իրավասության տակ, հետևաբար «դիվանի» հողերի ամբողջ եկամուտը կենտրոնանում էր խանի ձեռքը։

Խանը իր պաշտոնյաներին, որպես վարձատրություն, «դիվանի» հողերից «թիուլ» էր տալիս և թիուլդարը կարող էր իր օգտին գանձել հողահարկի՝ բահրայի (մալու—ջիհաթ) մի մասը, իսկ մյուս մասը և մնացած հարկերը գանձում էին խանի հարկահավաքները։ Թիուլային իրավունքը չէր կարելի վաճառել[1] և ոչ էլ ժառանգել[2]։

18-րդ դարի վերջում և 19-րդ դարի սկզբին թիուլային իրավունքը, ըստ Ի. Պ. Պետրուշևսկու ուսումնասիրության, ադրբեջանական խանություններում ապրել է որոշ էվոլյուցիա։ Թիուլդարները խանից կարող էին ստանալ ոչ միայն ռենտա-հարկի մի մասը, այլ ամբողջը և մյուս հարկերը, ընդ որում, թիուլդարը հարկերը փոխանակ պետական հարկահավաքից կամ դիվանից ստանալու, ինքը կարող էր հավաքել։ Թիուլային իրավունքով տրված գյուղերի բնակիչները դառնում էին լրիվին կախված թիուլդարից և նրա օգտին կատարում բոլոր պարտավորությունները։ Թիուլդարը մեծ մասամբ ապրում էր գյուղում և կառավարում անձամբ[3]։ Բացի սրանից, նշված ժամանակամիջոցում առանձին պաշտոնյաներ, օգտվելով ստեղծված քաղաքական պայմաններից, երբ խանը ի վիճակի չէր լրիվին կենտրոնացնել իշխանությունն իր ձեռքում, ժառանգական էին դարձնում իրենց պաշտոնը՝ հետևապես և այդ պաշտոնի դիմաց տրվող վարձատրությունը՝ թիուլային իրավունքը։ Սակայն, քանի որ այդ բանը ընդունված չէր ընդհանուր օրենքով, ապա ժառանգությունը ստանալիս անպայման անհրաժեշտ էր խանի՝ նվիրաբերության մասին գրության վերականգնումը, իսկ եթե մեռնում էր խանը, նույն բանը պետք է աներ նրա հաջորդը[4]։

---

[1] *Б. М. Арутюнян*, Крупное монастырское хозяйство...., стр. 37—38.

[2] *И. И. Петрушевский*, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении..., стр. 208.

[3] *Նույն տեղում, էջ 218։*

[4] *Նույն տեղում, էջ 220-221։*



Սեփականության հողերի մի մասը կազմում էին եկեղեցիներին և մզկիթներին պատկանող հողերը (վակֆային)։ Այս հողերը եկեղեցիները և մզկիթները ձեռք էին բերում նվերների ձևով, ինչպես նաև գնման ու զանազան այլ ճանապարհներով։ Կրոնական հիմնարկությունների հողերն ու այլ ունեցվածքները (ջրաղացներ, ձիթհաններ, դինկեր և այլն) պաշտոնապես ազատված էին բոլոր տեսակի հարկերից. հարկերից ազատված էին նաև իրենք՝ եկեղեցու սպասավորները, սակայն այդ արտոնված վիճակը քրիստոնեական եկեղեցու նկատմամբ հաճախակի խախտվել է։ Օրինակ, Էջմիածնի վանքը, որ վաղուց մաաֆություն էր ստացել պարսից պետությունից, հետագայում կրկին հարկի տակ է դրվում։ 18-րդ դարի երկրորդ կեսին Էջմիածնի վանքի մաաֆությունը մասնակի բնույթ ուներ։ 1763 թ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսը Հուսեյն-Ալի խանից Էջմիածնի վանքի մաաֆության մասին հրաման էր ստացել, բայց դրանից հետո էլ վանքը չէր ազատվել հարկերից։ «Ջամբռ»-ի շարադրման ժամանակ Սիմեոն Երևանցին դրությունը նկարագրում է այսպես.

«...տարին մի անգամ տամք դրամն և մէկ թուման ընծայն հազար և հինգ հարիւր դիանն, որ է աւելորդն մաաֆութեանն Աթոռոյս։ Եւ զայլ տուրքս ոչ ունիմք հարկ անուամբ, ոչ նաղդ և ոչ ջինս»[1]։

Այնուհետև նա նշում է, որ նավրուզի և բայրամի ժամանակ ինքը պարտավոր է նվերներ տանել խանին (կանխիկ դրամ և թանկարժեք իրեր), բայց այս ամենը չնչին բան էին համեմատած այն մեծ ծախքերի հետ, որ կատարվում էին խանի Էջմիածին այցելելու ժամանակ։ Այս դեպքում խանը մեծ բազմությամբ օրերով մնում էր վանքում՝ վայելելով միաբանների առատ հյուրասիրությունը և բացի դրանից, այդ «շնորհաբանքի» համար կաթողիկոսից ոսկի և այլ նվերներ էր ստանում։

Իր կատարած ծախքերը վանքը հանում էր բազմաթիվ երկրներից ստացվող նվիրատվական գումարներից, վանքապատ-

---

[1] Ս. Երևանցի, *Ջամբռ*, էջ 138։



355—4

կան գյուղացիության անլուր շահագործմամբ, այլև վանքին պատկանած արտադրական օբյեկտներից։ Իր հարստության շնորհիվ վանքը կարողանում էր փրկանքներով ազատել արշավողների ավերումից ու թալանից։ Ղ. Կարնեցուն հաջողվում է իրականացնել շինարարական բազմաթիվ աշխատանքներ, դրանցից ամենանշանավորը Էջմիածնի մայր տաճարի վերանորոգումն էր հռչակավոր նկարիչ Նաղաշ Հովնաթանի կողմից։

Սիմեոն Երևանցու ժամանակ Էջմիածնի վանքը, բացի Վաղարշապատ գյուղից, որի մուլքադարն ու թիուլդարն էր միաժամանակ, ուներ մուլքային յոթ այլ գյուղեր. դրանք էին՝ Օշականը, Աշտարակը, Եղվարդը, Աղավնատունը, Ծաղկավանքը, Մուղնին, Կիրաշլուն (վերջինս ավերված էր)։ Այս գյուղերից վանքը ստանում էր համախառն բերքի մեկ տասներորդը, այսինքն մուլքը[1]։ Հետագայում, Հերակլի արշավանքների հետևանքով այս գյուղերի բնակչության մի մասը ցրվում է և քչերն են վերադառնում։ Սրանցից ոմանց խանը վերաբնակեցնում է իրեն պատկանող գյուղերում։ Օրինակ, 1790 թ. փետրվարի 15-ին Ղ. Կարնեցու Հերակլ Բ-ին ուղղած նամակից երևում է, որ Վրաստանից ետ եկած Մուղնու գյուղացիներին Երևանի խանը տեղափոխել է այլ գյուղ. «...զբնակիչս այնր գեղջն հանեալ անտի և տարեալ յայլ գիւղ»։ Կաթողիկոսը խնդրում է նամակ գրել խանին, որպեսզի նա մուղնեցիներին ետ դարձնի[2]։

Բացի Էջմիածնից, իրենց տրամադրության տակ հողեր ունեին նաև Երևանի խանության մեջ գործող մյուս վանքերը[3]։

Մշտապես պայքար էր գնում եկեղեցու հողերին տիրելու համար։ 1797 թ. մեծ աղմուկ է բարձրանում Օշական գյուղի մոտ գտնվող Գետառ կոչված անդաստանի համար[4]։

---

[1] *Б. М. Арутюнян,* Крупное монастырское хозяйство в Армении..., стр. 3.

[2] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 274ա—274բ։

[3] Ս. Պողոսյան, Եկեղեցական հողատիրությունը..., Պետ. համալսարանի գիտ. աշխատություններ, հ. XIII, էջ 181։

[4] Այդ դեպքերի մասին Ղ. Կարնեցին նույն թվականի դեկտեմբերի 24-ին Ն. Պոլսում նվիրակ Գալուստ վարդապետին գրել է հե-



Արարատյան երկրում հողատիրության ձևերից մեկն էր նաև մուլքադարությունը։ Մուլքադար-կալվածատերը տիրում էր ժառանգելու իրավունքով, նա պարտավոր չէր պետական ծառայություն կատարել։ Նրա իրավունքները տարածվում էին իր մուլքի սահմաններում եղած հողերի ու հանդերի վրա, որոնք օգտագործվում էին առանձին գյուղական համայնքների կողմից, կամ էլ տրվում էին հող չունեցող կամ սակավահող գյուղացիներին՝ բնավարձակալական հիմունքներով[1]։

---

տևյալը. Օշականի հարևան Ղզլաթմիր գյուղի մուղանցի բնակիչները ձգտում են տիրանալ Օշականի Գետառ կոչված անդաստանին։ Մուլքի բեկի որդի Հաճի Հասանը, տեսնելով այնտեղ եղած ավերակները, գնում է շեխիսլամի մոտ և սուտ վկաներով հաստատում, թե այդ ավերակը գյուղ էր Մահմադապատ անունով և հանդիսանում է իր նախնիների ժառանգությունը։ Դրանից հետո նա այդ հողամասը վաճառում է Վալիբեկի որդի Մահմադ Հասան բեկին (կամ Մաշադի Սադըղին)։ Շեխիսլամը [illegible] է տալիս, բայց կաթողիկոսը կարողանում է խափանել այդ գործարքը։

Նույն թվականին, չալթուկի հնձի ժամանակ, մուղանցիները, օգտվելով Երևանի խանության մեջ տիրող անիշխանությունից, հայտարարում են, թե Գետառը Մահմադապատ գյուղինն է և նրա տասանորդը իրենք պետք է ստանան։

Ղ. Կարնեցին երկու անգամ նամակ է գրում Մահմադ Հասան բեկին՝ փորձելով համոզել նրան հրաժարվելու հողամասից։ Բայց դա չի հաջողվում։ Ուստի, նա այս մասին գրավոր դիմում է շեխիսլամին և Հակոբ ու Հովհաննես վարդապետներին ու վանքի միրզային ուղարկում Երևան։ Շեխիսլամը Գետառը տիրելու փաստաթուղթ է տալիս վարդապետներին, որոնք գնում են Օշական։ Նույն օրը, երեկոյան ժամը 7-ին մուղանցիները զինված հարձակվում են գործում վարդապետների բնակարանի վրա, սղոցում են դուռը, մտնում ներս։ Նրանք ծանր վիրավորում են Հակոբ վարդապետին և թալանելով հեռանում։ Վիրավորին տեղափոխում են Էջմիածին, ուր չորս օր հետո նա մահանում է։

Այդ ժամանակ՝ 1797 թ. նոյեմբերի 8-ին Պարսկաստանից Երևան է վերադառնում Մահմեդ խանը։ Ղ. Կարնեցին վերոհիշյալ դեպքերի մասին հայտնում է խանին և վերջինս կարգադրում է Գետառը թողնել վանքին, հավաքված տասանորդը վերադարձնել և տալ սպանվածի արյան վարձը (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 463բ—465ա)։

[1] *И. П. Петрушевский,* Очерки..., стр. 231.

Մուլքադարը անմիջապես չէր խառնվում գյուղատնտեսական արտադրության պրոցեսին և բավականանում էր միայն ռայաթներից բնավճար ռենտա հավաքելով և անսահման չափով օգտագործելով գյուղացիների կոռային աշխատանքը: Մուլքը ազատորեն գնվում և վաճառվում էր[1]:

Մուլքադարը սովորաբար ստանում էր ռենտա-հարկի մի մասը՝ մուլքը, իսկ ռենտա-հարկի մյուս մասը գնում էր խանի օգտին (բահրա): Երևանի խանության մեջ մուլքը կազմում էր համախառն բերքի մեկ տասներորդ մասը, իսկ բահրան՝ մեկ հինգերորդը[2]: Երբեմն մուլքադարները խախտում էին այս և 1/10-ի փոխարեն գանձում բերքի 1/5-ը[3]:

Մուլք նշանակում էր նաև ջրի նկատմամբ ֆեոդալի ունեցած իրավունքը, եթե այն անցնում էր մուլքադարի կալվածքով, կամ ինքը՝ կալվածատերն էր անցկացրել: Այս դեպքում գյուղացիները պարտավոր էին ջրի համար ես հարկ վճարել: Մուլք էր կոչվում ընդհանրապես ամեն մի սեփականություն, որն իր տիրոջը օգուտ էր բերում՝ դա կարող էր լինել ջրաղաց, ձիթհան, դինկ, բաղանիք, արհեստանոց և այլն[4]:

Գյուղացիները նախկինի նման ամրացված չէին հողին, նրանք ազատ էին տնօրինելու իրենց գույքը: Բայց, այնուհանդերձ, գյուղացին իրավունք չուներ հեռանալու իր բնակավայրից. դրան արգելք էին հանդիսանում հարկային պարտավորությունները, որ պետք է կատարեր նա իր բնակված վայրում: Եթե գյուղացին հեռանում էր մի այլ վայր, կալվածատերը կարող էր նրան ետ բերել: Միայն տասներկու տարի այլ վայրում ապրողն էր ազատվում հարկադրական ենթարկումից: Սուլթան Հուսեյն շահի ֆերմաններից մեկում (1710) այս օրենքը բնութագրվում է հետևյալ կերպ. միայն տասներկու տարի այլ վայրում ապրած և ամբողջ ժամանակ իր հարկային պարտավորությունները լրիվ կատարած ռա-

[1] *И. П. Петрушевский*, Очерки..., стр. 231.

[2] Ս. Երևանցի, *Ջամբռ*, էջ 112—113:

[3] Նույն տեղում, էջ 159:

[4] *И. П. Петрушевский*, Очерки..., стр. 231—232.



յաթը կարող էր ազատվել հարկադրական ենթարկումից: Այդ օրենքը կոչվում էր «կուչ-ե ալի» (բարձրագույն խույս)[1]:

Բոլոր հարկերն ու պարտավորությունները, որ դրված էին տվյալ տերիտորիայի վրա, բաժանվում էին գյուղական համայնքների միջև՝ ըստ «ծխերի» ընդհանուր թվի:

Բնակչության վրա դրված հարկերը վճարվել են բնամթերքով և դրամով: Հիմնական հարկը բահրան էր՝ ռենտա հարկի մեծ մասը: Բահրան ամբողջովին գանձվում էր խանի օգտին, եթե տվյալ հողամասը կալվածատիրական չէր: Մուլքային և երբեմն էլ թիուլային իրավունքով տրված հողերից հավաքվող բահրան կիսվում էր երկու մասի, մի մասը՝ բերքի մեկ տասներորդը գնում էր մուլքադարի օգտին, երբեմն էլ գնում էր 4/30-ը, իսկ խանի օգտին վերցվում էր 2/10-ը կամ 6/30-ը: Եթե խանը մուլքադարին, որպես առանձնահատուկ շնորհ, տալիս էր իր բաժինը որպես թիուլ, ապա կալվածատերը ստանում էր ռենտան ամբողջությամբ[2]:

Ռենտա-հարկ գանձվել է նաև հարդից և խոտից, ընդորում, ճիշտ նույն հարաբերությամբ, ինչ հացահատիկից: Գյուղացիները բացի այս հարկից, վճարում էին ուղղակի և անուղղակի բազմաթիվ այլ հարկեր և կատարում պարտադիր աշխատանքներ:

Խանության բոլոր աշխատունակ տղամարդկանցից գանձվում էր գլխահարկ (բաշ-փուլի)[3]: «Ջիզյա» (հարկ քրիստոնյաներից) գանձվելու մասին այս շրջանում տեղեկություններ չկան: Դեռևս 1736 թ. Նադիր շահը ազատել էր քրիստոնյաներին այս հարկից[4]: Հետագայում էլ Երևանի խանության մեջ հայերից հավատի հարկ չեն վերցրել, դա երևում է մի ուշագրավ փաստաթղթից:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հե-

[1] *А. Д. Папазян*, Аграрные отношения в Ереванском ханстве в XVII веке. Автореферат, стр. 23.

[2] *И. П. Петрушевский*, Очерки..., стр. 267.

[3] Նույն տեղում, էջ 283:

[4] *Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-Շահին պարսից*, Վաղարշապատ, 1870, էջ 24:

տա, ռուսական կառավարությունը հետաքրքրվել է այս հարցը, որպեսզի, եթե հայերը հավատի հարկ են տվել, ապա իրենք այն վերացնեն։ Ահա թե ինչ է գրել Երևանից Ներսես Աշտարակեցուն Հայկական մարզի կառավարիչ իշխան Ալեքսանդր Ճավճավաձեն 1828 թ. մարտի 22-ին.

«Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար, հետևազորի պարոն գեներալ-ադյուտանտ և կավալեր Պասկևիչը մարտի 17-ին № 450 (հրամանով) կարգադրել է ինձ տեղեկություններ հավաքել և զեկուցել իրեն, թե արդյոք նախկին կառավարման ժամանակ Երևանի խանության մեջ որևէ հատուկ հարկ գանձվե՞լ է հայերից՝ ազատ դավանության համար։ Նմանապես և չե՞ն եղել արդյոք այլ անպատշաճ հարկեր, որոնք ներկա կառավարման ժամանակ գոյություն չեն կարող ունենալ։

Այս հրամանը վավերացնելու նպատակով, ես դիմում եմ Ձերդ Բարձր սրբազնությանը և խոնարհաբար խնդրում տեղեկացնել ինձ հիշյալ հանգամանքների մասին»[1]։

Այս գրությանը Ներսես Աշտարակեցին Էջմիածնից 1828 թ. մարտի 29-ին տալիս է հետևյալ պատասխանը.

«...սույնով պատիվ ունեմ պատասխանելու, որ նախկին կառավարման ժամանակ Երևանի խանության մեջ հայերից ազատ դավանության համար ոչ մի հարկ չի վերցվել»[2]։

Այսպիսով, տեսնում ենք, որ հայերը ազատ են եղել հավատի հարկից, սակայն սա չի նշանակում, որ խանության մեջ քրիստոնյաներն ու մահմեդականները նույն վիճակում են եղել։ Հայերի դրությունը անհամեմատ ավելի վատ է եղել, որովհետև իշխանության գլուխ էին կանգնած մահմեդական տիրողներ, որոնք միանգամայն հասկանալի պատճառներով աշխատում էին ճնշած լինել իրենց հավատին չպատկանող անձանց։ Հայտնի է, որ Երևանի խանության մեջ քրիստոնյաները իրավունք չունեին դատարանում վկայություն տալու։ Կրոնական տարբերության վրա խարսխված

[1] Մատենադարան, Արխիվային բաժին, կաթղ. դիվան, թղթ. 58, վավ. 228։

[2] Նույն տեղում, թղթ. 98, վավ. 129։



այս օրենքը մի կատարյալ չարիք էր հայ բնակչության համար։

Կրոնական տարբերությունը արտահայտություն էր գտնում նաև հարկերը բաշխելիս։ Օրինակ, Երևանի խանը մեծ հարկեր էր վերցնում խաղողագործությամբ զբաղվող հայ գյուղացիներից։ Շոպենի տվյալներով միայն հինգ գյուղերի հայ բնակիչներից խաղողագործության համար վերցվել է 680 թուման, մինչդեռ մահմեդականներից ոչինչ չի գանձվել։ Շոպենը գրում է.

«Մուսուլմանների այգիներից ոչինչ չէր գանձվում, որովհետև ենթադրվում էր, որ նրանք խաղողը գինի չեն դարձնում»[1]։

Երևանի խանը առանձնապես վատ էր վարվում հայերի հետ, երբ դրսից նրան սպառնում էին քրիստոնյա ուժերը։ Օրինակ, հայտնի է, որ երբ Հերակլը 1779 թ. պաշարել էր Երևանը, Հուսեյն-Ալի խանը իր ողջ բարկությունը թափում է հայերի գլխին, մեղադրելով նրանց վրացիներին Երևան կանչելու մեջ։ Նա ձերբակալում է հայերից ամենանշանավորներին, տանջում է, տուգանքներ վերցնում և նրանցից շատերին մահվան հասցնում։

Բացի բահրայից, գյուղացիները վճարում էին նաև անասնահարկ և հարկեր՝ խանի կամ խոշոր հողատեր-մուլքադարների կալվածքների կառավարչին վարձատրելու համար։ Այս հարկը կազմում էր բերքի 1/40 մասը և վճարվում գլխավորապես բնամթերքով[2]։ Բնակիչները հարկեր էին տալիս արոտավայրի, տան կամ ծխի, հեծելազորի կարիքների (գարի, թամբի սարք, խուրջին) և ուրիշ բաների համար։ Խանը իր պաշտոնյաներից մեծ մասին սովորաբար ոչինչ չէր վճարում, նրա փոխարեն վճարում էին գյուղացիները։

Երևանի բնակիչները հատուկ հարկ էին տալիս (տարեկան 72 թուման) քաղաքի գիշերային պաշտպանությունը կազմակերպելու համար[3]։ Խանին մեծ եկամուտներ էին հա-

[1] *Шопен*, стр. 975.

[2] *И. П. Петрушевский*, Очерки..., стр. 280.

[3] *Шопен*, стр. 978.

նամ այգու հարկից (բաղխուլի), որը մեծ մասամբ գանձվում էր դրամով: Այդ հարկը որոշվում էր այգու դրամական եկամուտների 1/11-ի չափով, կամ ըստ ծառերի քանակի ու հողային տարածության[1]: Հարկերի մեծ մասը նշված չէր հարկային ցուցակներում և սահմանվում էր խանի կամ նրա պաշտոնյաների կողմից: Այդ հարկերի չափը, բնույթը և ձևը կախված էր եղանակից, բերքի առատությունից կամ սակավությունից, ինչպես և երկրի քաղաքական հանգամանքներից:

Պարտադիր հարկերի բնույթ էին ստացել նաև նվերները՝ «փեշքեշները», որ տալիս էր բնակչությունը իր անմիջական ֆեոդալներին ու խաներին: Նվերներ էին տալիս ոչ միայն նոր տարվա՝ (Նովրուզի, 21 մարտի) և 30-օրյա պասից հետո նշվող բայրամի—ռամազանի առթիվ, այլև խանի, նրա ստորադրյալների և կալվածատերերի որդիների ծննդյան, կնունքի, հարսանիքի և անգամ մահվան ժամանակ: «Փեշքեշ» կամ «բայրամլիկ» կարող էին լինել մետաքսե կամ բրդե գործվածքներ, դրամ, գառներ, ոչխարներ և նույնիսկ հավեր ու ձվեր:

Մեծ եկամուտներ էին ստանում ֆեոդալները նաև տուգանքներից, որ դրվում էին ազգաբնակչության վրա զանազան առիթներով:

Բացի այս ամենից, գյուղացիները պարտավոր էին ձրի աշխատելու խանի ու իրենց ֆեոդալների համար (բեգար, կոռ): Հողատերերին անձամբ պատկանող հողամասերը մշակվում էին գյուղական համայնքի կողմից և յուրաքանչյուր ծուխ այնտեղ տարեկան աշխատում էր 3—6 օր: Բացի այդ, համայնքի անդամները պարտավոր էին տարեկան երկու օր աշխատել հողատիրոջ համար (ավարիզ)[2]: Հաճախ այս կանոնը խախտվում էր և նրանց աշխատեցնում էին ավելի երկար: Օրինակ, Հ. Արարատյանը հաղորդում է, որ Վաղարշապատ գյուղի բնակիչներին հնձի ժամանակ աշխատանքի էին

[1] С. А. Егиазаров, Исследования..., ч. I, стр. 289.
[2] И. П. Петрушевский, Очерки..., стр. 278.



տանում կալվածատիրական հողերը և այնտեղ աշխատեցնում օր ու գիշեր, բացի կիրակի օրերից[1]:

Երբեմն պարտադիր աշխատանքները տրվում էին իբրև պատիժ[2]:

Արտակարգ պայմանները հնարավորություն էին տալիս Երևանի խաներին նոր պարտավորություններ դնել գյուղացիների վրա: Այսպես, Աղա Մահմեդ շահի արշավանքի նախօրյակին Մահմեդ խանը Երևանի բերդը ամրացնելու և այնտեղ մթերքներ կուտակելու նպատակով, կարգադրում է գյուղացիներին իրենց անասուններով ծառայել իրեն: Միայն Աշտարակ գյուղից պահանջվում է 40 ձի՝ մարդկանցով: Այդ ձիավորները Ծարուրից ցորեն են տանում Երևան և վերադարձին գերաններ փոխադրում Ծարուր՝ խանի տան կառուցման համար[3]:

Գյուղացիները պարտավոր էին մթերքներով, գիշերելու տեղով, այլև փոխադրականով ապահովել իրենց գյուղերով անցնող խանական պաշտոնյաներին և ճանապարհորդներին,

[1] Жизнь Артемия Араратского, ч I, стр. 183.
[2] Հ. Արարատյանը պատմում է, որ մի անգամ էջմիածնի վանքի այգիներից մեկի վերակացուն վանքի այգին խաղող ուտելու մտած մի երիտասարդ մահմեդական է սպանում և վանականները փրկելով թաքցնում են մարդասպանին ու հավատացնում սպանվածի ազգականներին, թե սպանությունը կատարել են Վաղարշապատ գյուղի մի քանի երիտասարդներ: Ուստի խանը, որպես պատիժ, կարգադրում է Վաղարշապատի բնակիչներին իրենց գործիքներով ու փոխադրականով [illegible] իր համար մի ամրոց կառուցել: Գյուղացիները չեն կամենում գնալ և թաքնվում են, բայց նրանց տանում են ուժով: Աշխատանքի պայմանները չափազանց ծանր էին, հերթափոխումը կատարվում էր շատ մեծ ուշացումներով: Գյուղացիների մի մասը հիվանդությունների, հսկիչների դաժան վերաբերմունքի ու դժվարա[illegible] մեռնում է աշխատանքի վայրում: (Տե՛ս Жизнь Артемия Араратского, стр. 103—126.

Այդ սպանության մասին տեղեկություն կա նաև Ղ. Կարնեցու մոտ (տե՛ս Ղ. Կարնեցու նամակը Մինաս վարդապետին՝ 1788 թ. նոյեմբերի 17-ին, Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 139ա): Այդ նամակից երևում է, որ սպանությունը կատարվել է ոչ թե 1790 թ., ինչպես գրել է Հ. Արարատյանը, այլ ավելի վաղ:
[3] Жизнь Артемия Араратского..., ч. I, стр. 195—199.

որոնք հյուրընկալվելուց և հյուրասիրվելուց հետո, որպես կանոն, գյուղացիներից «ատամի վարձ» էին ստանում։ Գյուղերում ճանապարհորդների հանգստանալու գործը սովորաբար հանձնվում էր խանի պաշտոնյաներից մեկին, որը կոչվում էր «մեհմանդար»։ Այնքան ձեռնտու է եղել այս պաշտոնը, որ շնորհվել է իբրև վարձատրություն։ Մեհմանդարները իրենց պաշտոնը կատարելիս թույլ էին տալիս բազում չարաշահումներ և զեղծումներ[1]։

Հայ աշխատավորները շատ տուրքեր և մուծումներ են արել նաև եկեղեցուն։ Այդ տուրքերը, որոնց մի մասը պարտադիր հարկի բնույթ էր ստացել, քառասունից ավելի էին[2]։ Եկեղեցական տուրքերը երեք կատեգորիայի էին՝ 1. հայրապետական (կաթողիկոսական), 2. առաջնորդական, 3. քահանայական հաս և տուրք։ Հայրապետականը լինում էր մինչև ութ տեսակի, որոնցից երկուսը «սրբադրամը» և «պտղին» դարձել էին պարտադիր և եկեղեցուն տարեկան բերում էին կես միլիոն ռուբլու եկամուտ։ Երեք տարին մեկ անգամ մեռոն եփելու համար հավաքվող դրամական տուրքը բերում էր 200 հազար ռուբլի եկամուտ[3]։ Բնակիչները պարտավոր էին եկեղեցուն վճարել մկրտության և թաղման, հարսանիքի ու բազմաթիվ այլ արարողությունների համար։ Անկախ այս բոլորից, կաթողիկոսի գրությամբ մշտապես ողորմություններ էին հավաքվում դեպի Երուսաղեմ ուխտի գնացողների համար։

Արարատյան երկրի բնակիչները տառապում էին նաև տգիտության մեջ։ Երևանի խանությունում, այն ժամանակ, կար ընդամենը երկու փոքրիկ դպրոց․ Երևանում գործում էր մեդրեսե, իսկ Էջմիածնում կրոնական դպրատուն։ Ուսումը մատչելի է եղել միայն ունևորներին, չափազանց չնչին էր այն չքավորների թիվը, որոնց հաջողվել է ուսում ստանալ։ Հ. Արարատյանը պատմում է, որ Վաղարշապատ գյուղի 700 ընտանիքից միայն 10 մարդ էր գրագետ[4]։

[1] Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Զ, էջ 407—408։
[2] Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, էջ 135—136։
[3] Նույն տեղում։
[4] Жизнь Артемия Араратского..., ч. I, стр. 3.



Անտանելի են եղել գյուղացիների կենցաղային պայմանները, նրանք սովորաբար իրենց բնակարանները կիսել են անասունների հետ՝ ենթարկվելով այդ վիճակի բոլոր դժվարություններին։ Ահա թե ինչ է գրել Ջ. Մորիերը, որը եղել է Թալինի Էջբեկ հայկական գյուղում։ Նա նշում է, որ այդ գյուղի տները «...նմանում են Քսենոֆոնի Հայաստանում նկարագրածին, և կարելի է նկատել, թե նույնանման տներ ունեն Հայաստանի ամբողջ հողամասում, ներառյալ Վրաստանի մի մասը, որը նշանավոր է իր ցրտի խստությամբ։ Բնակիչները կատարում են բավական ընդարձակ պեղում, որ գետնի բնույթին համաձայն տալիս է նրանց տան մեկ, երկու կամ երեք կողքերը, և հետո մնացյալը կառուցում են կիկլոպյան պատերի նման՝ վիթխարի քարերով։ Սրանց վրա դնում են շատ հաստ գերաններ, և ապա ամբողջությունը ծածկում են հողով...»[1]։

Չափազանց վատ է եղել երկրում առողջապահության վիճակը, Լ. Ա. Հովհաննիսյանը գրում է.

«Հայկական մարզում, մինչև նրա Ռուսաստանին միանալը, ոչ մի բժշկական կազմակերպություն, գոնե ամենատարրական ձևով գոյություն չի ունեցել[2]։ «Գործնական բժշկությունը մեծ մասամբ գտնվում էր ամենատգետ հեքիմների ձեռքում»[3]։

Եղած սակավաթիվ բժիշկները սպասարկում էին միայն ունևոր խավին։ Ղուկասը 1784 թ. նոյեմբերի 14-ին Կ. Պոլսում Էջմիածնի նվիրակ Իսահակ վարդապետին գրել է.

«Իսկ և բաց լսեցանէ՝ ատ դժնդակութեան օդոյն ի հիւանդութեանց ևս ոչ սակաւք ազատ... իսկ ի բժշկաց և բանագիտաց զուրկ գոլով միայնոյ բժշկապետի այցելութեան միայն կամք ապաստան»[4]։

Հիվանդությունները և հատկապես ժանտախտը հաճա-

[1] Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 37։
[2] Л. А. Оганесян, История медицины в Армении, т. IV, Ереван, 1947, стр. 3.
[3] Նույն տեղում, հ. III, Երևան, 1946, էջ 254։
[4] Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 362ա։

րավոր զոհեր էին տանում երկրից։ Ժանտախտի դեմ պայքարելու ուրիշ միջոց չունենալով խանության և նրա հարևան երկրների (Կարս, Բայազետ, Վրաստան) բնակիչները իրենց հույսերը դրել էին Էջմիածնի վանքում պահվող գեղարդի վրա։

Այս ծանր պայմաններում աշխատավոր բնակչությունը չի դադարեցրել պայքարը իր աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների դեմ։ Այդ պայքարը արտահայտվել է երբեմն ֆեոդալների վրա հարձակումների, երբեմն հարկերը վճարելուց խուսափելու ձևով։

Տեղեկություն է հասել մեզ, որ 18-րդ դարի վերջում Արարատյան դաշտում գործում էր ժողովրդական մի վրիժառու, մի «ավազակ», որը թալանում էր հարուստներին և նրանց գույքը բաժանում չքավորների միջև։ Այդ մարդու մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Հ. Արարատյանը։ Նա գրում է, որ 1790 թ., երբ ինքը աշխատում էր Էջմիածնի վանքի տպարանում որպես կազմարարի աշակերտ, մի մարդ է գալիս իր մոտ և խնդրում իր համար բերել Սիմեոն Երևանցու ժամագրքից մի օրինակ՝ փոխարենը խոստանալով մեկ ձի և մեկ ոչխար[1]։ Հ. Արարատյանը կատարում է այս և այդ մարդուց ստանում երեք ոչխար ու մեկ ձի[2]։

Այդ ժամանակ հայտնի է դառնում, որ Մերկե-Կուլաղ (Մերկ-Կողպետ) գյուղի տերտերը հեռացել է գյուղից և ավազակությամբ է զբաղվում։ Նրան կոչում էին Մզրախ (տեգ), որովհետև միշտ շրջում էր տեգով զինված[3]։ Հենց այդ մարդն էր, որ օգնել էր Հ. Արարատյանի չքավոր ընտանիքին։ Հ. Արարատյանը պատմում է, որ Մզրախը, ինչպես, երբեմն զբաղվում էր թալանով, բայց ի տարբերություն մյուս ավազակների, նա թալանում էր միայն հարուստներին և դրանով չքավորների վրեժը հանում։ Նա իր թալանած իրերից ոչինչ չէր վերցնում և իր մոտ ոչ մի ավելորդ բան

[1] Жизнь Артемия Араратского..., т. I. стр. 9[illegible].

[2] Նույն տեղում, էջ 98։

[3] Նույն տեղում, էջ 99—100։



չուներ, բոլորը բաժանում էր չքավորներին։ «...շատ գյուղերում,— գրում է Հ. Արարատյանը,— այդպիսի խեղճ մարդիկ օրհնում էին նրան՝ նրա արած բարեգործությունների համար[1], իսկ հոգևորականները չափազանց գժգոհ էին նրա «դաժան և ինքնագլուխ» արարքներից[2]։

Դժբախտաբար այլ նյութեր առայժմ հայտնի չեն Մզրախի մասին, բայց այս եղածից էլ երևում է, որ նա, արտահայտելով ժողովրդի դժգոհությունը իրեն շահագործող ֆեոդալների նկատմամբ, հանդես է եկել որպես հարստահարված, չքավոր դասակարգի շահերի պաշտպան, որի պատճառով էլ արժանացել է այդ դասակարգի համակրանքին։

Ժողովրդի մշտական շահագործողների կողքին հանդես էին գալիս նաև բազմաթիվ հոգևորականներ, կամ այլ մարդիկ, որոնք այս կամ այն առիթով, մեծ մասամբ ուխտավորական նպատակներով, ուղևորություն էին կատարում զանազան տեղեր, գլխավորապես Երուսաղեմ և օգտվելով կաթողիկոսի տված ժողովարարական կոնդակներից, բնակչությունից միջոցներ էին հավաքում իրենց ճանապարհորդությունը իրագործելու համար։ Այդ ուխտավորները ոչ միայն Երևանի խանությունից էին, այլև ուրիշ վայրերից, մեծ մասամբ Վրաստանից։ Ժողովուրդը հաճախ հրաժարվում էր «նվիրատվություն» անելուց և բողոք հայտնում կաթողիկոսին, այնպես որ վերջինս հաշվի էր նստում դրա հետ և ինքը իր հերթին մերժում ժողովարարական կոնդակ այս կամ այն կրոնավորին տալու մասին վրաց արքայական տան անդամների խնդրանքը։

Այսպես, 1794 թ. նոյեմբերի 23-ին Ղուկասը Հերակլ Բ-ի թոռ Դավիթ Միրզային գրում է, թե ինքը չի կարող ժողովարարական թուղթ տալ նրա ուղարկած Պետրոս քահանային, որովհետև ժողովուրդը դժգոհում է.

«Այլ գիտեն արդեօք զորպիսութիւն ժողովրդոց մերոց՝ որք ի յետին դառնութեան կան։ Երբեմն երբեմն ըստ գրոյ բարձրապատիւ հօր քո և գերազնիւ սիրելւոյն մերոյ՝ երկուց քահանայից թուղթ տուաք, ժողովուրդքն մեր այնքան նե-

[1] Жизнь Артемия Араратского..., т. I. стр. 100—101.

[2] Նույն տեղում, էջ 102։

ղեալ և զայրացեալ էին, մինչև ի յաւետնին իսկ աղաղակեալ ումանց թէ՝ մեք գլուխս մեր կարեմք պահել, որ այլոց ևս օգնել կարասցուք. յետոյ թէ զինչ տուտնջս են գրեալ մեզ, ոչ է արժան աստ նկարելն»[1]։

Ղուկաս կաթողիկոսը վախենում էր ժողովրդական զայրույթից և աշխատում այնպես անել, որ իրենց վտանգ չգա։ Նույն նամակի մեջ նա գրում է.

«...մերայինքն ամենայն ի յաղքատութենէ և ի դառնութեանց ժամանակիս նեղեալ գոլով՝ գրեթէ լերես են եղեալ, որոց աւելորդ հրաման հրամայելն վնաս բերէ, քան թէ օգուտ»[2]։

Ժողովուրդը մեծ ատելությամբ էր վերաբերվում իրեն շահագործող հոգևոր ֆեոդալների հետ։ Հ. Արարատյանը գրում է, թե հասարակ քահանաներին իրենց մոտ հարգում էին, բայց վանականներին՝ ընդհակառակը, և նույնիսկ եպիսկոպոսներին հանդիպելիս ոչ ոք չէր ուզում գլխարկը հանել[3]։

Գյուղացիները հաճախ հրաժարվում էին եկեղեցական հարկերը վճարել։ Օրինակ, Արարատյան երկրից ոչ այնքան հեռու գտնվող Թովմա Առաքելո վանքի մոտ եղած Դաշտ գյուղի բնակիչները չէին կամենում վանքին հարկեր տալ։ Ղ. Կարնեցին վախենալով, որ Դաշտի բնակիչների օրինակը վարակիչ կարող էր լինել մյուսների համար, 1785 թ. հունվարին նամակ է գրում նրանց և աշխատում համոզել, որ հարկերը վճարեն.

«Նախ՝ զի այդպէս անարգելն և անողորմ լինելով աննման գտանիք բոլոր ազգիս մերոյ. և երկրորդ՝ զի այդու յամառութեամբդ յԱստուծոյ աչացն ելանէք և այլոց ևս վատթար օրինակ լինիք, զոր ամենևին ոչ կամիմ և ոչ վայել է բարեպաշտութեան ձերում»[4]։

Ղուկասը սպառնում է հակառակ դեպքում նրանց հետ այլ կերպ վարվել.

[1] Դիւան, հ. Դ, էջ 642—643։

[2] Նույն տեղում, էջ 643։

[3] Жизнь Артемия Араратского.... т. I, стр. 253.

[4] Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 379ա։



«Իսկ թէ ոչ կամիցիք լսել հայրական պատուէրի մերում, և դարձեալ յամառիցիք զրկել զսուրբ վանսն ձեր և զխղճալի բազմաշխատ Առաջնորդն նորին ի հասից և իրաւանց ամէն, ասեմ ձեզ, կթելոց էք յանժամ զպտուղ անխղճութեան և անհնազանդութեան ձերոյ և նշաւակ էք լինելոց բազմաց»[1]։

Եկեղեցական հարկերը չվճարելու դեպքեր եղել են նաև Ղազախում։ 1798 թ. օգոստոսի 18-ին Հաղպատի միաբան Պետրոս վարդապետը գրում է վրաց թագավոր Գեորգի ԺԲ-ին, որ Ղազախի հայերը չեն ուղարկում սահմանված հարկերը և խնդրում է այդ մասին հրովարտակ ուղարկել Ղազախի տանուտերերին ու քահանաներին։ Գեորգին Պետրոսի նամակի վրա մակագրում է, որ եթե ղազախեցիները վանքի հարկերը կամավոր կերպով չտան, ապա նրանցից բռնությամբ կվերցնեն[2]։

* * *

Վերը շարադրվածից երևում է, որ 18-րդ դարի վերջում Երևանի խանության բնակչությունը գտնվում էր դաժան շահագործման ու ճնշման պայմաններում։ Չնայած խանության կյանքում այդ դարի կեսին տեղի էր ունեցել կարևոր մի իրադարձություն՝ այն դուրս էր եկել պարսից պետության կազմից և գտնվում էր կիսաանկախ վիճակում, բայց դրանից աշխատավոր մարդկանց դրությունը ոչնչով չէր փոխվել։ Ֆեոդալական հարկերը գանձվում էին նախկին չափերով, պարտավորությունները մնում էին նույնը։ Տարբերությունը լոկ այն էր, որ եթե նախկինում խանության եկամուտների մեծ մասը գնում էր պարսից շահի գանձարանը, ապա այժմ նրանք կենտրոնանում էին Երևանի խանի ձեռքում։

Երկրի կիսաանկախ վիճակը չափազանց ձեռնտու էր Երևանի խաների համար, որովհետև նրանք ժառանգական էին դարձրել իրենց պաշտոնը, համարյա թագավորական իրա-

[1] Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 379ա։

[2] Մատենադարան, Արխիվային բաժին, Աղ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 210։

վունքներ ունեին, և իրենց տնօրինության տակ էին գցել դիվանի հողերից ստացվող բոլոր եկամուտները: Վրաց թագավորին ուղարկվող հարկը անհամեմատ քիչ էր շահին ուղարկվածից, այնպես որ Երևանի խաների համար գերադասելի էր կիսանկախ վիճակը պարսկական պետության կազմում լինելուց, բայց չնայած դրան, նրանք հարմար առիթ էին որոնում վրացական տիրապետությունից ևս դուրս գալու համար:

Կիսանկախ վիճակը ձեռնտու էր նաև մյուս ֆեոդալների, մասնավորապես թիուլդարների համար: Վերջիններս 18-րդ դարի վերջում իրենց օգտին էին գանձում ամբողջ ռենտահարկը, այլև մյուս հարկերը: Ընդլայնվել էին նրանց վարչական իրավունքները գյուղացիների նկատմամբ:

Համեմատած նախորդ 30—40 տարվա հետ, անդրկովկասյան մյուս երկրների նման, Երևանի խանությունը տնտեսական փոքր ինչ վերելք է ապրում, որոշ աշխուժացում է ապրում առևտուրը, զարգանում են արհեստները: Մի կողմից այս, մյուս կողմից այն, որ Երևանի խանը եկամուտներից այլևս բաժին չէր հանում պարսից շահին, հնարավորություն են տալիս տնտեսության որոշ զարգացմանը: Դրա շնորհիվ խաները կարողանում են շինարարական աշխատանքներ ծավալել Երևանում և նրանից դուրս. Նրանք հնարավորություն են ունենում զինված հարձակումներ կատարել իրենց հարևանների՝ Կարսի, Բայազետի, Նախիջևանի և անգամ Վրաստանի վրա, միաժամանակ կարողանում են լավ դիմադրել Երևանի վրա արշավողներին: Որոշ տնտեսական վերելք էր ապրում նաև Էջմիածնի վանքը: Արտասահմանից ստացվող նվիրատվությունների և ներքին եկամուտների շնորհիվ Ղուկաս կաթողիկոսը կարողանում է շինարարական բազմաթիվ աշխատանքներ կատարել վանքում և, բացի դրանից, նա ի վիճակի է լինում օտարերկրյա արշավողներից մեծ կաշառքներով ազատել վանքը թալանի և ավերմունքի առարկա լինելուց:

Տնտեսական այդ համեմատական վերելքը, որը շարունակվեց նաև հետագա տարիներին, չէր կարող, սակայն, տալ



որևէ շոշափելի արդյունք. դրան արգելք հանդիսացան երկրում գործող կենտրոնախույս ուժերը, տնտեսության հետամնացությունը և այն բազմաթիվ արշավանքները, պատերազմները և ներքին կռիվները, որոնք Արարատյան դաշտում հաջորդում էին միմյանց մեծ արագությամբ, ավերում և անմարդաբնակ դարձնում երկիրը: Միանգամայն ճիշտ է Ի. Պ. Պետրուշևսկին, որը այս մասին գրել է հետևյալը.

«Բայց ֆեոդալական մասնատվածության, բնատնտեսության գերիշխանության, մշտական երկպառակությունների և ժամանակից ժամանակ իր ռեալ իշխանությունը անդրկովկասյան երկրներում վերականգնելու Իրանի անվերջ փորձերի պայմաններում, այդ հարաբերական տնտեսական վերելքը չէր կարող տալ ամուր և շոշափելի հետևանքներ»[1]:

[1] *И. П. Петрушевский*, Очерки..., стр. 87.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 18-ՐԴ ԴԱՐԻ 80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

## Ա. ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ. ԵՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

*Երևանի խանությունը 80-ական թվականների սկզբին խիստ ավերված, աղքատացած և բնակչությունից ամայացած մի երկիր էր, ուր քիչ թե շատ բարգավաճ վիճակում էին միայն Երևանն ու Էջմիածինը: Երկրում ստեղծված ծանր դրության մասին Էջմիածնի միաբանները 1780 թ. սեպտեմբերին Կ. Պոլսի հայությանն ուղղած իրենց շրջաբերական նամակում գրել են հետևյալը.*

*«...յանցեալումն ամի զորքան աւերութիւնս և վնաս կրեաց երկիրս մեր, լուեալ եք, զորս դեռ ևս կրէ, զի նոյն խռովութիւն տակաւին գոյ: Երկիրս ըստ մեծի մասին անմարդաբնակ է և աւերիչք բազմացեալք զմնացորդն ևս աւերեն: Յորոց միջի սուրբ Աթոռս միայն է մնացեալ առանց գլխաւոր վնասուց՝ շնորհօքն Աստուծոյ»[1]:*

*Արարատյան երկրից Հերակլ Բ-ի Վրաստան տարած գյուղացիները չէին վերադարձել, իսկ մյուսները, որ 1779 թ. արշավանքի հետևանքով հեռացել էին իրենց բնակավայրերից ու նոր էին եկել, դեռ չէին անցել նորմալ կյանքի:*

*Երկրում ստեղծված խառը դրությունը և քաղաքական կյանքի հեղհեղուկ պայմանները Էջմիածնի միաբաններին*

1 *Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 10ա:*



*թելադրում են արտակարգ հապճեպությամբ, առանց գաղութահայության գիտության և մասնակցության, կատարել հանգուցյալ Սիմեոն Երևանցու փոխարեն նոր կաթողիկոս ընտրելու գործը, մի բան, որը կարող էր հայության մեջ առաջ բերել դժգոհություն և պառակտում: Այդ շտապողականությունը վանքի գրագիր Անանիա սարկավագը պատճառաբանում է այսպես.*

*«(Միաբանները—Վ. Գ.) ...վասն աւերութեան երկրիս, ըստ մեծի մասին և խառնակութեանցն ոչ կարացին թողուլ թարց հոգաբարձուի զսուրբ Աթոռս յերկար ժամանակս: Քանզի այս երկրական ժանտքն և գայլաբարոյքն կատաղիք կամէին գոյէս պէս վնաս հասուցանել սորոյ Աթոռոյս ամենայն կերպիւ, թող թէ արտաքին թշնամիքն երկրիս»[1]:*

*Արարատյան դաշտի վրայով անցնող երթևեկության ուղիները համարյա փակվել էին: Անհնարին էր երթևեկել դեպի Թիֆլիս, Գանձակ, Թավրիզ ու Շուշի տանող ճանապարհներով: Խափանվել էր առևտուրը:*

*Երևանի խանի և Հերակլ Բ-ի թշնամությունը տակավին չէր վերացել: Նրանց երկրների սահմանները հսկողության տակ էին և այդ պատճառով Էջմիածնի միաբաններին չի հաջողվում Վրաստանի հայությանը ժամանակին իրազեկ պահել կաթողիկոսական ընտրությունների հանգամանքներին: Իսկ երբ նորընծա Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը կամենում է մի եպիսկոպոս ուղարկել Վրաստան՝ այնտեղի հայությանը և վրաց մեծամեծներին գրավոր տեղեկացնելու իր ընտրվելու մասին, հանդիպում է մեծ դժվարությունների: Նախկին ճանապարհները փակ էին, իսկ Կարսի վրայով ծածուկ ուղարկելը՝ վտանգներով հղի, որովհետև պարոնները այդ մասին կիմանային իրենց լրտեսներից և «...զայլ և այլս կարծեսցեն»[2]: Ուստի հրաժարվում է դրանից:*

*Երևանի Հուսեյն-Ալի խանը, դաս առած Հերակլի արշավանքներից, վճռել էր հաշտվել նրա հետ և վերականգնել*

1 *Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 1ա:*

2 *Նույն տեղում, էջ 6բ:*

իրենց նախկին հարաբերությունները: Նա հույս ուներ, որ դրանից հետո թագավորը կվերադարձներ Վրաստան տարված գյուղացիներին և այլևս չէր արշավի Երևանի վրա[1]:

Սկսվում են հաշտության բանակցություններ, որոնց ժամանակ հաշտարարի դերը ստանձնում է Ախալցխայի Սուլեյման փաշան[2]: Դժվար չէ կռահել, թե ինչու էր թուրքաց սահմանապահ փաշան խառնվում այս գործին: Թուրքական կառավարության համար, որը մեծ ձգտումներ ուներ Երևանը իր գերիշխանության տակ ձգելու և այդ պատճառով միշտ աշխատում էր սիրաշահել նրա տերերին[3], ձեռնտու չէին Երևանի և Վրաստանի տիրակալների այդ թշնամական հարաբերությունները: Թուրքերը լավ գիտեին, որ Երևանի խանը խիստ թուլացած էր և Հերակլին, արշավանքի դեպքում, կհաջողվեր զրկել նրան իշխանությունից և Արարատյան երկիրը ամբողջովին ենթարկել իրեն: Ուստի, այս բանը կանխելու համար հանձնարարվում է Սուլեյմանին հաշտեցնել նրանց և վերականգնել իրերի նախկին վիճակը:

Վանքի գրագիրը պատմում է, որ 1780 թ. նոյեմբերի սկզբներին Սուլեյման փաշան իր ուղտերով Երևանի խանին տախտակներ է նվեր ուղարկում, միաժամանակ ուղտերի վերակացուի ձեռքով նամակ է ուղարկում կաթողիկոսին: Վերջինս իր պատասխանի մեջ հորդորում է նրան շուտ գլուխ բերել հաշտության գործը.

«Յորում և խնդրեաց զսէրն և զբարեկամութիւն հաստատ ունել ընդ սրբոյ Աթոռոյս և ընդ ինքեան: Եւ որովհե-

1 Այդ ժամանակ Արարատյան երկրում լուրեր էին պտտվում այն մասին, որ եթե մինչև 1780 թ. օգոստոսի 15-ը հաշտություն չկնքվի, Հերակլը արշավելու է Երևանի վրա (Դիվան, հ. Դ, էջ 28):

2 Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. 7, վավ. 1, էջ 37բ:

3 Տեղեկություն կա, որ թուրքական կառավարությունը Երևանի Հուսեյն-Ալի խանին թանկարժեք նվերներ է տվել (սամույրե վերարկու և 2000 ոսկի (աշրաֆի) և շնորհել Անատոլիի բեգլարբեգության կոչումը (տե՛ս Մատենադարան, Պարսկերեն ձեռագրերի ֆոնդ, № 233):



տե սա (Սուլեյման փաշան—Վ. Դ.) զհաշտութիւն արկանէր ի մէջ վրաց Արքային և մեր խանին, վասն այն և սրբազան Վեհն զիրիճայս գրեաց առ ի փութով ի գլուխ բերել»[1]:

Շուտով Երևան են ժամանում Սուլեյման փաշայի մարդիկ և խանը պատրաստություն է տեսնում ընծաներ ուղարկելու Հերակլին և հաշտություն առաջարկելու: Էջմիածնի միաբանները կամենում են օգտագործել այս առիթը և մի եպիսկոպոս ուղարկել Վրաստան: Բայց չի հաջողվում: Այս մասին նրանք գրել են.

«Իսկ ապա մինչ եկին Դատա Սուլէյմանն և Շամախնի եղբայր Ահմատ աղայն, և սա (խանը—Վ. Դ.) ես սկսաւ զընծայ պատրաստել՝ զի յղեսցէ, յայնժամ ես կամեցաք ազդել սմա, բայց գիտէաք անկարծիք, զի առելոց է թէ՝ ընդ իմ ընծայատարին յղեցէք, ընդ որում թէ գայր մեր եպիսկոպոսն, պարտ էին նմայ այլք գիտօղ լինիլ: Եւ թէ անյաջողութիւն ինչ ևս լինիւր բանից իւրեանց, ի նմանէ կարծելը»[2]:

Սրանից հետո նրանք դիմում են խանին և նրանից սահմանի պահապաններին ուղղված թույլտվություն (թալղա) ստանալուց հետո միայն Դանիել վարդապետին ուղարկում են Վրաստան:

Ռուս պատմաբան Պ. Գ. Բուտկովի աշխատության մեջ ասվում է, թե Հերակլ Բ-ի և Երևանի խանի միջև հաշտությունը կնքվել է 1780 թ. մայիսի կեսերին[3], բայց, ինչպես կտեսնենք ստորև, այդ բանը տեղի է ունեցել ավելի ուշ՝ 1781 թ. նոյեմբերին:

Ղ. Կարնեցու գրագրություններից երևում է, որ մինչև 1780 թ. նոյեմբերը հաշտության բանակցությունները արդյունք չեն ունենում և Արարատյան երկրի վիճակը առավել վատթարանում է: Նա գրում է.

«...և մնացեալքն երկրիս ես ի սպառ աւերեցան, քան-

1 Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 29բ—30ա:

2 Նույն տեղում, էջ 6բ—7ա:

3 П. Г. Бутков, Материалы..., ч. II, стр. 75.

գի ոչ եղև ըստ բաւականին վար և վաստակ՝ սակս անկայուն բնակութեանցն, յորոց ոչ պակասէին ապստամբողք»[1]:

Նույն նամակում նշվում է նաև, որ Շուշու Իբրահիմ խանը արշավել է Թավրիզի ու Խոյի վրա, մեծ ավերածություններ արել այնտեղ ու գերիներ վերցրել: Այնուհետև հարձակվել է Գիլանի վրա և փախցրել նրա իշխողին:

Երևանի խանության մեջ դրությունը ավելի ծանրանում է նաև այն պատճառով, որ մի քանի քոչվոր ցեղեր, օգտվելով Հուսեյն-Ալի խանի թուլությունից, ապստամբություն են բարձրացնում[2]: Նրանք դուրս են գալիս խանության սահմաններից և միանալով այլ խմբերի հետ, անընդհատ հարձակումներով ավերում ու թալանում են երկիրը:

«Եւ աստէն իսկ,— գրում է կաթողիկոսը,— գողք և ստամբակքն երկրիս որք և իշխողին իսկ ոչ լսեն, զմեծամեծ վնասս և աւերս գործեն՝ ուր և հասանին»[3]:

Այս պայմաններում անկարելի է դառնում վարուցանքը, ավերվում են պարենի պաշարները և սկսվում է սով: Ղ. Կարնեցու դավանագրքում ասվում է.

«...գի վասն անվաստակ մնալոյ երկրիս մերոյ սովն ևս տիրեալ էր. և յայնմ միջոցի Աստուծով միայն սուրբ Աթոռս էր ի շինութեան»[4]:

Աշխատավոր բնակչությունը զրկված էր ամեն բանից և ավարտում էր սովի անողոք ճիրաններում:

Հաշտություն կնքելու համար Հուսեյն-Ալի խանը իր մարդկանցից մեկին թանկարժեք նվերներով ուղարկում է Հերակլ Բ-ի մոտ, սակայն նա մերժում է[5]:

Դրանից հետո, խանը Հերակլի մոտ բանակցելու համար ուղարկում է իր կնոջը: Երբ վերջինս իր ուղեկիցների հետ հասնում է Թիֆլիս և տեսակցություն ունենում Թագա-

[1] Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 44ա:

[2] Դիվան, հ. Դ, էջ 102:

[3] Նույն տեղում, էջ 108:

[4] Գաբրիել Ա. Կարաղիկոս. Նիւթեր և ուսումնասիրութիւններ..., պրակ Ե, էջ 56:

[5] Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 39բ:



վորի հետ, անմիջապես նամակ է գրում իր ամուսնուն և հայտնում, թե հաշտություն կնքելու և տարված մարդկանց ետ դարձնելու համար անհրաժեշտ է հայոց կաթողիկոսի միջնորդությունը: Խանի խնդրանքով Ղ. Կարնեցին 1780 թ. նոյեմբերի 14-ին Գալուստ վարդապետի հետ մի նամակ է ուղարկում Թագավորին և խնդրում հաշտվել.

«Այնր պայման և որպայման Վենն զմի տանեկւոր աղերսարկու թուղթ գրեաց թէ՝ ահա երկրիս որբութիւն յայտնի է քեզ, որոյ շինութիւնն ըստ մեծի մասին ապականեալ է և անմարդաբնակ է եղեալ: Արդ՝ խնդրեմ ի մեծութենէդ, զի զխղճալի ժողովուրդսն երկրիս, զորս վարեալ ես աստի, արձակեսցես ի դալ»[1]:

Այս բանակցությունները ևս հաշտությամբ չեն պսակվում, բայց համեմատաբար թուլացնում են թշնամական հարաբերությունները Հերակլի և խանի միջև: Նոյեմբեր ամսին բացվում են ճանապարհները և օգտվելով դրանից, Ղ. Կարնեցին Ռուսաստան է ուղարկում Սիմեոն Երևանցու նամակները, որ հասցեագրված էին Հ. Արղությանին և մինչ այդ հնարավոր չէր եղել ուղարկել[2]:

Շատ չանցած Հուսեյն-Ալի խանը հաշտություն կնքելու համար մի նոր պատվիրակություն է ուղարկում Հերակլի մոտ: Ուղարկվածների մեջ էր նաև նրա որդի Մահմեդը: Պատվիրակության ապահովման համար առիթ էր ծառայել Հերակլ Բ-ի որդի Լևանի ողբերգական մահը[3]:

Այս պատվիրակությանն էլ չի հաջողվում հաշտությունը գլուխ բերել: Հերակլը մտադիր չէր այս ժամանակ հաշտություն կնքել՝ Հուսեյն-Ալի խանից իրեն հավատարիմ մնալու մասին ավելի համոզիչ հավաստիացումներ և պարտավորություններ ստանալու միտումով: Սակայն շուտով դեպքերը այնպես են դասավորվում, որ Քարթլ-Կախեթի

[1] Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 39բ:

[2] Նույն տեղում, էջ 34բ:

[3] Նույն տեղում, էջ 70ա—70բ:

թագավորը ինքն է սկսում հաշտության համար որոշ քայլեր անել։

Ղ. Կարնեցու 1781 թ. մարտին գրած նամակներից երևում է, որ Հերակլը Երևանի խանի մոտ էր ուղարկել հանգուցյալ արքայազն Լևանի վեզիր Գիորգի բեկին, որը միաժամանակ Երևանում մնալուց հետո մեկնում է Թիֆլիս, բայց շատ չանցած, երկրորդ անգամ է գալիս[1]։ Պարզվում է, որ այդ ժամանակ Ղարաբաղի Իբրահիմ Խալիլ խանը պատրաստ էր սկսել Խոյի Ահմեդ խանի հետ և արշավել նրա վրա։ Հերակլը, որպես Իբրահիմի դաշնակից, պետք է օգներ նրան, բացի դրանից, նա ևս ձգտումներ ուներ Խոյը գցելու իր ազդեցության շրջանակների մեջ, ուստի պատրաստվում է զորք ուղարկել այնտեղ։ Վրացական զորքը Խոյ գնալու համար պետք է անցներ Արարատյան երկրի վրայով. դրա համար անհրաժեշտ էր հաշտվել Հուսեյն-Ալիի հետ, որպեսզի վրաց զորքը ոչ միայն վնասներ չկրեր, այլև անհրաժեշտության դեպքում օգնություն ստանար նրանից։

Գիորգի բեկի բանակցությունները, ամենայն հավանականությամբ, վերաբերել են այս հարցերին, և համաձայնություն կայանում է։ Հերակլը այս հարցում զգացել է նաև կաթողիկոսի օգնության կարիքը։ 1781 թ. հուլիսի 11-ին Ղ. Կարնեցու գրած մի նամակից երևում է, որ Հերակլը նրան նամակ է գրել և հայտնել, թե ինքը Խոյի դեմ արշաված Իբրահիմ խանին օգնության է ուղարկել վրացական զորք, որը պետք է անցներ Ղըրխբուլաղով, և խնդրում է կաթողիկոսին իր զորքի համար գինի ուղարկել այնտեղ[2]։

1781 թ. նոյեմբերին Երևանի խանը Վրաստանի հետ հաշտություն կնքելու համար ուղարկում է չորրորդ պատվիրակությունը, որը գլխավորում էր խանի որդի Ղուլամ-Ալին։ Այս անգամ հաշտություն կնքվում է։ Երևանի խանությունից տարված գյուղացիների մեծ մասը ետ է դարձվում։

[1] Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 86բ։

[2] Նույն տեղում, էջ 110ա։



Ղուլամ-Ալի խանի հետ Թիֆլիսից Երևան է գալիս նաև Հերակլի ներկայացուցիչ Իվանե Մուխրան բեկը, որը հաշտություն կնքելու ժամանակ բավական գործ էր արել։ Բանակցություններին մասնակցել էր նաև Հովհաննես անունով մի հայ, որը ծառայում էր Իվանեի մոտ։ Այս մարդը ևս դրական գործ էր կատարել և դրա համար կաթողիկոսը օրհնության գիր է ուղարկում նրան[1]։

Իվանե Մուխրան բեկը Երևանում մնում է մինչև 1782 թ. հունվարի 12-ը և այդ ընթացքում հաշտության բանակցությունները ավարտի հասցնում[2]։ Երևանի խանը պարտավորվում է մնալ Հերակլ Բ-ի հարկատուն՝ նախկինի պես տարեկան նրան վճարելով 3000 թուման։ Բացի դրանից, նա անհրաժեշտության դեպքում պարտավոր էր իր զորքով օգնել թագավորին։ Խանները, նախքան իրենց իշխանությունը ժառանգելը, անպայման պետք է հաստատվեին վրաց թագավորների կողմից։ Փոխարենը Հերակլը խոստանում է պաշտպանել Երևանի խանությունը արտաքին և ներքին թշնամիներից։

Նույն այս ժամանակ Ռուսաստանում եռանդուն պատրաստություններ էին գնում Պարսկաստանի վրա արշավելու համար։ Եկատերինա Բ կայսրուհին, ձգտելով իրականացնել Պետրոս Ա-ի նախագծած պլանները, կամենում էր ռուսական տիրապետությունը հաստատել նաև Անդրկովկասի և Կասպից ծովի հարավ-արևմտյան ափերի վրա։

1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը զգալիորեն բարելավել էր Ռուսաստանի դիրքերը Սև ծովի շրջաններում։ Այժմ ռուսական կառավարության առջև խնդիր էր ծառացել Կասպից ծովի շրջաններում ևս գերիշխող դառնալ և հնդկական առևտուրը Պարսկաստանի ու Կասպից ծովի վրայով շուռ տալ դեպի Ռուսաստան։ Որոշված էր գրավել Անդրկովկասը և այնտեղ ստեղծել Ռուսաստանից կախման մեջ գտնվող վասալական երեք պետություններ՝ հայկական, վրացական և ադրբեջանական, ընդորում առաջնահերթ խըն-

[1] Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 132ա։

[2] Նույն տեղում, էջ 137ա։

դիրներից էր Արևելյան Հայաստանում հայկական պետության ստեղծելը և Վրաստանի վրա ռուսական գերիշխանության տարածելը։ Այդ պետությունները ամուր պլացդարմ էին հանդիսանալու Ռուսաստանի համար Թուրքիայի դեմ մղելիք պատերազմների ժամանակ, ինչպես նաև պետք է մեծացնեին Ռուսաստանի ազդեցությունը Հյուսիսային Կովկասի վրա[1]։

Ռուսական գերիշխանության հաստատումը Արևելյան Հայաստանի վրա առաջադիմական կարևոր իրողություն կհանդիսանար նրա բնակիչների կյանքում։ Ճիշտ է, այն սոցիալական և ազգային ազատագրում չէր բերելու և չէր էլ կարող բերել հայ ժողովրդին, բայց և դրական նշանակություն էր ունենալու նրա համար։ Ֆ. Էնգելսը գրել է. «Արևելքի նկատմամբ Ռուսաստանը իսկապես խաղում է պրոգրեսիվ դեր»[2]։ Պարսից իշխանությանը, որը սպառնում էր ֆիզիկապես բնաջնջել հայերին, հաջորդելու էր քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքի անհամեմատ ավելի բարձր զարգացում ունեցող երկրի տիրապետություն. այդ բանը ոչ միայն կփրկեր նրանց կոտորածից, այլև հնարավորություն կստեղծեր զարգանալու և առաջադիմելու։ Այս է պատճառը, որ հայերը, ինչպես նաև Անդրկովկասյան մյուս ժողովուրդները՝ վրացիներն ու ադրբեջանցիները, ուրախությամբ և մեծ հույսերով էին սպասում ռուսական արշավանքին։

Ռազմական էքսպեդիցիայի նախապատրաստման գործը հանձնարարվում է գեներալ-պորուչիկ Ա. Վ. Սուվորովին։ 1780 թ. սկզբին իշխան Գ. Ա. Պոտյոմկինը Ա. Վ. Սուվորովի և Ի. Գ. Գերիչի հետ մի քանի անգամ հանդիպումներ է ունենում Հ. Լազարյանի և Հ. Արղությանի հետ՝ բազմաթիվ տեղեկություններ ստանալով նրանցից Անդրկովկասում և հատկապես Արևելյան Հայաստանում տիրող վիճակի մասին[3]։

[1] Հայ ժողովրդի պատմություն, Ա մաս, Երևան, 1956, էջ 395։

[2] *К. Маркс* и *Ф. Энгельс*, Сочинения, т. XXI, М., 1932, стр. 211։

[3] *М. Нерсисян*, Из истории русско-армянских отношений, кн. I, стр. 47—52.



Շուտով Սուվորովը մեկնում է Աստրախան, ուր ստանձնելով Կազանյան դիվիզիայի հրամանատարությունը, պատրաստություն է տեսնում արշավանքը իրականացնելու։ Բայց այն հետաձգվում է և 1781 թ. դեկտեմբերի 30-ին ցարական կառավարությունը որոշում է ընդունում Սուվորովին Կազան տեղափոխելու մասին[1]։

Արշավանքը նշանակվում է 1783 թ. գարնանը. պատրաստությունները շարունակվում են իշխ. Գ. Պոտյոմկինի ազգական գեներալ-պորուչիկ Պ. Ս. Պոտյոմկինի ղեկավարությամբ։

1782 թ. նոյեմբերի 8-ին գեներալ Պոտյոմկինը ժամանում է Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ ամրոցը, որտեղից նամակագրական կապ է հաստատում Ղարաբաղի մելիքների, Ղուկաս կաթողիկոսի և ադրբեջանական խաների հետ։ Նա Անդրկովկասից տեղեկություններ է ստանում ճանապարհների, տնտեսության, զինված ուժերի, քաղաքների և իշխանությունների մասին։ Այդ գործում նրան մեծ աջակցություն է ցույց տալիս Հ. Արղությանը, որը նույնպես ժամանել էր Գեորգիևսկ։

Ռուսական հրամանատարությունը հատկապես սերտ կապերի մեջ էր Քարթլ-Կախեթի թագավոր Հերակլ Բ-ի հետ։ Վերջինիս երկիրը, չնայած հարևան մանր իշխանությունների վրա ունեցած իր ազդեցությանը, այնուամենայնիվ շատ թուլացած, քայքայված վիճակում էր։ Նրա ձգտումը՝ ստեղծել միասնական և ուժեղ պետություն, չէր իրականացել և Արևելյան Վրաստանը մնում էր ֆեոդալական մասնատված մի երկիր՝ առանց ուժեղ կենտրոնական իշխանության։ Մի կողմից թուրքական ագրեսիայի օրեցօր աճող վտանգը, Թուրքիայի կողմից հրահրվող լեռնականների ավերիչ արշավանքները և Պարսկաստանում ուժեղացող ձգտումները՝ Արևելյան Վրաստանը կրկին Պարսկաստանին ենթարկելու, մյուս կողմից տնտեսական ծանր վիճակը և անվերջանալի ներքին երկպառակությունները տանում էին երկիրը դեպի կործանում։ Ուստի, վրաց թագավորը օգնություն և հո-

[1] *М. Нерсисян*, Из истории русско-армянских отношений, кн. I, стр 70.

վանավորության տակ մնալու հույսով բանակցությունների մեջ է մտնում ռուսների հետ։ 1782 թ. դեկտեմբերի 21-ին Հերակլ Բ-ը դիմում է Եկատերինա Բ կայսրուհուն և խնդրում Արևելյան Վրաստանը ընդունել Ռուսական կայսրության հովանավորության ներքո։ Մինչ լուծում կստանար այս հարցը, ռուսական հրամանատարությունը շարունակում է իր պատրաստությունները, որոնք, սակայն, դանդաղ էին ընթանում։ Այդ, ինչպես նաև Վրաստանի ռուսական հովանավորության ներքո մտնելու հարցը նախապես լուծելու անհրաժեշտության, այլև ուրիշ կարևոր խնդիրների պատճառով արշավանքը հետաձգվում է մեկ տարով։ 1783 թ. մայիսի 21-ին գեներալ Պ. Պոտյոմկինը գնդապետ Ս. Բուռնաշևին կարգադրում է ռուսական զորքերի համար Անդրկովկասում մթերքների պահեստներ նախապատրաստել և հետախուզել տեղանքը[1]։ Նույն օրը գեներալ Պ. Պոտյոմկինը Բուռնաշևին տալիս է նաև մի ուրիշ հրամանագիր, որից երևում է, թե իշխան Գ. Պոտյոմկինը 1783 թ. ապրիլի 13-ին կարգադրել էր գնդապետ Բուռնաշևին որպես կոմիսար ուղարկել Հերակլի մոտ, որպեսզի նա ուսումնասիրի Հերակլի երկիրը, նրա ամրությունների անվտանգությունը։ Իր կողմից Պ. Պոտյոմկինը Բուռնաշևին հրամայում է տեղեկություններ հավաքել՝ «...Թիֆլիսից մինչև Ղարադաղ և Ղարաբաղի գավառը, Թիֆլիսից մինչև Շուշի ամրոցը... այլև Թիֆլիսի վրայով մինչև Երևան և հետո աջ՝ Սև ծովի կողմը մինչև Տրապիզոն եղած տարածության մասին...»[2]։

Ռուսական հրամանատարությունը նախատեսում էր արշավանքը անցկացնել հետևյալ պլանով. զորքերի մի մասը Դերբենդի վրայով և հետո Կասպից ծովի ափերով պետք է շարժվեր մինչև Էնզելի, իսկ մյուս մասը Կովկասյան լեռնաշղթայի վրայով՝ Վրաստան, այնտեղից էլ Ղարաբաղ և Ղարադաղ՝ միաժամանակ գրավելով Երևանը։ Արշավանքի

[1] ЦГАДА, ф. Гос. архив, реестр XXIII, дело № 13, ч. V, л. 86.

[2] Նույն տեղում, էջ 85ա։

[3] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр. 92.



նպատակը հայտարարված էր «Հայաստանի վերականգնումը»[1]։

Արշավանքի այս պլանը ձևավորվեց հուլիս—նոյեմբեր ամիսներին. այդ ժամանակ՝ 1783 թ. հուլիսի 24-ին Գեորգիևսկ ամրոցում Ռուսական կայսրության ներկայացուցիչներ՝ Պ. Ս. Պոտյոմկինը և փոխգնդապետ Տամարան, վրաց ներկայացուցիչներ՝ Մուխրան Բագրատիոնի (որը Երևանի խանության գործերի գծով գլխավոր խորհրդականն էր վրաց արքունիքում)[2] և իշխան Գարսևան Ճավճավաձեի հետ ստորագրեցին պայմանագիր, որի համաձայն Քարթլ-Կախեթի թագավորը ընդմիշտ հրաժարվում էր Պարսկաստանի կամ այլ պետության վասալությունից և մտնում Ռուսաստանի հովանավորության տակ։ Վրաց թագավորները, նախքան գահը ժառանգելը, պետք է հաստատվեին կայսրուհու կողմից և հավատարմության երդում տային նրան։ Քարթլ-Կախեթի թագավորը հրաժարվում էր ինքնուրույն արտաքին քաղաքականության վարելուց։ Դրա փոխարեն կայսրուհին պարտավորվում էր հովանավորել և պաշտպանել նրան[3]։

Համաձայն պայմանագրի, ռուսական երկու գումարտակ 4 թնդանոթներով մշտապես պետք է գտնվեին Վրաստանում։

1783 թ. նոյեմբերի 3-ին ռուսական գումարտակները մտնում են Թիֆլիս, իսկ 1784 թ. հունվարի 23-ին Հերակլը հավատարմության երդում է տալիս կայսրուհուն։

Ռուսական կառավարությունը որոշել էր պայմանագրի կնքումից անմիջապես հետո հրովարտակներ ուղարկել անդրկովկասյան խաններին։ Այդ մասին 1783 թ. մայիսի 9-ին Պ. Պոտյոմկինը գրել է Հերակլին.

«...երբ որ ստորագրվի պայմանագիրը, ես կարգադրություն ունեմ իսկույն եթ բոլոր շրջակա խաններին հրովարտակներ ուղարկելու՝ հայտարարությամբ, որ Նորին Կայսերական Մեծությունը Ձեր անձը, Ձեր թագավորությունը և

[1] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр. 91—92.

[2] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. IV, л. 7.

[3] *П. Г. Бутков*, Материалы..., ч. II, стр. 123—128.

ժողովուրդը վերցնում է իր պաշտպանության ներքո և Ձեր սահմաններին դիպչել համարձակվողը իր վրա կբարձրացնի ռուսական զենքը»[1]:

Պայմանագրի կնքումից 6 օր հետո՝ 1783 թ. հուլիսի 30-ին գեներալ Պոտյոմկինը անդրկովկասյան և ադրբեջանական տիրակալներին ուղարկում է իշխան Պոտյոմկինի հրովարտակները, որոնցով նրանց առաջարկվում էր հետևել Վրաստանի օրինակին և մտնել Ռուսաստանի հովանավորության տակ: Հրովարտակներ և թանկարժեք նվերներ են ուղարկվում, մասնավորապես, Շաքիի, Շամախու, Թավրիզի, Խոյի, Թալիշի, Ղարաբաղի և Երևանի խաներին[2]: Ինչպես երևում է գնդապետ Բուռնաշևին 1783 թ. հուլիսի 31-ին Պ. Պոտյոմկինի գրած նամակից, հրովարտակները բաժանելու համար Վրաստան էին ուղարկվել սեկունդ-մայոր կոմս Ապրակսինը և պորուչիկ իշխան Ձելոխաևը: Պոտյոմկինը կարգադրում է Բուռնաշևին Հերակլի օգնությամբ հրովարտակները պարսկերեն թարգմանել և ուղարկել տեղերը, ընդորում հեռավոր խաների հրովարտակները և նվերները պետք է տաներ իշխան Ձելոխաևը, իսկ մոտիկներինը՝ կոմս Ապրակսինը[3]:

Ապրակսինը Հերակլ Բ-ին, ինչպես և Ղարաբաղի Իբրահիմ խանին այցելելուց հետո, 1783 թ. հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերի սկզբին, հասնում է Երևան: Նախքան այս, 1782 թ. դեկտեմբերի վերջերին, ռուսական հրամանատարության առաջադրանքով Երևանի խանին այցելել էր դոկտոր Ռեյնեգսը, որը խնդիր ուներ բանակցել խանի հետ քաղաքական հարցերի շուրջը և ուսումնասիրել Երևանի ամրությունները[4]:

Ռեյնեգսը հանդիսավոր ընդունելություն է գտնում Հուսեյն-Ալի խանի կողմից և չորս օր վայելելով նրա սիրալիր հյուրասիրությունը, հավաստիացումներ է ստանում այն մասին, որ եթե ռուսները կամենան, ապա խանը պատրաստ է դառնալու ռուսական հպատակ[1]:

[1] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. V, об. л. 77.

[2] Նույն տեղում, էջ 124ա:

[3] Նույն տեղում, էջ 126ա—126բ:

[4] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр. 55.



Նույնպիսի վերաբերմունքի է արժանանում նաև կոմս Ապրակսինը, երբ խանին է հանձնում իշխան Գ. Պոտյոմկինի հրովարտակը, նվերներն ու Պ. Պոտյոմկինի շրջաբերական նամակը: Ի դեպ, ասենք, որ այդ նամակը ևս նպատակ ուներ համոզելու խանին կատարելու Գ. Պոտյոմկինի առաջարկները: Այնտեղ ասվում է.

«Նորին Կայսերական Մեծության բարձրագույն արքունիքից ստանալով կարգադրություն՝ հրովարտակներ ուղարկելու բոլոր ադրբեջանական տիրակալներին, հարավային նահանգների պետ, նորին պայծառափայլություն, իմ գլխավոր ազգական իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինի անունից ուղարկում եմ Ձեզ, ազնվատոհմիկ խանիդ, նրա ձեռքով ստորագրված և նրա կնիքով հաստատված թուղթը, որպեսզի նրա միջոցով տեսնեք Նորին Կայսերական Մեծության Պայծառափայլ Ինքնակալուհու՝ իմ ամենաողորմած տիրուհու բարձրագույն կամքը:

Ձերդ պայծառափայլություն, նայելով կից հրովարտակը, հասկացեք, թե որքան հրապուրիչ է Նորին Կայսերական Մեծության հովանավորության տակ ապավինելը և որքան երանելի են այն տիրակալները, որոնք ենթարկվում են համառուսաստանյան փառահեղ գավազանին[2]»:

Քարթլ-Կախեթի թագավորության Ռուսաստանի հովանավորության ներքո անցնելը և «Համառուսաստանյան գավազանին» ենթարկվելու առաջարկությունը մեծ ազդեցություն ունեցան անդրկովկասյան տիրակալների վրա և նրանք մեկը մյուսի ետևից սկսում են հավաստիացնել ռուսներին, որ իրենք ևս կամենում են ընդունել նրանց հովանավորությունը: Այդ բանում զգացվում էր և՛ մեծ վախ ռուսական զենքից, և՛

[1] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр 2 4—215.

[2] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. №. 13, ч. V, л. 124.

հույս՝ ռուսական հովանավորությունն ընդունելու գնով ազատվելու արտաքին թշնամիների անընդհատ հարձակումներից:

Երևանի խանը, համեմատած մյուս իշխողների հետ, գտնվում էր բացառիկ պայմաններում, նրա երկիրը հարկատու էր Ռուսաստանի հովանավորությունն ընդունած Վրաստանին, ուստի խանը վախենալով թե՛ ռուսներից, և թե՛ Հերակլ Բ-ից ստիպված էր դրական պատասխան տալ, որը, սակայն, նա անում է մեծ զգուշությամբ: Հուսեյն-Ալի խանը ռուսներին հայտնում է, թե քանի որ իր սյուզերեն Հերակլ Բ-ը ընդունել է ռուսական հովանավորությունը, ապա ինքը մեքենայաբար պետք է համարվի ռուսական հովանավորությունն ընդունած. ընդ որում, նա իր վրա ոչ մի պարտավորություն չի վերցնում:

Իշխան Գ. Պոտյոմկինին ուղղած իր պատասխան նամակում խանը գրում է, թե ինքը, ի բացառություն մյուս խաների, միշտ էլ ենթարկվել է Հերակլին և իր երկիրը եղել Վրաստանի անբաժան մասը[1]: Միաժամանակ խանը նամակ է ուղարկում Հերակլին, որով զարմանք է հայտնում, թե ինչու թագավորը այդ բանը չէր հաղորդել ռուսներին[2]:

Վերցնելով այս նամակները, Ապրակսինը դուրս է գալիս Երևանից և Ղ. Կարինցուն էջմիածնում այցելելուց հետո, ուղղվում է Խոյ: Հասնելով այնտեղ, նա հանձնում է Խոյի Ահմեդ խանին Գ. Պոտյոմկինի հրովարտակն ու նվերը և վերադառնում:

Ռուսաստանի ազդեցությունը մեծ էր նաև Խոյի վրա և Ահմեդ խանը Գեորգիևսկի պայմանագրից հետո հակված էր ռուսական հովանավորությունն ընդունելու: Նա այդ մասին նույնիսկ առաջարկություն է անում ռուսական հրամանատարությանը: 1784 թ. հուլիսին իշխան Գ. Պոտյոմկինը պատասխանում է, թե դրա համար խանը թող գրավոր խնդրանք ուղարկի: Բայց մինչ այդ կարվեր, գործին խառնվում է Բ. Դուռը, որը Ահմեդին շնորհում է սարասքյարի տիտղոս

[1] Մատենադարան, Պարսկերեն ձեռագրերի ֆոնդ, № 233:

[2] Նույն տեղում:



և հանձնարարում Ադրբեջանի կառավարումը, ուստի խանը ընդհատում է բանակցությունները ռուսների հետ[1]:

Երևանի խանի նամակը գեներալ Պոտյոմկինին հասցըվում է 1783 թ. դեկտեմբերի վերջերին: Գեներալը անմիջապես պատասխան է ուղարկում, որի մեջ ասվում է.

«Ձերդ Բարձրության նամակը վերադարձած մայոր կոմս Ապրակսինը հանձնեց ինձ և այնտեղ եղած հաղորդումը Նորին Պայծառափայլություն Հերակլ թագավորի դրության մասին և բարեկամության Ձեր վկայությունը իմ հանդեպ, ընդունում եմ հաճույքով:

Ես վաղուց արդեն տեսել եմ Ձերդ Բարձրության անկեղծ բարյացակամությունը և հավատարմությունը, խորհուրդ եմ տալիս շարունակելու այն»[2]:

Սակայն գեներալի նամակը Հուսեյն-Ալի խանի ձեռքը չի ընկնում, որովհետև, երբ գրվում էին այս տողերը, նա այլևս կենդանի չէր:

Խանի մահվան մասին 1783 թ. դեկտեմբերի 22-ին տիրացու Ստեփան Սահակյանը գրել է, որ այն տեղի է ունեցել նոյեմբերի 9-ին և հետո նրա դին տեղափոխվել ու թաղվել է Բաղդադում[3]: Հուսեյն-Ալի խանը մահացել էր ծանր հիվանդությունից հետո[4]:

Ղուկաս կաթողիկոսը 1783 թ. դեկտեմբերի 20-ին Կ. Պոլիս՝ Իսահակ վարդապետին գրած իր նամակում պատմում է, որ Հուսեյն-Ալի խանի մահից հետո, 1783 թ. նոյեմբերի 10-ին, խանության մեծամեծները Երևանում հավաքվում են խորհրդի և էջմիածնից կանչում նաև իրեն: Քանի որ առանց վրաց թագավորի համաձայնության Երևանի խանը իրավունք չուներ ժառանգելու իշխանությունը, նրանք որոշում են Հե-

[1] *Н. Дубровин*, История войны и влад. русских на Кавказе... т. II, стр. 40.

[2] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. V, об. л. 187.

[3] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр. 268.

[4] Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 179ա:

րակլին նամակ գրել և խնդրել խան հաստատելու Հուսեյն-Ալի խանի ավագ որդի Ղուլամ-Ալիին[1]։

1783 թ. դեկտեմբերի կեսերին Երևան է ժամանում Հերակլի ներկայացուցիչ Մուխրան բեկը՝ բերելով իր հետ Ղուլամ-Ալիին Երևանի խան հաստատելու Հերակլ Բ-ի հրամանագիրը և նվերներ[2]։

Թուրքիան խիստ անհանգստացած էր Անդրկովկասում ռուսների ունեցած հաջողություններից և ամեն գնով աշխատում էր այնտեղի խաներին ետ պահել Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու մտքից։ Գեորգիևսկի պայմանագրի կնքումից էլ առաջ, թուրքերը մարդիկ էին ուղարկում խաների մոտ՝ նվերներով և օգնության խոստումներով, որպեսզի թշնամացնեին նրանց ռուսների հետ։ Այնքան ակներև էր Թուրքիայի այդ ձգտումը, որ, ինչպես հաղորդում է գեներալ Պ. Պոտյոմկինը իշխան Գ. Պոտյոմկինին 1783 թ. մայիսի 3-ին, Հերակլ Բ-ը և Ռեյնեգսը խնդրում են գեներալից մինչև պայմանագիր կնքելը հրովարտակներ ուղարկել անդրկովկասյան խաներին, որպեսզի ետ պահեն նրանց Թուրքիայից[3]։

Թուրքիան առավել ակտիվանում է Քարթլ-Կախեթը Ռուսաստանի հովանավորության տակ անցնելուց և ռուսական զորքերի Թիֆլիս մտնելուց հետո։

Թուրքիայի ձեռք առած միջոցառումների շնորհիվ Երևանի Ղուլամ-Ալի նորընծա խանը, որի հայրը, ինչպես տեսանք, ձևականորեն ճանաչել էր Ռուսաստանի գերիշխանությունը, թշնամական դիրք է բռնում ինչպես Վրաստանի, նույնպես և Ռուսաստանի նկատմամբ։

Թուրքական սուլթանի հրամանով Երևանի խանությունը Վրաստանի դեմ հանելու գործը հանձնարարվում է Ախալցխայի, Բայազետի, Կարսի և Էրզրումի փաշաներին։ Օգտվելով հարմար առիթից, այն է՝ Հուսեյն-Ալի խանի մահվան

[1] Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 179ա։

[2] Նույն տեղում։

[3] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. V, л. 73 с об.



դեպքից, այդ փաշաները մարդիկ են ուղարկում Ղուլամ-Ալի խանի մոտ՝ ցավակցություն հայտնելու և համոզելու նրան, որ նա Երևանի բերդը հանձնի սուլթանին և մյուս խաների հետ միասին հարձակվի Վրաստանի վրա։ Փոխարենը խոստանում են նրա համար սուլթանից խնդրել առանձնահատուկ շնորհներ և դրամական վարձատրություն։

Թուրքական փաշաների արած այս առաջարկությունների լուրը հասնում է Հերակլին, որը այդ մասին հայտնում է գնդապետ Բուռնաշևին, վերջինս էլ իր հերթին հաղորդում է գեներալ Պ. Պոտյոմկինին։ Բուռնաշևի զեկուցագրում, որը Պ. Պոտյոմկինին է հասել 1784 թ. փետրվարի 16-ին, ասվում է.

«Հերակլը ուղարկել է ինձ հետևյալ տեղեկությունները.

1. Երևանից ստացված է նամակ, որի մեջ հայտնվում է, թե Ախալցխայի փաշան Երևանի Ղուլամ-Ալի խանի մոտ է ուղարկել իր հավատարմատար Դաղակլու աղային, իբր ցավակցություն հայտնելու նրա հոր մահվան առթիվ։ Այդպիսիք, ըստ սովորության, արդեն ուղարկված են նաև Էրզրումի, Կարսի, Բայազետի փաշաներից, բայց նրանք գնացել են համոզելու Ղուլամ-Ալի խանին, որ եթե նա Երևանի ամրոցը հանձնի սուլթանին, (ապա) հուսադրում են նրան, կխնդրեն (սուլթանից) առանձնահատուկ շնորհ և դրամ, որքան նա կամենա։ Նրանք գրում են նույնպես հարևան խաներին, որպեսզի միավորվեն՝ իրենք մի կողմից, իսկ թուրքերն էլ մյուս կողմից՝ Հերակլի վրա հարձակվելու համար, քանի որ նա ռուսներին իր մոտ է կանչել, (նրանք գրում են) թե թույլ չտանք քրիստոնյաներին ուժեղանալու։ Այս գործում առանձնապես ջանում է քրդական ցեղապետ Շամսին աղան՝ Ղուլամ-Ալի խանի հարազատ մորեղբայրը, բայց մնացած երևանցիները դրան մասնակցություն չեն ունենում»[1]։

Այնուհետև Բուռնաշևը նույն է հայտնում, որ Հերակլը միջոցներ ձեռք կառնի խափանելու այս ամենը, որովհետև նա նախկինում էլ դժգոհ էր Երևանի ներկա խանի վարքից,

[1] ЦГАДА, ф. Гос. архив. р. XXIII, д. № 13, ч. VII, л. 173.

որը «...մի երկաթասիրտ և անխիղճ մարդ է ու ժողովուրդը նրանից դժգոհ է»[1]:

Հերակլը ռուսական հրամանատարության ներկայացուցչի հետ միջոցներ է որոնում Երևանում թուրքական ազդեցությունը վերացնելու համար: Բայց նախքան այդ հարցին անցնելը, անհրաժեշտ է կանգ առնել նաև այդ նույն ժամանակ Նախիջևանում տեղի ունեցած դեպքերի վրա, որովհետև Երևանի խանն էլ ակտիվ մասնակցություն ուներ նրանցում:

Պարզվում է, որ այդ ժամանակ Նախիջևանում իշխանության համար պայքար էր սկսվել մի կողմից Աբբասղուլի և մյուս՝ Ջանարղուլի խաների միջև: Աբբասղուլին Նախիջևանի նախկին խանն էր, որը բարեկամական հարաբերություններ ուներ Վրաստանի հետ: Իշխանության հավակնորդ Ջանարղուլի խանին հաջողվում է Պարսկաստանում հզորացող Ալի Մուրադ խանի օգնությամբ խլել իշխանությունը Աբբասղուլիի ձեռքից և դառնալ Նախիջևանի խան[2]:

Աբբասղուլի խանի կողմնակից Զուքուլու խանի որդի Ջիլպի-Ղարաբեկը գրավում է Նախիջևանից 20 վերստ վրա գտնվող Հաջի Դեմուր և Ջարի բերդերը և միանալու համար իր մոտ կանչում Աբբասղուլիին: Վերջինս իր զորքերով գնում է միանալու նրան և իր կողմից լուր ուղարկում Երևանի խանին ու խնդրում նրա օգնությունը[3]:

Բուռնաշևը 1784 թ. մարտի 26-ի իր զեկուցագրով, ուղղված Պ. Պոտյոմկինին, հայտնում է, որ Երևանի խանը որոշել է օգնություն ցույց տալ Աբբասղուլի խանին[4]:

Ղուլամ-Ալի խանի կայացրած սույն որոշման պատճառը այն է, որ նա խիստ վախենում էր, թե պարսկական կենտրոնական իշխանությանը ձգտող Ալի Մուրադ խանի դրածո Ջանարղուլի խանը կարող էր հետագայում ոտնձգություններ կատարել նաև Երևանի խանության նկատմամբ: Ուստի,

[1] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. VII, л. 173.

[2] Նույն տեղում, էջ 379ա—379բ:

[3] Նույն տեղում, էջ 235ա:

[4] Նույն տեղում, էջ 360ա:



ի սկզբանե կանխելու համար իրեն սպառնացող այդ վտանգը, բնական է, որ նա պետք է կանգներ Աբբասղուլիի կողմը: Շատ չանցած նա հավաքում է իր զորքը և դուրս գալիս Երևանից[1]:

Միևնույն ժամանակ Ջանարղուլի խանը օգնություն է խնդրում Թալի Ահմեդ խանից[2]:

Աբբասղուլի խանը օգնության խնդրանքով դիմել էր նաև Հերակլին, բայց վերջինս, զբաղված լինելով իր երկրի ներքին գործերով, ի վիճակի չէր օգնելու նրան: Հերակլը Բուռնաշևին ուղարկած տեղեկությունների մեջ հայտնում է, որ ինքը Աբբասղուլի խանի կողմից ուղարկված մարդկանց պատասխան է տվել, թե լավ կլինի սպասել մինչև որ գեներալ Պ. Պոտյոմկինը գա Վրաստան և պարզվի Ալի Մուրադ խանի և ռուսների միջև սկսված բանակցությունների արդյունքը[3]:

Աբբասղուլի խանը իր ուղարկած երկու մարդկանց՝ Աղասի բեկի և Մահմեդ-Ալիի հետ նամակ է ուղարկում նաև գնդապետ Բուռնաշևին: Այդ նամակում խանը գրում է, թե ինքը, հուսալով Հերակլի հովանավորությունը, ցանկանում է լինել Եկատերինա Բ-ի հպատակը և ուրիշներին էլ համոզել այդ անելու, բայց չի կարողանում գրավել իր օրինավոր տեղը Նախիջևանում: Նամակի վերջում նա հայտնում է, որ ինքը միշտ պատրաստ է նորին կայսերական մեծության համար իր կյանքը զոհաբերելու[4]:

Ինչպես երևում է, Նախիջևանի Աբբասղուլի խանը իր դիրքերն ամրացնելու համար հակված էր Ռուսաստանի հովանավորության տակ մտնելու, բայց Ալի Մուրադ խանի միջամտությունը թույլ չէր տվել նրան անելու այդ քայլը և ավելին, զրկել էր նրան իշխանությունից:

Թե ինչով վերջացավ Երևանի Ղուլամ-Ալի խանի ցույց տված օգնությունը Աբբասղուլի խանին, աղբյուրների սակավության պատճառով մեզ հայտնի չէ:

[1] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. VII, л. 235:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 379ա—379բ:

[4] Նույն տեղում, էջ 381ա:

Այս ժամանակ բանակցություններ էին սկսվել ռուսական հրամանատարության և պարսից գահի հավակնորդ Ալի Մուրադ խանի միջև։ Վերջինս իր դիրքերը ամրապնդելու, իր թշնամի Աղա Մահմեդ խան Ղաջարին թուլացնելու և թուրքերի հարձակման դեպքում օգնություն ստանալու համար դիմում է ռուսական կառավարությանը։ Նա այդ բոլորի, ինչպես նաև ամենից առաջ, իրեն շահ ճանաչելու դիմաց խոստանում էր ռուսներին զիջել մերձկասպյան մարզերի զգալի մասը, այլև Ղարաբաղը, Ղարադաղը, Նախիջևանն ու Երևանը։

Ալի Մուրադ խանի հետ համաձայնության հասնելու դեպքում ռուսական հրամանատարության համար համեմատաբար կհեշտանար Անդրկովկասի վրա Ռուսաստանի գերիշխանության տարածումը և բացի այդ, հանձինս Պարսկաստանի ձեռք կբերվեր դաշնակից ընդդեմ Թուրքիայի։ Այս է պատճառը, որ ռուսները կրկին հետաձգում են արշավանքը և պատրաստվում բանակցությունների մեջ մտնել խանի հետ։ Այդ բանի համար որոշվում է Սպահան ուղարկել գնդապետ Տամարային։ Վերջինիս տրված հրահանգներում որոշակիորեն խոսվում էր նաև Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական և ալբանական (աղվանական) պետություններ ստեղծելու ռուսական կառավարության պլանների մասին[1]։

Նախքան այս բանակցությունների սկսելը ռուսական հրամանատարությունը շարունակում էր հետևել Անդրկովկասում տեղի ունեցող անցուդարձին և, առավելապես, անդրկովկասյան տիրակալների՝ Ռուսաստանի հանդեպ բռնած դիրքին։

Արդեն տեսանք, որ թուրքաց սահմանապահ փաշաները, սուլթանի առաջադրանքով, ոչ առանց հաջողության, աշխատանք էին ծավալել Երևանի խանին վրաց գերիշխանությունից դուրս բերելու և վրացիների հետ թշնամացնելու համար, ուստի գեներալ Պոտյոմկինը մի վրացի ազնվականի

[1] А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение..., стр. 129—130.



հետ գրավոր կարգադրություն է ուղարկում գնդապետ Բուռնաշևին՝ վճռական միջոցներ ձեռք առնելու Երևանի խանի նկատմամբ[1]։

Բուռնաշևը, ստանալով գեներալի կարգադրությունը, գնում է Հերակլի մոտ խորհրդակցելու։ Քանի որ Հուսեյն-Ալի խանի մահից անցել էր արդեն մի քանի ամիս և նրա որդի Ղուլամ-Ալի խանը կարող էր այլևս սգո սև հագուստներ չկրել, Հերակլը, համաձայն սովորության, գունավոր հագուստներ է ուղարկում խանին։ Որոշվում է հետախուզության համար օգտագործել այդ առիթը։

1784 թ. մարտի 2-ին գնդապետ Բուռնաշևը գաղտնի զեկուցագրով հայտնում է Գ. Պոտյոմկինին, որ օգտվելով առիթից, հնարավոր է ավելի մոտիկից դիտել խանի վարքը և Երևան քաղաքում բնակվող պարսիկ նշանավոր ընտանիքների տրամադրությունները, որովհետև այս վերջինները, լինելով կառավարումից հեռացված, խիստ դժգոհ էին խանից, որը բոլոր լավ պաշտոնները տվել էր իր քուրդ ազգականներին[2]։

Գնդապետ Բուռնաշևի և Հերակլի խորհրդակցության ժամանակ քննարկվում է նաև Երևանը գրավելու հարցը, բայց Հերակլը հայտնում է, որ Երևանը գրավելու համար համապատասխան զորք չկա[3]։

Թե ի՞նչ տեղի ունեցավ վերոհիշյալ անցքերից հետո, դժվար է ասել նյութերի սակավության պատճառով։ Այդ դեպքերից հետո գրված մի փաստաթղթում (Ս. Բուռնաշևի 1784 թ. ապրիլի 14-ի զեկուցագիրը Գ. Պոտյոմկինին) ասվում է, որ Երևանի խանը Հերակլին հնազանդության նշաններ է ցույց տալիս. նա ուղարկել է ուղտեր ու այլ բաներ, որոնց արժեքը, սակայն, քիչ է նրա հոր կողմից Հերակլին տրված հարկից։ Բացի այդ, Հերակլին այլևս հարկ չի տալիս քրդերի ցեղապետ Շամոին աղան[4]։

[1] Բուռնաշևը այս նամակը ստանում է 1784 թ. հունվարի 29-ին, տե՛ս ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. VII, л. 245 с об.

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում։

Ինչպես երևում է, Ղուլամ-Ալին, այնուամենայնիվ, վախենում էր Հերակլից և աշխատում նրան հնազանդ երևալ, ինչ որ չէր ուզում անել նրա մորեղբայր Շամսին աղան։ Բայց դրանով խանը չէր կարող քողարկել Թուրքաց փաշաների հետ ունեցած իր կապերը և վրաց գերիշխանությունից դուրս գալու ձգտումները, ուստի վրաց թագավորը և ռուսական հրամանատարները շարունակում էին նրանից զգոն մնալ։

Վերը ցույց տրվեց, որ Ղուլամ-Ալին թշնամիներ ուներ նաև հենց բուն Երևանում՝ պարսիկ չինովնիկների մեջ, որովհետև նա մի շարք մեծամեծների զրկել էր պաշտոններից և նրանց փոխարեն առաջ քաշել իր ազգականներին։ Եվ ահա, խանին թշնամացած այս մեծամեծները դավադրություն են կազմակերպում և, ինչպես երևում է Գ. Կարախանյանի տված բացատրությունից, 1784 թ. հունիսի 7-ին նրանցից մեկը՝ Բունյաթ-Ալի անունով մի պարսիկ չինովնիկ Երևանի հրապարակում ատրճանակով սպանում է խանին ու նրա ծառաներից երկուսին[1]։

Ըստ երևույթին, Ղուլամ-Ալիի հետ սպանվածներից մեկը եղել է նրա հարազատ եղբայրը։ Այդ մասին Ղուկաս կաթողիկոսը 1784 թ. հունիսին գրած իր կոնդակներից մեկում ասում է, թե Ղուլամ-Ալին սպանվել է. «...հանդերձ համամայր փոքու եղբարբն»[2]։ Իսկ Հերակլ Բ-ը գեներալ Պ. Ս. Պոտյոմկինին այս մասին գրում է, թե խանի հետ սպանվել է նրա եղբայրը և հինգ հոգի՝ մահրիմներից[3]։

Դժվար է ասել, թե ինչ չափով են մասնակցել այս դավադրության կազմակերպմանը Հերակլի մարդիկ, մասնավորապես, Երևանում գտնվող վրաց մշտական ներկայացուցիչը, բայց արդեն վկայակոչված նյութերը հիմք են տալիս մեզ ենթադրելու, որ այդ մասնակցությունը անպայման եղել է։

Սպանելով նաև խանի եղբորը, դավադիրները կամենում էին իշխանությունից լիովին հեռացնել Ղուլամ-Ալիի մորեղ-

[1] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр. 266—267.

[2] Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 314ա, նաև 370ա։

[3] ЦГВИА, ф. 52, оп. 194, д. № 331, ч. VI, л. 40.



բայր Շամսին աղային և սրա ազգականներին։ Նրանք ուզում էին խան դարձնել Հուսեյն-Ալիի մյուս որդուն՝ Մահմեդին։ Այս մասին նրանք, հավանորեն, ստացել էին Հերակլի ցուցումը։ Մահմեդը փոքր էր (տասներկու տարեկան) և փոխարենը կառավարելու էր նրա մայրը՝ թիֆլիսեցի մի քրիստոնյա[1], որը հավատարիմ կմնար Հերակլին։

Ղուկասը պատմում է, թե խանի սպանությունից հետո Երևանի մեծամեծները դարձյալ հավաքվում են և նամակ գրում Հերակլին, որով խնդրում են խան հաստատել Մահմեդին։ Հերակլը համաձայնվում է և հաստատման թուղթը տրադիցիոն նվերներով իր որդի Գիորգիի հետ ուղարկում Երևան[2]։

Մահմեդ խանի իշխանության անցնելուց հետո թուրքերը փորձեր են անում նրան ևս իրենց ազդեցության տակ գցելու։ Թուրքաց սուլթանը հատուկ ֆերման է ուղարկում Երևանի խանին։ Վերջինիս մայրը գաղտնի իր մոտ է կանչում Երևանում Հերակլ Բ-ի ներկայացուցիչ Գուրգեն Միրզային և ցույց տալիս ֆերմանը։ Գուրգեն Միրզան հանում է նրա պատճենը և ուղարկում Թիֆլիս՝ գնդապետ Ս. Բուռնաշևին[3]։ Վերջինս ֆերմանի թարգմանությունը ուղարկում է Ռուսաստան՝ գեներալ Պ. Պոտյոմկինին[4]։

Սուլթանը Երևանի խանին գրում էր, թե վրաց թագավորը Ռուսաստանի հետ միացած ցանկանում է անդրկովկասյան խաներին գրավել Ռուսաստանի կողմը և ոչնչացնել նրանց, ուստի իրենք պետք է միավորվեն՝ հակահարված տալու համար. ինքը հրաման է տվել Ախալցխայի և Բայազետի փաշաներին՝ կապ պահպանել խաների հետ և այդ ամենի մասին իրազեկ պահել նրանց։ Նա հայտնում է, որ եթե թշնամին հարձակվի Երևանի վրա, ապա սահմանակայն

[1] *С. Бурнашев*, Картина Грузии или описание политического состояния царств Карталинского и Кахетинского. Тифлис, 1896, стр. 16.

[2] Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 314ա։

[3] ЦГВИА, ф. 52, оп. 194, д. № 331, ч. VIII, лл. 57 и 57 об.

[4] Նույն տեղում, էջ 52—53։

փաշաները, համաձայն իր հրամանի, օգնության կգան Երևանին և կկործանեն թշնամուն[1]:

Երևանի խանին նամակներ են գրում նաև Կարսի Մուստաֆա փաշան և Ախալցխայի Սուլեյման փաշան[2]: Այդ նամակներով նրանք ևս աշխատում են համոզել խանին միավորվելու իրենց հետ՝ ընդդեմ ռուսների և վրացիների:

Երևանի խանի մերձավորները ավելի շատ հակված էին հնազանդ մնալու Հերակլին, քան թե նոր կռիվների մեջ մտնել, ուստի բացասական պատասխան են տալիս թուրքերին: Նույն գործի մեջ պահվում է Մահմեդ խանի նամակը Սուլեյման փաշային, որի մեջ գրված է հետևյալը.

«...մենք այժմ չենք կարող ընդդիմանալ նրան (Հերակլ Բ-ին,— Վ. Գ.) և հրաժարվել մեր ծառայություններից: Ոչ մի գործ մի ունեցեք մեզ հետ: Եթե ցանկանում եք, նախ հարձակվեցեք Հերակլ թագավորի վրա և գրավեք Թիֆլիսը: Այն ժամանակ մեզ էլ կհրամայեք: Իսկ այժմ մեր, ինչպես և ձեր թագավորը Հերակլն է և մեզ հետ գործ մի ունեք»[3]:

Հանգուցյալ խանի կողմնակիցները և հատկապես նրա մոր ազգականները, խիստ դժգոհ էին իրենց համար ստեղծված միանգամայն անբարենպաստ պայմաններից, ուստի ապստամբվում են Երևանի նորընծա խանի դեմ: Նրանք, գլխավորելով մի քանի քոչվոր ցեղերի, հարձակվում են խանության հայ և ադրբեջանական գյուղերի վրա, թալանում և ավերում: Ղ. Կարնեցին պատմում է.

«Ահա, որպէս գրեցաք, երկիրս խղճալի ի տատանման կայ. ամենայն գործք խափանեցեալ են. զի ոչ ոք կարէ յանդըլանել: Եւ մեք զամենայն առ մեօք եղեալսն զինուորեցուցեալ զգոյշ կամք»[4]:

Ապստամբածներից Այրմլու ցեղը սկզբում թողնում հեռանում է խանության սահմաններից և գույքը, կանանց ու

[1] ЦГВИА. ф. 52, оп. 194, д. № 331, ч. VIII, стр. 54—55.

[2] Նույն տեղում, էջ 49—50:

[3] Նույն տեղում, էջ 51:

[4] Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 314բ:



երեխաների հետ միասին թողնելով դրսում, վերադառնում է ու սկսում ասպատակել երկիրը[1]:

Նրանց ահից Էջմիածնի շրջակա հայ և ադրբեջանական գյուղերի բնակիչները թողնում են ամեն-բան և հավաքվում Էջմիածնի վանքը[2]:

Ապստամբների գլխավորներն էին՝ Զաման խանի որդի Ղասումը, Ղոչի խանի որդի Զամանը և Մահմադ խանի որդի Լալիկ Ալլահվերդին[3]: Շատ չանցած, նրանցից մի խումբ՝ ավելի քան 300 ձիավորներ, հարձակվում են և հափշտակում Էջմիածնի վանքի և Վաղարշապատ գյուղի հայ և ադրբեջանցի բնակիչներին պատկանող անասունները: Ղուկաս կաթողիկոսը նրանց ետևից մարդիկ է ուղարկում, բայց սրանք ընկնում են հեծյալների ձեռքը և թալանված ու վիրավոր ետ գալիս: Հետո նրանք մարդ են ուղարկում կաթողիկոսին հայտնելու, թե իրենք կամենում էին միայն ռահաթի (գյուղացիների) անասունները տանել և որ պատրաստ են վերադարձնելու օջախի (վանքի) անասունները[4]:

Ղ. Կարնեցին նամակ է գրում Գիորգի թագաժառանգին, որը մեզ արդեն հայտնի պատճառներով Երևանում էր, և խնդրում է միջամտել այս գործին: Գիորգին մի սպառնալի նամակ է գրում և ոմն Հովսեփի ու երկու պարոնների հետ միասին ուղարկում է ապստամբներին: Սրանք վախենում են և վերադարձնում անասունների մի մասը[5]:

Այս կռիվների հետևանքով ճանապարհները դարձյալ փակվում են:

Երկրում ստեղծված այս աննորմալ վիճակը շարունակվում է բավական երկար: 1784 թ. հոկտեմբերի 14-ին Ղուկաս Կարնեցին Կ. Պոլիս՝ Իսահակ վարդապետին գրում է.

«Բանզի յաւուրց սպանման Իշխողին երկրիս, մինչև ցարդ կարօտ մնամք խաղաղութեան՝ որ ոչ երևի բնաւ. զի

[1] Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 316բ:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

գրեթէ յամենայն բնակիչսն սորին խռովութիւն է կալացեալ, որ ոչ վերջանայ»[1]:

Ապստամբների մի մասը այդ ժամանակ անցել էր Արաքսը և սպասողական վիճակի մեջ էր: Ղուկասը փորձում է սրանց և բերդականներին հաշտեցնել, սակայն չի հաջողվում[2]:

Միևնույն ժամանակ խանության մեջ մնացած մյուս ապստամբները շարունակում են իրենց հափշտակությունները ու ավերումները:

Գյուղացիները չէին կարողանում բերքը հավաքել և ընկել էին ամենաողբալի վիճակի մեջ. «Որք և յայժմ ամի գեկեալ արդիւնսն ոչ կարելով բոլորապէս ի վեր առնուլ, կան յամենայնի ի պակասութեան և ի յողորմելութեան. և նկատելով առ եղանակ զխարդութեան երկրիս, եթէ ի վերայ փշոց կան նստեալ»[3]:

Քանի գնում դրությունը լրջանում էր և Հերակլը, ստանալով երևանցիների օգնության խնդրանքը և տեսնելով, որ ապստամբները կարող էին թուլացնել, գուցե և հաղթանակ տանել Մահմեդ խանի նկատմամբ և դրանով խանությունը դուրս բերել վրացական գերիշխանության տակից, որոշում է միջամտել: Նա նամակ է ուղարկում Մահմեդ խանի կողմնակիցներին և հայտնում, որ ապստամբներին, եթե նրանք չհնազանդվեն, խանության սահմաններից հեռացնեն: Նա խոստանում է օգնական զորք ուղարկել երևանցիներին[4]:

Խիստ անհանգստացած Հերակլի այս խոստումից, Ղուկասը, չցանկանալով, որ կռիվները շարունակվեն, կրկին միջնորդում է հաշտություն կնքելու համար: Նա համոզում է Ավդալ աղայի որդի Շամախին աղային՝ հաշտվելու: Սա համաձայնվում է: Այդ մասին Ղուկասը գրավոր հայտնում է Մահմեդ խանին, նրա մորը և պալատից մեծամեծներին[5]:

Ստանալով Ղուկասի գրությունը, խանը նամակ է ուղարկում Շամախինին և հրավիրում նրան իր մոտ՝ հաշտություն

[1] Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 361բ:
[2] Նույն տեղում, էջ 362ա:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 364բ:
[5] Նույն տեղում:



կնքելու: Վերջինս վախենում է գնալ և փոխարենը ուղարկում է իր եղբայր Ահմեդ աղային, որը գալիս է Էջմիածին, բայց վախենում է Երևան գնալ: Կաթողիկոսը ստիպված մի նոր նամակ է գրում խանին, որպեսզի նա ավելի համոզիչ միջոցներով հասկացնի Ահմեդին, թե Երևանում իրեն վտանգ չի սպառնում: Մահմեդը Էջմիածին է ուղարկում մի պալատից խան, որը ուղեկցում է Ահմեդին մինչև Երևան, ուր նրան պատվով են ընդունում: Շամախին աղայի անունից Ահմեդը հավատարմություն է խոստանում Մահմեդ խանին[1]:

Մինչ այդ, Թիֆլիսից Երևան է հասնում Հերակլի ուղարկած զորքը՝ 200 հոգի: Երևանի խանի զորքը, միանալով սրանց և Շամախին աղայի մարդկանց հետ, 2 թնդանոթներով՝ «Հանդերձ Բ մեծամեծ հրացանօք» շարժվում է մյուս ապստամբների դեմ[2]:

Անկալու ցեղը փախչում գնում է Կաղզվանի կողմերը: Խանության սահմաններում մնում է Ռամազան անունով մի ցեղապետ, որը իր մի քանի հարյուր մարդկանցով ամրանում է Փարչենիսում:

Երևանի խանի զորքը վրացիների և քրդերի հետ միացած գնում է Փարչենիս: Ռամազանը դուրս գալով իր ամրացած վայրից, ճակատամարտ է տալիս, բայց պարտվում է և փախչում Ահմեդ աղայի մոտ: Նա իր որդուն Ահմեդ աղայի հետ ուղարկում է Շամախին աղային, որ վերջինս նրան ուղարկի Երևանի բերդ՝ ի նշան իր հպատակության[3]:

Արաքսի մյուս ափում եղած ապստամբները Կարսի Իսաղ փաշայի միջնորդությամբ հաշտվում են Երևանի խանի հետ և հնազանդություն հայտնում նրան[4]: Այս պատճառով զորքը վերադառնում է Երևան:

Շատ չանցած, Շամախին աղան՝ Ռամազանի, Այրմլու ցեղապետերի և մյուս ապստամբ ցեղերի ղեկավարների հետ ընծաներով գնում է Երևան՝ խանի մոտ և հաշտություն է

[1] Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 364բ—365ա:
[2] Նույն տեղում, էջ 365ա:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

կնքվում[1]։ Սակայն, դրանից քիչ անց, ինչպես երևում է 1785 թ. հունիսի 10-ին Ղուկասի գրած մի նամակից, Ռամազանը գնում է Երևանի բերդը և ինչ որ ամբարտավան բաներ խոսում, որի պատճառով սրախողխող է արվում[2]։ Իմանալով այս մասին Թալինի, Շիրակավանի և Արաքսի մյուս կողմն անցած Այրմալու քրդերը միանում են ու երկու անգամ հարձակում գործում Մուղանլու և Շաղլուեցի քոչվոր ցեղերի վրա, մարդկային զոհեր պատճառում նրանց և անասուններ հափշտակում։ Նրանք կասկածում էին, թե Ռամազանին սպանողները այդ քոչվորներից էին. «...իբր թէ՝ նոքա են սպանօղք Ռամազանին»[3]։

Երևանի խանը այս կռիվներին վերջ տալու համար կըրկին զորք է ուղարկում, որը կանգ է առնում Սև ջրի (Մեծամոր) ափին։ Երկու կողմերը իրենց ներկայացուցիչներին են ուղարկում Հերակլ Բ-ի մոտ, որը հաշտեցնում է նրանց և բոլորը վերադառնում են իրենց տեղերը։ Երևանի խանության մեջ վերահաստատվում է խաղաղությունը, որը, սակայն, երկար չի տևում։

Այս ներքին կռիվները ծայր աստիճան վատթարացնում են խանության հայ, ադրբեջանցի և քուրդ աշխատավորների վիճակը։ Մի կողմից իրենց տերերի մշտական կեղեքումն ու ճնշումները, մյուս կողմից ապստամբ ցեղերի թալանն ու ասպատակությունները քայքայում և ավելի են աղքատացնում նրանց։

Այս ամենը, ինչպես նաև ռուսական արշավանքի նախապատրաստությունները և Արևելյան Վրաստանի ռուսական հովանավորության ներքո անցնելու լուրը, ավելի են ուժեղացնում Երևանի բնակչության՝ ռուսների օգնությամբ օտար լծից ազատագրվելու ձգտումը և նոր թափ հաղորդում ազատագրական շարժմանը։

[1] Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 365ա։

[2] Նույն տեղում, էջ 401ա։

[3] Նույն տեղում։





Ռուսական արշավանքի նախապատրաստման շրջանում Երևանը հայ ազատագրական շարժման կենտրոններից մեկն էր։ Երևանի բնակիչները, որ գտնվում էին պարսից հարստահարողների մշտական ճնշման ու դաժան շահագործման ներքո և շարունակ ենթարկվում էին պատերազմների, արշավանքների ու ներքին կռիվների արհավիրքներին, երազում էին ռուսական զորքերի օգնությամբ ազատվել այդ ամենից։ Նրանք պատրաստ էին ամեն բանով օժանդակել ռուսներին։

Երևանի հայերի այդ ձգտումները իրենց արտահայտությունն են գտնում ռուսներին ուղարկված նամակների ու խնդրագրերի, ինչպես նաև իրենց հատուկ ներկայացուցչի հայտարարությունների մեջ, որին նրանք ուղարկել էին Պետերբուրգ՝ բանակցելու արքունիքի հետ երկրի ազատագրման մասին։

Երևանում ազատագրական շարժման մասնակիցներից էին նաև հայ մեծատունները, որովհետև նրանք էլ զերծ չէին մնացել ճնշումներից։ Հայտնի է, որ Հերակլ Բ-ի վերջին արշավանքի ժամանակ (1779 թ.) Երևանի Հուսեյն-Ալի խանը իր ողջ բարկությունը թափում է հայերի և հատկապես հարուստների վրա։ Այդ մասին Ղ. Կարնեցու գավազանագրքում պատմվում է հետևյալը.

«(Երևանի խանը) ...ի գլխաւորացն հայոց, առ ինքն եղելոց, որք—«գնացեալս»— մտեալ էին ի բերդն առ ի պահպանել. որք էին Ժ խղճալի անձինք, զմեծամեծ տուգանս խնդրեաց. գրպարտելով զնոսա թէ՝ դուք հաւատակից գոլով թշնամւոյն մերոյ դաշնադիր էիք լեալ նմա և զխայինութիւնս առնել կամէիք մեզ և զայլ այսպիսի ստաբանութիւնս բարդելով ի վերայ խղճալեացն և ի վերայ իւրաքանչիւրոցն զխստաբարոյ և դժանդ զինուորս եդեալ, խստութեամբ և ճշտիւ պահանջէին ի յոմանց ԵՃ թուման, յոմանց ԲՃ, և յոմանց ԱՃ, աւելի քան զԲՌ թումանս պահանջելով նեղէին և չարչարէին զնոսա զանիւք և բանտիւք։ Իսկ ողորմելիքն այնոքիկ անճարացեալք զինչս և զստացուածս, զտունս և զայգիս իւրեանց վա-

հառնելով և ի տանձկաց ծանր վերադրօք զդրամս պարտք առնելով հազիւ հաղ եւոուն. և վերջապէս բազումք ի յետին թշուառութիւնս հասեալ հոգօք և տառապանօք վարանեալ փոխեցան ի Տէր, և զընտանիս իւրեանց թողին ի դառն աղքատութեանս[1]:

Վերոհիշյալ դեպքերի մասին մի ուրիշ ժամանակակից՝ Գեորգ Խուբովը գրում է[2]. թե Հուսեյն-Ալի խանը ձերբակալել էր երևանցիներից 30 հոգու, որոնցից մեկին սպանել էր, իսկ մյուսներին Սիմեոն Երևանցի կաթողիկոսի խնդրանքով բաց էր թողել, ընդ որում տուգանքների մեծ մասը ձերբակալվածների փոխարեն վճարել էր ինքը՝ կաթողիկոսը[3]:

Անկախ այն բանից, թե ով էր վճարել պարտքերը, փաստ է, որ Երևանի հայ ունևորների կյանքը և ունեցվածքը ևս վտանգի մեջ էր և նրանք, բնականաբար, պետք է ձգտեին ազատվելու այդ վիճակից: Իսկ դա հնարավոր էր միայն ռուսական զենքի օգնությամբ, ուստի նրանք նամակներ են ուղարկում ռուսաց հրամանատարությանը, ուրախություն արտահայտում սպասվող արշավանքի համար և պատրաստակամություն հայտնում ամեն բանով օգնել նրանց:

Չափազանց հետաքրքրական է երևանցիներ մելիք Աբրահամ Հովհաննիսյանի և յուզբաշի Գաբրիել Ալլահվերդյա-

[1] Գարեգին Ա. կաթողիկոս, Նիւթեր և ուսումնասիրութիւններ, պրակ Ե, էջ 55:

[2] *Е. Хубов*, Описание достопамятных происшествий в Армении..., стр. 3—5.

[3] Այստեղ Խուբովը ընկել է չափազանցությունների մեջ: Բանն այն է, որ գրելով իր գիրքը վերոհիշյալ դեպքերից երեսուն տարի հետո, նա չէր կարող ամեն ինչ ճշտորեն հիշել: Մի կողմից այս, մյուս կողմից իր հարազատ հորեղբայր Ս. Երևանցուն մեծարելու ձգտումը գցել են Խուբովին չափազանցությունների մեջ և նա երեք անգամ մեծացնելով ձերբակալվածների թիվը, նրանց փրկության գործը ամբողջովին կապում է Սիմեոնի անվան հետ: Մինչդեռ բերված քաղվածքից երևում է, որ ձերբակալվել են ընդամենը տասը մարդ և վաճառելով իրենց ունեցվածքը ու պարտք վերցնելով մահմեդական վաշխառուներից, վճարել են պարտքերը և ապա ընկել ամենաետին թշվառության մեջ:



նի 1784 թ. հունվարի 13-ին Հովսեփ Արղությանին հասցեագրված նամակը, որը հայտնաբերել և ուսումնասիրել է Ա. Ռ. Հովհաննիսյանը[1]:

Այդ նամակում, որի սկզբի մասը գրված է արձակ, իսկ մնացած մասը՝ ոտանավոր ձևով, ասվում է, թե պարսիկները կամենում են խոտի նման արմատախիլ անել իրենց, խրձերի նման ցրիվ տալ և հարդի նման հողմավար անել: Նրանք հայտնում են Արղությանին, որ իրենց փրկության հույսը դրել են ռուսաց հրամանատարության վրա և խնդրում են այդ կապակցությամբ իրենց հուսադրել: Նամակում ասվում է.

«...Մինլիբորբն այլասեռից·
Պատճառելով բեկեռն երկնից.
Ծշգել ջանան մերազնէից·
Արմատախլել նման խոտից·
Կասեալ փշրեն ժողովն խրձից.
Եւ հողմնավար անձեն յարդից:
Արդե՞ն յուսամք փոյթ փրկութեան
Բամբշեն մեծի ազօրմութեան
Եւ առ չընտրդ իբր բողոք,
Այլ առ ապխտան որպէս օդոք
Գուցէ չիցէն ինչ բարութիւնք
Փոքր հասի քում փրկութեան:
Վերջնոցս ես միոյ յիշման՝
Թէ համարիս լինիլ արժան
Ցայն ժամ ծեր մեր որպէս մուրհակ
Եւ կնիքս նոցա պատանդ,
Հանդերձ համայն մեր ընտանեօք
Եւ շրջակայ առօրատրելովք:
Պատճէն ծրելոցս դարձուցանել
Ժամէք փութով յուսադրել,
Զի մեզ ոչ էր իբրև այս ծանօթ,
Ի պակէն առաջ ինչ նիւթ
Երեքբերեանն միջնորդի.
Եւ կողմանս որբոյ ակէպին:
Ողջ լինիլ քոյ յայսմ հետէ
Մինչ յարաժամ խնդիր մեր է...»[2]:

[1] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр. 115—116.

[2] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. VII, л. 61.

Այս տողերը միանգամայն արտացոլում են Երևանի հայերի տրամադրությունները և ձգտումները, որոնք շատ լավ գիտեին, որ վաղ թե ուշ «սինլքորն ալլաևուրց» պետք է ջանան իրենց ոչնչացնելու, ուստի նրանք դիմում են Ռուսաստանին և փրկություն հայցում նրանից։

Հարկ է նշել, որ այս ժամանակ ռուսական արշավանքին անհամբերությամբ սպասում էին նաև ադրբեջանցիները։ Ադրբեջանցի աշխատավոր բնակիչները, որ նույնպես տվայտում էին օտար և տեղական բռնակալների լծի տակ, չնայած խաների մեծ մասի բացահայտ հակառուսական ձգտումներին, փափագում էին հյուսիսից եկող զորքերի օգնությամբ թոթափել իրենց կապանքները և ազատվել անվերջանալի ներքին կռիվներից։ 1783 թ. մարտ ամսին ռուսական գործակալներից մեկը հայտնում է, որ համարյա ժողովուրդը Դերբենդից մինչև Բաքու և Սալյան ուրախանում է Պարսկաստանում ռուսների գտնվելու համար՝ դրանից սպասելով հանգստություն ներքին կռիվներից[1]։

1783 թ. մայիսի 3-ին գեներալ Պ. Պոտյոմկինը իշխան Գ. Պոտյոմկինին գրել է հետևյալը.

«Ղարադաղից ու Ղարաբաղից ինձ մոտ վերադարձած գործակալները պնդում են, որ ոչ միայն հայերը, այլև տեղացի մյուս բնակիչները չափից ավելի ցանկանում են մեր զորքերի գալուստը»[2]։

Նույնը կարելի է ասել նաև Երևանի խանության ադրբեջանցի բնակչության մասին, որոնք ևս մեծապես տուժում էին ճնշումներից և ներքին կռիվներից։

Երևանի բնակիչները աշխատում էին ամեն ձևով նպաստել ռուսական արշավանքի նախապատրաստմանը։ Ամենից առաջ նրանք ակտիվորեն մասնակցում էին ռուսաց հրամանատարությանը ռազմական ու այլ բնույթի տեղեկություններ ուղարկելու գործին։ Այդ բանում առավել ջանք էր թափում Ստեփան Տեր-Սահակյանը։ Վերջինս Երևանում ծավալված

[1] А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение..., стр. 71.

[2] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. V, л. 74.



ազատագրական շարժման ամենանշանավոր դեմքերից մեկն էր։ Նա ծագումով հայտնի և նշանավոր ընտանիքից էր և իրեն ամբողջովին նվիրել էր հայոց երկրի ազատագրման գործին։ Արհամարհելով վտանգը, նա խանի սարդարների աչքի առաջ հետախուզական տվյալներ էր հավաքում և ուղարկում ռուսներին[1]։ Ստեփանը շահագրգռված էր որքան կարելի է հավաստի տեղեկություններ հաղորդել և այս պատճառով 1783 թ. աշնանը մեկնում է Ղարաբաղ, ծանոթանում մելիքների ռազմական կարողությունների հետ և այդ մասին 1783 թ. դեկտեմբերի 22-ին գրած նամակով հայտնում գեներալ Պ. Պոտյոմկինին[2]։

Իր նամակի սկզբում Ս. Տեր-Սահակյանը տեղեկություններ է հաղորդում Թուրքերի, Ալի Մուրադ խանի, Թավրիզի, Թալի, Ուրմիայի և Երևանի խաների մասին, վերջում նա Ղարաբաղի մելիքների մասին գրում է հետևյալը.

«Այլ մերազնեայ նշանաւոր մէլիքացն ոչ կարացի գրել գիր, զի ճանապարհն, որ ի կողմ Կեանջայու է, ձիւնն փակեաց և սոյն կողմամբս, որ ի վերայ Նախիջևանու գնայ, թշնամութիւն է ընդ շուշեցոց և ոչ գոյ երթևեկութիւն։ Երբ բացցի, գրելոց եմ անխափան։

Սոյն աշնանս ծառայդ գնացեալ էր առ նոսա, և մէլիքացն ունին եւ... (անընթեռնելի է) զօրք։ Ամբարեալ խորտիկ այնքան ոչ ունին, այլ ասեն, թէ ի ժամանակին յանմիկ տաճկաց ամբարք բազումք են, նովիմբք կարեմք լցուցանել։ Ի կողմն Կեանջայու կարեն հանդիպել բաղձալեացդ»[3]։

1784 թ. դեկտեմբերի 18-ին, արդեն Պետերբուրգում եղած ժամանակ, Ս. Տեր-Սահակյանը իշխան Գ. Պոտյոմկինին ուղղած իր նամակում հայտնում է հետևյալը.

[1] А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение..., стр. 113—114.

[2] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. VII, л. 169. Այս նամակի մասին տե՛ս նաև А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение..., стр. 114—115։ Նամակի առաջին էջի լուսանկարը զետեղված է նույն գրքի հավելվածում։

[3] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. VII, об. л. 169.

«...Թ ամիս է այժմ ամենախոնարհ նուաստս հանդիպելով բոլոր շրջակայից մերոց։ Եւ Ղարաբաղու զմելիքսն տեսի, և՛ զմիտսն նոցին իմացայ, որք ճշմարիտ սիրով և հաստատուն յուսով կապակցեալ են արքայական Աթոռոյ մեծի իշխանութեան, որպէս յայտ է Տէրութեան ձերոյ՝ ըստ գրեցելոց խաբեանցս»[1]։

Ս. Տեր-Սահակյանի Ղարաբաղ կատարած այս այցելությունները չափազանց ուշագրավ իրողություն են։ Հայտնի է, որ 18-րդ դարի վերջում հայ ազատագրական շարժման այդ երկու կենտրոնները՝ Ղարաբաղն ու Երևանը գործում էին անջատ-անջատ և այդ հանգամանքն էլ պատճառներից մեկն էր ազատագրական շարժման թուլության։ Ս. Տեր-Սահակյանը, որը ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկն էր Երևանում, լինելով Ղարաբաղում, ռուսական հրամանատարության համար միայն հետախուզական տեղեկություններ հավաքելու մտադրություն չի ունեցել անշուշտ։ Նա, ամենայն հավանականությամբ, երևանցիներին հուզող հարցերի շուրջը մտքերի փոխանակություն է ունեցել մելիքների հետ, որի մասին, տարաբախտաբար, նրա նամակների ժլատ տողերից լոկ կռահել կարելի է։ Սխալ չէր լինի ասել, որ Ստեփանի Ղարաբաղ կատարած այցելությունը՝ ղարաբաղցիների հետ անձնական ծանոթություն և կապ հաստատելու, տեղեկություններ փոխանակելու հետաքրքրական մի փորձ է եղել, որը, սակայն, հետագա տարիներում համապատասխան զարգացում չի ստացել։

Ստեփանը գործնական այլ քայլերի էլ է դիմում ռուսների համար որքան կարելի է շատ տեղեկություններ հավաքելու համար։ 1784 թ. գարնանը նա Գասպար անունով կարսեցի մի հայի ուղարկում է Թուրքիա՝ հետախուզելու, թե արդյոք այնտեղ չե՞ն նկատվում զորքերի կենտրոնացում, չե՞ն ամրացվում բերդերը և այլն։ Ստացված տեղեկությունները նա նույն թվականի մարտի 21-ին ուղարկում է Պ. Պոտյոմկինին[2]։

[1] ЦГВИА, ф. 52, оп. 194, л. № 331, ч. IX, л. 98 с. об.

[2] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр. 116.



Ռուսական հրամանատարությունը երևանցիների հետ կապ ստեղծելու համար մի քանի անգամ Երևան է ուղարկում իր գործակալներին։ 1783 թ. դեկտեմբերին Երևան է գալիս Գաբրիել Յակուլովը, որը Ստեփանին հանձնում է Հ. Արղությանի նամակը, Էջմիածնում զրույց է ունենում Ղուկաս կաթողիկոսի հետ և վերադարձին իր հետ տանում Ս. Տեր-Սահակյանի նամակը Հ. Արղությանին[1]։

Այս նույն ժամանակ Անդրկովկաս էր ուղարկված նաև մի ուրիշ գործակալ՝ պորուչիկ Սերգեյ Մելիքովը[2]։ 1784 թ. հունվարի 30-ին Թիֆլիսում գրած նրա մի նամակից երևում է, որ նա Թիֆլիս էր հասել 1783 թ. նոյեմբերի 25-ին[3]։ Ռուսական հրամանատարության կողմից նրան առաջադրված էր այցելել Երևան և Ղարաբաղ, բայց ինչ-ինչ պատճառներով նա հնարավորություն չի ունենում Ղարաբաղ գնալ և իր փոխարեն նոյեմբերի 29-ին այնտեղ է ուղարկում Դանիել Էվանե անունով մի հայի։ Վերջինիս հետ նա նամակներ է ուղարկում Գանձասարի կաթողիկոսին և մելիքներին, որոնցով խնդրում է իրենց վիճակի մասին մանրամասն տեղեկություններ ուղարկել Դանիելի հետ։ Նա գրում է, որ եթե կարիք լինի, թող իրեն կանչեն, ինքը կգա։ Այնուհետև նա պատմում է, որ դեկտեմբերի 12-ին գնդապետը (Բուռնաշևը) իրեն ճանապարհ է դցում դեպի Երևան։ Դեկտեմբերի 21-ին հասնելով Երևան, նա հանդիպում է ունենում Ստեփան Տեր-Սահակյանի հետ և նրան հանձնում Հ. Արղությանի նամակը։ Մելիքովը մանրամասն տեղեկություններ է հավաքում Երևանի խանի և Կարսի փաշայի մասին։ Այնուհետև նրան լար

[1] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение...., стр. 114.

[2] Ս. Մելիքովը Ղարաբաղի մելիքներից մեկի որդին էր։ Նա զինվորական ծառայության էր մտել Ա. Վ. Սուվորովի հանձնարարությամբ և 1780—1781 թթ. ծառայում էր նրա մոտ։ Վայելելով Սուվորովի վստահությունը, Մելիքովը կատարել է նրա հատուկ առաջադրանքները (տե՛ս *М. Нерсисян*, Из истории русско-армянских отношений, кн. первая, стр. 81, 83, 99).

[3] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. VII, л. 167.

է հասնում, թե իր ուղարկած Դանիելը ճանապարհին սպանվել է լեզգիների կողմից, ուստի նա Երևանից մի նոր մարդ է ուղարկում Ղարաբաղ՝ տալով նրան նոր նամակներ[1]:

Երևանից Մելիքովը վերադառնում է Թիֆլիս, որտեղից 1784 թ. փետրվարի 22-ին մի նոր նամակ է ուղարկում Գ. Պոտյոմկինին և հայտնում թե սխալ է եղել Ղարաբաղ ուղարկված Դանիելի սպանության լուրը: Վերջինս ողջ առողջ է և փետրվարի 20-ին եկել է Թիֆլիս՝ մանրամասն տեղեկություններ բերելով Ղարաբաղի դրության մասին: Մելիքովը այդ տեղեկությունների մասին իրազեկ է պահում գեներալին[2]:

Ռուսական հրամանատարությունը կապ էր հաստատել նաև Ղուկաս կաթողիկոսի հետ: 1782 թ. իշխան Գ. Պոտյոմկինը Ռեյնեգսի հետ նրան թանկարժեք նվեր և մի նամակ է ուղարկում: Ղ. Կարինեցին այդ ժամանակ գիտեր ռուսական պլանների մասին և դեռևս 1781 թ. ռուսահայերին ուղղած իր նամակներում ցանկություն էր հայտնում, որ ռուսական տիրապետությունը ավելի տարածվի և խաչի թշնամիները կործանվեն ռուսական սրից[3]: Նա 1782 թ. նույն ոգով նամակներ է գրել նաև ռուսական պետական գործիչներ Պոտյոմկինին, Պանինին, Ռումյանցևին, շնորհակալություն հայտնել նրանց՝ հայ ժողովրդի նկատմամբ ունեցած խնամքի համար և խնդրել առաջիկայում ևս հովանավորել հայերին[4]:

Գ. Պոտյոմկինին ուղարկած նամակը, որ կաթողիկոսին է հանձնում Ռեյնեգսը, շատ ուրախացնում է նրան: Ռեյնեգսի նամակներից Գ. Պոտյոմկինի արած համառոտության մեջ պատմվում է, որ Ղուկասը մեծ հարգանքներով է ընդունում ռուսական հրամանատարության ներկայացուցչին և նրա բե-

[1] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. VII, л. 167.

[2] Նույն տեղում: Ս. Մելիքովի Երևան կատարած այս այցելության մասին նույն արխիվի այլ նյութերի հիման վրա գրել է նաև Ա. Ռ. Հովհաննիսյանը (Россия и армянское освободительное движение..., стр. 95—96).

[3] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр. 54.

[4] Նույն տեղում, էջ 55:



րած նամակը: Այդ օրը տոն է դառնում այնտեղ եղած հայերի համար: Գ. Պոտյոմկինը այդ մասին գրում է Թագուհուն.

«Սա մի ուրախության օր էր այս անբախտ ժողովրդի դժբախտությունների մեջ, որը դեռ չի զգացել նման մխիթարություն իր թագավորության անկումից հետո: Ձերդ կայսերական կենաց օգտին բացականչությունները կրկնվեցին պատրիարքի և այնտեղ ներկա գտնվողների կողմից: Այդ օրը արդեն կես գիշերից անցել էր, երբ խորհրդակցություն գումարվեց, որի ժամանակ բոլորը երդվեցին լինել նախկինից ավելի հավատարիմ ռուսական կայսերական գահին և խնդրել ողորմած հովանավորություն և բարեհաճություն. Հայաստանին՝ ուղարկելով որոշ քանակությամբ զորք, որը չխառնվելով ոչ մի գործի, իր ներկայությամբ սոսկ կարող է բազմապատկել հայ ժողովրդի քաջությունը»[1]:

Այս ամենը ցույց է տալիս, թե որքան մեծ է եղել հայերի ազատագրվելու ձգտումը և որ նրանք պատրաստ են եղել զենքը ձեռքին դուրս գալ պարսիկների դեմ իրենց երկիրը ազատագրելու համար:

Ղուկաս կաթողիկոսը անվճռական և շատ զգույշ էր երկրի ազատագրման հարցում: Նա ևս ձգտում էր Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու օտար լծից, բայց միևնույն ժամանակ այնպես էր անում, որ իր ձգտումները հայտնի չդառնային խաներին և դրանից չտուժեին հայերը: Հ. Արղությանի խորհրդով Ղուկասը այդ տարիներին բազմաթիվ նամակներ է գրում ռուսական պետական գործիչներին, բայց միշտ էլ զգույշ է լինում իր արտահայտությունների մեջ, մի բան, որը դժգոհության առիթ է տալիս Հ. Լազարյանին: Այսպես, 1783 թ. ապրիլի 12-ին Հ. Լազարյանը կաթողիկոսին գրում է, թե նրա նամակը՝ ուղղված Գ. Պոտյոմկինին, հասել է իրեն և ինքը այն թարգմանաբար հանձնել է ըստ պատկանելույն, սակայն նրան զարմացնում է Ղուկասի նամակի բո-

[1] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр. 55.

վանդակությունը, որովհետև վերջինս ոչ միայն իրեն ոչինչ չէր գրել, որ ինքը հաղորդեր ռուսներին, այլև Պոտյոմկինին ուղղված համառոտ նամակի մեջ լռությամբ է մատնել Հայաստանի համար կարևոր քաղաքական խնդիրները[1]:

Սրան որպես պատասխան Ղուկասը հայտնում է, թե ինքը չի ուզում նամակի մեջ իր կամքը հայտնել, որովհետև ռուսները դեռևս հեռու են, իսկ պարսիկները, եթե իմանան իր ցանկությունների մասին, ապա մեծ վնասներ կտան իրենց: Նա գրում է.

«Վասն զի՞ մի ոք իցէ, որ մայրենի գթոց և խնամոց հանդիպիցի և նենգիցէ: Եւ կամ ո՞վ իցէ, որ ի փրկութենէ հրաժարեսցի: Այլ զի գիտեմք լաւապէս, որ մինչ դեռևս հեռի են զօրք սառի, եթէ իմանայցեն սոքա զիղձս և զկամս մեր առ առաջադրութիւն դոցին, անկարծիք վնասիմք ի սոցանէ: Վասն որո՞յ ոչ կարեմք զկամակցութիւն մեր յայտնի առնել և ի գիր արձանացուցանել»[2]:

Այնուհետև Ղուկասը գրում է, որ ինքը աղոթում է ռուսների մտադրությունների հաջողությամբ իրականանալու համար «... որք ի յօգուտ մեզ և խղճալի ազգիս մերոյ լինիցին»[3]:

Ղ. Կարնեցու այս անվճռականությունն ու «վախկոտությունը» բարկացնում էր նաև Հ. Արղությանին և նա ընդհանուր գործին չվնասելու համար կաթողիկոսի նամակները թարգմանելիս, հոգ է տանում, որ նրանք դառնան ռուսական ձեռնարկումներին միանգամայն հավանություն տվող և ռուսներին օգնելու ջերմ ցանկությամբ տոգորված գրություններ: Օրինակ, երբ Ղուկասը շատ անորոշ մի պատասխան է ուղարկում Գ. Պոտյոմկինի 1783 թ. փետրվարի 15-ի նամակին, որով վերջինս շոշափելով ընդհանուր քաղաքական կացու-

[1] Մատենադարան, ձեռ. № 2803, էջ 122ա:
[2] Նույն տեղում, էջ 123բ—124ա:
[3] Նույն տեղում, էջ 124ա:



թյան հարցերը, հույս էր հայտնել, թե կաթողիկոսը հարկավոր դեպքերում կկատարի իր խնդրանքները, Հ. Արղությանը այնպես է թարգմանել տալիս Ղուկասի պատասխան նամակը, որ նրա երկիմաստ, անորոշ մտքերի փոխարեն գրված է, թե «ողջ հայ ժողովուրդը ցանկանում է հաղթական զորքերի գալուստը և ուրախությամբ հույս ունի ազատագրվելու»[1]:

Ղուկասից դժգոհ էր նաև հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկը՝ Շահամիր Շահամիրյանը: Իր նամակներում նա մեղադրում էր Ղ. Կարնեցուն ազատության չսիրելու մեջ և կոչ էր անում հոգ տանել երկրի ազատագրման մասին: Ղուկասը պատասխանում է նրան, թե ապստամբություն կազմակերպելը անհնարին է, որ ժողովուրդը «...ըստ մեծի մասին մատնեցեալք կան ի խաւարութիւնս թշնամեաց անողորմից, որ հաւատարմապէս ծառայելով ևս չկարեն զողորմութիւն գտանել, ուր մնայ թէ զապստամբութիւն ցուցանիցեն, որք բնաւ ոչ իսկ կարեն. զի նոքա իբրև զաւազ ծովու, և մեք սակաւաւորք, նոքա ըստ աշխարհային հանգամանաց զօրաւորք, և մեք տկարք»[2]:

Այսպես չէին մտածում, սակայն, Երևանի և առանձնապես Ղարաբաղի բնակիչները, որոնք պատրաստ էին զինված օգնություն ցույց տալ ռուսական զորքերին:

Երևանի բնակիչները, մինչ այդ, շարունակում էին իրենց դիմումները ռուսական կառավարությանը: 1784 թ. մայիսի 30-ին նրանք գրում են Հ. Արղությանին, թե իրենք նամակներ են ուղարկում Եկատերինա Բ-ին, իշխան Գ. Պոտյոմկինին և գեներալ Պ. Պոտյոմկինին: Նրանք խնդրում են իրենց նամակները հանձնել հասցեատերերին և հայտնում են, որ իրենք անհամբեր սպասում են ռուսական թագուհու զորքերի գալստյանը, որոնք պետք է փրկեն իրենց կյանքը և հագեցնեն իրենց ծարավ սրտերը: Պահպանված և վերջերս

[1] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр. 67.
[2] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 262ա:

հրապարակված են երևանցիների՝ Հ. Արղությանին և գեներալ Գ. Պոտյոմկինին ուղղված նամակները[1]։

Գ. Պոտյոմկինին նրանք գրում են, թե իրենք գիտեն հայ ժողովրդին ստրկական լծից ազատագրելու գեներալի բարի ցանկության մասին և հույս ունեն, որ դա կիրականանա։ Բայց իրենց դրությունը շատ վատթարացել է, ուստի խնդրել են կայսրուհուց, քանի դեռ իրենք կենդանի են, առանց հապաղելու ազատագրել իրենց։ Նրանք գեներալից խնդրում են, որ Եկատերինա Բ-ին և Գ. Պոտյոմկինին հասցեագրված իրենց նամակները հասցվեն նրանց։ Նամակը ստորագրել են երևանցիներ մելիք Աբրահամը, մելիք Ավանեսովը, մելիք Գաբրիելը, յուզբաշի Ալավերդիևը և ուրիշներ, ընդամենը տասներեք հոգի։

Այս ժամանակ հարց է առաջանում երևանցիներից մեկին կանչել Ռուսաստան՝ ռուսական կառավարության հետ բանակցելու համար։ Գ. Խուբովը պատմում է, որ սկզբում ուզում էին իրեն ուղարկել, բայց ինքը հնարավորություն չի ունենում մեկնելու և իր փոխարեն ուղարկում են Ստեփանին[2]։ Վերջինս 1784 թ. օգոստոսի սկզբին տիրացու Ավետիքի հետ դուրս է գալիս Երևանից՝ նախապես Ղուկաս կաթողիկոսից ստանալով դրամական օժանդակություն։ Տեր-Սահակյանը գնում է Թիֆլիս և այնտեղ ընդունվում Հերակլ Բ-ի կողմից, որին հանձնում է կաթողիկոսի հանձնարարական նամակը։ Ղուկասը խնդրում է Հերակլից Ս. Տեր-Սահակյանին ուղարկել Ռուսաստան։ Թագավորը կատարում է կաթողիկոսի խնդրանքը և իր հերթին Ստեփանի մասին մի հանձնարարական գրում գեներալ Գ. Պոտյոմկինին։ Վերջինս իր հերթին հանձնարարականով Ստեփանին ուղարկում է Պետերբուրգ՝ Գ. Պոտյոմկինի մոտ[3]։

---

[1] *А. Р. Иоаннисян.* Россия и армянское освободительное движение..., стр. 272 - 273.

[2] *Е. Хубов,* Описание достопамятных происшествий в Армении..., стр. 6.

[3] *А. Р. Иоаннисян,* Россия и армянское освободительное движение..., стр. 119—120.



Երբ Ստեփանը դեռևս գտնվում էր Գ. Ա. Պոտյոմկինի մոտ, վերջինս 1784 թ. օգոստոսի 28-ին իշխան Գ. Պոտյոմկինին ուղարկում է մի գաղտնի զեկուցագիր, որը պահպանված է և որից նոր տեղեկություններ կարելի է քաղել Ստեփանի դեսպանության մասին։

Պարզվում է, որ Ստեփանը Երևանի հայերի անունից երկու նամակ է տարել Ռուսաստան։ Մեկը ուղղված է եղել Եկատերինա Բ կայսրուհուն, մյուսը՝ Գ. Պոտյոմկինին։ Գեներալ Գ. Պոտյոմկինը այդ նամակները ռուսերեն թարգմանության հետ միասին ուղարկում է ըստ պատկանելույն։ Բացի դրանից, Ստեփանը գեներալին է հանձնում նաև վերջինիս հասցեագրված Ղ. Կարնեցու նամակը[1]։

Գ. Պոտյոմկինը գրում է, թե Երևանի հայերի նամակների վրա բացակայում են կաթողիկոսի կնիքն ու ստորագրությունը, ուստի ինքը այդ մասին հարցում է արել Ստեփանին։ Վերջինս դա պատճառաբանում է այսպես, թե կաթողիկոսը հանդիսանալով ողջ աշխարհում ցրված հայության հոգևոր հովիվը, չի կարող իր կնիքը դնել հայության մի խմբի՝ Արարատյան երկրի բնակիչների նամակի վրա[2]։ Գեներալը հայտնում է, որ իրեն հասցեագրված կաթողիկոսի նամակից երևում է, թե նա բավարար չափով նախանձախնդիր է իր ազգի ազատության համար[3]։

Նույն գործի մեջ են պահված նաև Ստեփանի ցուցմունքները և Ղ. Կարնեցու վերը հիշատակված նամակը։

Ստեփանը ցույց է տալիս, որ թուրքերը ջանք չեն խնայում անդրկովկասյան տիրողներին իրենց կողմը գրավելու համար։ Նրանք շարունակ նամակներ են ուղարկում Երևանի իշխողներին և հորդորում նրանց ընդդիմանալու քրիստոնյաներին։ Երևանի բնակիչները բաժանվել են երկու մասի և պայքարում են միմյանց դեմ։ Դրա հետևանքով երկիրը ավերվում և ամայանում է, իսկ Հերակլը ի վիճակի չէ պաշտպանելու

---

[1] ЦГВИА, ф. 52, оп. 194, д. № 331, ч. VIII, лл. 67—68.

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։ Կաթողիկոսի նամակի թարգմանությունը տե՛ս ЦГВИА, ф. 52, оп. 194, д. № 331, ч. VIII, лл. 70—71.

նրանց և իրեն խնդրել է այդ մասին խորապես պահել ռուսներին[1]:

Հասնելով Պետերբուրգ, Ստեփան Տեր-Սահակյանը, կամ ինչպես հորջորջում էին նրան «Արարատյան դեսպանը», ստանում է Հ. Արղությանի ուղարկած հայ-ռուսական պայմանագրի նախագիծը, որպեսզի նրանով դիմի ռուսական իշխանություններին[2]:

Հայտնի է, որ 18-րդ դարի վերջում Հայաստանի ազատագրման և հայկական պետականության ստեղծելու հույսերը Հայաստանի ապագա հասարակական ու քաղաքական կառուցվածքի վերաբերյալ ծնունդ էին տվել մի շարք ծրագրերի ու նախագծերի, որոնք պարզ ու որոշակիորեն արտահայտում էին դրանց հեղինակների սոցիալական ու դասակարգային շահերը: Այսպես, հնդկահայ առևտրական բուրժուազիայի Մադրասի հայրենասիրական խմբակը. գլխավորությամբ Շահամիր Շահամիրյանի, նախատեսում էր Հայաստանում ստեղծել բուրժուա-դեմոկրատական հանրապետություն, որ պետք է ապահոված լիներ բուրժուական հասարակարգի զարգացումը: Մադրասցիները այս ուղղությամբ զգալի գործ են անում՝ հրատարակում են գրքեր, պատրաստում Ռուսաստանի և ապագա հայկական պետության միջև կնքվելիք պայմանագրի նախագիծը: Վերջինիս համաձայն, Հայաստանը սերտ դաշինքի մեջ էր լինելու Ռուսաստանի հետ և այնտեղ ողջ իշխանությունը կենտրոնացված պետք է լիներ պառլամենտի ձեռքում. «Տանն հայոց կառավարեսցէ զազգ իւր և զաշխարհն ըստ օրինի հայոց...»[3], այստեղ ոչ մի խոսք չկա ֆեոդալական հողատիրության մասին:

Ի հակադրություն մադրասցիների, հայ ազատագրական շարժման մյուս հոսանքը, որը ներկայացնում էր կղերա-ֆեոդալական և բուրժուական-ազնվականական շրջանները, առաջ էր քաշել Հայաստանում ֆեոդալական միապետության ստեղ-

[1] ЦГВИА, ф. 52, оп. 194, д. № 331, ч. VIII, л. 69 с об.

[2] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр. 121.

[3] Դիւան, հ. Դ, էջ 736:



ծելու գաղափարը: 1783 թ. Հ. Արղությանը շարադրում է Ռուսաստանի և ապագա հայկական պետության միջև կնքվելիք պայմանագրի նախագիծը, ըստ որի Հայաստանի իշխանությունը լինելու էր թագավորի ձեռքում, որի ընտրությունը «...կախեալ լինիցի ի կամաց նորա միայն (ռուսաց կայսրուհու — Վ. Գ.), եթէ յազգէ մերմէ և եթէ զրան իւրոյ հաւատարմաց»[1]. հողի նկատմամբ պահպանվելու էր մուլքադարական իրավունքը: Ահա այս նախագիծն էր, որ Հ. Արղությանը ուղարկում է Ս. Տեր-Սահակյանին:

1784 թ. նոյեմբերի 24-ին Հ. Արղությանը Աստրախանից նամակ է գրում Ստեփանին և տեղեկություններ հաղորդելով նրան Երևանի խանության վիճակի մասին, գրում է, թե նա ոչ միայն որպես Երևանի դեսպան է ներկայանալու ռուսական կառավարությանը, այլև որպես ողջ հայության ներկայացուցիչ. «...դու դէֆութաթ, այսինքն դեսպան և կամ միջնորդ ես լԵրևանու, այլև բոլոր ազգին հայոց և ողորմելի մելիքացն Ղարաբաղու, որք մինչև ցայսօր լցին աղաղակաւ յականջս դոցա և մեր... ահա հասել է ժամ՝ կամ փառաւորեսցի ազգ մեր, կամ կանգնեսցի ըստ ծերունւոյն, և կամ անկեալ գլորեսցի...»[2]:

1784 թ. դեկտեմբերի 18-ին Ս. Տեր-Սահակյանը նամակով դիմում է իշխան Գ. Պոտյոմկինին և հայտնելով Հ. Արղությանի այս, ինչպես և նոյեմբերի 3-ին գրած նամակի մասին, տեղեկություններ է հաղորդում Պարսկաստանում տեղի ունեցած քաղաքական անցուդարձի և Ղարաբաղի մելիքների ծանր վիճակի մասին: Նա գրում է, որ ինքը, համաձայն Հ. Արղությանի ցուցումի, ներկայացուցիչ է ողջ հայության, որոնց թիվը չափազանցնելով նշում է ինը միլիոն և կամ ավելի: Վերջում նա գրում է.

«...և ապիմաստս, լինամեա տեղեաւ գոլով, Գէղամեան ծնեալս՝ ի նոյն տան և սնեալս յԱրարատեան, հմտացեալ եմ ազգին մերոյ որպիսութեան, այժմ երևաս ի գետնի

[1] Դիւան, հ. Դ, էջ 732:

[2] Մատենադարան, ձեռ. № 4496, էջ 238:

ձերդ առաջի Թեամ մեծի ողորմութեան, ըղձամ լսել զաղետս իմ բողոքման իբր բոլոր ազգէն համայնս»[1]:

Իշխան Գ. Պոտյոմկինը մի քանի անգամ ընդունում է «Արարատյան դեսպանին»: Վերջինս 1785 թ. փետրվարի 17-ին զեկուցագիր է ներկայացնում նրան, որով հայտնում է, թե Արարատյան երկրի հայերը երազում են ազատագրվել պարսից լծից և խնդրում են իրենց այս կապակցությամբ հուսադրել: Բացի դրանից, նա խնդրում է իրեն ետ ուղարկել Հ. Արղությանի հետ միասին, որպեսզի պարսիկները կարծեն, թե ինքը Ռուսաստան էր գնացել նրան բերելու համար և իրեն հալածանքների չենթարկեն: Նա ավելացնում է, թե իր տեղ հասնելուց հետո Պետերբուրգ կուղարկվի մի լիազորված անձ, որը հայոց կաթողիկոսի համաձայնությամբ կբերի պայմանագիրը[2]:

Իշխան Գ. Պոտյոմկինը ընդհանրապես լավ է ընդունում «Արարատյան դեսպանին» և հույսեր է տալիս նրան: Այդ բանը և նոր հրահանգներ ստանալու համար գեներալ Պ. Պոտյոմկինի Պետերբուրգ ժամանելը ոգևորում է Հ. Արղությանին և նա նամակներ է գրում Ղարաբաղի մելիքներին ու Գանձասարի կաթողիկոսին՝ պահանջելով նոր դիմումներ ուղարկել ռուսաց մեծամեծներին[3]: Բայց այդ բանը անմիջապես չի կատարվում, որովհետև ղարաբաղցիները այլևս վախենում էին Իբրահիմ խանից: Իզուր էր, սակայն, Հ. Արղությանի ոգևորությունը. ռուսական արշավանքը այդ ժամանակ չէր կարող տեղի ունենալ և հետաձգվում է: Ինչպես տեսանք, ռուսաց կառավարությունը հույս ուներ Ալի Մուրադ խանի հետ բանակցելու միջոցով, ի թիվս այլ երկրների, տեր դառնալ նաև Արևելյան Հայաստանին, բայց այդ հույսերը ի դերև ելան, որովհետև նախքան գնդապետ Տամարայի մայրաքաղաք հասնելը, Ալի Մուրադ խանը, որին Պարսկաստանում ֆրանսիական դեսպանը համոզում էր հրաժարվել Ռուսաստանի հետ պայմանագիր կնքելուց[1], դաժան պարտություն է կրում Աղա Մահմեդ խանից և շուտով ինքն էլ վախճանվում: Գնդապետը ստիպված էր ձեռնունայն վերադառնալ: 1785 թ. ռուսները չէին կարող արշավել՝ Ումմա խանի հարձակման պատճառով, շուտով սկսվում է ռուս-թուրքական պատերազմը և ռուսական հրամանատարությունը անգամ ստիպված է լինում Վրաստանում եղած իր զորամասերը ետ կանչել:

«Արարատյան դեսպանը» սրանից հետո էլ մնում է Ռուսաստանում, որովհետև իշխան Պոտյոմկինը դա անհրաժեշտ էր համարում և շարունակում նրան հուսադրել:

Ռուսական արշավանքի պատրաստությունների ժամանակ Երևանում ծավալված ազատագրական շարժումը, թեև, ինչպես տեսանք, մի շարք օբյեկտիվ պատճառներով չհասավ իր նպատակին, բայց այն լավագույն վկայությունն էր պարսից լծից ազատագրվելու Երևանի հայության մեծ ձգտման, որը հետագայում՝ 1804, 1808, 1827 թվականներին ռուսների դեպի Երևան կատարած արշավանքների ժամանակ դրսևորվեց ավելի մարտական ձևով: Նրանցից շատերը, արհամարհելով մահվան վտանգները, մեծ օգնություն և օժանդակություն ցույց տվեցին ռուսական զորքերին:

## Դ. ՈՒՄՄԱ ԽԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Արարատյան երկրում ծայր առած ներքին կռիվների ու երկպառակությունների հանդարտումից շատ ժամանակ չէր անցել, երբ 1785 թ. աշնանը տեղի է ունենում մի նոր իրադարձություն, որը նորից ամեն բան իրար է խառնում: Դա Ումմա խանի արշավանքն էր, որը կազմակերպվել էր Թուրքիայի դրդումով և նպատակ ուներ ավերելով Վրաստանը,

---

[1] ЦГВИА, ф. 52, оп. 194, д. № 331, ч. IX, л. 98 об.

[2] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр. 171.

[3] Նույն տեղում:



[1] Очерки истории СССР (XVIII в., вторая половина), стр. 750.

ստիպել նրա թագավոր Հերակլ Բ-ին հրաժարվելու ռուսական հովանավորությունից։

Չնայած այդ արշավանքը անմիջապես ուղղված չէր Երևանի խանության դեմ, բայց, այդուհանդերձ, այն մեծամեծ վնասներ հասցրեց երկրին, ստիպեց նրա բնակիչներին մի քանի անգամ հեռանալ իրենց բնակավայրերից ու ապահովություն փնտրել անմատչելի քարանձավներում և ամրացած վայրերում։

Դեռևս նախքան Գեորգիևսկի պայմանագիրը, Թուրքիան ամեն գնով աշխատում էր Կովկասի լեռնական իշխաններին և անդրկովկասյան խաներին հանել ռուսների դեմ և դրանով կասեցնել վերջիններիս առաջխաղացումը դեպի Անդրկովկաս։ Թուրքերը զինում էին լեռնականներին, առատ նվերներով սիրաշահում նրանց և գրգռում հարձակումներ կատարելու ռուսական սահմանապահ զորքերի վրա։ Փոխգնդապետ Իվան Լեշկևիչը գեներալ-մայոր Պոլլին 1780 թ. մարտի 12-ին տված գաղտնի զեկուցագրով հայտնում է, թե Ղազի Գիրեյ սուլթանի մարդկանցից մեկը՝ Ալի Մահմեդը պատմել է, որ եթե թուրքական սուլթանի մատը խառը չլիներ կովկասյան լեռնականների գործերին, ապա խաղաղությունը երբեք չէր խախտվի[1]։ Նա հայտնել է նաև, որ թուրքական սուլթանը լեռնական իշխաններին և համայնքներին մեծ գումարներ է տալիս, միշտ առատորեն մատակարարում է վառոդ, կապար, հրացաններ ու այլ բաներ։ Նա լեռնականներին գաղտնի ձևով հուսադրում է և համոզում հարձակումներ կատարել ռուսական սահմանապահ զորքերի և ամրությունների վրա[2]։

Թուրքիան գաղտնի էր անում այս ամենը, որովհետև 1774 թ. հուլիսի 10-ին կնքված Քուչուկ-Կայնարջիի հաշտության պայմանագրի համաձայն պարտավորվել էր այս վայրերում ձեռնպահ մնալ Ռուսաստանի դեմ ուղղված գործողություններից։

Թուրքական գործակալները իրենց ուշադրությունը

[1] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 9, ч. II, л. 144.
[2] Նույն տեղում։



առավելապես կենտրոնացրել էին Ավարայի Ումմա կամ Օմար խանի վրա, որը վրացական թագավորից Վրաստանի վրա չհարձակվելու համար ամեն տարի նշանակալից գումարներ էր ստանում։ Բանն այն է, որ այս ժամանակ Վրաստանը, գտնվելով տնտեսական ծանր դրության մեջ, ի վիճակի չէր Ումմա խանին վճարել սահմանված գումարը, դրանից վերջինս խիստ դժգոհ էր ու պատրաստ էր բանակցել Հերակլի թշնամիների հետ։ Հաշվի առնելով այս, թուրքական կառավարությունը որոշում է օգտագործել Ումմային Վրաստանը ավերելու համար և առաջարկում է Ախալցխայի Սուլեյման փաշային կազմակերպել այդ գործը։ Վերջինս շուտով մի նամակ է ուղարկում Ումմա խանին և գրում, թե նրա հանգուցյալ հոր խնդրանքի համաձայն թուրքական արքունիքը նշանակել էր նրան 10 հազար լև ռոճիկ, բայց նրա մահը դադարեցրել էր վճարումը։ Սուլեյմանը թուրքական կառավարության անունից խոստանում էր տարեկան 10 հազար լև և շատ ուրիշ պարգևներ տալ Ումմային, եթե նա հավաքեր իր զորքերը և ուղարկեր Ախալցխա՝ ռուսների դեմ գործելու համար[1]։

Ումման դրական պատասխան է տալիս Սուլեյմանին։ Իմանալով այս մասին, Հերակլը, շատ անհանգստացած, նամակ է ուղարկում գեներալ Պ. Պոտյոմկինին և խնդրում արգելք հանդիսանալ խանի մտադրությունների իրականացմանը։ Գեներալ Պ. Պոտյոմկինը հունիսի 29-ին նամակ է գրում Ումմային՝ աշխատելով համոզել նրան հրաժարվել Վրաստանի դեմ հարձակվելու մտադրությունից[2]։

Այնուհանդերձ, ռուսական հրամանատարությունը կարծում էր, որ եթե Վրաստանը մտնի Ռուսաստանի հովանավորության տակ, թուրքերը կվախենան նրան վնասել։ Երբ 1783 թ. օգոստոսի 3-ին գնդապետ Բուռնաշևը զեկուցագիր է ուղարկում Պ. Պոտյոմկինին և հայտնում Սուլեյման փաշայի մտադրությունների մասին, Պ. Պոտյոմկինը 10 օր հետո պա-

[1] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. IV, л. 263.
[2] Նույն տեղում, д. № 13, ч. V, л. 109 об.։

տասխանում է, թե Սուլեյման փաշան լեզգիներին գրգռում է Վրաստանի դեմ լոկ Հերակլին սպառնալու համար և ինքը չի կարծում, թե փաշան առիթ է որոնում թշնամություն սկսելու Վրաստանի հետ, առավել ևս այն դեպքում, երբ իմանա, որ ռուսական արքունիքը վրացական թագավորությունը ընդունել է իր հովանավորության տակ[1]:

Նույնն էր կարծում նաև իշխան Գ. Պոտյոմկինը, որը 1783 թ. հուլիսի 1-ին Խերսոնից գեներալ Պ. Պոտյոմկինին գրել է հետևյալը.

«...չափազանց անհավանական է, որ Բ. Դուռը իր ներկա աղքատությամբ՝ սեփական զորքերը պահելու համար փողի կարիք ունենալով, ի վիճակի լինի լեզգիներից յուրաքանչյուր մարդուն վճարել 50-ական լև: Ինարկե, կամ այս լուրերն են սուտ, կամ՝ խոստումները սուտ:

Ձերդ գերազանցությունը թող հուսալի մարդիկ ուղարկի, որոնք կարողանան հետախուզել գործերի հանգամանքները և հասկացնեն նրանց, թե որքան ողբալի կլինի նրանց համար Ռուսիային իրենց դեմ գրգռելը և որքան շատ կարող են նրանք շահել՝ նվիրվելով նրա ծառայությանը[2]»:

Սակայն, ռուսական հրամանատարության հաշիվները սխալ դուրս եկան: Վրաստանի դեմ լեռնականներին հանելու թուրքերի ձգտումը շատ լուրջ էր և այս նպատակի համար նրանք ծախսերի առջև կանգ չառան: Բ. Դռան կարգադրությամբ Սուլեյման փաշան բազմաթիվ նվերներ ու նամակներ է ուղարկում լեռնական իշխաններին, առաջարկում նրանց դուրս գալ Վրաստանի և ռուսների դեմ, խոստանում նրանց ապահովել սննդամթերքներով և դրամով:

Սուլեյման փաշան այս գործին ակտիվորեն մասնակցելու լուրջ պատճառներ ուներ, որովհետև նրա համար գաղտնիք չէր Գեորգիևսկի պայմանագրի երկրորդ հոդվածը, որով Ռուսաստանը խոստացել էր տարածել իր հովանավորությունը նաև այն հողերի վրա, որոնք ժամանակի ընթացքում

[1] ЦГАДА, ф. Гос. архив, р. XXIII, д. № 13, ч. IV, л. 135об.

[2] Նույն տեղում, էջ 36բ—37ա:



ձեռք կբերվեին Վրաստանի կողմից: Խոսքն այստեղ վերաբերում էր առաջին հերթին Ախալցխային:

Թուրքերը մտածում էին, թե Վրաստանի վրա հարձակումներ ձեռնարկելու համար շատ հարմար կլիներ օգտագործել Երևանի խանությունը, որն ավելի մոտ էր Թիֆլիսին: Նրանք սովորաբար, Վրաստանին հարվածում էին երկու ուղղությամբ՝ Ախալցխայի և Ջարի-Բելոկանի: Այս երկու վայրերում նրանք օգտագործում էին նաև լեռնականներին: Ախալցխայի կողմից կատարվող հարձակումները այնքան էլ վտանգավոր չէին Վրաստանի համար, որովհետև սահմանները պաշտպանվում էին ոչ միայն վրացական, այլև ռուսական զորքերի կողմից: Եթե թուրքերը տեր դառնային Արարատյան երկրին, ապա հնարավոր կլիներ Վրաստանին հարվածել նաև այդ ուղղությամբ: Երևանի կորուստը կթուլացներ վրացիներին և միաժամանակ, ավելի մեծացնելով Թուրքիայի կշիռը Անդրկովկասում, լայն հնարավորություններ կընձեռեր նրան տեղական դեպքերին հետևելու և ռուսների առաջխաղացումը դեպի հարավ կանխելու համար:

Բացի վերոհիշյալներից, չպետք է մոռանալ նաև այն հարստությունները, որ թուրքերն ակնկալում էին ստանալ Արարատյան բարեբեր երկրից:

Հնարավորություն չունենալով ինքը իրականացնել այս ծրագիրը, սուլթանը աշխատում էր այդ գործի մեջ ներքաշել Երևանի խանության հարևաններին: Հ. Արղությանը 1785 թ. փետրվարի 25-ին տիրացու Ստեփանին ուղղած նամակում գրում է, որ Ղարաբաղի և Խոյի խաները սուլթանից ստացել են նվերներ ու նամակներ՝ Ախալցխայի փաշայի միջոցով: Այդ նամակներով առաջարկվում էր խաներին միաբանել և հարձակվել Երևանի վրա. «...զորութիւն գրոյն այս է թե դուք միաբան լինիք և ջանայք Երևան տիրել, որ թշնամեաց ձեռին չմնայ և որքան զորութիւն և փող կամիք, տացից ձեզ»[1]:

[1] Մատենադարան, ձեռ. № 4496, էջ 272—273:

Հ. Արղությանը գրում է, որ նման առաջարկություններ արվել են նաև մյուս խաներին. «...նմանապէս և Ղաթալի խանին, Թարվիզու, Նախիջևանու, Շամախու, Նուխու, Բաքուայ խանիցն և լեզգուցն ի սմինին. Շամխալին, Աւար խանին և այլոց մէկ մէկ ոսկէ սահաթ և բուսական ոսկի, որին երկու հազար, որին աւել պակաս առաքեալ է խոնդքարն և Ախլցխու փաշայն իւր մարդովն առաքեալ է իւրաքանչիւրոցն։ Զօրութիւն այս, որ ընդդիմանան վրաց և կործանեն և Երևանու տիրեն»[1]։

Անդրկովկասյան խաները մերժում են սուլթանի այս առաջարկությունը։ Նրանցից ոմանք այդ անում են վախենալով ռուսական զորքերից («...բայց իւրև չուն դողան ի յահէն մեր ամենաողորմած կայսրուհոյն»— գրում է Հ. Արղությանը[2]), իսկ ոմանք էլ՝ չկամենալով փչացնել իրենց հարաբերությունները Ռուսաստանի հետ, որովհետև ձգտում էին նրա բարեկամությանը։

Լեզգիների մեծամասնությունը ևս բացասական պատասխան է տալիս թուրքերի առաջարկին[3], միայն Ավարայի Ումմա խանն է համաձայնվում։ Չհրաժարվելով Երևանը գրավելու մտքից, թուրքերը իրենց ողջ ուշադրությունը կենտրոնացնում են դեպի Վրաստան կազմակերպվող արշավանքի վրա։

Ռուսական զորքերի մուտքը Թիֆլիս մեծ իրարանցում և խուճապ է առաջացնում Թուրքիայում։ Սուլեյման փաշան ավելի է ակտիվացնում իր գործողությունները։ Թուրքերը Հյուսիսային Կովկասում կազմակերպում են իրենց մարգարե հայտարարած Շեյխ Մանսուրի ապստամբությունը ռուսների դեմ, որպեսզի Ումմա խանը կարողանա անարգել արշավել Վրաստանի վրա։ Կապը Վրաստանի և Ռուսաստանի միջև խզվում է։ Ռուսները ոչ միայն հնարավորություն չեն ունե-

¹ Մատենադարան, ձեռ. № 1496, էջ 272—273։

² Նույն տեղում։

³ Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. II, стр. 25.



նում Վրաստան ուղարկել Հերակլ Բ-ի խնդրած 200 փութ վառոդը և լրացուցիչ զորքը, այլև Վրաստանում եղած ռուսական զորքերի հանդերձանքն ու ռոճիկը[1]։

Գեներալ Պ. Պոտյոմկինը, իմանալով Ումմա խանի արշավանքի մասին, ուրիշ միջոց չունենալով Վրաստանին օգնելու, հայտարարում է, թե Հերակլին օգնելու համար Վրաստան է ուղարկում ռուսական մի մեծ ջոկատ։ Որպեսզի ավելի հավաստի դարձնի այս լուրը, նա գեներալ-պորուչիկ Լեոնտևին կարգադրում է դեպի Մոզդոկ շարժել Կաբարդինյան և Բուտիրյան գնդերը և այնպիսի շարժում կատարել, որ ստացվի տպավորություն, թե նրանք գնում են դեպի Վրաստան[2]։

Սակայն այս մանևրը չշփոթեցրեց Ումմա խանին և նա գիտենալով, որ ռուսները սաստիկ զբաղված են Հյուսիսային Կովկասի գործերով, սկսում է իր արշավանքը։ Նա իր ազգական Ալի Սուլթան Ջանգութեյցու և Ախուշացի Կաղիի ուղեկցությամբ, 11 հազար զորքով գալիս է Ալազանի մոտ. այնտեղ նրան են միանում Ջարի ու Բելոկանի հրոսակները, որոնք բոլորը միասին կազմում են 20 հազար մարդ։

1785 թ. սեպտեմբերի 17-ին Ումմա խանը անցնում է Իորի գետը և շարժվում դեպի Թիֆլիս։ Նա Թիֆլիսի վրա հարձակվելու մտադրություն չուներ, բայց այդ շարժումն անում էր Հերակլին խաբելու համար, որը իր զորքերով և գնդապետ Բուռնաշևի ռուսական երկու գումարտակներով հետևում էր նրան։ Շուտով Ումման իր շարժման ուղղությունը փոխում է և գնում դեպի Բորչալու՝ ճանապարհին ավերելով ու թալանելով հանդիպած գյուղերը, սպանելով ու գերելով բնակչությանը։

Բորչալուում խանը բնակչությունից պատանդներ է վերցնում և հետո Դերբենդի ձորով շարժվում դեպի Ախթալայի արծաթի հանքերը։ Նա գրավում է Ախթալայի ամրոցը, ավերում գործարանները, քանդում եկեղեցին։ Այստեղ խանը

¹ Н. Дубровин, История войны..., т, II. стр. 85, 137.

² Նույն տեղում, էջ 138։

գերի է վերցնում Ախթալայի հանքերի ու արծաթի գործարանի բանվորներից 860 հոգու, որոնցից 640-ին սպանել է տալիս[1]:

Սեպտեմբերի 26-ին Ումմայի զորքերը շարժվում են Լոռվա բերդի վրա, որի բնակչության մեծ մասը Երևանի խանությունից եկածներ էին և այդ պատճառով նա մտնում էր Էջմիածնի թեմի մեջ[2]: Նա կանգ է առնում Ուզունլար գյուղի մոտ և այնտեղից մի ջոկատ ուղարկում Լոռվա ամրոցի շրջակա գյուղերը ավերելու:

Սեպտեմբերի 29-ին ավարցիները դուրս են գալիս Ուզունլարից և հարձակվում ամրոցի վրա: Սակայն նրանց չի հաջողվում միանգամից գրավել այն: Նրանք ութ օր պաշարում են ամրոցը, հետո խանը հրամայում է իր զինվորներին անտառից փայտ բերել և լցնել ամրոցի պարիսպների տակ այնքան, որ կարողանան բարձրանալ նրանց վրա և մտնել ամրոցի ներսը[3]: Հրամանը կատարվում է և ամրոցը ընկնում է Ումմա խանի ձեռքը, որը ավերել է տալիս այն և գերելով ու սպանելով նրա բնակիչներին, իր զորքերը մտցնում է Թուրքիայի սահմանները և Ախալքալաքի վրայով տանում նրանց Ախալցխա:

Երբ Ումմա խանը մտնում է Վրաստանի սահմանները, Հերակլը, մտածելով, որ նա կարող է հարձակվել նաև Երևանի խանության վրա, այդ մասին նամակ է գրում Մահմեդ խանին, իսկ վերջինս էլ իր հերթին հայտնում է Ղուկաս կաթողիկոսին և խորհուրդ տալիս նրան ապահովության համար քաշվել Երևանի բերդը[4]:

[1] Н. Дубровин, История войны..., т. II, стр. 141.

[2] Ղուկասը Գիորգի արքայորդուն 1782 թ. մայիսին գրել է հետևյալը. «...Լոռու բերդարնակքն՝ բնական որդոյ Աթոռոյս վիճակք են, վասն զի նոցա ամենեքեան են այսրանցիք, բուրականցիք և ջրաբերցիք, որք ուր և լինիցին որդոյ Աթոռոյս են և ոչ այլոց» (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 145բ):

[3] Յիշատակարան ազգային արդեան պատմութեան համար, «Կռունկ հայոց աշխարհին», 1862 թ., էջ 282:

[4] Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթ. դիվան, թղթ. 7, վավ. 5:



Ումմա խանի արշավանքի լուրը մեծ իրարանցում է առաջացնում Երևանի խանության մեջ: Բնակիչները սարսափած թողնում են ամեն բան և փախչում ամրանում երկրի անառիկ վայրերում, իսկ շատերն էլ գնում են Երևանի բերդը: Չնայած Էջմիածնի վանքը շրջապատված էր պարիսպներով և այնտեղ կային պահապան հրացանակիր զինվորներ, բայց Ղուկասը, անսալով Հերակլի և Մահմեդ խանի խորհրդին, հավաքում է վանքի թանկարժեք իրերը և գնում Երևան:

Ավարցիների արշավանքից առաջացած այս խուճապը չափազանց մեծ վնասներ է հասցնում Երևանի բնակչությանը: Արշավանքը, որ սկսվել էր սեպտեմբերի 17-ին, քանի գնում մոտենում էր Արարատյան երկրի սահմաններին: Դրա հետ միասին մեծանում էր երկյուղը և մարդիկ չէին վստահում դուրս գալ իրենց թաքստոցներից: Ավելի քան երեք ամիս բնակչությունը թաքնված էր և նրա ունեցվածքը մնացել էր բախտի քմահաճույքին:

Ումմա խանի Ախալցխա հասնելուց հետո, Սուլեյման փաշան այլևս չէր թաքցնում Երևանի խանությունը իրեն ենթարկելու մտադրությունները: 1786 թ. հունվարի 5-ին գեներալ Պ. Պոտյոմկինը հայտնում է հետևյալը. «Սուլեյման փաշան Երևանի խանին և Արարատում բնակվող հայ պատրիարքին նամակներ է ուղարկել, պահանջելով հարկեր առաջինից յոթանասուն հազար, իսկ վերջինից՝ քառասուն հազար ռուբլի, սպառնալով, որ եթե սրանից հրաժարվի, ամբողջովին կավերի նրա մարզերը»[1]:

Սուլեյմանի այս պահանջը ավելի է մեծացնում խուճապը, սակայն խանը և կաթողիկոսը չեն շտապում կատարել այն, որովհետև հույս ունեին, թե վրաց թագավորը թույլ չէր տա Երևանը դառնալ Ախալցխայի հարկատու:

Գեներալ Պ. Պոտյոմկինը 1786 թ. հունվարի 5-ին իշխան Գ. Պոտյոմկինին Եկատերինոդարից ուղարկած զե-

[1] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр. 169.

կուցագրով հայտնում է, որ Երևանի խանը հրաժարվել է Սուլեյման փաշային հարկեր տալ: Այդ առթիվ ինքը նամակ է ուղարկել նրան և գոհունակություն հայտնել վրաց թագավորին հավատարիմ մնալու համար: Նա խանին գրել է, որ այդ մասին ինքը զեկուցել է իշխան Պոտյոմկինին[1]:

Նովրուզի (մարտի 21) նախօրյակին լուր է գալիս, թե Ումմա խանի զորքերը պատրաստվում են արշավել Երևանի վրա: Դարձյալ խուճապ է սկսվում: Իսկապես, ավարցիների մի խումբ դուրս էր եկել Ախալցխայից, բայց ոչ Երևանի վրա հարձակվելու համար: Ղուկասը 1786 թ. մարտի 20-ին գրում է, թե դրանից առաջ լեզգիների մի ջոկատ գնում է Աբխազիա՝ թալանի, և երբ նրանք հարուստ ավարով վերադառնում են, ճանապարհին, մի կիրճով անցնելիս, շրջապատվում են վրացիների կողմից: Նրանցից շատերը սպանվում են, մյուսները փախչում, իսկ թալանված ապրանքը ետ է վերադարձվում[2]:

Ախալցխայից դուրս եկած լեզգիների խումբը գնում էր այդ ջոկատի պարտության վրեժը առնելու[3] և տագնապը իզուր էր:

Ղ. Կարնեցին, հավանորեն ոչ առանց Մահմեդ խանի գիտության և թույլտվության, նամակ է գրում Սուլեյման փաշային և հարցում անում, թե լեզգիները հարձակվելու են Երևանի վրա: Սուլեյմանը մի երկիմաստ պատասխան է ուղարկում: Ղ. Կարնեցին գրում է.

«Եւ ընկալեալ մեր զպատասխանի նախկին թղթոյն մերոյ ի Մովպեհէն Տայոց, որ գրեալ էր գլուսագրութիւն և դարձեալ զզուշութիւն ի յեղակարծ յարձակմանէ նոցա...»[4]:

Հասկանալի է, որ Սուլեյմանի պատասխանը չէր կարող հանգստացնել կաթողիկոսին և խանին, ուստի նրանք որոշում են նոր հարցում անել: Ղ. Կարնեցին մի նամակ է գրում

[1] ЦГВИА, ф. 52, оп. 194, д. № 365, ч. I, л. 11.

[2] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 70բ—71ա:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 66բ: Ղուկասի այս նամակը գրված է 1786 թ. հունվարի 7-ին:



և այն Թովմասի ու Մելքիսեդի հետ ուղարկում Սուլեյմանին: Մահմեդ խանը և Ղուկասը սրանց հետ ուղարկում են ընծաներ[1]:

Թովմասը և Մելքիսեդը գնում են Ախալցխա և երկար ժամանակ մնում այնտեղ (այս ընթացքում լեզգիները գրավում են Վախան ամրոցը) և վերադարձին իրենց հետ բերում են Սուլեյմանի պատասխան նամակը ու նվերներ:

Փաշայի այս նամակը ևս անհասկանալի էր: Ղուկասը գրում է, թե «(Սուլեյմանն) դարձեալ գլուսագրութիւն էր գրեալ, բայց ոչ զովացուցիչ տապոյ բոցոյս... Այլ յայնքան երկար միջոցին ոչ իմացաք զհաւաստի զիտաւորութիւնս նոցա, զի միամտէաք, այլ կացաք միշտ ի վարանման և տարակուսութեան»[2]:

Հետո լուր է հասնում նրանց, թե Ումմա խանի զորքերը ցրվել են Ախալցխայի գյուղերը ձմեռելու[3]:

Երբ լեզգիների խումբը գնացել էր Աբխազիայում պարտվածների վրեժը առնելու, Երևանի խանը որոշում է նամակով դիմել ուղղակի Ումմա խանին, և խնդրել, որ նա իր երկիրը չխառնի: Որպեսզի այս դիմումը Հերակլի վրա չթողնի անջատ բանակցության տպավորություն, Մահմեդ խանը նախապես նամակ է գրում Հերակլին, ստանում նրա համաձայնությունը, որից հետո ընծաներով և հատուկ գրությամբ մարդիկ է ուղարկում Ումմայի ու Սուլեյման փաշայի մոտ: Խանը նվերներ է ուղարկում նաև լեզգիների նշանավոր առաջնորդներին[4]:

Այս ժամանակ Սուլեյման փաշան Մահմեդ խանից և Ղուկասից իր պահանջած հարկը ստանալու համար իր ներկայացուցչին ուղարկում է Երևանի խանություն: Ղուկասը պատմում է, թե դա Բոռչալուի Մուսա խանն էր, որ դավաճանելով Հերակլին անցել էր Սուլեյմանի և Ումմա խանի կողմը: Մուսա խանը մի քանի մարդկանց հետ ճանապարհ է ընկ-

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 66բ:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 71բ:

նում դեպի Երևան, բայց Թալինում ծանր հիվանդանում է և մեռնում[1]:

Ումմա խանի զորքերը, որ տեղավորված էին Ախալցըխայի և Ախալքալաքի գյուղերում, փոքր ջոկատներով սփռվում են շրջակայքը թալանելու համար: Այդպիսի մի խումբ, 24 հոգուց բաղկացած, գալիս է Երևանի խանություն: Ճիշտ այդ ժամանակ (1786 թ. փետրվար—մարտ ամիսներին) վրացական մի փոքրիկ ջոկատ՝ Գեորգի և Պաատա բեկերի հրամանատարությամբ, ուղարկված է լինում Երևան («գոլին յաղնժամ սատ ի պաշտօնս առաջչին իւրեանցս» — գրում է Ղուկասը): Վրացիները, հանդիպելով լեզգիներին, հարձակվում են նրանց վրա և բոլորին կոտորում[2]: Այս միջադեպը մեծ վախ է գցում Ղ. Կարնեցու սրտում. նա մտածում է, թե լեզգիները կկարծեն, որ այս հարձակումը կատարվել է Երևանի խանի ցուցմունքով և կարշավեն Երևանի վրա[3]: Ուստի, նա անմիջապես նամակ է գրում Կարսի փաշային և հայտնում, որ Երևանի խանը վերոհիշյալ դեպքի մեջ որևէ մասնակցություն չունի և խնդրում է այդ մասին ծանուցել Սուլեյման փաշային, որպեսզի նա և Ումմա խանը լավատեղյակ լինելով իրականությանը, հանկարծ չհարձակվեն Երևանի վրա[4]:

Ղուկասը նմանօրինակ խնդրանքով դիմում է նաև կարսեցի մի հայ հարուստի[5]: Կարսի փաշան կատարում է Ղուկասի խնդրանքը և խանը պատասխանատվություն չի կրում այդ միջադեպի համար:

Ումմա խանի արշավանքի առաջացրած իրարանցումը օգտագործում են Մահմեդ խանին թշնամի մի քանի ցեղեր և ապստամբություն բարձրացնում: Այդ մասին Ղ. Կարնեցին 1786 թ. մարտի 3-ին գրել է.

«Իսկ տակաւին լայնցանէ (լեզգիներից) ոչ ապահովեցեալ, կրեցաք նարդենիս և ի յանդուգն և անգլուխ երկրականացս զմեծամեծ վտանգս, զի վասն սատանայոյ զկառաջադիմութիւն՝

1 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 71բ:

2 Նույն տեղում, ձեռ. № 4481, էջ 176բ:

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում:



տմանք ցեղք սոցա ընդ բերդականացն և այլ ցեղից հակառակեալ, զօրաժողով եղեն մարտնչել ընդ միմեանս»[1]:

Այս ապստամբության մանրամասնությունները գտնում ենք կաթողիկոսի մի այլ նամակի մեջ, որը գրված է 1786 թ. մայիսի 8-ին: Այնտեղ պատմվում է, որ Երևանի Մահմեդ խանը այդ ժամանակ արդեն ամուսնացել էր Խոյի Ահմեդ խանի աղջկա հետ: Ահմեդ խանը իր աղջկա հետ Երևան էր ուղարկել նաև մի ներքինու, որին կարգադրված էր ազդեցություն ձեռք բերել Մահմեդ խանի պալատում և տանել Ահմեդ խանին հաճելի քաղաքականություն: Վերջինս այդ ժամանակ մեծ պատիվներ էր ստացել թուրքաց սուլթանից (նրան շնորհված էր սերասքերության պաշտոնը), ղեկավարվում էր թուրքերի ցուցումով և նպատակ ուներ Երևանը դուրս բերել Վրաստանի տիրապետությունից: Նրա ուղարկած ներքինուն հաջողվում է մեծ ազդեցություն ձեռք բերել Երևանում[2]: Այդ մասին Հ. Շահխաթունյանցի մոտ արձանագրված է հետևյալը.

«Սոյն այս ներքինի ի փոքր միջոցի զամենայն զգործառնութիւնս ի կարգի եդեալ՝ միայնակ այնուհետև կառավարէր զբոլոր հարկաւորսն վերաբերեալս խանութեանն Երևանայ ի բաց հանելով զբովանդակ գաղանացեալ զգործակալսն նոյն իշխանութեանն»[3]:

Բանը հասնում է նրան, որ Երևանի խանի անունից գրավոր խնդրագիր է ուղարկվում Հերակլ Բ-ին, որով խնդըրվում է այդ ներքինուն՝ Աղա Հուսեյնին դարձնել Երևանի խանի վեզիր: Հերակլը ներքինուն հրավիրում է իր մոտ, խոստանալով շնորհել նրան այդ կոչումը[4]: Դա, ըստ երևույթին պատրվակ էր Խոյի խանի գործակալին Երևանից հեռացնելու համար, բայց չի հաջողվում:

1 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 20բ:

2 Նույն տեղում, էջ 21ա: Տե՛ս նաև ЦГВИА, ф. 52, оп. 194, св. 113, д. № 7, л. 23.

3 Դիւան, հ. Ա—Բ, էջ 9:

4 ЦГВИА, ф. 52, оп. 194, д. № 366, ч. II, л. 112.

Աղա Հուսեյնի գործունեությունը դուր չի գալիս քըրդական ցեղապետ Շամսին աղային և նա պատրաստ էր ընդհարվելու քրդականների հետ, բայց Ղ. Կարնեցին միջամտում է և հաշտեցնում նրանց[1]: Այսուհանդերձ, երկրում խաղաղություն չի հաստատվում, իրենց պաշտոններից ներքինու կողմից հեռացված Այվազ և Ղասըմ բեկերը հեռանում են քաղաքից և հավաքելով երկու հազար զորք, հարձակվում են Երևանի վրա: Նրանք պահանջում են ներքինուն իր համախոհների հետ միասին արտաքսել բերդից: Քանի որ այս պահանջը չի կատարվում, նրանք հարձակվում են խանին պատկանող շրջակա գյուղերի վրա և կողոպտում բնակչությանը[2]:

Դրանից հետո ներքինին և իր կողմնակիցները՝ «ղճատըլըան և զՖեզյանխան» հարձակվում են նրանց վրա: Այդ երկու կողմերն էլ ջոկ-ջոկ գնում են էջմիածին, մի քանի օր մնում այնտեղ՝ մեծամեծ վնասներ հասցնելով վանքի տնտեսությանը[3]:

Այս կռիվները անհանգստացնում են Հերակլ Բ-ին, որովհետև նրանք կթուլացնեին Երևանի խանությունը, հնարավորություն կտային Սուլեյմանի համար այն նվաճելու: Ուստի, նա Երևան է ուղարկում իր ատրճանակավորներ Միրզա Միխայելին, Սուլխան Դիվանբեկին և ուրիշներին, որպեսզի հաշտություն սերմանեն երկու կողմերի միջև:

Հերակլի մարդիկ գալիս են Երևան և սկսում համոզել երկու կողմերին՝ հաշտվելու: Բանակցությունների համար նրանք դրսում եղածներին բերում են Երևանի բերդը: Ահա այդ ժամանակ, գիշերը, պահակների ձեռքով սպանվում է Խոյի Ահմեդ խանի ներքինի գործակալը[4]: Սպանության մանրամասնությունները մեզ հայտնի չեն, սակայն միանգամայն ակներև է, որ այդ գործին մասնակից չէին կարող չլինել նաև

1 Դիւան, հ. Ա—Բ, էջ 9:

2 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 21ա:

3 Նույն տեղում, էջ 20բ: Այս դեպքերի մասին տես նաև՝ Դիւան, հ. Ա—Բ, էջ 10:

4 Նույն տեղում:



Հերակլի մարդիկ, որոնք ձգտում էին պահպանել Երևանի վրա վրացական գերիշխանությունը:

Ներքինու սպանությունից հետո Երևան են վերադառնում Այվազ և Ղասըմ բեկերը ու ստանձնում իրենց նախկին պաշտոնները:

Արարատյան երկրում ծայր առած այս ներքին հուզումները և Խոյի Ահմեդ խանի դրածոյի նկատմամբ տեղի ունեցած այս դատաստանը, անշուշտ, աղերս ունեին այդ նույն ժամանակ Խոյում տեղի ունեցած դեպքերի հետ:

Ղ. Կարնեցու գրություններից երևում է, որ մինչև 1786 թ. փետրվարի կեսերը Խոյում չափազանց խառնակ վիճակ է եղել և որ Խոյի Ահմեդ խանը, նրա եղբայրը և մի որդին դավադրության զոհ են գնացել: Նրանց սպանողները Շահբազ խանի որդիներն էին, որոնցից Մելիք խանը տիրում է Խոյին[1]:

Ահմեդի որդիներից մեկը՝ Ջաֆարղուլի բեկը, փախչում է Ուրմիայի խան Բաշգա քրդի մոտ և նրանից օգնական զորք ստանալով գալիս է Խոյի վրա: Ճակատամարտի ժամանակ Խոյի բնակիչները անցնում են Ջաֆարղուլի բեկի կողմը և միասնական ջանքերով գրավում բերդը: Հաղթողները սպանում են Շահբազի որդի Մեհդի խանին և նրա մեծ եղբայր Հուսեյնին: Ջաֆարղուլի բեկը դառնում է Խոյի խանը[2]:

Բայց գործը սրանով չի ավարտվում: Ջաֆարղուլի բեկին օգնության եկած զորքերը, որ գտնվում էին Խոյում, սկսում են թալանել բնակչությանը: Ղուկասը գրում է. «...տասարակյան զօրքն ոչ սակաւ զաւարս և զկապուտս առին անտի, մինչև հասուցանել զայն երկիր ի թշուառութիւն մերս երկրիս»[3]: Ահա, Խոյում սկսված այս դեպքերն էին, որ հնարավորություն տվեցին Երևանում սպանել Խոյի խանի գործակալին և վերացնել Ահմեդ խանի ազդեցությունը:

1 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 71ա:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

1786 թ. մարտ ամսին Շորագյալից և Թիֆլիսից նամակներ են գալիս Երևան, որոնցում ասվում է, թե լեզգիները դուրս են եկել Տայքից ու գալիս են դեպի Երևան։ Արարատյան երկրում նորից սկսվում է խուճապ, բնակիչներից ոմանք թաքնվում են քարանձավներում ու լեռներում, մնացածներին տանում են Երևանի բերդը։ Ղ. Կարնեցին էջմիածնի վանքը թողնելով մի քանի վարդապետների և զինվորների հսկողության տակ, ինքը գնում է Երևան։ Հետախուզության համար նա մի քանի հրացանակիրներ է ուղարկում լեզգիներին ընդառաջ։ Նրանք գնում են Շիրակավան և վերադառնալուց հետո պատմում են, որ լեզգիները մի քանի գյուղերից գերիներ վերցնելով գնում են Փամբակաձորի ճանապարհով։ Ղուկասը նորից վեց հրացանակիրներ է ուղարկում Արայի լեռը, որպեսզի գիտեն այնտեղից, թե ո՞ւր են գնում լեզգիները[1]։

Ումմա խանի զորքերը այդ ժամանակ Փամբակաձորով շարժվում են դեպի հյուսիս-արևելք։ 500 ձիավորներ նրանցից բաժանվելով գալիս են Աշտարակ գյուղը, որի բնակիչները ապաստանել էին քարանձավներում։ Նրանք բռնում են գյուղում մնացած 12 այգեպաններին, սպանում են նրանցից մեկին, իսկ մյուսներին իրենց հետ տանում[2]։ Երբ այս լուրը հասնում է Երևանի խանին, նա կարգադրում է բերդից դուրս եկած իրերը ներս բերել և քաղաքի խիստ ահաբեկված բնակչությանը քաշեցնել բերդը[3]։

Արայի լեռը գնացած զինվորները նկատվում են այդ հեծյալների կողմից և մի կերպ փախչում գալիս են Երևան ու լուր տարածում, թե լեզգիները գալիս են քաղաքի վրա։

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 21ա—21բ։

[2] Այս գերի տարվածների մասին 1787 թ. մայիսի 10-ին Ղ. Կարնեցին Նուխու քահանաներին գրել է թե՝ «...յորոց ոմանք սպանան և ոմանք վերադարձան, որն փախստեամբ, և որն գրամով ազատեցժամբ»։ Լեզգիստանում նրանցից մնացել էր միայն Մարտիրոս անունով մի տղա, որը գրաբերի որդին էր։ Կաթողիկոսը խնդրում է օգնել այդ մարդուն՝ իր տղային գերությունից ազատելու (Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 158ա)։

[3] Նույն տեղում, էջ 21ա։



Ղ. Կարնեցին այդ ժամանակ մարդ է ուղարկում էջմիածին՝ վանքի և գյուղի անասունները Երևան բերելու։ Նա քսան զինվոր է ուղարկում վանքը պաշտպանելու համար[1]։

Սակայն, լեզգիները մտադիր չէին Երևանի վրա հարձակվելու։ Նրանք Աշտարակից ետ են դառնում, Եղվարդում հրդեհում են մի քանի տուն և գնում միանում են իրենց զորքերին։ Մի քանի օր հետո լուր է գալիս, որ նրանք Փամբակաձորի և Ապարանի վրայով գնացել են Սևանա լճի մոտ, իսկ այնտեղից Ղարաբաղի Իբրահիմ խանի մարդկանց առաջնորդությամբ՝ Շուշի։

Ումմա խանի հեռանալուց հետո էլ Արարատյան երկրի բնակչությունը հանգստություն չի ստանում։ Օգտվելով երկրում ստեղծված իրարանցումից և Մահմեդ խանի թուլությունից, խանության ներսում եղած կենտրոնախույս ուժերը դարձյալ խռովություններ են սկսում, հարձակվում են միմյանց վրա, թալանում և ավերում գյուղերը։ Ահա թե ինչ է գրել Ղուկասը 1786 թ. մայիսի 26-ին Շ. Շահամիրյանին ուղղած իր նամակում.

«Բայց յետ լեզկեացն ահի և նեղութեանց, զորս կրեցաք և ևս ոչ գտանեմք զհանգիստ ի լրբութենէ անօրէն բնակչաց երկրիս։ Քանզի առ ի չգոյէ կատարեալ և ահաւոր իշխողի, որ կարիցէ զամենայսն ընդ ձեռամբ նուաճել, իւրաքանչիւր ոք զախորժակս իւր գործէ ընդդեմ միմեանց, վասն որոյ յառնեն ի վերայ միմեանց բազմութեամբ և աւերեն զգիւղորայս, կողոպտեն և մերկացուցանեն զքրիստոնեայս, և զսուրբ Աթոռս պէս-պէս վնասուք վնասեն և զմեզ սրտամաշ առնեն»[2]։

Այս վիճակը շարունակվում և ավելի լարված բնույթ է ստանում հունիս և հուլիս ամիսներին[3]։ Մի ուրիշ նամակում, գրված 1787 թ. փետրվարի 13-ին, ասվում է, որ խանության

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 21ա—21բ։

[2] Նույն տեղում, էջ 24բ—25ա։

[3] Նույն տեղում, էջ 79ա—79բ, 83ա։

մեջ դեռևս կատարյալ խաղաղություն չկա. «...բնակիչքն զմիմեամբք անկեալ, զոր ինչ կամին, առնեն»[1]:

1787 թ. կեսերին դրությունը մի քիչ խաղաղվում է, բայց խլրտումները չեն դադարում: Նույն թվականի օգոստոսի 25-ին Ղուկասը գրում է.

«Իսկ մեր երկիրս այժմ ողորմութեամբն Աստուծոյ կայ ի միջակ խաղաղութեան, թէև բնակիչքն անզգամք ոչ դադարին ի չարեաց և ոչ սակաւ նեղեն զմեզ»[2]:

Այդ ժամանակաշրջանում մի կողմից Քարթլ-Կախեթի, մյուս կողմից թուրքերի ու լեզգիների միջև բանակցություններ էին գնում հաշտություն կնքելու համար: Ղուկասի 1786 թ. հուլիսի 16-ին գրած մի նամակից երևում է, որ բանակցությունների համար երկու կողմերի ներկայացուցիչները գալիս են Լոռի: Հերակլի կողմից ուղարկված էր Գիորգի արքայազնը: Երբ Ղ. Կարնեցին իմանում է այս մասին, վանքի հրացանակիրներից մեկի՝ Հովհանի միջոցով նվերներ է ուղարկում նրան (ժամացույց, բրինձ, գինի)[3]: Բանակցությունները շարունակվում են և խաղաղություն է կնքվում: Հերակլը պարտավորվում է Ումմա խանին տարեկան վճարել հինգ հազար ռուբլի, որպեսզի նա այլևս չհարձակվի Վրաստանի վրա:

Սուլեյման փաշայի հետ կնքվելիք պայմանագիրը Հերակլը նախապես համաձայնեցնում է ռուսական արքունիքի հետ[4], որովհետև համաձայն Գեորգիևսկի պայմանագրի նա ինքնուրույն չէր արտաքին հարցերում:

Իր կողմից Հերակլը պարտավորվում է չանհանգստացնել թուրքերի հպատակներին, կրճատել և երեք հազար հոգու հասցնել Վրաստանում եղած ռուսական զորքերի թիվը, այդ զորքերն օգտագործել ընդհանուր թշնամու դեմ: Փաշան պարտավորվում էր արգելել լեզգիների մուտքը Ախալցխա,

1 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 94ա:
2 Նույն տեղում, էջ 116ա:
3 Նույն տեղում, էջ 31բ:
4 ЦГВИА, ф. 52, оп. 194, д. № 32, л. 21 с об.



արգելել վրացի գերիներով առևտուր անելը, հարաբերություններ չունենալ Վրաստանի թշնամիների հետ, թուրքական զորքեր չպահել սահմանի վրա[1]:

Բայց այս հաշտությունը վերջնական չէր: Ախալցխայի փաշան ձեռնպահ չի մնում Վրաստանի և Ռուսաստանի դեմ թշնամական գործողություններից, որի համար նա Ախալցխայում պահել էր 800 լեզգիների[2]:

Թուրքերը շարունակ հարձակումներ էին կատարում վրացական գյուղերի վրա և ակտիվորեն խառնվում Արևմտյան Վրաստանի գործերին[3]: Այս պատճառով Կ. Պոլսում ռուսական դեսպան Յակով Բուլգակովը մի քանի անգամ բողոք է ներկայացնում Բ. Դռանը, բայց անօգուտ[4]: 1788 թ. սեպտեմբերի 2-ին Ջավախի գյուղում Հերակլ Բ-ը հաշտության համար հանդիպում է ունենում Սուլեյման փաշայի ներկայացուցչի հետ, բայց թուրքերի առաջադրած պայմանները անընդունելի էին Վրաստանի համար, և Հերակլը մերժում է նրանց առաջարկները[5]:

1788 թ. դեկտեմբերի 20-ին Բ. Դռան կողմից, գալիս է Իբրահիմ բեկ Կապիջի փաշան, որը նվերներ և մի հրովարտակ է բերում Հերակլին, որտեղ ասվում էր, թե թուրքերը բարեկամաբար են տրամադրված Հերակլի նկատմամբ և որ սուլթանը կարգադրել է լեզգիներին հեռացնել Ախալցխայից և խոստանում է թույլ չտալ, որ նրանք մտնեն թուրքական տերիտորիան: Այս անգամ հաշտություն կնքվում է[6]:

Ումմա խանի արշավանքը մի կատարյալ դժբախտություն էր Արևելյան Վրաստանի և Երևանի խանության համար: Արևելյան Վրաստանը հսկայական վնասներ կրեց դրանից, բազմաթիվ գյուղեր ավերվեցին ու թալանվեցին, հարյու-

1 ЦГВИА, ф. 52. оп. 194, д. № 32, л. 21 с об.
2 Նույն տեղում, д. № 416, ч. 1, об. л. 235.
3 Նույն տեղում, էջ 237բ:
4 Նույն տեղում, об. 11, д. № 53, л. 14 с об.
5 Նույն տեղում, оп. 194, д. № 516, л. 80 с об.
6 Նույն տեղում, էջ 81բ:



355—9

րավոր բնակիչներ գերի տարվեցին: Արարատյան երկիրը այդ արշավանքից չվնասվեց այն չափով, ինչ Քարթլ-Կախեթը, բայց, այնուամենայնիվ, արշավանքի վտանգից խանության բնակչությունը երկու անգամ տեղահան եղավ իր բնակավայրերից՝ ամիսներով հեռանալով և իր ունեցվածքի մեծ մասը թողնելով բախտի քմահաճույքին: Լեզգիները իրենց վերադարձի ճանապարհին ավերեցին խանության հյուսիսարևմտյան շրջանները, թալանեցին ու այրեցին մի քանի գյուղ:

Ումմա խանի արշավանքի հետևանքով եղած տեղահանությունները քայքայեցին խանության առանց այդ էլ խափանված տնտեսությունը, թուլացրին կենտրոնական իշխանությունը և լայն հնարավորություններ ընձեռեցին երկրի ներսում ներքին երկպառակությունների առաջանալուն, որոնք առավել վատթարացրին աշխատավոր բնակչության վիճակը:

## Դ. ՆՈՐ ԽԱՌՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ումմա խանի արշավանքից հետո Երևանի խանությունը գրավելու նոր պլաններ են հանդես գալիս: 1787 թ. մայիսի սկզբին Հերակլ Բ-ը գեներալ Պ. Պոտյոմկինին հաղորդում է, որ Խոյի խանը Ավարայի Ումմա և Ղարաբաղի Իբրահիմ Խալիլ խաների հետ որոշում է կայացրել Երևանը գրավելու վերաբերյալ[1]:

Իբրահիմը դրանից առաջ կամենում էր նվաճել Նախիջևանը, որը հնարավորություն կտար ավելի հեշտությամբ իրականացնել Երևանի գրավման գործը: Նա պահպանում էր իր կապերը թուրքական արքունիքի հետ և օգնություն սպասում նրանից:

Գնդապետ Բուռնաշևի 1787 թ. փետրվարի 25-ի զեկուցագրում, ուղղված Պ. Պոտյոմկինին, ասվում է, թե նույն

[1] А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение..., стр. 182.



թվականի փետրվարին, երբ ռուսական և վրացական զորքերը Ղազախում ու Շամշադինում ճնշում էին Վրաստանի դեմ սկսված ապստամբությունը, Ղազախի գյուղերից մեկում հայտնաբերվում է Իբրահիմ խանի նամակը թուրքական սուլթանին, որը գնդապետը թարգմանության հետ միասին ուղարկում է Պ. Պոտյոմկինին[1]:

Այս նամակով Իբրահիմ խանը իր հպատակությունն էր հայտնում թուրքաց սուլթանին, և գրում, թե ինքը սուլթանի ստրուկն է, պատրաստ է կատարելու նրա բոլոր հանձնարարությունները և իր կյանքը զոհելու իրենց հավատի պաշտպանության համար: Նա սուլթանից օգնություն է խնդրում և հայտնում, որ եթե այդ մասին իրեն հույսեր տրվեն, ապա ինքը հնարավորություն կունենա ոչնչացնելու իրենց հավատի թշնամիներին[2]:

Իբրահիմը այդ նամակը Թուրքիա էր ուղարկել իր վեզիր մոլլա Հասանի հետ և հանձնարարել էր նրան իր մտադրությունների և ստեղծված դրության մասին բանավոր ձևով իրազեկ պահել սուլթանին: Նամակին կցված է եղել նաև մի մաքուր թուղթ՝ Իբրահիմի կնիքով, որպեսզի պահանջի դեպքում մոլլա Հասանը հնարավորություն ունենար թուրքերի հետ Իբրահիմի անունից պայմանագիր կնքել[3]:

Իբրահիմը ստանում է սուլթանի խրախուսանքը և սկսում իրագործել Նախիջևանի նկատմամբ ունեցած իր պլանները: 1787 թ. մարտի 11-ին գնդապետ Բուռնաշևը Թիֆլիսից զեկուցագիր է ուղարկում Պ. Պոտյոմկինին և հայտնում, թե Հերակլ Բ-ը փետրվարի 28-ին Նախիջևանից և Երևանից ժամանած սուրհանդակներից տեղեկություն է ստացել, որ Իբրահիմ խանը գրավել է Նախիջևանը: Բուռնաշևը այնուհետև գրում է, թե Նախիջևանի խան «Ջաֆարղուլին փակվել է Շարուր գետի վրա եղած ամրոցում, բայց հույս չունենալով երկար դիմադրել, թագավորից օգնություն է խնդրել: Նորին մեծությունը այս լուրերի հետևանքով հրամայել է հա-

[1] ЦГВИА, ф. 52, оп. 194, д. № 316, ч. I, л. 101.

[2] Նույն տեղում, էջ 102ա—102բ:

[3] Նույն տեղում:

վաքել զորքը, իսկ մինչ այդ շտապ կարգով Երևան է ուղարկել իշխան Բագրատիոնին՝ հազար վրացիներով ու թաթարներով[1]»:

Բագրատիոնը գնում է Երևան և Մահմեդ խանի հետ պատրաստություններ տեսնում գնալու Նախիջևան արշավելու համար, որպեսզի իր իշխանության մեջ վերականգնեն Ջաֆարղուլի խանին: Երևանի խանը սիրով միանում է այս ձեռնարկությանը, որովհետև հասկանում էր իր իշխանության համար այն մեծ վտանգը, որ կարող էր լինել Իբրահիմի կողմից Նախիջևանը լրիվին գրավելու դեպքում:

Երևան հասնելուց հետո, իշխան Բագրատիոնը Գյալբալի բեկի հրամանատարությամբ վրացական մի ջոկատ է ուղարկում Իբրահիմ խանի դրածո Նախիջևանի Աբբասղուլի խանի դեմ: Վրացական այդ ջոկատը կազմված էր վրացիներից և ղազախ-բորչալեցի մահմեդականներից:

Մայիսի սկզբներին Բագրատիոնը իր հետ ունեցած վրացական, ինչպես նաև Երևանի խանի զորքերով, շարժվում է Նախիջևանի վրա: 1787 թ. մայիսի 20-ին նա զեկուցագիր է ուղարկում Հերակլ Բ-ին, որից երևում է, թե նա Նախիջևան է հասել մայիսի 19-ին՝ այն ժամանակ, երբ արդեն Գյալբալի բեկի հրամանատարությամբ ուղարկված վրացական առաջապահ զորամասերը կռվում էին Նախիջևանի բերդում փակված զորքերի հետ[2]: Նախիջևանցիները բերդից դուրս էին եկել և ուժեղ հակահարձակման անցել Գյալբալի բեկի զորքի դեմ: Բայց Բագրատիոնի զորամասի տեղ հասնելուց հետո Նախիջևանցիները, մարտի դաշտում թողնելով 15 սպանված, ետ են նահանջում: Մարտի ժամանակ վրացական զորքերի մեջ առանձնապես ակտիվ են եղել քրդերը[3]:

Իբրահիմ խանը օգնական զորք է ուղարկում Աբբասղուլի խանին: Բագրատիոնը գրում է, որ մայիսի 20-ին ին-

---

[1] ЦГВИА, ф. 52, оп. 194, д. № 416, ч. I, об. л. 236.

[2] Նույն տեղում, էջ 324ա—324բ:

[3] Նույն տեղում:



քը հետախուզության համար Թուզխալի գլխավորությամբ Սիսիան է ուղարկում 80 բորչալեցիների և այդքան էլ շամշադինցիների: Ցալանդակում նրանք հանդիպում են Իբրահիմի առաջապահ զորքին (թվով 200 մարդ): Տեղի է ունենում ճակատամարտ, որի ժամանակ բորչալեցիները և շամշադինցիները հաղթում են և գերի վերցնում ութ հոգու: Թուզխան և բորչալեցի Թուփչի-օղլին վրաց բանակատեղն են բերում իրենց կողմից սպանված երկու առաջնորդների գլուխները: Այդ առաջնորդների մոտ հայտնաբերվում են նամակներ, որոնք Իբրահիմ խանը ուղարկում էր Աբբասղուլիին և Արզու Սամառ բեկին: Բագրատիոնը այդ նամակները ուղարկում է Հերակլ Բ-ին[1]:

Իբրահիմը Աբբասղուլիին գրում է, որ նա ամուր կենա, որովհետև շուտով ինքը Հերակլի դեմ ուժեղ թշնամիներ է հանելու, և որ ուղարկում է երկու հազար հոգուց բաղկացած օգնական զորք[2]: Իմանալով այս մասին, իշխան Բագրատիոնը իսկույն ևեթ կարգադրում է դուրս գալ թշնամուն ընդառաջ, թույլ չտալ, որ նա հասնի ամրոցին, կտրել նրա նահանջի ճանապարհը և ոչնչացնել[3]:

Բագրատիոնը հայտնում է, թե նույն օրը՝ մայիսի 20-ին, իրենց ջոկատները բանակատեղ են բերում մեծ քանակությամբ անասուններ և ավերում մի գյուղ: Նա գրում է նաև, որ չնայած իրենց ասում էին, թե Նախիջևանը հեշտ է գրավել, բայց այն շատ ամրացված է, բերդում կա երկու հազար զինվոր, որոնց մեծ մասը ջանշիրներից են[4]:

Վրացական զորքերը Երևանի խանի զորքերի հետ միասին կարողանում են ետ մղել դեպի Նախիջևան ուղարկված Իբրահիմի զորքը, բայց բերդը գրավել չեն կարողանում և օգնություն են խնդրում Վրաստանից:

Գնդապետ Բուռնաշևը գեներալ Պոտյոմկինին զեկուցում է, որ հունիսի 6-ին Երևանից Թիֆլիս է եկել մի սուրհան-

---

[1] ЦГВИА, ф. 52, оп. 194, д. № 416, ч. I, л. 324 с об.

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

դակ և Նախիջևանը պաշարածների կողմից օգնական զորք է խնդրել՝ հինգ հազար մարդ արքայազնի գլխավորությամբ: Նրանք միևնույն ժամանակ պահանջում էին, որ Հերակլը տեղավորվի Գանձակի մոտ, որպեսզի թույլ չտա Իբրահիմ խանին օգնության գալու Նախիջևանին[1]:

Բագրատիոնի այս խնդրանքին Հերակլը նույն սուրհանդակի միջոցով պատասխանում է, թե ինքը երեք հազար լեզգիներ կուղարկի Նախիջևանի պաշարողներին օգնության, եթե Երևանում այդ երեք հազար մարդու համար հավաքված լինի անհրաժեշտ քանակությամբ մթերք և տրվի ռոճիկ: Բացի դրանից, լեզգիները պետք է տանային ձեռք բերելիք ավարի կեսը[2]:

Երևանի խանությունը դեռևս ոտքի չէր կանգնել Ումմա խանի արշավանքի և դրանից հետո տեղի ունեցած ներքին կռիվների պատճառած նեղություններից: Այս բանը հայտնի էր նաև ռուսական հրամանատարներին. Բուտնաշևը գրել է, թե. «Կասկածելի է, որ երևանցիները ի վիճակի լինեն ռոճիկ և մթերք տալ լեզգիներին»[3]:

Բայց ինչն էր դրդում Երևան ուղարկել այդ մեծ խումբ լեզգիներին: Սրա պատճառը միայն Նախիջևանը պաշարած զորքերին օգնություն ցույց տալու գործը չէր: Բանն այն է, որ այս ժամանակ Վրաստանի վրա լեզգիների հարձակման վտանգ կար և Հերակլը, ձգտելով ջլատել լեզգիների ուժերը, աշխատում էր նրանց մի մասը Նախիջևանի վրա հարձակվելու պատրվակով ուղարկել Երևան: Այդպիսով հնարավոր կլիներ կանխել լեզգիների նոր հարձակումը: Նույն տեսակետին է եղել նաև գնդապետ Բուտնաշևը, որը գրել է.

«Ի միջի այլոց, անօգուտ չէր լինի այդպիսի քանակով ավելորդ շրջմոլիկներ հեռացնել Վրաստանի դեմ խոյացող Ումմա խանից, վերջինիս ուխտադրժությունը և չար մտադրությունը հաստատվում է նրա նամակով՝ ուղղված Իբրա-

[1] ЦГВИА, ф. 52, оп. 194, д. № 416, ч. I, л. 330 с об.

[2] Նույն տեղում, էջ 330:

[3] Նույն տեղում, էջ 330ա—330բ:



հիմ խանին[1], որի մեջ ասվում է, որ եթե թագավորը հարձակվի իր վրա, ապա ինքը աշնանը արշավելու է Վրաստանի վրա»[2]:

Ումմա խանի զորքերից Երևան ուղարկելը չի հաջողվում, իսկ Նախիջևանի վրա արշաված զորքերը ետ են վերադառնում: Այդ մասին Բուտնաշևը գրել է.

«Իշխան Բագրատիոնը, որ ուղարկված էր զորքերով Երևանի պաշտպանության և Ջաֆարղուլի խանի ամրապնդման համար, վերադարձավ Նախիջևանից այն պատճառով, որ ի վիճակի չէր վերցնելու ամրոցը»[3]:

Հերակլը չէր կարողացել Նախիջևանի պաշարողներին օգնություն կազմակերպել, վերջիններս նաև սննդամթերքի կարիք էին ունեցել: Երևանի խանի և Բագրատիոնի զորքերը ավերել էին Աբբասղուլի խանի կողմն անցած մի քանի գյուղեր, գերի էին վերցրել նրանց բնակիչներին, որոնց թվում էին նաև անձամբ Իբրահիմ խանին պատկանող 40 ընտանիք[4]:

Գերիներով և թալանով ծանրաբեռնված զորքերը վերադառնում են Երևան: Այստեղ ղզղլբաշներն ու շամշադինցիները ինքնագլուխ հեռանում են իրենց տները: Բագրատիոնի մոտ մնում են ընդամենը երեք հարյուր մարդ, բոլորը վրացի[5]:

Երևանի խանի և վրաց թագավորի զորքերի արշավանքը Նախիջևանի վրա ընդհանուր առմամբ դրական նշանակություն ունեցավ: Արշավանքը Նախիջևանում թուլացրեց Իբրահիմ Խալիլ խանի ազդեցությունն ու հեղինակությունը, հնարավորություն չտվեց նրան ու իր համախոհներին այնտեղից Երևանի վրա հարձակվելու: Այս բանին նպաստեց նաև ռու-

[1] Ումմա խանի այս նամակի մասին վրացիներին տեղեկություն է ուղարկել իշխանուհի Արաշիձեն, որին Ումման գերի էր վերցրել Վախան ամրոցը գրավելու ժամանակ և տվել էր Իբրահիմ Խալիլ խանին, տե՛ս ЦГВИА, ф 52 оп. 194, д. № 416, ч. I. л. 330 с об.

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

տական և վրացական զորքերի դեպի Գանձակ կատարած արշավանքը, որի նպատակներից մեկն էլ եղել է ստիպել Իբրահիմ խանին հրաժարվելու Երևանի նկատմամբ ունեցած իր մտադրություններից[1]:

Այս արշավանքը դեռ չավարտված, ռուսական զորամասերի հրամանատար գեներալ Բուռնաշևը կարգադրություն է ստանում վերադառնալ Ռուսաստան: 1787 թ. օգոստոսին Թուրքիան պատերազմ էր հայտարարել Ռուսաստանին և ռուսական հրամանատարությունը նպատակահարմար չէր գտնում Անդրկովկասում ունենալ զորային փոքր միավորներ:

Ռուս-թուրքական 2-րդ պատերազմի ժամանակ (1787—1791) Թուրքական սուլթանը շարունակում էր իր թշնամական գործողությունները Վրաստանի դեմ: Նա Վրաստանին և Երևանի խանությանը հեռու և մոտ փաշայություններին կարգադրել էր ամեն կերպ վնասել Վրաստանին, մյուս կողմից աշխատում էր Անդրկովկասի խաներին իր կողմը գրավել: 1787 թ. նոյեմբերին Մոզդոկի բնակիչ Սանջիկովի տված հայտարարությունից երևում է, որ Բ. Դուռը կարգադրել էր Էրզրումի, Ախալցխայի, Բայազետի, Դիարբեքիրի և Կարսի փաշաներին գործել ընդդեմ Վրաստանի, իսկ Ղարաբաղի, Խոյի, Թավրիզի ու Երևանի խաներին ուղարկված էր դրամ և կարգադրված, որ նրանք համերաշխ լինեն միմյանց հետ[2]:

Չնայած դրան, Անդրկովկասում շարունակ ընդհարումներ էին լինում տեղական իշխողների միջև: Նրանք երբեմն կռիվների մեջ էին մտնում նաև թուրքական փաշաների հետ:

1787 թ. ամռանը Երևանի խանի և Բայազետի մութեսարրիֆ Իսահակ կամ Իսաղ փաշայի միջև սկսվում է մի պատերազմ, որը մեծ վնասներ է հասցնում երկու կողմերի բնակչությանը: Այս դեպքերի մասին նույն թվականի օգոստոսին Ղուկաս Կարնեցին գրել է հետևյալը.

«...ի պատճառս ոմանց քրթաց էլերի յայսկոյս անցա-

[1] *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., стр. 183.

[2] ЦГВИА, ф. 52, оп. 194, д. № 416, ч. I, л. 362.



նելոյ և Մակուայ սուլթանին եւ առ Բայազիտ նայելոյ, վէճ եղև ընդ մէջ փաշային և խանին մերոյ[1]:

Այդ թվականի ամռանը Երևանի խանի զորքը մի քանի անգամ ավարառության է գնում Բայազետի փաշայություն: Նույն նպատակով էլ մի քանի անգամ բայազետցիների զորքն է գալիս Արարատյան դաշտ: Այս ավարառությունները, սովորաբար, ուղեկցվում էին խաղաղ ազգաբնակչության գերեվարությամբ և արյունահեղությամբ[2]:

Բայազետի փաշայի և Երևանի խանի թշնամությունը շարունակվել է նաև հաջորդ երկու տարիներին: Բավականաչափ մանրամասն տեղեկություններ կան 1789 թ. աշնանը տեղի ունեցած անցքերի մասին: Ղ. Կարնեցու նամակներից տեղեկանում ենք, որ 1789 թ. օգոստոսի 12-ին, երբ Երևանի խանի զորքը անցել էր սահմանը և կողոպտում էր Բայազետի գյուղերը, Իսաղ փաշան իր զորքը տանում է երևանցիների թիկունքը և հարձակվում նրանց վրա: Ճակատամարտը կարճ է տևում, երևանցիները չարաչար պարտվում են, տալիս են շատ սպանվածներ ու խեղդվածներ՝ Երասխում և մազապուրծ փախչում են Երևան[3]:

Դրանից հետո Մահմեդ խանը մեծ զորք է հավաքում բայազետցիների դեմ գնալու համար: Ղուկասը այս դեպքերի մասին պատմում է.

«Ապա և սոքա (երևանցիները—Վ. Գ.) կատաղեալ (այս բառը բնագրում ջնջված է—Վ. Գ.) կրկին զօրաժողով եղեն բազմապատիկ քան զառաջինն և գնացին վերստին պատերազմիլ: Որովք երկիրս յոյժ սաստիկ վրդովեալ է և Բայազիտոյ ճանապարհքն եւ խստիւ փակեցեալք...»[4]:

Երևանի խանը օգնական զորք է բերում Նախիջևանից և գնում Բայազետի փաշայի զորքի վրա, որը բանակ էր դրել Երասխի աջ ափին: Բայազետցիները տեսնելով նրանց խույս են տալիս և ամրանում Բայազետի բերդում: Երևանցիները

[1] Մատենադարան, ձեռ. № 4301, էջ 260ա:

[2] Նույն տեղում, էջ 260բ:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

հետապնդում են նրանց և պաշարում ամրոցը, բայց չեն կարողանում գրավել, ուստի մի քանի մարդ սպանելուց ու Բայազետի փաշայության մի շարք գյուղեր, որոնց թվում՝ Կարմիր Կոնտը, Արծափը, Քորունը, Մուսունը թալանելուց և ավերելուց հետո մեծ ավարով վերադառնում են ետ[1]։

1789 թ. սեպտեմբերին Ղ. Կարնեցու գրած մի նամակից տեղեկանում ենք, որ Երևանի խանին և Բայազետի փաշային հաշտեցնելու գործը ստանձնել է Ախալցխայի փաշան[2]։ Մի այլ նամակից երևում է, որ չնայած հաշտություն է կնքվել Երևանի և Բայազետի իշխողների միջև, բայց նրանք դեռևս լիովին հաշտ չեն (նամակը գրված է 1790 թ. հունվարի 4-ին)։ Ասվում է նաև, թե «...երևանցիք ևս խռովեալք ընդ Բայազետոյ մոլպետին, և զրպզում վնասս գործեալ առաւել առ մերայինսն, թէ անդ, թէ աստ, այժմ իբր թե հաշտ են, բայց ոչ ամենևին»[3]։

Երևանի խանի և Բայազետի փաշայի այս կռիվների ժամանակ Խոյի խանը գաղտնի օգնություն է ցույց տալիս Բայազետի փաշային[4]։ Այս բանը հայտնի է դառնում Մահմեդ խանին և նա այս, ինչպես և այլ պատճառներով, ինչպես կտեսնենք աշխատության հաջորդ գլխում, կռիվ է սկսում Խոյի հետ։

Վերոհիշյալ կռիվների ժամանակ Երևանի խանը գործում էր Հերակլ Բ-ից միանգամայն անկախ։ Բանն այն է, որ ռուսական զորքերի հեռացումից հետո, որը, ինչպես տեսանք, արդյունք էր ռուս-թուրքական 2-րդ պատերազմի, Անդրկովկասում խիստ թուլացան Քարթլ-Կախեթի թագավորի դիրքերը։ Առիթից օգտվեց նաև Երևանի խանը՝ Հերակլի գերիշխանությունը իր վրա համարյա ձևականի հասցնելով։ Այս մասին Ղ. Կարնեցին 1789 թ. սեպտեմբերի 19-ին Շ. Շահամիրյանին, միանգամայն իրավամբ, գրել է հետևյալը.

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 310բ։ Այս դեպքերի մասին տե՛ս նաև Դիւան, հ. Ա—Բ, էջ 16—17։
[2] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 313բ—314ա։
[3] Նույն տեղում, էջ 320ա։
[4] Նույն տեղում, էջ 283ա։



«...Արքային Վրաց միայն իւրեանց հնազանդ երկրացն իշխէ, այն ևս հայլծայլծանօք և այլ երկրաց՝ ոչ բնաւ և թէպէտ ի յերևանցւոց ղհարկ ինչ առնու վասն ումանց պատճառաց, բայց յամենայն կառավարութիւնս սոցա ոչ խառնի, զի տեսլով զի ոչ անսան և թէ փոքր մի նեղեցին, ապստամբին՝ ապաւինութեամբ անմատչելի ամրոցին, որպէս քանիցս եղեալ է...»[1]։

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 262բ։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 18-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

## Ա. ԵՐԿԻՐԸ ԱՂԱ ՄԱՀՄԵԴ ՇԱՀԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

*Երևանի խանության 18-րդ դարի վերջին տասնամյակի պատմությունը սերտ աղերս ունի Պարսկաստանում Ղաջարների հարստության հզորացման պատմական իրողության հետ, որովհետև կենտրոնական իշխանությանը հասնելուց հետո Ղաջարները, այդ ամբողջ ժամանակաշրջանում, ակտիվ պայքար մղեցին Պարսկաստանի տիրապետությունը Երևանի խանության, ինչպես և Արևելյան Անդրկովկասի մյուս երկրների վրա կրկին տարածելու համար*[1]*: Սկզբում դա արվում էր խաղաղ միջոցներով, բայց երբ դա չօգնեց, Ղաջարների հարստության հիմնադիր Աղա Մահմեդ շահը 1795 թ. իրականացրեց մի ավերիչ արշավանք, իսկ երկու տարի հետո՝ մեկ ուրիշը և կարողացավ վերահաստատել Պարսկաստանի գերիշխանությունը մի շարք երկրների, որոնց թվում նաև Երևանի խանության վրա:*

*Աղա Մահմեդ շահը (1743—1797) որդին էր Ղաջարների նշանավոր առաջնորդներից մեկի՝ Մահմեդ Հասան խանի, որը Նադիր շահի սպանությունից հետո ներգրավվել էր իշխանության համար մղվող պայքարին, բայց 1758 թ. դա-*

[1] *Ղաջարների ցեղը ադրբեջանական ծագում ունի: Շահ Աբբաս Ա-ի ժամանակ նրանց Գանձակի շրջակայքում գտնվող Շամխոր-չայ գետի ափից գաղթեցրել էին Խորասան (տե՛ս Аббас-Кули-Ага Бакиханов,* Гюлистан—Ирам, Баку, 1926, стр. 142—143).



*ժան պարտություն կրելով Քերիմ խանից, սպանվել էր և նրա տիրույթները անցել էին հաղթողի իրավասության տակ:*

*Քերիմ խանի մահը (1779 թ.) ռեվանշի հնարավորություն է ընձեռում Ղաջարներին, որոնց գլուխն է անցնում Աղա Մահմեդ խանը: Վերջինս երկար ժամանակ որպես պատանդ պահվում էր Նադիրի հաջորդ Ադիլ շահի և հետո Քերիմ խանի մոտ: Ադիլ շահի հրամանով, վեց տարեկան հասակում, նա ներքինացվել էր: Քերիմ խանի մահից հետո Աղա Մահմեդ խանը Շիրազից փախչում է Մազանդարան և իրեն անկախ հայտարարում: Շուտով նա ձեռք է բերում շատ կողմնակիցներ և պայքար ծավալում Մազանդարանը լրիվին իրեն ենթարկելու համար: Նա նվաճում է ոչ միայն Մազանդարանը, այլև Աստրաբադը, Գիլանը և իր ուժերը կենտրոնացնում Զենդերի դեմ: 1785 թ. նա գրավում է Թեհրանը, Կումը, Կաշանը և Սպահանը*[1]*:*

*Աղա Մահմեդ խանը նվաճողական լայն ծրագրեր ուներ Անդրկովկասի նկատմամբ, բայց քանի դեռ լրիվին չէր հաղթել Զենդերին և ողջ Պարսկաստանը չէր հնազանդեցրել իրեն, աշխատում էր լավ հարաբերություններ պահպանել Քարթլ-Կախեթի թագավորության և նրան հովանավորող ռուսական պետության հետ: 90-ական թվականների սկզբին, երբ նա կարողանում է ծանր հարվածներ հասցնել Զենդերին, նվաճել Շիրազն ու Թավրիզը, փորձեր է կատարում պարսից տիրապետությունը Արևելյան Անդրկովկասի վրա տարածելու համար:*

*Ղ. Կարնեցին 1791 թ. սեպտեմբերի 22-ին գրում է, թե Աղա Մահմեդ խանը եկել է Թավրիզի մոտ և բանակ դրել Մուշկյամբար կոչված վայրում: Նա Թավրիզի խանին փախցրել է Շուշի և իրեն հպատակեցրել շատ իշխողների*[2]*: Մուշկյամբարից Աղա Մահմեդը նամակներ է ուղարկում Անդր-*

[1] Жизнеописание Ага-Магомет хана Каджара, СПБ, 1835, стр. 2—3.

[2] *Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 364ա:*

կողկասի խաներին և հրավիրում նրանց իր մոտ։ Հրավեր է ստանում նաև Երևանի Մահմեդ խանը։ Վերջինս լավատեղյակ էր Պարսկաստանում տեղի ունեցող անցուդարձին, գիտեր Աղա Մահմեդ խանի դաժան բնավորության և ուխտադրժության մասին, ուստի վախենում է գնալ և իր փոխարեն ուղարկում է իր եղբորը և մի աստիճանավորի։ Միաժամանակ նա պատրաստություններ է տեսնում դիմադրելու համար։ Այս մասին Ղ. Կարնեցին գրել է. «...և սա (խանը — Վ. Գ.) յետ յղելոյն զախունտն և եղբայրն, տակաւին կասկածելով, պատրաստութիւն տեսանէր բերդին ամրանալոյն»[1]։

Երևանի խանությունը այս ժամանակ չափազանց թուլացած էր։ Պատճառը դարձյալ հարևանների հետ ունեցած ընդհարումներն էին. դրանից մեկ տարի առաջ՝ 1790 թ. խոշոր ընդհարում էր տեղի ունեցել Երևանի և Խոյի խաների միջև։

Երևանի և Բայազետի միջև տեղի ունեցած կռիվների ժամանակ Խոյի խանը, ինչպես արդեն տեսանք, օգնություն էր ցույց տվել Բայազետի փաշային։ Թուրքիայի սուլթանի հատուկ հովանավորությունը վայելող Խոյի խանը դրանով կամենում էր թուլացնել Երևանի խանին։ Մինչ այդ, Մահմեդ խանի մայրը, վախենալով զանազան վտանգներից, բազմաթիվ թանկարժեք իրեր էր ուղարկել Խոյում պահելու համար։ Երևանի և Խոյի խաները բարի դրացիական հարաբերությունների մեջ էին միմյանց հետ և նման բաները սովորական էին նրանց համար[2]։

Սակայն, այս անգամ գործը այլ բնույթ է ընդունում և երբ երևանցիները պահանջում են տալ այդ իրերը, Խոյի խանը հրաժարվում է՝ անելով անհիմն պատճառաբանություններ[3]։

Պատերազմի առիթը կար և 1790 թ. մայիսի 10-ին Երևանի Մահմեդ խանը մեծ զորքով, որին միացել էր նաև

1 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 20բ։

2 Նույն տեղում, էջ 364ա։

3 Նույն տեղում, էջ 283ա—283բ։



նրա դաշնակից Նախիջևանի Քյալբալի խանի զորքը, հանկարծակի հարձակվում է Խոյի վրա, գրավում քաղաքը և պաշարում բերդը։ Նա բերդում փակված Խոյի խանից պահանջում է դուրս գալ բանակցելու։ Խանը դուրս է գալիս և նրանց միջև հաշտություն է կնքվում։ Խանը անմիջապես հանձնում է Երևանից բերված իրերի մի մասը, իսկ մինչ մյուս մասի վերադարձնելը, որպես պատանդ, հանձնում է եղբորը։ Դրանից հետո երևանցիների և նախիջևանցիների զորքը վերադառնում է ետ։ Մի քանի շաբաթ անց Երևանի խանը ստանում է իրերի մնացած մասը և խանի եղբայր Ջաֆարղուլի բեկին ազատ է արձակում[1]։

Այս արշավանքը մեծ վնասներ է պատճառում Խոյի բնակիչներին, որոնց մեծամասնությունը հայեր էին[2], նույնպես և Արարատյան երկրի աշխատավորներին։ Ղ. Կարնեցին գրում է.

«Այսոքիկ գործեցան ի մայիսի Ժ էն մինչ ի հուլիսի Է, որոց եղելութեանց թէ որքան վիշտք և վնասք հասին թէ այն երկրին, և թէ այս երկրիս և սրբոյ Աթոռոյս, չարէս իմանալ»[3]։

Պարտությունից հետո Խոյի խանը պատրաստություններ է տեսնում պատասխան հարված հասցնելու Երևանի տիրակալին։ Հաջողության հասնելու գրավականներից մեկն էլ Նախիջևանի խանին Մահմեդ խանի հետ թշնամացնելն էր, որը հաջողվում է Խոյի խանին։ Շուտով լուր է գալիս, որ Ջաֆարղուլի բեկը զորք է հավաքել և արշավում է դեպի Երևան[4]։ Միաժամանակ իմացվում է, որ «Նախ-

1 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 283ա—283բ։

2 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 304։

3 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 283ա։

4 Այս արշավանքի և նրա հետ կապված հետագա դեպքերի պատմության միակ աղբյուրը Ղ. Կարնեցու նամակներն են և նրանցից հատկապես մեկը, որը գրված է 1790 թ. սեպտեմբերին և բացառապես նվիրված է արշավանքի նկարագրմանը։ Այն վերնագրված է «Պատմութիւն գալստեան խոյեցւոց և նախչուանցւոյն յերկիրս Երևանու և վնասուցն զոր անցուցին ընդ սա և ընդ սուրբ Աթոռս» (Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 189, սև-

չուանու խանն ապստամբեալ իցէ մերոյս խանէն[1]»:

Երևանի խանը զորք է հավաքում և գնում Նախիջևանի խանի դեմ: Նա պաշարում է սահմանամերձ նախիջևանյան Տիզա ամրոցը, սակայն չի կարողանում գրավել և կռվի ժամանակ շատ կորուստներ է ունենում: Այդ ժամանակ նա իմանում է, որ Ջաֆարղուլի բեկը և Նախիջևանի Քյալբալի խանը մեծ զորքով գալիս են իր վրա, ուստի ետ է դառնում և գալիս բանակ է դնում Երևանի մոտ՝ Մուխաննաթ թափայում: Ղուկասը գրում է, որ ետ հասնելուց հետո խանի զորքի մեծ մասը ցրվում է: Խանը հրաման է տալիս բնակչությանը ապաստանել Երևանի բերդում, Էջմիածնի վանքում ու այլ ամրացված վայրերում[2]:

Արարատյան երկրում դարձյալ իրարանցում է ընկնում: Բնակչությունը նորից պոկվում է իր բնակավայրերից:

Նախիջևանի և Խոյի խաների զորքերը այդ ժամանակ մտնում են Երևանի խանության սահմանները: Իրենց հնազանդեցնելով Շարուրը, հրկիզելով և ավերելով ճանապարհին հանդիպած գյուղերը, նրանք երեք օրից հետո մոտենում են Երևանին:

Մահմեդ խանը, անխոհեմաբար, փոքրաչափ զորքով ճակատամարտ է տալիս, պարտվում է և փախչում դեպի բերդը: Հակառակորդի զորքերը հետապնդում են երևանցիներին և մինչև բերդը մտնելը հասնում նրանց, կոտորում շատերին և գերիներ վերցրած գալիս բանակ են դնում Նորագավիթ գյուղում[3]:

Այս կռիվների ընթացքում չափազանց մեծ վնասներ են կրում Երևան քաղաքի բնակիչները, որոնց արհեստանոցները, խանութներն ու տները դարձել էին հաղթողների սեփականությունը:

գիրը տե՛ս ձեռ. № 4501, էջ 284ա—284բ: Այս նույն դեպքերի մասին տե՛ս նաև ձեռագիր № 4483, էջ 16ա—16բ, ձեռ. № 4501, էջ 283ա—283բ): Այս նամակից առաջին և միակ օգտվողը եղել է Հ. Շահխաթունյանը (Դիւան, հ. Ա—Բ, էջ 18—23):

1 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 284ա:

2 Նույն տեղում, էջ 284ա—284բ:

3 Նույն տեղում:



Ճակատամարտից երկու օր հետո Ջաֆարղուլի բեկը Ղուկաս կաթողիկոսին նամակ է գրում, որտեղ վերոհիշյալ դեպքերի համար մեղավոր է համարում Երևանի խանին և իր բարեկամությունն առաջարկում կաթողիկոսին[1]:

Մահմեդ խանը վախենալով, որ Ջաֆարղուլի բեկը կարող է հարաբերությունների մեջ մտնել կաթողիկոսի հետ և նրանից պարեն ստանալ իր զորքերի համար, նույն գիշերը նամակ է ուղարկում Ղ. Կարնեցուն և գրում, թե ինքը պատրաստություն է տեսնում թշնամու վրա հարձակվելու համար, ուստի արգելում է կաթողիկոսին որևէ հարաբերություն ունենալ Ջաֆարղուլի բեկի հետ, և եթե նրա զորքերը գան Էջմիածնի վրա՝ դիմադրություն ցույց տալ և ետ մղել[2]:

Կաթողիկոսը վախենալով խանից, Ջաֆարղուլի բեկի մոտ ո՛չ մարդ է ուղարկում, ո՛չ ընծա:

Մի քանի օր հետո խոյեցիները և նախիջևանցիները նոր համալրում են ստանում՝ զորքով նրանց բանակին է գալիս Ջաֆարղուլի բեկի մեծ եղբայր Հուսեյնը[3]:

Երևանի Մահմեդ խանը քանիցս մարդ է ուղարկում Վրաստան՝ օգնություն խնդրելու Հերակլից: Շուտով լուր է տարածվում, թե Վրաստանից Երևանին օգնություն է գալիս: Վրաց զորքից ունեցած երկյուղի և մթերքների պակասության հետևանքով Խոյի և Նախիջևանի խաների զորքերը, յոթ օր մնալով Երևանի բերդի մոտ, 1790 թ. օգոստոսի 29-ին դուրս են գալիս և դիմում դեպի Էջմիածին՝ ճանապարհին հրկիզելով Փարաքարը և մի քանի ուրիշ գյուղեր: Երբ նրանք մոտենում են Էջմիածնին՝ «Յայնժամ,— գրում է Ղ. Կարնեցին,— իւրաքանչիւրքն ջանացին զնախիրս իւրեանց ժողովել. մերայինքն եւ զոմանս ածին ի պարիսպս, բայց զութա-

1 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 284ա—284բ:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

նի տաւարն՝ եղն ու գոմէշ և մօզոց նախիրն և գիւղիս մե- րոյ նախիրն ամայն արտաքոյ, զորս ոչ ժամանեցին ածել ի ներս: Եւ յառաջոյ եկեալ ալամանչիքն յարձակեալ ասպատա- կեցին զայնս և առեալ ի յերիս վանորայսն զնոցա տաւարն ևս, նաև զամենայն ինչ զորս տեսին՝ յափշտակեցին: Եւ ի յանդաստանսն զերեք անձինս գտեալ ի գերչէս մերմէ, կալան զնոսա ևս»[1]:

Դրանից հետո նրանք անցնում են Գայանե վանքի հա- րավային կողմով և բանակ դնում վանքի ջրաղացների մոտ: Այնտեղից մարդ են ուղարկում Էջմիածնի վանք և կաթողի- կոսին հրավիրում իրենց մոտ: Ղ. Կարնեցին վախենում է գնալ և իր մերժումը պատճառաբանում է այսպես. «...թէ աստ պահապանք կան յիշողէն մերմէ և պարապի իշխանու- թիւն այսօր առ նոսա է»[2]: Այնուհետև նա Խաչատուր և Ներ- սես վարդապետների ձեռքով խաներին նամակ է ուղարկում, որոնցով խնդրում է նա վերադարձնել գերի տարվածներին և ապրանքը:

Խաները կաթողիկոսին պատասխանում են, թե այդ բանը նրանք կանեն այն դեպքում միայն, եթե կաթողիկոսը ընծաներ ուղարկի:

«Եւ մինչդեռ,— գրում է Ղ. Կարնեցին, — վարդապետքն առ նոսա էին, և մեք յանհնարին տարակուսանս էաք (մտա- ծելով թէ ամայեն անդէն և մարտ կամեցին դնել ընդ պա- րըսպիս, ըստ որում աստ ժողովեալ զինուորքն ևս հրացանս արձակէին առ անցաւորսն զպարսպաւս), ի վերնախնամ տես- չութենէն շրջեցեալ մտաց նոցա, ժողովեցին զվրանսն և ուղևորեցան դէպ ի Սևաւ ջուրն և ի Ջէւայ գիւղի ցան- դաստանսն իջևանեցան, և շրջակայ գիւղորայսն և զարդիւնս երկրի հրակիզեցին, զօր աստ ի գիւղս մեր ո՛չ արարին»[3]:

Արշավողների հեռանալուց հետո Էջմիածնի վանքի զին-

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 284ա—284բ:

[2] Մատենադարան, Արխիվային բաժին, կաթղ. դիվան, թղթ. 6, վավ. 189:

[3] Նույն տեղում:



վորները դուրս են գալիս պարիսպներից և գերի վերցնում հետ մնացած հինգ զինվորների, որոնց հետագայում փոխա- նակում են գերի տարված երեք գյուղացիների հետ[1]:

Խոյի և Նախիջևանի խաների զորքերը գիշերը մնում են Ջևայի մոտ, առավոտյան դուրս են գալիս այնտեղից և գնում դեպի Երևանի ափը: Ղուկասը գրում է, որ այնուհետև «...նոքա զառաջիկայ գիւղորայսն հրակիզեալ և ընդ Բլրու բերդին ևս սակաւ ինչ մարտնչեալ, անցին ընդ կեատուրն Բայազատոյ և զառաջեաւն Օրթլուի գնացին ի Մակու, և անդ ևս բազում վնասս և զաւերս գործելով, որպէս լուաք, անցին ի յերկիրսն իւրեանց»[2]:

Դժվար չէ պատկերացնել այն մեծամեծ դժբախտու- թյունները, որ հասան Արարատյան երկրի բնակչությանը: Մի կողմից տեղափոխումը իրենց բնակավայրերից, որ սովո- րաբար կատարվում էր բռնությամբ և կարճ ժամանակամի- ջոցում, մյուս կողմից Խոյի և Նախիջևանի զորքերի կողո- պուտն ու ավերմունքները հյուծել էին նրանց: Ղ. Կարնեցին պատմում է, թե «Այսպէս եղև գալն նոցա և անցանելն զմե- օք և զխաղաղութիւն մեր և խղճալի երկրիս, որ գրեթէ ըստ մեծի մասին աւերեցաւ ոչ միայն ի զօրացն օտարաց, այլ և ի յանգգամացն երկրիս...»[3]:

Ինչպես տեսանք, Մահմեդ խանը օգնություն էր խնդ- րել Հերակլից, վերջինս չէր կարող իր վասալին նման ծանր պայմաններում թողնել, բայց որովհետև ինքն էլ զբաղված էր այլ գործերով, կարողանում է Երևան ուղարկել միայն 130 հոգուց բաղկացած ջոկատ՝ խոստանալով հետո ավելի շատ ուղարկել: «...ի վրաց ճԼ մարդ է եկեալ,— գրում է Ղ. Կարնեցին,— զորս ի սուրբ Աթոռս և ի գիւղս մեր է յղեալ կերակրել, մինչև յետուստ բազմութիւնք գայցեն, բայց ան- տի այլ ևս զօրաց գալոյ նշան ոչ երևի»[4]:

[1] Մատենադարան, Արխիվային բաժին, կաթղ. դիվան, թղթ. 6, վավ. 189:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

Ուշագրավ է, որ Երևանի խանը օգնության խնդրանքով դիմել էր նաև Ախալցխայի փաշային: Բանն այն է, որ այդ ժամանակ Ախալցխայի փաշան, օգտվելով կենտրոնական իշխանության թուլությունից, մեծ ձգտումներ ուներ անկախանալու և դրա համար բարելավել էր իր հարաբերությունները Հերակլ Բ-ի և նրա փեսայ Երևանի խանի հետ: Բայց նա էլ ի վիճակի չէր օգնություն ցույց տալու: Այսուհանդերձ, Երևանի խանը վճռում է իրեն դավաճանած Նախիջևանի խանի դեմ նոր արշավանք սկսել: Նա զորահավաք է կատարում և հարձակվում Նախիջևանի վրա: «(Խանն)... զբնակիչս երկրիս խափանեալ ի գործոյ կրկին զորաժողով եղեւ և գնաց ի Նախջուան, իբրու առնուլ զվրէժ ի Քէալպալուոյն» — գրել է Ղ. Կարնեցին[1]:

Հերակլ Բ-ը դեմ էր, որ շարունակվեին այս ընդհարումները, ուստի երկու կողմերի միջև հաշտություն սերմանելու համար ուղարկում է իր ներկայացուցչին: Վերջինս տեսակցություն է ունենում խաների հետ, բայց անօգուտ: Մահմեդ խանը անզիջվելի էր և անպայման ուզում էր գրավել Նախիջևանի բերդը: Նա մոտենում է բերդին, բայց վաղաժամ ցրտերը ստիպում են նրան վերադառնալ: Այս դեպքերի մասին Ղ. Կարնեցին գրել է, թե Երևանի խանը «...գնաց ի վերայ Նախջուանու իբր առնուլ զվրէժն և ունայն ի յուսոյն դարձաւ և այսքանեօք յարուցմամբք զերկիրս և զմեզ վնասեաց, քան թէ զթշնամիսն»[2]:

Ահա, այս արշավանքների ու կռիվների պատճառած ավերմունքները վերականգնելու ժամանակ էր, երբ Երևանի Մահմեդ խանը 1791 թ. վերջերին հրավիրվեց Թավրիզի մոտ Մուշկյամբար կոչված վայրը, ուր իջել էր Աղա Մահմեդ խանը: Ինչպես տեսանք, խանը չի գնում այնտեղ և իր փոխարեն ուղարկում է եղբորը:

Մուշկյամբար էին հրավիրվել նաև Գանձակի և Նուխու

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 287ա:

[2] Նույն տեղում, էջ 336բ:



խաները, որոնք ևս չեն գնում և միայն նվերներ են ուղարկում[1]:

Աղա Մահմեդ խանը Ղարադաղի ու Նախիջևանի խաներից պատանդներ է վերցնում, բայց Երևանի խանից չի պահանջում: Նա ցանկանում էր խաղաղ միջոցներով նրան գրավել իր կողմը: Ուստի և սիրալիր ընդունելով նրա մարդկանց, ճանապարհ է դնում. «...յղելով փասն սորա (Երևանի խանի — Վ. Գ.) և խիլայս, և զպարգևս պատուականս և ռաղամս ի ձեռն երկուց իշխանաց իւրոց»[2]:

Աղա Մահմեդ խանը հպատակություն էր պահանջել նաև Ղարաբաղի Իբրահիմ խանից: Վերջինս մերժում է և անգամ հրաժարվում նվերներ ուղարկել: Ներքինի խանը պատժի է ենթարկում Խոյի Հուսեյն խանին և որպես պատանդ վերցնում նրա կնոջը, որը Իբրահիմ խանի դուստրն էր: Բացի դրանից, նա մեծ քանակությամբ թանկարժեք իրեր է վերցնում Հուսեյն խանից և այդ բոլորի դիմաց նրան տալիս Թավրիզում իշխելու իրավունքը: Հուսեյն խանը վերադառնալով Խոյ, Թավրիզ է ուղարկում իր եղբայր Ջաֆարղուլիին[3]:

Աղա Մահմեդ խանը նույնպիսի առաջարկությամբ դիմել էր նաև Հերակլ Բ-ին, բայց վերջինս ոչինչ չի ուղարկում, այլ սկսում է օգնել Իբրահիմ խանին:

Մինչև 1791 թ. ձմեռը Աղա Մահմեդ խանը պատանդներ է վերցնում իր մոտ եկած խաներից և ինքը վերադառնում է Թեհրան՝ «...ժամադիր լինելով, թէ ի գարնանն վերստին գալոյ է»[4]:

Իբրահիմ խանը, մերժելով Աղա Մահմեդ խանին, իր հույսերը դրել էր ոչ միայն իր և Հերակլի ուժերի վրա, այլև Դաղստանից հրավիրել էր Ումմա խանին: Հերակլը, համաձայնելով դրա հետ, այնուամենայնիվ, վախենում էր, որ Ումմա խանի զորքերը, գալով Ղարաբաղ, հարձակումներ կարող էին

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 368բ:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

կատարել Վրաստանի կամ նրա վասալներ Երևանի և Գանձակի խանությունների վրա: Այդ պատճառով, երբ Ումմա խանի զորքերը գալիս են Բելոկան, Հերակլը իր զորքով ընդառաջ է գնում և Ղընըղ գետի ափին կանգնեցնում նրանց: Այն բանից հետո միայն, երբ Ավարայի խանը պարտավորվում է չվնասել Հերակլի ու նրա վասալների երկրները և տալիս է պատանդներ, թագավորը թույլ է տալիս նրան շարունակել ճանապարհը դեպի Շուշի[1]:

Իբրահիմ խանը, իր զորքին միացնելով Ումմայի 3000 ավարցիներին, ցանկանում էր գրավել Նախիջևանը, որը դուրս էր եկել նրա ազդեցության շրջանակներից և կարող էր ընկնել Աղա Մահմեդ խանի տիրապետության տակ: Շուտով Ղարաբաղի և Ավարայի խանների միացյալ զորքը շարժվում է դեպի հարավ և պաշարում Նախիջևանի բերդը[2]:

Նախքան այդ, Նախիջևանի և Երևանի խանների միջև կայացել էր հաշտություն՝ ի նշանավորումն որի Քյալբալի խանը նշանվել էր Մահմեդի քրոջ հետ: Ոխերիմ թշնամիներ դարձած խանների այդ շուտափույթ հաշտության պատճառը Իբրահիմ խանի հարձակման վտանգն էր: Երևանի խանը հասկանում էր, որ Նախիջևանը գրավելու դեպքում Իբրահիմը այնուհետև իր զենքը կդարձներ Երևանի կողմը, ուստի այդ բանը կանխելու համար նա, անսալով Քյալբալի խանի խնդրանքին, իր զորքով օգնության է շտապում նրան: Իբրահիմ խանի Նախիջևանում հաստատվելը մեծամեծ վտանգներով էր հղի նաև Խոյի համար, այս պատճառով Խոյի խանը ևս հաշտվում է Մահմեդի հետ և իր զորքերով գնում՝ միանալու նրան[3]:

Երևանի, Խոյի և Նախիջևանի զորքերը պարտության են մատնում Իբրահիմ և Ումմա խանների զինվորներին, որոնք պաշարման ընթացքում ավերել էին Նախիջևան

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 368բ – 369ա:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:



քաղաքը[1], և դուրս են քշում նրանց Նախիջևանի խանության սահմաններից[2]: Այս բոլոր անցքերը տեղի են ունենում 1791 թ. դեկտեմբերին:

Աղա Մահմեդ խանը, իրեն հնազանդեցնելով երկրի մեծագույն մասը, մեծաքանակ զորքով հարձակվում է Քիրմանի վրա, ուր թաքնվել էր Լուտֆ-Ալի խանը: 1794 թ. գրավում է քաղաքը և դաժան դատաստան տեսնում նրա բնակիչների նկատմամբ: Սպանդից ազատված հազարավոր քիրմանցի կանայք և երեխաները տրվում են հաղթող զինվորներին: Խանի հրամանով կուրացվում են քաղաքի 20 հազար բնակիչներ: Լուտֆ-Ալի խանին հաջողվում է փախչել, բայց շուտով բռնվում է և սպանվում[3]:

Հաղթանակ տանելով Զենդերի վերջին նշանավոր ցեղապետներից մեկի նկատմամբ և կոտորելով նրա ողջ ընտանիքը, Աղա Մահմեդ խանը կարգադրում է գերեզմաններից հանել իր պապին և հորը սպանած Նադիր շահի և Քերիմ խանի դիակները, փոխադրել է տալիս Թեհրան և թաղում իր պալատի շեմքի տակ, որպեսզի ամեն անգամ անցնելիս տրորի Ղաջարների թշնամի այդ երկու իշխողների գերեզմանները[4]:

1794 թ. Աղա Մահմեդ խանը իրեն շահ է հռչակում, որից հետո մտածում էր վերահաստատել պարսկական տիրապետությունը Արևելյան Հայաստանի, Քարթլ-Կախեթի և Ադրբեջանի նկատմամբ: Այդ նպատակով նույն թվականին նա Սուլեյման խանին 20 հազար զորքով ուղարկում է Թավրիզ և հրամայում հավաքել շրջակա տիրակալներին, որոնց թվում Երևանի, Խոյի, Նախիջևանի, Գանձակի և Արդեբիլի խաններին և ստիպել, որպեսզի նրանք ընդունեն իր իշխանությունը: Շահը հրաման էր տվել Սուլեյմանին իր կողմը

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 381ա:

[2] Նույն տեղում, էջ 370ա:

[3] *М. С. Иванов*, Очерки по истории Ирана, стр. 111.

[4] Жизнеописание Ага-Магомет хана Каджара..., стр. 15-16.

թեքել նաև Ղարաբաղի Իբրահիմ խանին։ Իսկ եթե վերջինս չհնազանդվի, ապա ավերել նրա երկիրը, գրավել Շուշին և հպատակված խաների զորքերին միացած արշավել Վրաստանի վրա։

Շուտով Երևանի Մահմեդ խանը Սուլեյման սարդարից հրաման է ստանում մեկնել Թավրիզ՝ իր հպատակությունը Աղա Մահմեդ շահին հայտնելու համար։ Լուր է տարածվում, որ սարդարը հակառակ դեպքում արշավելու է Երևանի վրա։ Միաժամանակ վտանգ կար, որ Երևանի վրա արշավանքի դուրս կգար նաև Հերակլ Բ-ը, քանի որ Մահմեդ խանը, օգտվելով խառնակ դրությունից, ձգտում էր թոթափել իր վրայից վրացական տիրապետությունը և չէր ուղարկում հարկերը։ Այս դեպքերի մասին Ղ. Կարնեցին 1794 թ. հունիսի 13-ին գրում է.

«...Աղա Մահմատ խանն, շահ կոչեցեալ, զՍուլէյման խանն ոմն յիւրոցն Սարտար անուամբ յղեալ է դէպ ի Թաւրէզ, զորմէ համբաւէին, թէ գալոց է ի վերայ երկրիս և վրաց աշխարհին ևս զբաղում զօրս է պատրաստեալ և հռչակ եղանէր ի նմանէ, թէ և նա յառնելոց է ի վերայ իշխողին երկրիս, ըստ որում սա ի նմանէ երես է դարձուցեալ և միւսոյն ևս ոչ կատարելապէս հնազանդութիւն ցուցանէ»[1]։

Երևանի խանը սկսում է պաշտպանվելու պատրաստություններ տեսնել։ Նա ամրացնում է բերդը և այնտեղ հավաքում շրջակայքի բնակչությանը։ Ղուկասի քարտուղարը 1794 թ. հոկտեմբերի 23-ին գրում է. «...վրդովեցաւ երկիրս ի համբաւոյ կրկին յարուցման Սարտարի շահին»[2]։

Խանը Երևան է կանչում նաև Ղուկաս կաթողիկոսին։ Մինչ վերջինս տեղ կհասներ, Երևան է գալիս Աղա Մահմեդ շահի և Սուլեյմանի ներկայացուցիչը, որը «...միամտութեան բանս խօսեցաւ, և սա (խանը — Վ. Գ.) փոքր մի անդորրացեալ մարդ և ընծայ յղեաց առ սարտարն»[3]։

[1] Դիւան, հ. Գ, էջ 632—633։

[2] Մատենադարան, Արխիվային բաժին, կթղ. դիվան, թղթ. 6, վավ. 40, էջ 58։ Տե՛ս նաև՝ Դիւան, հ. Գ, էջ 633։

[3] Նույն տեղում։



Միաժամանակ, Հերակլի բարկությունը մեղմացնելու համար, խանը նամակներ և ընծաներ է ուղարկում նաև նրան, խնդրում է իրեն ներել՝ պարտավորվելով դրանից հետո ժամանակին և բարեխղճությամբ վճարել հարկերը։ Ղուկասը գրում է.

«(Խանը)... երկիցս ևս առ վրաց պետն մարդ յղեաց թղթով և ընծայիւք։ Եւ երկրացիքն ևս մահսար գրեցին՝ պայմանաւ և աղերսանօք առ ի ներել, մեք ևս ստիպեցեալ առ ի նոցունց զվարդապետ յղեցաք թղթով մերով»[1]։

Այս լարված դրությունը տևում է քսան օր՝ 1794 թ. մայիսի վերջերից մինչև հունիսի կեսերը[2]։ Այս ամբողջ ժամանակ բնակչությունը փակված էր բերդում, իսկ նրա ունեցվածքը մնում էր անպաշտպան։

Հերակլ Բ-ը ընդունելով Երևանից ուղարկված մարդկանց, զայրանում է, որ խանը փոխանակ հարկը ուղարկելու, խոստումներ է միայն տալիս, ուստի նա «...ոչ հաւատալով խոստմանցն, վասն բազմիցս ստելոյն սոցա զպայմանս իւրեանց, և ասացեալ էր. դուք զտալիքն ձեր տուք և ես թշնամեացն ձերոց պատասխանի տաց»[3]։

Դրանից հետո, Մահմեդ խանը ուղարկում է նրան հարկի մի մասը՝ խոստանալով մյուս մասը հետո տալ։ Նա խնդրում է մի քանի հարյուր մարդ ուղարկել Երևանի պաշտպանության համար[4]։

Նույն այս ժամանակ Սուլեյման սարդարը Խոյի խանի հետ միասին գալիս է Նախիջևան։ Երևանի խանության մեջ կրկին ամեն ինչ իրար է անցնում, սկսվում է մեծ խուճապ։ Ղուկասը գրում է.

«Զոր լուեալ սոցա առաւել ևս վրդովեցին զերկիրս՝ զՇարուրայ և զԳառնւոյ բնակիչսն վարելով ի գլուխ Սևու ջրոյն, մերձ ի ճանապարհն Ղարսայ, և զբաղումս ի բերդն տանե-

[1] Մատենադարան, Արխիվային բաժին, կթղ. դիվան, թղթ. 6, վավ. 40, էջ 58։ Տե՛ս նաև՝ Դիւան, հ. Գ, էջ 633։

[2] Նույն տեղում։

[3] Դիւան, հ. Գ, էջ 637,

[4] Նույն տեղում։

լով և զամենայն առ պատրաստ գտանելու ցորեանս և յարդս ի ներքս ժողովելով և այլն»[1]:

Սուլեյման սարդարը մարդ է ուղարկում Երևան և խանից պահանջում պատանդներ ուղարկել: Մահմեդ խանը անմիջապես մի քանի մարդ է ուղարկում Հերակլի մոտ և նրանից օգնական զորք խնդրում: Վրաց թագավորը ի վիճակի չէր օգնելու, բայց և այնպես նա նամակ է ուղարկում խանին և առաջարկում մերժել Սուլեյմանի պահանջը, միաժամանակ կրկին պահանջում հարկը[2]:

Երևանցիները չեն կատարում Հերակլի այս պահանջը, իրենց հույսը կտրում նրանից և «...կամաւորեցան զպատանդըս յղել առ Սարտարն՝ հանդերձ ընծայիւք և այլ արովք, յուղարկել առ շահն»[3]: Ամբողջ ծախսը կատարվում է ժողովրդի հաշվին: Կաթողիկոսը գրում է, որ խանի մարդիկ հուսահատ կատաղությամբ գյուղացիներից սկսում են հարկեր հավաքել այդ բանի համար: Էջմիածնի վանքից պահանջում են մի մեծ գումար, կաթողիկոսը աշխատում էր պակասեցնել այն, բայց չի հաջողվում: Նա տալիս է մի մասը, իսկ մյուսը Երևանի առևտրականներից է փոխ առնում[4]: Երբ ամեն բան հավաքվում է, Երևանի խանը մի քանի նշանավոր անձանց Շեխիսլամի հետ ուղարկում է Նախիջևան՝ Սուլեյման սարդարի մոտ, որը նրանց ուղարկում է Աղա Մահմեդ շահի մոտ, իսկ ինքը վերադառնում է Թավրիզ[5]:

Սուլեյման սարդարը բավարարված չէր, ուստի Թավրիզից լուր է ուղարկում, որպեսզի Երևանի խանը կատարի Աղա Մահմեդ շահի մյուս պահանջները ևս, այն է՝ ուղարկի 500 զինվոր, ուրիշ պատանդներ և այլն: Մահմեդ խանը հնարավորին չափ ձգձգում և մերժում է Սուլեյմանի այս պահանջը: Այդ պատճառով Աղա Մահմեդ շահը ցանկություն ուներ անմիջապես արշավել Երևանի վրա, բայց զբաղված էր այլ

[1] Դիւան, հ. Դ, էջ 637—638:
[2] Նույն տեղում, էջ 638:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:



գործերով և արշավանքը իրականացնում է միայն հաջորդ՝ 1795 թվականին:

## Բ. ԱՂԱ ՄԱՀՄԵԴ ՇԱՀԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

1795 թ. գարնանը Աղա Մահմեդ շահը շտապ պատրաստություններ էր տեսնում Անդրկովկասի վրա հարձակվելու: Նույն թվականի մայիսի 7-ին Կովկասյան զորքերի հրամանատար գեներալ Ի. Վ. Գուդովիչը Գեորգիևսկից կայսրուհուն հայտնում է, թե Աղա Մահմեդը ցանկանում է երկու ուղղությամբ հարձակում գործել Անդրկովկասի վրա, գրավել խանությունները, իսկ հետո արշավել Վրաստանի վրա[1]: Նա գրում է, թե ինքը մի շարք նախազգուշական միջոցներ է ձեռք առել, խորհուրդ է տվել Հերակլին միավորվել հարևան խաների հետ՝ Աղա Մահմեդին հակահարված տալու համար:

Պետական խորհուրդը 1795 թ. մայիսի 22-ին, քննելով Գուդովիչի այս զեկուցագիրը, հավանություն է տալիս նրա միջոցառումներին և հայտնում, որ նա ամեն կերպ աջակցություն ցույց տա Հերակլին ու խաներին, միաժամանակ ցուցմունք է տրվում խուսափել ընդհարումներից և աշխատել բարեկամական հարաբերություններ հաստատել Աղա Մահմեդի հետ[3]:

Շահի պատրաստությունները անհանգստություն են պատճառում նաև Դիարբեքիրի, Բայազետի, Կարսի ու Էրզրումի փաշաներին, ինչպես նաև Բ. Դռանը: Բայց երբ պարզվում է, որ հարձակումը ուղղվելու է Անդրկովկասի վրա, թուրքերը հանգստանում են և խոստանում աջակցել շահին: Վերջինիս պահանջով նրանք անդամթերք են ուղարկում պարսից զորքերին, բացի դրանից Բ. Դուռը սահմանամերձ փաշաներին հրետանի և պարեն է ուղարկում, այն հաշվով,

[1] *В. И. Левиатов*, Очерки из истории Азербайджана в XVIII веке, Баку, 1948, стр. 164.

որ նրանք անցնեն շահի ձեռքը և օգտագործվեն Ռուսական կայսրության դեմ[1]։

Պարսից արշավանքի վտանգը հայոց կաթողիկոսին ևս ստիպում է նախազգուշական միջոցներ ձեռք առնել։ Նա եկեղեցական զարդերը հավաքում և ուղարկում է Կարս ու Թիֆլիս ի պահպանություն։ Երբ իմանում է, որ Հերակլը պատրաստություններ է տեսնում թշնամուն դիմադրելու համար, կարգադրում է վանքի միջոցներից 100 թուման ուղարկել նրան[2]։ Որոշ ժամանակ անց, Հերակլի դեպի Ղազախ շարժվելու լուրն առնելուց հետո, կաթողիկոսը կարգադրում է զինվորական ծախքերի համար նրան տալ 1000 հատ ալթմուշլուխ[3] (դրամ է)։ Այս ուշագրավ փաստերը վկայում են այն մեծ հույսերի մասին, որ տածում էր հայոց կաթողիկոսը Հերակլի նկատմամբ՝ Աղա Մահմեդ շահի արշավանքի նախօրեին։

Երբ լուր է հասնում շահի Արդեբիլ գալու մասին, կաթողիկոսը Հովհաննես վարդապետին ուղարկում է նրա մոտ և գրավոր խնդրում արշավանքի ժամանակ Էջմիածնի վանքը ազատել ավերումներից և թալանից։ Նույն բովանդակությամբ նամակներ է ուղարկում նաև Միրզա Շեֆիին, Թավրիզի սարդարին, Հուսեյն և Ջաֆարղուլի խաներին[4]։

Հովհաննես վարդապետը պետք է գնար Բայազետի և Խոյի վրայով, ուստի կաթողիկոսը նամակ է գրում Բայազետի Իսաղ փաշային և խնդրում, որ նա էլ Էջմիածնի անվտանգությունը ապահովելու մասին նամակ գրի շահին և Հովհաննեսի հետ մարդ ուղարկի նրա մոտ։ Միաժամանակ Ղ. Կարնեցին խոյեցիներ Իսաջան ու Մարգար աղաներին հանձնարարում է տեղանքին ծանոթ ուղեկից դնել Հովհաննեսի հետ, այլև նամակներ ուղարկել Հուսեյն ու Ջաֆարղուլի խաներին՝ խնդրելով պաշտպանել Էջմիածինը[5]։

Հովհաննես վարդապետի բանագնացությունը հաջողու-

[1] Н. Дубровин, История войны..., т. III, стр. 75—76.
[2] Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 339բ։
[3] Նույն տեղում, էջ 340ա։
[4] Նույն տեղում, էջ 342բ։
[5] Նույն տեղում, էջ 342բ—343ա։



թյուն է ունենում։ Նա հանդիպումներ է ունենում Աղա Մահմեդ շահի, Թավրիզի սարդարի և Ջաֆարղուլի խանի հետ։ Պայմանավորվածություն է ձեռք բերվում այն մասին, որ Էջմիածինը զերծ է մնալու հարձակման վտանգներից, եթե միայն կաթողիկոսը համապատասխան փրկանք տա։

Բայց, այնուհանդերձ, Ղ. Կարնեցին շարունակում է իր պատրաստությունները։ Հունիս ամսին նա վանքի անասունները ուղարկում է Ղոշավանք[1]։

Արշավանքից առաջ Աղա Մահմեդ շահը մի նոր փորձ է անում Երևանը իրեն հնազանդեցնելու։ Նա առաջարկում է Մահմեդ խանին հպատակվել իրեն, բայց վերջինս պատասխանում է, թե իր երկիրը ենթարկվում է Վրաստանի տիրոջը և երբ խանը կհաղթի նրան, ապա ինքը կենթարկվի շահին[2]։ Խանը ևս պատրաստություններ է տեսնում։ Հ. Արարատյանը, որը այդ ժամանակ գտնվել է Երևանում, պատմում է, որ խանը Աղա Մահմեդից պաշտպանվելու համար յոթ տարվա պաշար է հավաքում, նա Երևանի բերդն է բերում 7000 զինվոր, որից երեք հազարը հայ[3]։

Աղա Մահմեդ շահի արշավանքի պատրաստությունների լուրը մեծ խուճապ և ահաբեկում է առաջացնում Անդրկովկասի բնակչության մեջ։ 1795 թ. կեսերին Երևանից, Ղարաբաղից, Նախիջևանից ու այլ վայրերից քրիստոնյա և մահմեդական բնակչության մեծ խմբեր սկսում են հեռանալ դեպի Վրաստան՝ հույս ունենալով, որ Հերակլը կդիմագրավի շահին և իրենք կազատվեն կոտորածից և գերեվարումից։ Գաղթականները, որ շարժվում էին գլխավորապես Բուռի հովտով, սպառում են իրենց սննդամթերքները և հացի համար զոհում իրենց վերջին անասունները։ Հ. Արարատյանը պատմում է, որ նրանք երեք ֆունտ հացի համար տալիս էին մեկ ոչխար, իսկ մեկ լիտրի համար՝ մեկ ձի։ Սովը և համաճարակները

[1] Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 343բ, 344բ։
[2] Жизнь Артемия Араратского, т. II, стр. 10.
[3] Նույն տեղում, հ. Բ, էջ 11։

հնձում էին նրանց շարքերը։ Կենդանի մնացածներին տեղական ֆեոդալները ստրկացնում էին[1]։

Աղա Մահմեդ շահը 1795 թ. հունիսի վերջերին 50000 զորքով, վերականգնելով Իբրահիմ խանի հրամանով քանդված Խուդափերինի կամուրջը, անցնում է Արաքսը և ներխուժում Անդրկովկաս։ Նա իր զորքը բաժանում է երեք մասի, մի մասը իր եղբայրներ Ալիղուլի և Ջաֆարղուլի խաների հրամանատարությամբ ուղարկում է Երևանի վրա, մյուս մասը ուղարկում է Մուղանի դաշտը՝ Շամախին և Նուխին նվաճելու համար, իսկ ինքը հիմնական մասի գլուխն անցած շարժվում է դեպի Շուշի և կանգ առնում նրանից 7 վերստ հեռավորության վրա։

Ներքինի շահը խանությունները իրեն հպատակեցնելուց հետո հարձակվելու էր Վրաստանի վրա, ուստի Հերակլ Բ-ը նորանոր դիմումներ է անում ռուսական հրամանատարությանը՝ խնդրելով օգնել իրեն։ Բայց այդ օգնությունը դեռ չկար. «Պետք է ասել, որ ռուսական սահմանապահային իշխանությունը՝ հանձինս գեներալ Ի. Վ. Գուդովիչի, պատշաճ օպերատիվություն չցուցաբերեց։ Գուդովիչը երկարատև գրագրություն սկսեց Պետերբուրգի հետ, սպասելով կարգադրությունների։ Վրաստանին ռազմական օգնություն ցույց տալու մասին սեպտեմբերի 4-ի հրամանը Պետերբուրգից Գուդովիչին եկավ հոկտեմբերի 1-ին միայն»[2]։

Վրաստանը մենակ էր մնում ահեղ թշնամու դիմաց և Հերակլը դաշնակիցներ է որոնում։ Նրան օգնության է շտապում Իմերեթիայի Սողոմոն թագավորը իր 3000-անոց զորքով։ Հերակլը բանակցությունների մեջ է մտնում Երևանի խանի հետ՝ իրենց հարաբերությունները լավացնելու համար։ Ղ. Կարնեցու 1795 թ. հուլիսի 9-ին գրած մի նամակից երևում է, որ այդ ժամանակ Հերակլ Բ-ը նամակով հայտնել է,

[1] Жизнь Артемия Араратского, т. II, стр. 11.

[2] Очерки истории СССР (XVIII в., вторая половина), стр. 734—735.



թե ինքը Երևանի խանի նկատմամբ միանգամայն բարեկամաբար է տրամադրված և ցանկանում է նրա հետ լավ հարաբերություններ ունենալ[1]։

Կաթողիկոսը այս նամակը ուղարկում է խանին, որը իր պատասխան նամակում գրում է, թե ինքը պատրաստ է ծառայել թագավորին և որ այդ նեղ ժամանակներում նրա օգնության կարիքը ունի[2]։

Ղ. Կարնեցին խանի պատասխանը ուղարկում է Հերակլին ու միաժամանակ գրավոր խնդրում՝ հաշտվել խանի հետ[3]։

Շատ չանցած, խանը իր ներկայացուցչին ուղարկում է Հերակլի մոտ. «...սորա, — գրում է Ղ. Կարնեցին, — զՄուստաֆայ բէկն յղեցին ի սպաս Արքային[4]»։ Խանը կաթողիկոսին առաջարկում է, որ նա էլ մարդ ուղարկի թագավորի մոտ։ Կարնեցին որոշում է Հերակլի մոտ ուղարկել Թիֆլիսում գտնվող վրացահայոց առաջնորդ Մարտիրոս վարդապետին։ Վերջինս պետք է հանդիպեր Մուստաֆա բեկին և միասին գնային Հերակլի մոտ։ Ղ. Կարնեցին Մարտիրոս վարդապետին գրում է, որ նա Հերակլին հայտնի հետևյալը.

«...ի մերս կողմանէ խօսեցիս, թէ հոգևոր տէրն խնդիրն այս է, որ Երևանու վերայ շատ երախտիս ունիս և Մահմատ խանն զքեզ հայր գիտէ իւրն և յօժարէ ծառայել, միայն թէ յայսմ ժամանակի, յորում թշնամիք յարուցեալք են և երկիրս ամայացեալ կայ, օգնութիւն առնէ և կրկին ազատէ զերկիրս, յայնժամ առաւել եւս ի քէն աէրութիւն և ի նմանէ յօժարամիտ ծառայութիւն»[5]։

Ղ. Կարնեցին մի նամակ էլ գրում է Հերակլին, որով խնդրում է հարգել խանի խնդրանքը և «...այցելութիւն արասցես երկրիս, որպէս և քանիցս արարեալ ես»[6]։

[1] Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 350բ։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 350բ—351ա։

[4] Նույն տեղում, էջ 350բ։

[5] Նույն տեղում, էջ 351ա։

[6] Նույն տեղում։

Հասկանալի է, որ Հերակլը ի վիճակի չէր օգնություն ցույց տալու Երևանի խանին և վերջինս միայն իր ուժերով է ելնում Ալիղուլի և Ջաֆարղուլի խաների 20000-անոց զորքի դեմ[1], որը հուլիսի վերջերին մոտենում է Երևանին և բանակ դնում Զարբախում[2]։

Մահմեդ խանը տեղահան էր արել շրջակայքի և Երևան քաղաքի բնակչությանը և նրանց հետ փակվել բերդում։ Նա պատրաստ էր երկարատև պաշարման։

Ալիղուլի խանը, Աղա Մահմեդ շահի աջակիցը և լավագույն զորավարներից մեկը[3], պաշարում է Երևանը և միաժամանակ բանակցություններ սկսում Արարատյան երկրի քրդերի հետ, որոնք չէին ուզում հնազանդվել շահին։ Վերջինս Ալիղուլի խանին կարգադրել էր քրդերի առաջնորդին գրավել իր կողմը, հույս տալ նրան, որ դրանով նա կարժանանա իր սիրալիր վերաբերմունքին[4]։

Պարսից շահի զորքերի գալուց անմիջապես հետո, 1795 թ. հուլիսի 27-ին, Ղ. Կարնեցին մի վարդապետ է ուղարկում Ալիղուլի խանի մոտ և Էջմիածնի վանքի ու Վաղարշապատ գյուղի ունեցվածքը պաշտպանելու համար հատուկ պահապաններ խնդրում։ Հաջորդ օրը նա ինքն է գնում խանի բանակը և բանակցություններ սկսում փրկագնի վերաբերյալ[5]։ Ալիղուլի խանը այս մասին տեղեկացնում է Աղա Մահմեդ շահին, որը նրան իր կողմից լիազոր է կարգում նվերներն ընդունելու և անդորրագիրը տալու գործում[6]։ Ալիղուլի խանը կաթողիկոսից պահանջում է 10000 թուման, բայց սա խնդրում է պակասեցնել և գումարը հասցնում է 4000-ի։ Այդքան իր մոտ կանխիկ չունենալով, Ղ. Կարնեցին պարտք

[1] Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 79ա։

[2] Յիշատակարան ազգային արդեան պատմութեան համար, «Կռունկ հայոց աշխարհին», 1862 թ., № 4, էջ 284։

[3] *Мирза-Адыгёзал-бек*, Карабаг-наме, Баку, 1950, стр. 76.

[4] Грамоты и другие исторические документы..., т. II, вып. II, стр. 95.

[5] Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 352ա։

[6] Грамоты и другие исторические документы..., т. II, вып. II, стр. 95.



է անում։ Նա Ջաֆարղուլի խանից վերցնում է 400, Մարաղայի Ահմեդ խանից՝ 200 թուման[1]։

Երևանի պաշարումը տևում է մեկ ամսից ավելի (35 օր) և այդ ընթացքում Արարատյան երկիրը ենթարկվում է մեծ ավերումների։ Վարդան Օձնեցին պատմում է.

«Իսկ Ալիղուլի խան սարդար, յետ բազում անգամ յորդորելոյ զխանն Երևանայ գալ ի հնազանդութիւն շահին և ընդդիմանալոյ նորա, զայրացեալ յոյժ, պատերազմեցաւ ընդ բերդականացն Երևանայ զաւուրս ինչ և անդէն սփռեալ զզօրս իւր յԱյրարատ գաւառ ասպատակեաց զամենայն երկիրն Գառնոյ առ Հրազդան գետով, քանդեալ աւերեաց զշինուածս տանց և հուր արկեալ այրեաց զամենայն արմտիս երկրիս նոցա, զոր յանժամ հնձեալ դիզեալ էին[2]»։

Պաշարված երևանցիները, այնուամենայնիվ, հույս ունեին, որ Հերակլը օգնության կգար իրենց։ Նրանք համառորեն դիմադրում էին և շատ վնասներ հասցնում թշնամուն։ Ստեղծված դժվարությունների մասին Ալիղուլի և Ջաֆարղուլի խաները նամակով հայտնում են շահին։ Նրանք գրում են, որ լուր է տարածվել Հերակլի գալու մասին և Երևանի Մահմեդ խանը շարունակ ձգձգում է շահի պահանջները կատարելը։ Իր պատասխան նամակով շահը կարգադրում է, որ Երևանը պաշարած զորքերը մնան իրենց տեղում և եթե Հերակլը գա, ապա աշխատեն ամրանալ որևէ տեղում։ Այս դեպքում նա արգելում է Հերակլի հետ կռվի բռնվել և երդվում է, որ ինքը հինգ օրով ծպտյալ կգա Երևան և այնպես կհարձակվի վրացիների վրա, որ նրանցից ոչ մեկին կենդանի չի թողնի։ Այ-

[1] Մատենադարան, ձեռագիր № 4481, էջ 351բ։ Հետաքրքրական է այդ գումարի բաշխումը։ 1200 թուման գնում է Ալիղուլի խանին, շահին՝ 1000 թուման, Ջաֆարղուլի խանին՝ 250, խանի սենեկապետին՝ 55, հանդերձապետին՝ 35, գանձակեցի Յաղուբ խանին, որը եկել էր երկու կողմերին հաշտեցնելու համար՝ 12 թուման, Ջաֆարղուլի խանի ծառաներին և բարեկամներին՝ 30, Ալիղուլի խանի ծառաներին՝ 150, դահճապետին, որը նաև Էջմիածնի պահապանների պետն էր՝ 20 (Մատենադարան, ձեռագիր № 4331, էջ 84բ), տե՛ս նաև Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, էջ 881։

[2] Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 85ա—85բ։

Նուհետև, շահը թվարկում է այն ուժերը, որոնք Երևանը պաշարողներին օգնության կգան, դրանք ընդամենը 1300 հոգի էին լինելու, որոնցից 400 հոգին ուրմիացիներ՝ Ամիր Ասլան-բեկ Ավշարի հրամանատարության տակ, 400 հոգի Մարաղայից, 500 հոգի Նախիջևանից՝ Խալիլ-բեկի հրամանատարությամբ[1]:

Երևանը պաշարող զորքերը բերդը ռմբակոծելու համար կարիք ունեին թնդանոթների: Ճիշտ է, նրանք իրենց հետ հրասանդներ ունեին, բայց լավ հրետանավորներ չկային, և այդ գործը անհաջող էր գնում: Շահը Երևան է ուղարկում հրետանավոր Շահ Աղա Սադըղ խանին և կարգադրում նրան այսպես կոչված «խուդափիրինյան հրասանդը» Ղարաբաղի, Մարանդի ու Նախիջևանի վրայով ուղարկել Երևան, ուղարկվում է նաև կապար[2]: Շահը գրում է Երևանը պաշարած իր եղբայրներին, որ նրանք զգույշ լինեն: Նա Երևան է ուղարկում նաև 25 հավատարիմ ավշար զինվորների:

Աղա Մահմեդի այս նամակները ընկնում են վրացիների ձեռքը և նրանց կողմից ուղարկվում Գուդովիչին[3]:

Աղա Մահմեդ շահը այս ժամանակ պատրաստություններ էր տեսնում Վրաստանի վրա արշավելու համար, նա փորձում է համոզել Ումմա խանին, որ նա հարձակվի Կախեթի վրա: Իսկ ջարեցիներին առաջարկում է հարձակվել Վրաստանի վրա՝ փոխարենը խոստանալով նրանցից յուրաքանչյուրին վճարել 500 ռուբլի[4]:

Աղա Մահմեդ շահը չի կարողանում հաղթահարել Շուշիի պաշտպանների դիմադրությունը, որոնք հաճախ դուրս էին գալիս ամրոցից և հարձակումներ կատարում պարսից զորքերի վրա: Քիչ նեղություն չէին հասցնում պարսիկներին նաև այն 12 հազար տուն հայերը, որոնք ամրացել էին Շուշին շրջապատող կիրճերի մեջ և շարունակ թիկունքից

[1] Грамоты..., т. II, вып. II, стр. 95.
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 93:
[4] Նույն տեղում, էջ 93—94:



հարվածում էին պաշարողներին[1]: Շահը 33 օր Շուշին պաշարելուց հետո չի կարողանում գրավել այն և հրաման է արձակում ավերել շրջակայքը: Նա մի նամակ է ուղարկում Երևանը պաշարածներին (նամակը հասցեագրված էր Ջաֆարղուլի խանին), որ ինքը մտադիր է ձմեռել Շուշիի մոտ, բայց մինչ այդ Շուշիի մոտ թողնելով Սուլեյման խանին, ուզում է 20 հազար զորքով արշավել Վրաստանի վրա: Ուստի, հրամայում է Ջաֆարղուլի խանին Երևանի մոտ թողնել չորս հազար զորք և մնացածով պատրաստ լինել իր մոտ գալու: Իսկ եթե Երևանի խանը ցանկանա հնազանդվել և պատանդներ հանձնել, այդ դեպքում հրամայում է Երևանը հանգիստ թողնել[2]: Սրանից հետո շահը գնում է Գանձակ: Այս նամակը ևս ընկնում է վրացիների ձեռքը և ուղարկվում Գուդովիչին[3]:

Գանձակի Ջավադ խանը, որ անցել էր Աղա Մահմեդ շահի կողմը և մեծ ծառայություններ էր մատուցում նրան Անդրկովկաս կատարած արշավանքի ժամանակ, իր մարդկանցից մեկին՝ Յաղուբ խանին ուղարկում է Երևան, որպեսզի նա հաշտության համար միջնորդ հանդիսանա Երևանի Մահմեդ խանի և Ալիղուլի խանի միջև[4]:

Երևանի դրությունը այս ժամանակ չափազանց դժվարին էր: Զրկված լինելով արտաքին որևէ օգնությունից, Մահմեդ խանը վախենում էր, որ ի վերջո շահը կարող էր իր բոլոր ուժերը կենտրոնացնել Երևանի վրա և այն ժամանակ ոչ ոք չէր կարող երաշխավորել ոչ միայն քաղաքի բնակչության, այլև բերդում փակված մեծամեծների կյանքի համար, այնպես որ խանը նախամեծար է համարում շահին հպատակություն հայտնելը հետագա անհույս դիմադրությունից: Այս հարցում քիչ դեր չի խաղում նաև գանձակեցի Յաղուբ

[1] Լեո, Հայոց պատմություն, հատ. Գ, էջ 879:
[2] Н. Дубровин, История войны..., т. III, стр. 34—35.
[3] Նույն տեղում, էջ 35:
[4] Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 352ա:

խանը, որ բարեկամական կապեր ուներ Մահմեդ խանի հետ[1]։

Հաշտությունը Երևանի խանի և Ալիղուլի խանի միջև կնքվում է 1795 թ. օգոստոսի վերջերին[2]։ Մահմեդ խանը պարտավորվում է լինել Աղա Մահմեդ շահի հպատակը, հարկեր տալ նրան, պահանջի դեպքում զորքով և զենքով օգնել նրան։ Որպես երաշխիք վասալական այս պարտավորությունների կատարման, նա կնոջը և նորածին որդուն պատանդ է ուղարկում։ Ալիղուլի խանը վերցնում է պատանդները և օգոստոսի 28-ին զորքերով հեռանում դեպի Գանձակ, ուր շահը պատրաստվում էր Վրաստանի վրա հարձակվելու[3]։ Արարատյան երկրում վերահաստատվում է խաղաղությունը։ Կաթողիկոսը մարդ է ուղարկում Ղոշավանքից Էջմիածնի անոթները ետ բերելու համար։

Ալիղուլի խանի զորքերը միանում են շահի զորքերին և հարձակվում Վրաստանի վրա։ Վրացական զորքերը վճռական ճակատամարտում պարտություն են կրում և սեպտեմբերի 12-ին ընկնում է Թիֆլիսը։ Քաղաքի բնակիչները չէին կարողացել փախչել և նրանց մեծ մասը սրի է քաշվում, իսկ մնացածները գերի են տարվում։ Քաղաքի փողոցները ներկվում են հազարավոր զոհերի արյունով։

Յոթ օր քաղաքը թալանելուց, ավերելուց, հրկիզելուց և բնակչությանը կոտորելուց հետո շահի զորքերը, ծանրաբեռնված հարուստ ավարով և հազարավոր գերիներով, շարժվում են դեպի Գանձակ, իսկ հետո՝ Մուղանի դաշտ և բանակ դնում այնտեղ։

Աղա Մահմեդ շահի այս արշավանքը մի սոսկալի դժբախտություն էր անդրկովկասյան ժողովուրդների՝ հայերի, վրացիների ու ադրբեջանցիների կյանքում։ Առանց այդ էլ ներքին կռիվներից խիստ տուժած և քայքայված բնակչությունը կրեց ավելի ահավոր և կործանիչ մի հարված։ Նրանցից տասնյակ հազարավորներ սպանվեցին կամ գերի տարվելով վաճառվեցին հեռավոր երկրներում։ Այդ դժբախտությունների պակասը լրացրին արշավանքի հետևանքը հանդիսացող սովը ու համաճարակները։

[1] Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 85բ, տե՛ս նաև ձեռ. № 4481, էջ 352ա։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։



Աղա Մահմեդ շահի 1795 թ. արշավանքը Երևանի խանության համար այն հետևանքը ունեցավ, որ այն դուրս բերվեց Արևելա-վրացական թագավորության կախվածությունից և կրկին դարձվեց պարսից պետության մարզերից մեկը։

## Գ. ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1796 Թ. ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Աղա Մահմեդ շահի արշավանքը խիստ թուլացրել էր Ռուսաստանի հեղինակությունը Անդրկովկասում և պայմաններ էր ստեղծել այնտեղ պարսից կենտրոնական իշխանության ամրապնդման համար, ուստի ռուսական կառավարությունը 1795 թ. նոյեմբեր ամսից պատրաստություն է տեսնում շահի դեմ արշավելու համար։

1795 թ. նոյեմբերի 18-ին Պետական խորհուրդը գեներալ Գուդովիչին կարգադրում է անել ամեն բան Վրաստանը և Ռուսաստանին հավատարիմ խանությունները Աղա Մահմեդ շահի հարձակումներից ազատելու համար։ Այս ժամանակ ենթադրվում էր զորքերը ցամաքային ճանապարհով տանել դեպի Դերբենդ, իսկ նավատորմը շարժվելու էր դեպի Սարա կղզին։ Պետական խորհրդի որոշման մեջ Երևանի մասին ասվում էր, թե նպատակահարմար չէ այնտեղ զորք ուղարկելը, որովհետև այնտեղի խանը և ժողովուրդը Վրաստանից կախյալ են եղել և շատ հնարավոր է, որ Անդրկովկասում ռուսական զորքերի հայտնվելուց հետո, Երևանը կամավորապես ենթարկվի վրաց թագավորին։ Բացի դրանից, զորքեր չուղարկելով այնտեղ, կարելի էր խուսափել թուրքերի հետ հնարավոր բախումներից[1]։

Պետական խորհուրդը սխալվում էր, կարծելով, թե երբ ռուսները հայտնվեն Անդրկովկասում, Երևանը նորից կեն-

[1] Н. Дубровин, История войны..., т. III, стр. 67.

Թարկվեր Վրաստանին: Բանն այն է, որ պարսից կենտրոնական իշխանության տիրապետությունը Երևանի վրա բավական ամրապնդվել էր: Շահը իր մարդկանցից մեկին՝ Թավաքյալի խանին 400 զինվորներով բերդապահ էր կարգել Երևանում[1] և դրանով խիստ հսկողություն սահմանել Մահմեդ խանի ու նրա հպատակների նկատմամբ: Ուստի, անկախ այն բանից, թե խանի համար Վրաստանի գերիշխանությունը գերադասելի էր Աղա Մահմեդ շահի տիրապետությունից, նա ի վիճակի չէր առանց դրսի օգնության վերահաստատելու նախկին վիճակը:

Հոկտեմբեր ամսին շահը Երևան է ուղարկում Սուլեյման սարդարին և Մահմեդ խանին հրավիրում իր մոտ՝ Մուղանի դաշտ: Սուլեյմանը իր հետ բերել էր նաև հրամանագիր (խիլա) կաթողիկոսի անունով և Ղ. Կարնեցին այն ստանալու համար ստիպված է լինում նվերներ տալ, որից և «...անտանելի վնասակրութիւն եղև և ի գործոյ և յայլոց դատարկեցաք», — գրում է նա[2]:

Ռուսական արշավանքի պատրաստությունները կրկին ոգևորում են Հ. Արղությանին: Նա ռուսաց հրամանատարությանը բազմաթիվ տեղեկություններ է ուղարկում Հայաստանի ու նրան սահմանակից երկրների մասին: Նա գտնում էր, որ ռուսները պետք է արշավեն ոչ թե Թիֆլիսի, այլ Դերբենդի վրայով: Այդ մասին նա 1795 թ. դեկտեմբերի 15-ին Գրիգորիոպոլից Պետերբուրգ՝ Ստեփան Տեր-Սահակյանին ուղարկած մի նամակում գրել է հետևյալը.

«...գրելոց եմ գրաֆին, եթէ միայն ի վերայ Թիֆլիզու գնան, ոչ ինչ օգնեն, այլ աւերակաց գլխութեամբ տիրեն, զի թշնամին կործանեաց վասն գոյա: Իսկ եթէ ի վերայ Դերբենդու և Գանջայու գնան ի վերայ Բաքուայ՝ նախ ղՇամքի, Շրուան ի ձեռն առնուն զերեւան և ապա զԳենջայ առնուն, անտի կարեն օգնել հայոց Երևանու և այլոց, եւ գերելոցն՝ որք ի Պարսս են: Եւ եթէ Շուշու խանն տակաւին ի յամրոցին իցէ, միաւորի ընդ մերոն և վերջացուցանիցեն զկոտա-

[1] Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 89բ:

[2] Նույն տեղում, ձեռ. № 4481, էջ 355բ:



ծընս» (Աղա Մահմեդ շահին—Վ. Գ.): Այնուհետև նա գրում է.

«...թէ գրաֆ Սուվորովն առաքեսցեն, միանգամայն բանն ի լաւ կողմն իսկոյն վերջանայ, և ի սկզբանն՝ 1780 թուին և ի յունվարի մեկին նա էր կարգեալ ի վերայ այսմ գործոյ, նա եկ առ իս և գրեաց զամենայն ինչ ի տան Թուրչինովին, բայց յետոյ յայլ փոխեցաւ, և ինքն յառաջ ունէր կամք լինիլ ի յայն կողմունս»:

Նույն նամակի վերջում Հ. Արղությանը ավելացնում է.

«Եթէ զգա գնեն ընդ Սուվորովին, իսկոյն կատածի եղբայրն և ամենայն զօրքն յետ դառնալոց են և վերջացուցանելոց: Եթէ ի գարնան յանկարծ տասն հազար զօրք առաքեն ի յԱստրապատ աւերել, այն լինի հատուցումն անիծելոցն»[1]:

Ռուսաց կառավարության որոշմամբ 1795 թ. դեկտեմբերին Թիֆլիս է ժամանում 2000 հոգուց բաղկացած ռուսական մի ջոկատ՝ Վրաստանը Աղա Մահմեդ շահի նոր ոտնձգություններից պաշտպանելու համար:

Ռուսական արշավանքի պատրաստությունները և այս ջոկատի Թիֆլիս հասնելու լուրը նոր թափ է տալիս Երևանի հայության ազատագրական շարժմանը: 1796 թ. հունվարի 27-ին Գաբրիել Յուզբաշին նամակ է գրում Հերակլի թոռ Դավիթ սարդարին և հայտնում, թե Երևանում լուր է ընտացել ռուսական զորքերի Վրաստան գալու մասին: Նա խնդրում է Դավթից հայտնել ճշմարտությունը, թե ինչո՞ւ են նրանք ժամանել և ո՞ւր են գնալու: Եթե ազատագրվելու հույս կա, խնդրում է կանխապես իմաց անել, որպեսզի իրենք

[1] Մատենադարան, ձեռ. № 2951, էջ 86բ—87ա: Այս հետաքրքրական հրապարակումը փոքր կրճատումներով՝ ռուսերենի թարգմանած հրատարակված է Ավ. Երիցյանի խմբագրած ամսագրում (տե՛ս Письма архиепископа Иосифа Аргутинского о Грузии (1795—1796 гг.) „Кавказская старина“ 1872 г., № 2, стр. 30—31) հետագայում սրանից օգտվել են՝ Ն. Դուբրովինը (История войны..., т. III, стр. 58), Գ. Ա. Եզյանը (Сношения Петра Великого с армянским народом, СПБ, 1898, стр. CIV. Լեոն, (Հայոց պատմություն, հ. Գ, էջ 886) և Մ. Ներսիսյանը (Из истории русско-армянских отношений, кн. I, стр. 74—75).

ուրախ հոգով սպասեն ընդհանուր բարեհաջողությանը, իսկ եթե ոչ, որպեսզի ընդունեն նախազգուշական միջոցներ: Նամակի վերջում Գաբրիելը ցավակցություն է հայտնում պարսկական արշավանքի հետևանքով Վրաստանին հասած դժբախտությունների առթիվ[1]:

Նույն օրը Գաբրիել Յուզբաշին մի ուրիշ նամակ է ուղարկում Թիֆլիս՝ Միշկար բաշիին: Այդ նամակում ասվում է, որ դրանից առաջ Գաբրիելը իր մարդկանցից մեկի՝ Հովսեփի միջոցով նամակ է ուղարկել Միշկար բաշիին, բայց պատասխան չստանալով, ծայրահեղ տարակուսանքի մեջ է. այժմ նրա մոտ տաս օրով ուղարկում է Դավիթ Զարուկին և խնդրում է հաղորդել, թե ո՞ւր են գնալու ռուսական զորքերը և արդյո՞ք իրենց՝ քրիստոնյաներին օգնություն լինելու է, թե պետք է հուսահատվեն: Նա գրում է, որ խանի կարգադրության համաձայն ինքը պատվիրել է Դավիթ Զարուկին բանավոր հաղորդել մի շարք բաներ[2]: Պարզվում է, որ Դավիթ Զարուկը բանավոր պետք է հաղորդեր այն ամենը, ինչ վերաբերում էր Երևանի խանին: Նրա հաղորդումից, որ գրի է առնվում և ուղարկվում Գուդովիչին, երևում է, որ Մահմեդ խանը շտապ կերպով ուզում էր իմանալ ռուսների մտադրությունների մասին: Նա իր մոտ էր կանչել Գաբրիել Յուզբաշուն և հայտնել, թե Աղա Մահմեդ շահը իրեն կանչել է իր մոտ և եթե Գաբրիելը հուսալի բարեկամ ունի Թիֆլիսում, ապա թող նրա միջոցով իրեն տեղեկություններ հասցնի ռուսների մասին: Խանը ասում էր, որ եթե ռուսները նպատակ ունեն իրեն օգնել, ապա ինքը շահի մոտ չի գնա: Խանը խնդրում է այս մասին հաղորդել Հերակլ Բ-ին[3]:

1796 թ. փետրվարի 7-ին Հերակլը Գաբրիելի նամակները վրացերեն թարգմանությամբ ուղարկում է Պետերբուրգ՝ իշխան Ճավճավաձեին, որպեսզի նրանք ներկայացվեն ռուսական իշխանություններին:

Վերոհիշյալից պարզորեն երևում է, որ Երևանի խանը

[1] Грамоты..., т. II, вып. II, стр. 124.

[2] Նույն տեղում, էջ 125:

[3] Նույն տեղում:



չէր ցանկանում մնալ պարսից շահի տիրապետության տակ: Նա շատ էր վախենում Աղա Մահմեդ շահից և այս պատճառով խուսափում է իր մտադրությունների մասին գրավոր հաղորդելուց: Ռուսական երկու զորապետների Թիֆլիս հասնելը արդեն հույսեր էր տվել նրան, ինչպես և Երևանի հայերին, ուստի նրանք օգնություն են խնդրում: Սակայն այդ օգնությունը չէր կարող լինել: Ինչպես տեսանք, ռուսները թուրքերին չանհանգստացնելու համար չէին ուզում մտնել Երևանի խանության սահմանները, իսկ Հերակլը ի վիճակի չէր այդ անել իր թուլության պատճառով:

Մինչ Վրաստանից պատասխան ստանալը, Երևանի խանը ստիպված էր գնալ Աղա Մահմեդ շահի մոտ: Նա հարուստ նվերներ է պատրաստում, կաթողիկոսից էլ վերցնում է 200 թուման և 7 ջորի ու գնում Մուղանի դաշտ[1]: Շահը լավ է ընդունում Մահմեդ խանին, բայց, իհարկե, ոչ այն բանի համար, որ վերջինիս նախնիներն էլ Ղաջարներից էին, այլ որովհետև նա կամենում էր Արարատյան երկիրը վերջնականապես հանել վրացական տիրապետությունից և նրա տիրակալին մշտապես իրեն հնազանդվածների շարքում ունենալ: Նա խանին հաստատում է իր պաշտոնում և կարգադրում էր տալ նրանից վերցված պատանդները[2]: Այնուհետև նա խանի վրա պարտականություն է դնում վերադառնալուց անմիջապես հետո իրեն ուղարկել 100 ուղտ:

Երևան հասնելուց հետո խանը շահի այս պահանջը կատարելու համար 14 ուղտ էլ վերցնում է էջմիածնից[3]: Ղ. Կարինեցին ստիպված է լինում 1795 թ. դեկտեմբերի կեսերին ամեն Մահմեդ Վելի բեկի հետ նամակ ուղարկել Կարին և այնտեղ բնակվող մի հայ հարուստից՝ պարոն Հայրապետից խնդրել 10875 ղուրուշ՝ ուղտեր գնելու համար[4]:

[1] Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 89բ—90ա:

[2] Շահը նվերներ է ուղարկում կաթողիկոսին. «...առաքէ վասն կաթողիկոսի շնորհակալութեան հրովարտակս դպարգևս գիպակացս», Ղ. Կարինեցին ստիպված է լինում հրովարտակաբերին տալ 100 թուման (Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 90ա):

[3] Մատենադարան, ձեռ. № 4881, էջ 360բ:

[4] Նույն տեղում, էջ 357բ—358ա:

Ռուսական հրամանատարությունը շարունակում էր արշավանքի պատրաստությունները։ Որոշված էր սկսել այն 1796 թ. վաղ գարնանը։ Ռազմական գործողությունները սկըսվելու էին երկու կողմից՝ Կասպիականի ափից և Վրաստանից։ Կոմս Զուբովի զորքերը Կասպից ծովի ափերով շարժվելու էին դեպի հարավ և Բաքվում միանալու էին նավատորմի հետ։ Իսկ Վրաստանում եղած զորքը, որ երկու գումարտակից դառնալու էր կորպուս, պետք է գնար Ղարաբաղ, վերականգներ հայ մելիքներին իրենց իշխանության մեջ, օգներ շահի տիրապետությունից ազատվել ձգտող ադրբեջանական խաներին, որից հետո գալու է Քուռի ու Արաքսի միացման վայրը և այնտեղից կապ էր հաստատելու Վ. Զուբովի զորքերի հետ։ Երևանը Վրաստանին հպատակեցնելու գործը, արդեն հայտնի պատճառներով, թողնվում էր Հերակլ Բ-ին[1]։

Աշնանը ռուսական զորքերը շարժվելու էին դեպի հարավ՝ «Աղա Մահմեդ խանի իշխանությունը և ուժը ոչնչացնելու համար», իսկ նավատորմը դեսանտ էր հանելու Գիլանում՝ շահի եղբայր Մուրտազաղուլիին այնտեղ խան դարձնելու համար[2]։ Վերջինս գտնվում էր Ռուսաստանում և վայելում ռուսաց կառավարության վստահությունը։

Ինչպես երևում է, ռուսական արշավանքը մեծ փոփոխություններ էր մտցնելու Անդրկովկասի կյանքում։ Այնտեղ վերջնականապես վերացվելու էր պարսից կենտրոնական իշխանության ազդեցությունը և բացի այդ, հենց բուն Պարսկաստանում մեծ հարված էր հասցվելու շահին։ Այդ բանը ևս, վերջին հաշվով, մեծապես պետք է նպաստեր ռուսական իշխանության դիրքերի ամրապնդմանը Անդրկովկասում։ Արդեն տեսանք, որ ռուսական հրամանատարությունը թուրքերին չանհանգստացնելու համար չէր կամենում ռուսական զորքեր ուղարկել Երևանի խանություն, այլ առաջարկում էր այդ բանը անել Հերակլին։ Վերջինս, բավական երկար ժամանակ հանդիսանալով Երևանի խանի սյուզերենը, թուրքերի աչ-

[1] *Н. Дубровин*, История войны.... т. III, стр. 80. Տե՛ս նաև ЦГВИА, ВУА, д. № 2799.

[2] Նույն տեղում, էջ 81—82։



քում միանգամայն իրավասու էր նման միջոցների դիմել և նրանք դրա դեմ բողոքելու հիմք չէին կարող ունենալ։ Արդ, եթե ռուսական արշավանքը հասներ իր նպատակին, այն է՝ ոչնչացներ շահի ազդեցությունն ու իշխանությունը, այն ժամանակ, անշուշտ, Հերակլը հնարավորություն կունենար Երևանը կրկին իրեն հնազանդեցնելու։

Մինչ Ռուսաստանում արշավանքի պատրաստություններն էին գնում, Անդրկովկասում սկսվում են նոր կռիվներ։ 1796 թ. գարնանը Աղա Մահմեդ շահին լուր է հասնում, որ Խորասանում իր դեմ խռովություններ են սկսվել, այս պատճառով մարտ ամսի կեսերին նա թողնում է Մուղանի դաշտը և գնում այնտեղ։ Օգտվելով շահի բացակայությունից, Ղարաբաղի Իբրահիմ խանը որոշում է վրեժխնդիր լինել Գանձակի Ջավադ խանից, որը 1795 թ. արշավանքի ժամանակ մեծ ծառայություններ էր մատուցել ներքինի շահին։ Իբրահիմին է միանում նաև Ումմա խանը և նրանց զորքը պաշարում է Գանձակը։ Գանձակի վրա է արշավում նաև Հերակլ Բ-ի 3000 զորքը՝ արքայազն Ալեքսանդրի հրամանատարության տակ, բայց պարենի պակասի պատճառով վրաց զորքը ցրվում է։ Մայիս ամսին Գանձակի տակ մնում են ընդամենը հարյուր վրացական զինվորներ[1]։

Գանձակի պաշտպանները ծանր պայմաններում էին։ Նրանց շարքերը նոսրացնում էին սովն ու վարակիչ հիվանդությունները։ Շուտով Իբրահիմ և Ումմա խաները լուր են ստանում, թե Հերակլը 7000-անոց զորքով գալիս է Գանձակի վրա։ Չկամենալով հաղթության պտուղները կիսել նրա հետ, նրանք շտապ հաշտություն են կնքում Ջավադ խանի հետ և ռազմատուգանք վերցնելով հեռանում այնտեղից[2]։

Երբ Գանձակը պաշարված էր, Աղա Մահմեդ շահը իր դաշնակցին օգնելու համար կարգադրում է Երևանի և Նախիջևանի խաներին իրենց զորքերով օգնության գնալ Ջավադ խանին։ Խաները, չկամենալով պատերազմել, շատ դանդաղ են պատրաստություններ տեսնում և ճանապարհ են ընկ-

[1] Грамоты.... т. II, вып. II, стр. 152.

[2] Նույն տեղում։

նում այն ժամանակ միայն, երբ Ջավադ խանը արդեն պատանդներ և ռազմատուգանք էր տվել պաշարողներին[1]:

1796 թ. գարնանը կոմս Վ. Ա. Զուբովը ժամանում է Ղզլար, այնտեղ է գալիս նաև Հ. Արղությանը, որը հրավիրված էր արշավանքի ժամանակ ուղեկցելու կոմսին: Հ. Արղությանը Անդրկովկասի վերաբերյալ շատ խորհուրդներ է տալիս նրան և բացի այդ գրավոր զեկուցագիր է ներկայացնում, որով խնդրում է օգնություն ցույց տալ հայ ժողովրդին:

Ռուսական հրամանատարությունը արշավանքի ծրագրի մեջ փոփոխություններ է մտցնում, որոշվում է Վրաստան միաժամանակ նոր զորք ուղարկել, որովհետև Հերակլը չէր կարողանում նրանց ապահովել պարենով[2]: Հիմնական ուժերը կենտրոնացվելու էին Կասպից ծովի ափերին՝ Դերբենտ—Բաքու—Շամախի գծի վրա:

1796 թ. ապրիլի 18-ին ռուսական զորքերը դուրս են գալիս Ղզլարից և շարժվում դեպի հարավ: Մայիսի 10-ին նրանք գրավում են Դերբենդը: Հ. Արղությանը այնտեղ կոչ է գրում՝ ուղղված տեղական հայերին և Անդրկովկասի հայ բնակչությանը, որով հորդորում էր նրանց ամեն կերպ օգնություն ցույց տալ ռուսական զորքերին[3]: Շուտով ռուսներին են հանձնվում նաև Ղուբան ու Բաքուն: Հերթը հասնում է Գանձակին: Ռուսական զորքերի այս հաջողությունները պայմանավորվում են նաև այն բանով, որ այդ վայրերի ադրբեջանցի և հայ աշխատավորները մեծ աջակցություն են ցույց տալիս նրանց: Հայտնի է, որ Դերբենդը ռուսներին հանձնվեց քաղաքային բնակչության ճնշմամբ և որ Բաքվի բնակիչները ուրախությամբ ընդունեցին Վ. Զուբովի կոչը և կամավորապես քաղաքի դռները բաց արեցին նրա զորքերի առաջ:

1 Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, էջ 885: Այնուհետև Լեոն գրում է, թե դրանից հետո Աղա Մահմեդ շահը իր մոտ է կանչում Նախիջևանի Քյալբալի խանին և կուրացնում նրան: Սա ճիշտ չէ, Քյալբալի խանը, ինչպես կտեսնենք, կուրացվել է ոչ թե այս ժամանակ, այլ հաջորդ՝ 1797 թվականին:

2 *Н. Дубровин*, История войны, т. III, стр. 91.

3 ЦГВИА, ВУА, д. № 280, л. 3—4.



Դրական վերաբերմունք էին ցույց տալիս նաև այս շրջանների ադրբեջանական խաները[1]:

Ուշագրավ է, որ կոմս Զուբովի արշավանքի ժամանակ Հ. Արղությանը նամակագրական կապ է ունեցել մեծ զորավար Ա. Վ. Սուվորովի հետ և տեղեկություններ ուղարկել նրան այդ արշավանքի մասին: 1796 թ. գարնանը պարոն Գողասին (քաղ. Գրիգորիոպոլ) հասցեագրված Հ. Արղությանի նամակից երևում է, որ վերջինս Ա. Վ. Սուվորովին տեղեկություններ է հաղորդել Դերբենդի գրավման և այնտեղի հայերի՝ ռուսներին ցույց տված հավատարմության մասին. «...ծանուցանելն գրաֆ Սուվորովին կողմանցս ուրախութիւն, առումն Դարբանդու ամենայն պարագայիւք, զհաւատարմութիւն հայոցն ի Դարբանդ եղելոց»[2]:

Ռուսական արշավանքը նոր հույսեր է ներշնչում Երևանի խանին: Նա լուրջ մտադրություն ուներ Ռուսաստանի տիրապետությունն ընդունելու, որպեսզի գոնե դրանով կարողանա ազատվել շահի ճնշումներից: Նա Գաբրիել Յուզբաշու և Գ. Խուբովի միջոցով նամակագրական կապ է հաստատում կոմս Զուբովի հետ և հավատարմություն խոստանում նրան[3]: Գ. Խուբովը պատմում է, թե «Խանը ուզում էր անցնել Ռուսաստանի տիրապետության տակ, որպեսզի դրանով իր տիրույթները վտանգից զերծ պահի, որովհետև նա միշտ վախենում էր Մահմեդ շահի ճնշումներից»[4]:

1796 թ. մայիսի սկզբներին Աղա Մահմեդ շահը, Խորասանի ապստամբությունը ճնշելուց հետո, գալիս է Թեհրան և ամսի վերջին գնում Մազանդարան՝ այդ շրջանում իր իշխանությունը ամրապնդելու համար: Շուտով նա գրավում է Մեշեդը և կողոպտում այն: Հետո նա մի ջոկատ է ուղարկում Երևան, որովհետև կասկածում էր Երևանի խանի իրեն հավատարիմ լինելու վրա[5]: Պ. Գ. Բուտկովը գրում է, թե սրանից

1 Очерки истории СССР (XVIII в. вторая половина), стр. 763.

2 Մատենադարան, ձեռ. № 2951, էջ 101բ:

3 *Е. Хубов*, Описание дост. происшествий в Армении..., стр. 7.

4 Նույն տեղում:

5 *Н. Дубровин*, История войны.., т. III. стр, 170.

հետո Երևանի խանը ձերբակալվում է և կնոջ ու երեխաների հետ ուղարկվում Ղազվին[1]։ Որ շահը իսկապես ձերբակալել է խանին, ճիշտ է, բայց ոչ այս ժամանակ, այլ, ինչպես կտեսնենք ստորև, դրանից մեկ տարի հետո՝ 1797 թ. կեսերին։

Շահը կրկին փորձեր է անում անդրկովկասյան տիրողներին ռուսների դեմ հանելու համար։ Այդ նպատակով Անդրկովկաս է ուղարկվում Ասկեր խանը։ Վերջինիս հրահանգված էր համոզել Շաքիի, Շամախու և Գանձակի խաներին, որպեսզի նրանք ռուսներին հրապուրեն Արաքսից հարավ՝ Արդեբիլի շրջակայքը։ Այստեղ նրանց վրա ճակատից հարձակվելու էր ինքը՝ շահը, թիկունքից հարվածելու էին Երևանում եղած զորքերը, իսկ Շամախու, Շաքիի ու Գանձակի խաները հարձակվելու էին աջ թևից[2]։

Սակայն, շահի այս պլանները չէին կարող իրագործվել, որովհետև խաները գերադասում էին բանակցությունների մեջ մտնել ռուսների, քան թե արյունարբու ներքինի շահի հետ։

Հերակլ Բ-ը շարունակ շտապեցնում էր ռուսներին։ Նա հունիս ամսին նամակ է գրում ռուսաց հրամանատարությանը և հայտնում, թե ինքը չի կարող իր ուժերով Գանձակը գրավել։ Նա գտնում է, որ Գանձակի գրավումը պետք է հետաձգել աշնանը, որովհետև այն վճռող է հանդիսանալու նաև Երևանի համար։ Կոմս Վ. Զուբովը հայտնում է նրան, թե Գանձակի գրավումը մտնում է ռուսական պլանների մեջ, իսկ Երևանի գրավումը թողնվում է Հերակլին, որովհետև ռուսական զորքերի մերձեցումը թուրքական սահմաններին ձեռնտու չէ Ռուսաստանին[3]։ Սրան Հերակլը պատասխանում է, թե ինքը չի կարող պարսիկներին Երևանից վռնդել, որովհետև ռուսական զորքերը հեռու են և ինքը այդքան ուժեղ չէ[4]։

Երբ Հերակլի համաձայնությամբ իշխան Ճավճավաձեն Երևանի հայերի նամակը ուղարկում է Զուբովին, ապա վերջինս նորից հայտնում է, թե Հերակլը ինքը թող միջոցներ

[1] П. Бутков, Материалы..., т. II, стр. 428.

[2] Н. Дубровин, История войны, т..., III, стр. 170.

[3] Նույն տեղում, էջ 175։

[4] Նույն տեղում, էջ 177։



ձեռք առնի պարսիկներին Երևանից վռնդելու համար։ Կոմս Վ. Զուբովի կարծիքով այդ գործը վրացիների համար դժվար չէր կարող լինել, որովհետև երևանցիները իրենք ևս ուզում էին ազատվել պարսիկներից և կօգնեին Հերակլին։ Իսկ ռուսների օգնությունը լինելու էր այն, որ նրանք Գանձակի կողմից պետք է ապահովեին Վրաստանի պաշտպանությունը և հնարավորություն տային Հերակլին Երևանը գրավելու[1]։

Կոմս Վ. Զուբովը 1796 թ. աշնանը օգնություն է ստանում Ռուսաստանից և նոյեմբեր ամսին մի զորաջոկատ գեներալ Ս. Մ. Ռիմսկի-Կորսակովի հրամանատարությամբ ուղարկում է Գանձակի վրա։ Այնտեղ էին շարժվելու նաև Թիֆլիսում եղած ռուսական զորքերը։ Քաղաքը գրավելուց հետո նրանք, ինչպես գիտենք, պետք է միանային ու գնային Քուռի ու Արաքսի խառնվելու վայրը, ուր նրանց էր սպասելու Վ. Զուբովը՝ զորքերի հիմնական մասով։

Գեներալ Ռիմսկի-Կորսակովի զորամասը արշավանքի ընթացքում մեծ դժվարությունների է հանդիպում և չէր կարողանա ժամանակին տեղ հասնել, եթե նրանց չօգներ տեղական հայ բնակչությունը։ Հայ գյուղացիները, որ մեծ սպասելիքներ ունեին այդ արշավանքից՝ նրանից էին սպասում մահմեդական տիրապետությունից իրենց ազատագրումը. Հ. Արղությանի առաջարկով օգնության են հասնում ռուսներին. նրանք պարեն են տալիս և իրենց սայլերով տեղափոխում նրանց իրերը[2]։

Դեկտեմբերի 13-ին Գանձակի Ջավադ խանը քաղաքը հանձնում է ռուսներին։ «Վրաց պատմության» Ա մասում ասվում է, թե Գանձակի գրավումից հետո «...Երևանում, Հերակլ թագավորի օգնությամբ, հաստատվում է նրա դրածո և Աղա Մահմեդ խանի թշնամի Մահմեդ խանը և Երևանի խանությունը նորից դառնում է Վրաստանի հարկատու»[3]։

Վերջերս հրատարակված «ՍՍՌՄ պատմության ուրվագծեր»-ում նույնպես ասվում է, թե Գանձակի հպատակեցման

[1] Н. Дубровин, История войны..., т. III, стр. 181.

[2] Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, էջ 894։

[3] История Грузии, ч. I, Тбилиси, 1950, стр. 444.

հետ միաժամանակ վերականգնվեց նաև Երևանի խանության կախվածությունը Վրաստանից[1]: Այս պնդումները զուրկ են որևէ հիմքից:

Մենք արդեն տեսանք, որ Երևանում բերդապահ էր կարգվել Թավաքյալի խանը իր զինվորներով և հսկողության տակ էր վերցրել Մահմեդ խանին: Բացի դրանից, դեռ նախքան կոմս Զուբովի Մուղանի դաշտ հասնելը, շահը Երևան էր ուղարկել իր եղբայր Ալիղուլի խանին՝ քաղաքը պաշտպանելու և այնտեղի «խռովարարներին» ճնշելու համար[2]: Այս բանը արվում էր Երևանում ռուսական տիրապետության տակ անցնելու ուժեղացող ձգտումներին արգելք հանդիսանալու համար: Հավանորեն, հայտնի էին դարձել Երևանի խանի կապերը ռուսաց հրամանատարության հետ և նա այլևս վստահություն չուներ շահի մոտ: Այդ անվստահությունն էր պատճառը, որ շահը, այս դեպքերից շատ չանցած, իշխանությունից զրկեց Երևանի խանին և բանտարկել տվեց Պարսկաստանում: Այնպես որ, Գանձակի գրավումից հետո Երևանում չվերահաստատվեց վրացական գերիշխանությունը, այն դեռևս մնում էր շահի տիրապետության տակ, իսկ Երևանի Մահմեդ խանը դեռ չէր կորցրել իր հույսերը ռուսաց օգնության մասին և ինչպես կտեսնենք ստորև, շարունակում էր դիմումներ անել Հերակլ թագավորին և ռուսաց հրամանատարությանը՝ խնդրելով օգնել իրեն ազատվելու պարսից շահի լծից:

Գանձակի գրավումից հետո սուրհանդակներ են գալիս Ռուսաստանից և ռուսական գնդերին ետ դառնալու հրաման բերում: 1796 թ. նոյեմբերի 6-ին մահացել էր Եկատերինա Բ-ը և նոր կայսր Պավել Ա-ը, կամենալով իր ուշադրությունը նվիրել եվրոպական գործերին, չէր ցանկանում շարունակել այդ արշավանքը:

Ռուսական զորքերի հեռանալը ծանր հարված էր անդրկովկասյան ժողովուրդների և մասնավորապես հայերի հա-

[1] Очерки истории СССР (XVIII в., вторая половина), стр. 735.

[2] *Е. Хубов*, Описание дост. происшествий в Армении..., стр. 8.



մար, որովհետև նրանք ժամ առ ժամ սպասում էին նրանց: Վշտացած էր նաև Դ. Կարնեցին, որը այդ օրերին Շ. Շահամիրյանին գրել է հետևյալը.

«...առ տարաբախտութեան մերոյ՝ օրհասին մահու ժամանեալ յիշեցելոյ մեծի կայսերուհւոյն, խափանեցաւ գործն օգտակարագոյն աշխարհի, ըստ որում հարազատն նորին նորապսակ յաջորդն դարձ առնել ետ զօրացն՝ զամենայն, ընդ ձեռամբ արկեալսն թողլով հնոց տիրողացն աւերչաց[1]»:

Կաթողիկոսը փրկություն հուսալով ռուսներից, այնուամենայնիվ, չէր մոռացել պարսից շահի հարձակման վտանգը և նախազգուշական միջոցներ էր ձեռք առել: Նա ռուսների Գանձակում եղած ժամանակ, շահի վեզիր Հաջի Իբրահիմ խանի խորհրդով, Դավիթ և Հովհաննես վարդապետներին թանկարժեք նվերներով ուղարկում է շահի մոտ, հայտնում է նրան իր հպատակությունը և հրովարտակ խնդրում նրանից: Շահը վարդապետներին «...հաճութեամբ ընկալեալ խիլայիւք և հրովարտակաւ միամտութեան դարձուցանէ անդրէն[2]»:

1796-ը ծանր տարի էր ողջ Անդրկովկասի համար: Աղա Մահմեդ շահի սարսափելի արշավանքի հետևանքները ծայրահեղ թշվառության հասցրին այնտեղի ժողովուրդներին: Հատկապես դժվարին էր Ղարաբաղի, Սյունիքի ու Գանձակի բնակիչների վիճակը: Անողոք սովը հնձում էր նրանց շարքերը, ստիպում էր մի կտոր հացի համար վաճառել իրենց զավակներին և հեռանալ հայրենի վայրերից: Այդ ծանր դրության սրտաճմլիկ նկարագրություն է թողել Վարդան Օձնեցին:

«Եւ ի սոյն 1796 ամի սկիզբն եղև սաստիկ սովոյ աշխարհին Աղուանից, Արցախայ, Սիւնեաց և Գանձակայ, քանզի ասպատակ զօրաց Մահմադ շահի այրեալ էին զարմտիս երկրին, և զնորաբոյս արտորայս կերակուր արարեալ երիվարաց իւրեանց, և զայլս ամբակալս ապառեալ: Այնքան սաստկացաւ սովն ի յիշեալ տեղիս մինչև պակասեալ սուրբ անասնոց, ուտէին զանսուրբ կենդանիս, և բազումք վաճառէին ի պէտս հացի զզաւակունս իւրեանց, այլք կթուցեալք և նուա-

[1] Դիւան, հ. Ա—Բ, էջ 30—31:

[2] Նույն տեղում, էջ 31:

դնալք ի սովոյ քաղլափոխել ոչ կարէին, այլ անկեալ ի ճանապարհի զոգիս փչէին, և շատք ի հեռաւորս գաղթէին, վասն այնորիկ ցիրուցան եղեն ամենայն բնակիչք աշխարհին այնմիկ, բազումք ի հայոց և սակաւք ի տաճկաց անցին ի Վրաստան, ի Սոմխէթ, յԵրևան, ի Կարս և յաշխարհն Սարմատացւոյ՝ ի Մօզդօք և ի Ղզլարն»[1]։

Հեղինակի այս տողերը միանգամայն ճշմարտապատում են, նա հետագայում անձամբ տեսել է այդ գաղթականներից ոմանց և լսել նրանց պատմությունը՝

«Ի գաղթելոց անտի տեսաք մեք զոմանս, որք պատմեցին մեզ զաստկութենէ սովոյն, որք վաճառեալ էին ի ծնողաց իւրեանց ի Վրաստուն վասն հացի, զի մէկ անձն արու պատանեակ վաճառեալ էր երեսուն հօխայ կորեկի, զոր յաւուրս մեր գնողն վաճառեաց այլում երեք հարիւր մանէթ արծաթի...»[2]։

Հ. Արղությանը Թիֆլիսից գրում է, թե բնակչությունը տառապում է սովից և որ մարդիկ մի կտոր հացի համար վաճառում են իրենց զավակներին, հավատափոխ լինում[3]։

Ծանր էր նաև Արարատյան երկրի վիճակը։ Այստեղ ևս զգացվում էր պարենի պակաս։ Բացի դրանից, բնակչությունը նեղվում էր արտասովոր ձմռան խիստ ցրտերից։ Ղ. Կարնեցին 1797 թ. փետրվարի 14-ին գրել է.

«Իսկ զորպիսութեանց կողմանցս և մեր մինչ հարցեալ էիր, այսպէս գիտասցես։ Որպէս քանիցս գրեալ եմք, կան ամենեքեան յողորմելութեան յահ և յերկիւղ փակեցեալ, պահանջմունքն և զրկանքն յարակայեալ և սղութիւն ցորենոյ և այլ բարեաց, որ լիտրն Լ փարայ է այսօր և ձմեռն խստագոյն»[4]։

Երևանի խանը, կամենալով կրկին վաստակել շահի վստահությունը, իր պաշտոնյաներից մեկին ուղարկում է նրա մոտ։ Նա շահին ընծաներ ուղարկելու համար

1 Մատենադարան, ձեռ. № 4331, էջ 91բ—92ա։

2 Նույն տեղում, էջ 92ա։

3 Նույն տեղում, ձեռ. № 2951, էջ 121բ։

4 Նույն տեղում, ձեռ. № 4501, էջ 406բ։



որոշ բաներ էլ պահանջում է կաթողիկոսից՝ «...զծանրագոյն պահանջմունս արար ի մէնջ ընծայ շահին», գրում է Ղ. Կարնեցին[1]։ Բայց վերջինս մերժում է՝ պատճառաբանելով, թե իր կողմից ևս մարդ է գնալու շահի մոտ և նվերներ է տանելու։ Այսուհանդերձ, կաթողիկոսը շատ վախենում է՝ «Ուստի և ի սաստիկ կասկածի էաք, թէ ո գիտէ դառնալն զինչ ցաւս է բերելոց մեզ»[2]։

Երևանի խանի ներկայացուցիչը վատ ընդունելություն է գտնում շահի մոտ և ետ է վերադառնում։ Նրա գալուց հետո Շիրազի խան Հաջի Իբրահիմը, ինչպես նաև Թավրիզում սարդար նշանակված Ջաֆարղուլի խանը Ղ. Կարնեցուն նամակ են գրում՝ հուսադրությամբ, թե շահը բարեկամաբար է տրամադրված կաթողիկոսի նկատմամբ։ Նրանք հայտնում են, որ նա կարող է մարդ ուղարկել շահի մոտ[3]։

Մինչ այդ կարվեր, Երևանի խանը նոր պարտավորություններ է դնում բնակչության վրա։ Կաթողիկոսը պատմում է.

«Այս Երևանու լէրբքն զձ թումանի չափ դրամ պահանջեցին յողորմելի գիւղացւոց մերոց՝ թող զմաղթայն, և թող զայլևայլ պահանջմունս, որոյ աղագաւ գնացաք յԵրևան, և ի խօսիլ ընդ խանին՝ նա բաշխեաց, իսկ նազիրն զաձ թումանն միայն եթող և զայլն պահանջեց և որչափ ինչ գըլխացաւութիւն կրեցաք, օգուտ չեղև»[4]։

Ի լրումն այս ամենի, Ալիղուլի խանը հրաման է արձակում Արարատյան երկրից իրեն համար հայ օրիորդներ հավաքել։ Իմանալով այս մասին, Ղ. Կարնեցի կաթողիկոսը կարգադրում է 8 տարեկանից վեր բոլոր աղջիկներին ամուսնացնել և երբ խանի ծառայողները կամենում են իրագործել նրա հրամանը՝ Երևանի խանության մեջ խանին տանելու օրիորդ այլևս չէր մնացել[5]։

1 Մատենադարան ձեռ. № 4501, էջ 407ա։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

5 Մ. Սմբատեանց, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմէօնէ մինչ ցՅովհաննէս, Մոսկուա, 1876, էջ 9։

Ղ. Կարնեցին ընծաներ է պատրաստում և Դավիթ ու Հովհաննես վարդապետների ձեռքով ուղարկում շահին, միաժամանակ նամակ է գրում նրան՝ հուսով «...զի քաղցրացուսցէ զսիրտ բռնաւորին, որ զխնդիրսն մեր անտես չարարեալ, սաստեսցէ երեւանցւոց՝ ձեռն քարշել ի մէնջ»[1]:

Աղա Մահմեդ շահը այս ժամանակ մեծ պատրաստություն է տեսնում Անդրկովկասի վրա կրկին հարձակվելու համար: Այդ նպատակով նա զենք և զորք է պահանջում Երևանի խանից: Ղ. Կարնեցին 1797 թ. փետրվարի 14-ին գրել է.

«...շահն ի մեծի պատրաստութեան է, որ սակս և այժմ կրկին Ջ թնդանօթս և Դ ռոմբարայս և Ռ գնդակս է խնդրեալ տանիլ ի Դավրէժ, ուր և ինքն ի գարնանամտին իւրեանց գալոց է ճակատիլ ընդ յարուցելոցն: Խնդրեալ է և զխանն մեր Ռ հեծելովքն երկրիս: Ահա որս եթէ լուրպխի տառապանս կան բնակիչքն երկրիս, խոհեմութեամբդ կարես իմանալ»[2]:

Գ. Խուբովը գրում է, որ շահը կարգադրել է խանին ուղարկել 12 թնդանոթ և ինքը իր գանձերով Նովրուզին շտապել մայրաքաղաք[3]:

Մահմեդ խանը, որ 1797 թ. հունվարին ոմն Մատթեոսի ձեռքով խնդրանք էր ուղարկել կոմս Զուբովին՝ իրեն օգնելու մասին, բայց մերժում էր ստացել, նորից փորձ է կատարում ռուսներից օգնություն ստանալու համար: Նա 25 հոգու ուղեկցությամբ Գևորգ Խուբովին ուղարկում է Թիֆլիս՝ Հ. Արղությանի մոտ և խնդրում, որպեսզի վերջինս համոզի Հերակլ թագավորին և գեներալ Ռիմսկի-Կորսակովին պաշտպանելու իր երկիրը Աղա Մահմեդ շահից: Նմանօրինակ խնդրանքով Նախիջևանցի հայ Մակար Մելիքովի միջոցով ռուսներին էր դիմել նաև Նախիջևանի Քյալբալի խանը[4]:

Ռուսական զորքերը, որ հրաման էին ստացել հեռանալ

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 407ա:

[2] Նույն տեղում:

[3] *Е. Хубов*, Описание дост. происшествий в Армении..., стр. 9.

[4] Նույն տեղում, էջ 9—10:



Անդրկովկասից, չէին կարող անել այդ, իսկ Հերակլը շատ թույլ էր: Այս է պատճառը, որ խաների խնդրանքը նորից մերժվում է:

Գ. Խուբովը անմիջապես պատասխան է ուղարկում խանին, որպեսզի նա ենթարկվի շահի կարգադրություններին: Շատ չանցած Երևանի և Նախիջևանի խաները հարուստ նվերներով գնում են շահի մոտ, որը նրանց մեղադրում է դավաճանության մեջ և պատժի ենթարկում: Խուբովը գրում է, թե նա սպանել կտար Երևանի խանին, եթե նրա մեծավորներից մի քանիսը գթություն չխնդրեին նրա համար: Նա կուրացնում է Քյալբալի խանին, իսկ Երևանի խանին բանտարկում է[1]: Խանի գույքը հարքունիս է բռնագրավվում[2]:

Պարզվում է, որ խանի գույքի մի մասը պահված է եղել Էջմիածնում, ուստի Ղ. Կարնեցին, որ այդ ժամանակ Երևան էր եկել Ալիղուլի խանին դիմավորելու, ետ է դառնում Էջմիածին:

«...պատճառն դարձման մերոյ, թէ յատուկ մուպաշիր էր եկեալ ընդ սարտարին վասն ընչից մեր խանին, որ ի շահէն կալանաւորեցեալ էր, և զի առ մեզ են գոյք աւանդք խանին, դարձաք զի զայնս յանձնեսցուք մուպաշիրին» — գրում է նա[3]:

Ալիղուլի խանը նվերի կարգով մի մեծ դրամագլուխ

[1] *Е. Хубов*, Описание дост. происшествий в Армении..., стр. 10—11.

[2] Ըստ Ռուսաստանում վրաց դեսպան Գ. Ճավճավաձեի՝ 1797 թ. մայիսի 16-ին Վրաստանից ստացած մի գրության, շահը Երևանի խանից պահանջում է 500.000 ռուբլի, սպառնալով չտալու դեպքում նրան կախել: Վերջինս կանխիկ տալիս է 200.000 ռուբլի, իսկ մնացածի համար փախցնում իր ունեցվածքը (Грамоты... т. II, вып. II, стр. 163): Այնուհետև ասվում է, թե Նախիջևանի Քյալբալի խանը կուրացվում է և սպանվում: Այս վերջին տեղեկությունը ճիշտ չէ: Քյալբալի խանը չի սպանվում, այլ կուրացվելուց հետո բանտարկվում է: Հետագայում նա վերադառնում է Նախիջևան, իսկ այնտեղից էլ շատ չանցած գալիս է Երևան, ուր հյուրընկալվելով իր բարեկամ Մահմեդ խանի կողմից, ակտիվորեն մասնակցում է նրա գործերին: Հայտնի է, որ 1800 թ. նա է գլխավորել Շորագյալի վրա հարձակում գործած Երևանի խանի զորքը (տե՛ս АКАК, т. I, стр 158).

[3] Մատենադարան, ձեռ. № 4481, էջ 500բ:

է պահանջում կաթողիկոսից, վերջինս գնում է Երևան, 38 օր մնում է այնտեղ, աշխատելով գոնե մի քիչ պակասեցնել գումարը, բայց չի հաջողվում և «սամսամ» (պարտամուրհակ) տալով ետ է գալիս[1]:

Արարատյան երկրի վիճակը նորից մնում էր շատ ծանր: Ղ. Կարնեցին 1797 թ. մայիսի 5-ին գրել է.

«Իսկ կացութիւն երկրիս յանցեալն և ներգենիս ի զանազան հարկապահանջութեանց և ի պէս-պէս ծանր գործառնութեանց՝ ի սաստիկ սղութենէ հացի և ամենայն պիտոյից, ի յետին դառնութիւն, չքաւորութեան ժամանել՝ յոգիս են ապաստան և կասկածանօք ապառնի վտանգից թախծիմք առհասարակ»[2]:

Մի այլ տեղ նա ապրիլի 25-ին գրել է.

«Եւ ահա հազարաւոր գերեդարք պատեալ են զմեօք և չիւարեցուցանեն զմեզ միշտ, յառաջ մինչ փարձանաւորքըն սակաւք էին և ի քանից միայն կենդակ տայաք՝ ազգն մեր բողոք բառնայր. այժմ հազարաւորք և բիւրաւորք են, զի՞նչ արասցուք և ազգն զորն հոգասցէ, մինչ ինքեանք ևս յամենայն տեղիս նեղեալք են»[3]:

Այս պայմաններում էր Արարատյան երկիրը, երբ Աղա Մահմեդ շահը, օգտվելով ռուսական զորքերի հեռանալուց, 1797 թ. գարնանը նոր արշավանք է սկսում անդրկովկասյան երկրների դեմ: Նախօրոք մի նամակ ուղարկելով Հերակլ Բ-ին, որով պահանջում էր հնազանդվել իրեն, շահը Խուդափերինի կամուրջով անցնում է Արաքսը և շարժվում դեպի Շուշի:

Իբրահիմ խանը այլևս հնարավորություն չունենար դիմադրելու, ուստի մի քանի բեկերի հետ միասին փախչում է Դաղստան, ճանապարհին՝ Թարթար գետի մոտ պարտության մատնելով իր ետևից շահի ուղարկած 2000 հեծյալներին:

Աղա Մահմեդ շահի զորքերը գրավում են Շուշին և

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 459բ:

[2] Նույն տեղում, ձեռ. № 2922, էջ 33ա:

[3] Նույն տեղում, ձեռ. № 4501, էջ 455ա:



հաստատվելով այնտեղ, անարգել սկսում են թալանել և ավերել Ղարաբաղը: Երկար կտևեր այդ վիճակը, եթե 1797 թ. մայիսի կեսերին իր պալատականների ձեռքով չսպանվեր ներքինի շահը: Դրանից հետո պարսից զորքը խառնիճաղանճ խմբերով հեռանում է դեպի Պարսկաստան, ուր պայքար է սկսվում իշխանության համար:

Շահի սպանության մասին Ղ. Կարնեցին տեղեկանում է Հերակլ Բ-ի նամակից, որը Էջմիածին էին բերել Ութրուր բեկն ու մելիք Շաքարոն: Իր պատասխանում (գրված 1797 թ. հունիսի 30-ին) կաթողիկոսը ուրախություն է հայտնում, որ վերջապես իրենք ազատվեցին այդ հրեշի բռնություններից[1]:

Այս ժամանակ է, որ Ղ. Կարնեցին հնարավորություն է ունենում շնորհավորելու Պավել Ա-ի կայսր դառնալը և նրանից հրովարտակ խնդրում[2]:

Իր նամակի մեջ, որ թվագրված է՝ 20 հուլիսի 1797 թ., Ղ. Կարնեցին սկզբում նկարագրում է հայերի դառն վիճակը, որոնք ընկել են խիստ և անօրեն թշնամիների ձեռքը՝ թշնամիներ, «յորոց խռովութիւնք քան թէ խաղաղութիւն և չարիք, քան թէ բարիք յառաջանան միշտ»: Հայերից շատերը սրի են քաշված, ոմանք գերի են տարվել, իսկ մնացածները դառն աղքատության մեջ են: «Տիրողք, — գրում է նա, — խաբեբայք, իշխանքն գողակիցք գողոց և հարկահանք ճաքաղարարարքն»: Քանի որ իրենց տիրողները իրենց թշնամիներն են, ուստի և հայերը արժանի չեն համարում նրանց համար աղոթել և հայկական պետականության անկումից հետո եկեղեցին «յաւուրն երիցս և չորիցս անգամ» ժամերգություն է կատարում ի պատիվ քրիստոնյա թագավորների և իշխողների: Բայց հայերը առավել ես պարտական են աղոթել ռուսական թագավորության համար, որը մոտ լինելով

[1] Մատենադարան, ձեռ. № 2922, էջ 33բ:

[2] Տե՛ս «Թուղթ առ Պաւլ Պետրովիչ կայսրն ռուսաց, ի շնորհաւորութիւն կայսերութեան և ի խնդիր, զի որպէս մայրն իւր Կատարինէ կայսրուհին հրովարտակ էր շնորհեալ Սիմէօն կաթողիկոսին, նոյնպէս և ինքն շնորհեսցէ մեզ այժմ» (Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 408ա—409ա):

նրանց վշտակոծ երկրի սահմաններին, միշտ ողորմած և խնամածու է եղել իրենց համար: Պետրոսի ժամանակներից սկսած մինչև Եկատերինա Բ-ը հայերը ռուսների կողմից «գտել են զառատապէս շնորհս մարդասիրութեան և զապահովութիւն կենաց իւրեանց»: Եվ այժմ, կաթողիկոսը շնորհավորում է Պավել Ա-ի գահակալությունը և խնդրում հրովարտակ տալ «...զի որպէս յայլ տէրութիւնս եղելոց ազգին հայոց հոգևորական հոգաբարձութիւն ընդ մեզ է, նոյնպէս և յԱստուածապահ երկրիդ Ռուսաց գտանելոց ամենայն մերազնէից ըստ հոգևորին կառավարութեան իշխանութիւն ընդ մեզ լիցի[1]»:

Իր արտահայտությունների մեջ միշտ զգույշ և չափավոր Ղ. Կարնեցու վերոհիշյալ տողերը լավագույն վկայությունն են այն մեծ հույսերի, որ ունեին հայերը ռուսների նկատմամբ: Կյանքի փորձը համոզել էր նրանց, որ բոլոր քրիստոնյա թագավորների և իշխանների մեջ իրենց առավել ևս պարտական են ռուսական թագավորին, որովհետև միայն նա կարող էր «ողորմած և խնամածու» լինել իրենց նկատմամբ:

## Դ. ՆՈՐ ԿՌԻՎՆԵՐ

Աղա Մահմեդ շահի սպանությունից հետո պարսից զորքերից մի քանի հարյուր մարդ Շուշիից գալիս են Երևան՝ Ալիղուլի խանի մոտ, որը իր եղբոր սպանության լուրն առնելուց ի վեր փակվել էր Երևանի բերդում[2]: Ստանալով այդ ակամա համալրումը, Ալիղուլի խանը, ինչպես գրել է

[1] Այս կոնդակի հետ մեկտեղ կաթողիկոսը նամակ է ուղարկում Պետերբուրգ՝ Հ. Լազարյանին, որպեսզի նա Հ. Արղությանի հետ գնա կայսրի մոտ. «...ի մատուցանելն զթուղթն մեր՝ զոր ինչ խօսելին իցէ, օժանդակելով նմա ի միասին խօսեսջիք, և զամենայն կրեալ ցաւս մեր պատմեսջիք և խնդրեսջիք յողորմածութենէ նորին կայսերական մեծութեան՝ շնորհել մեզ զհրովարտակ ողորմութեան...» (Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 409բ—410ա): Նույն բովանդակությամբ նամակներ է ուղարկում նաև Պետերբուրգում բնակվող Մարգար Մանուչարյանին (Նույն տեղում, էջ 410ա—410բ), ինչպես և Պլատոն և Գաբրիել արքեպիսկոպոսներին (տե՛ս ձեռ. № 2922, էջ 34ա—34բ):

[2] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 459բ:



Ղ. Կարնեցին 1797 թ. սեպտ. 15-ին. «...ոգի առեալ և ես սկըսայ զժանտութիւն ի գործ արկանել առ քաղաքացիսն և առ մեզ՝ պահանջմունս առնելով»[1]:

Երևանցիների համբերությունը սպառվել էր. նրանք զինված դուրս են գալիս խանի դեմ և պահանջում հեռանալ քաղաքից: Ալիղուլին իր կողմնակիցների ու զորքերի հետ թողնում է Երևանը և ուղղվում դեպի Պարսկաստան: Նա հույս ուներ տեր դառնալ իր եղբոր գահին: Բայց դա նրան չհաջողվեց: Թեհրանի Միրզա Մահմեդ խանը նրան չի թողնում մտնել մայրաքաղաք, մինչև որ Աղա Մահմեդ շահի եղբոր որդի Բաբա խանը (Ֆաթալի խան) գալիս է Շիրազից և շահ հռչակվում: Ալիղուլի խանը ձերբակալվում է և Ֆաթալի շահի հրամանով կուրացվում[2]:

Ալիղուլի խանի Երևանից հեռանալուց մի քանի օր հետո, Մակուի սուլթանի որդի Հասան խանը, որ դեռևս Աղա Մահմեդ շահի կողմից կարգվել էր Երևանի խանության շահվեքիլ (կառավարիչ), գալիս է Երևանի մոտ և պահանջում թույլ տալ իրեն մտնել ամրոցը: Երևանցիները մերժում են նրան և խանը գնում է Նախիջևան՝ զորք բերելու[3]: Երևանցիները նամակ են գրում Հերակլի որդի Ալեքսանդրին, որն այն ժամանակ Ղազախում էր, և օգնություն խնդրում: Ալեքսանդրը մի քանի հարյուր մարդով շարժվում է դեպի Երևան: Բայց մինչ այդ, Հասան խանը Նախիջևանից բերված զորքերով հարձակվում է Երևանի վրա: Նրան են միանում նաև Այրումլու քրդերը: Երևանցիները չեն կարողանում պատշաճ դիմադրություն ցույց տալ, նրանց կողմնակից մուղանցիները վճռական պահին փախուստի են դիմում և նրանք հարձակվողների բարկությունը ավելի չգրգռելու համար հանձնում են բերդը: Դրանից հետո ամենքը «...կամայ և ակամայ հնազանդեցան, մեք ևս գնացաք ի տեսութիւնս», գրում է Կարնեցին[4]:

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 459բ:

[2] Նույն տեղում, էջ 559բ—460ա:

[3] Նույն տեղում, էջ 459բ:

[4] Նույն տեղում, էջ 460բ:

Ալեքսանդր արքայազնը, երբ հասնում է Ղըրխբուլաղ, ամեն ինչ արդեն վերջացած էր: Նա երեք օրով ուխտ է գալիս Էջմիածին և ապա ուղևորվում ետ[1]:

Հասան խանը Երևանում իշխում է ընդամենը մեկ ամիս և այդ ընթացքում նորանոր հարկեր դնում առանց այդ էլ վերջին աղքատության հասած բնակչության վրա:

Ֆաթալի շահը Պարսկաստանում իր տիրապետությունը ամրապնդելուց հետո, հաշվի առնելով երկրի հյուսիսային սահմանները ամրապնդելու գործը, որոշում է Երևանի Մահմեդ խանին ազատ արձակել: Գ. Խուբովը գրում է, թե Երևանի խանը պետք է տարեկան շահին վճարեր 80000 ռուբլի[2]: Բաց են թողնվում նաև Խոյի Ջաֆարղուլի և Նախիջևանի Քյալբալի խաները: Շահը Մահմեդ խանին, իբրև պահապաններ, տալիս է մի քանի հարյուր մարդուց բաղկացած զորք[3]:

Շուտով Երևան և Էջմիածին են հասնում Մահմեդ խանի նամակները, ուր գրված էր նրա վերադառնալու մասին: Լսելով այս, Հասան խանը 1797 թ. սեպտեմբերի 15-ին դուրս է գալիս Երևանից և հեռանում Մակու[4]:

Երևանի խանին դիմավորելու համար մեծ բազմություն է հավաքվում, բայց շահի ուղարկած զինվորների մեջ, որ գալիս և մտնում են բերդը, նա չկար[5]: Ջաֆարղուլի խանը, որին շահը նշանակել էր Խոյի սարդար, չի թողնում Երևանի խանին շարունակելու ճանապարհը: Խոյը այն ժամանակ շատ ծանր վիճակում էր, ամեն կողմից շրջապատված էր թշնամիներով: Ղ. Կարնեցին, դեռևս Հասան խանի Երևանում եղած ժամանակ, գրել է.

«Յաղագս Խոյու եւ սոեն, թէ զքաղաքն դատարկեալ ի հարստութենէն՝ բնակիչքն իբրև ի վերայ փշոյ նստեալ կան յերկիւղէ Սառըղ խանին և Սառըղ խանն ունի զճանապարհն

1 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 459բ:

2 Е. Хубов, Описание дост. происшествий в Армении..., стр. 13.

3 Մատենադարան, ձեռ. 4501, էջ 460ա:

4 Նույն տեղում, էջ 459ա:

5 Նույն տեղում, ձեռ. № 2922, էջ 41բ:



Արարատեան, որոյ եղբայրն ևս ի Թարվէզ նստեալ կայ: Ինքըն Աստուած բարերարն այս բռնաւորացն օգնականութիւն տացէ, զի ողորմելի աշխարհս այս սակաւ մի անդորրասցի»[1]:

Ջաֆարղուլի խանը Երևանի Մահմեդ խանին պահելով Խոյում, ցանկանում էր նրա օգնությամբ հարձակումներ կատարել իր թշնամիների վրա: Մահմեդ խանից նա պահանջում է 500 զինվոր[2]: Վերջինս կատարում է այդ: Եվ երբ Երևանից Խոյ է հասնում զորքը, միասին հարձակվում են Սառըղ խանի վրա, մեծ վնասներ հասցնում, թալանում նրա ունեցվածքը[3]:

Երևանի խանության աշխատավոր բնակչությունը մեծապես տուժում էր այդ արշավանքներից ու կռիվներից: Իրենց հարկային ծանր պարտավորությունները կատարելուց զատ, նրանք ստիպված էին հոգ տանել նաև արշավանքների հետ կապված ծախքերի համար: Բացի դրանից, նրանք ենթարկված էին նաև Արարատյան երկրում անպատիժ շրջող ավազակների մշտական հարձակումներին: Այս ամենին ավելանում են նաև հիվանդությունները: 1797 թ. հոկտեմբերի 20-ին Ղուկասը Բաղեշի բնակչությանը գրում է.

«Բայց ի ծանրութեան էր օդային երկրիս. մանաւանդ զի յայժմ աշնան երկրացիքս ըստ մեծի մասին յիւանդացան. և սուրբ Աթոռոյս միաբանքն ի մեծաց մինչև ցփոքունս ոչ ոք մնաց առանց հիւանդութեան»[4]:

Շատ զոհեր է պատճառում բնակչությանը ժանտախտը, որի տարածման և պատճառած չարիքների մասին հանգամանորեն խոսվում է Մանուել Գյումուշխանեցու աշխատու-

1 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 457բ:

2 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 463ա: Մի այլ տեղում Ղ. Կարնեցին նշում է զինվորների ավելի մեծ քանակ. «Բայց և խանն արձակեցեալ ի Խոյու խանէն (որ սարդար է այժմ և աՌ ձիաւոր խնդրէ յերկրէս) դեռ ոչ գայ» (Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 461ա):

3 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 463ա:

4 Դիւան, հատ. Դ, էջ 659:

թյան մեջ[1]։ Այնտեղ պատմվում է, որ 1797 թ. Թիֆլիսում երևում և շատ տարածվում է գտնում ժանտախտը. քաղաքի բնակչությունը փախչում է անտառները։ Վրաց թագավորի որդի Գևորգին, ժանտախտի առաջն առնելու համար, Ղուկաս կաթողիկոսից խնդրում է ուղարկել Էջմիածնում պահվող գեղարդը, որին այն ժամանակ սնահավատ բնակչությունը վերագրել էր ծանր հիվանդություններ բուժելու հատկություն։ Կաթողիկոսը, չվստահելով գեղարդը հեռացնել վանքից, Թիֆլիս է ուղարկում, այսպես կոչված, ս. Հակոբի աջը։

Նույնպես ժանտախտ է երևում նաև Էջմիածնում։ 1797 թ. գարնանը մեռնում են Ներսես, Ղուկիանոս և Գրիգոր եպիսկոպոսները, Գրիգոր վարդապետը ու շատ ուրիշներ։ Սկզբում կարծում էին, թե դա ուրիշ հիվանդություն է և այն ժամանակվա հնարավորության սահմաններում ախտականխիչ միջոցներ ձեռք չեն առնվում։ Շատ չանցած հիվանդությունը տարածվում է Վաղարշապատ գյուղում և հետո ամբողջ Երևանի խանության մեջ։

Երբ պարզվում է, որ այդ հիվանդությունը ժանտախտ է, Էջմիածնի վանականները փորձեր են անում կանխել նրա առավել տարածումը։ Այս նպատակով Դավիթ Էնգերցի եպիսկոպոսը հիվանդներին հեռացնում է Վաղարշապատ գյուղից և ուղարկում մի առանձին վայր։ Այնտեղ հավաքվում է քառասուն ընտանիք, սահմանվում է կարանտին՝ արգելվում է գյուղացիներին մտնել վանքը, իսկ վանականներին՝ գյուղը։ Պատմվում է, որ մի երիտասարդ սարկավագ խնդրում է թույլ տալ իրեն գնալու գյուղ՝ իր հարազատներին տեսնելու համար։ Նրան թույլ են տալիս, բայց պայմանով, որ նա մինչև հիվանդության անցնելը չվերադառնա վանք։ Սարկավագը գնում և մեռնում է իր ընտանիքի հետ[2]։ Ժան-

[1] Մանուել Գյումուշխանեցի, Յաղագս մահտարաժամի որ է յերկիրն Թիֆլիզայ և յէջմիածին և ի գիւղս Վաղարշապատ (տե՛ս Մատենադարան, Արխիվային բաժին, Աղ. Երիցյանի անձնական արխիվ, թղթ. 156, վավերագիր 142)։

[2] Նույն տեղում, էջ 2ա։



տախտը օրեցօր սաստկանում էր և այդ պատճառով արտագաղթի վտանգ է ստեղծվում։ Ղուկասը 1798 թ. նոյեմբերին Գևորգի արքայազնին գրել է.

«Իսկ յետոյ ի յերկրիս մերում և ի մերձակայ գիւղս մեր իսկ երեւեցաւ ժանտախտն, որ զքանի տունս գրեթէ վերջացոյց։ Եւ թէպէտ այլովք սրբութեամբք և մասամբք թափոր առնել տուաք, սակայն ի մայիսէ մինչև ցյունիսի մէջն յարաժամ թախանձելով զմեզ անհանգիստ արարին և ահն եղին առհասարակ տարագիր լինիլ»[1]։

Կաթողիկոսը Գրիգոր վարդապետին կարգադրում է գեղարդը տեղափոխել Վաղարշապատ գյուղի եկեղեցին, որից հետո գյուղի բնակիչները՝ հայ թե մահմեդական, գալիս են եկեղեցի, հավաքվում են ժանտախտով հիվանդացածները և խառնվում առողջներին։ Մ. Գյումուշխանեցին գրում է, թե գեղարդը, մնալով եկեղեցում մինչև հաջորդ օրվա վերջը, լիովին բուժում է մարդկանց և հիվանդությունն անցնում է[2]։ Պարզ է, որ գեղարդը չէր կարող բուժել մարդկանց, ընդհակառակը, նրան երկրպագելու և նրանից փրկություն հայցելու եկած մարդկանց մեջ հիվանդների առկայությունը նպաստել էր հիվանդության տարածմանը և Մ. Գյումուշխանեցին, միանգամայն հասկանալի պատճառներով, հակառակն է ուզում հավատացնել։

1797 թ. նոյեմբերի 8-ին Մահմեդ խանը հասնում է Երևան[3]։ Արարատյան երկրում ստեղծվում է խաղաղ վիճակ, որը, սակայն, երկար չի տևում։ 1798 թ. գարնանը սկսվում են նոր կռիվներ։ Լուր է գալիս, թե Խոյի Ջաֆարղուլի խանը, որ ինչ-ինչ պատճառներով թշնամացել էր շահի հետ, կամենում է արշավել Երևանի խանության վրա։ Ջաֆարղուլի խանին էր միացել նաև Ուրմիայի խանը։

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 429բ։

[2] Մատենադարան, Արխիվային բաժին, Աղ. Երիցյանի անձնական արխիվ, թղթ. 156, վավ. 142, էջ 2ա։

[3] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 464ա։

Երևանի Մահմեդ խանը, որ չէր վստահում Ջաֆարղուլիին և աշխատում էր Ֆաթալի շահին իր հավատարմությունը ցույց տված լինել, որոշում է դիմադրել նրան: Նա Ղազախից զորք է բերում, բայց նրա մի մասը Նախիջևանի մոտ պարտություն է կրում Ջաֆարղուլիի կողմն անցած նախիջևանցիներից: Դրանից հետո Մահմեդ խանը փակվում է բերդում[1]: Արարատյան երկրում սկսվում է մեծ իրարանցում:

«...ի սուրբ զատկի շաբաթին իսկ,— պատմում է Ղ. Կարնեցին,— ձայն հնչեցաւ, թէ Ջաֆարղուլի խանն գայ ի վերայ Երևանու, վասն որոյ խռովեալ և շփոթեալ սոցա անկան զմիմեամբք և ժողովեցին զբնակիչսն երկրիս այսր և անդր...»[2]:

Արշավանքը տեղի չի ունենում. մարդիկ վերադառնում են իրենց տեղերը, բայց մեկ ամիս հետո նորից խուճապ է սկսվում. «...դարձեալ աշէկոծեցան սաստիկ քան զառաջինն»[3]: Բայց այս անգամ էլ Ջաֆարղուլի խանը չի կարողանում հարձակվել Երևանի վրա, որովհետև նրա ապստամբությունը ճնշելու համար Թավրիզ էր եկել Սուլեյման սարդարը: Այդ բանը ստիպում է Ջաֆարղուլիին հարած իշխողներին անմիջապես հեռանալ նրանից: Մենակ մնալով, խանը վերցնում է իր ընտանիքը և հեռանում Վանի կամ Բայազետի կողմերը: Խոյի հազարավոր բնակիչներ, վախենալով արշավողների դաժանությունից, նույնպես տեղափոխվում են Թուրքիա:

Երևանի խանը սրանից հետո է միայն հնարավորություն ստանում բերդից դուրս գալու և զորքով գնում է Նախիջևան՝ սարդարին դիմավորելու[4]:

1798 թ. հունիսին Ֆաթալի շահը Սուլեյման սարդարի և Հուսեյնղուլի խանի հետ գալիս է Խոյ: Երևանի խանը գնում է նրա մոտ: Մինչ այդ նա կաթողիկոսին առաջարկում է նվերներ ուղարկել շահին: Վերջինս հրաժարվում է, բայց հե-

1 Մատենադարան, ձեռ. № 2922, էջ 43ա:

2 Նույն տեղում, ձեռ. № 1501, էջ 468բ:

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում:



տո տեղի է տալիս: Շահը նվիրատար Հովհաննես վարդապետին ետ է ուղարկում «ֆերմանով» և «խիլայով»[1]:

Ֆաթալի շահը նպատակ ուներ արշավել Վրաստանի վրա և այն կրկին ենթարկել պարսից պետությանը:

Վրաստանում այդ ժամանակ արդեն մեռել էր Հերակլ Բ-ը, նրան հաջորդել էր որդին՝ Գիորգի ԺԲ-ը[2]: Երկրում խառնաշփոթ վիճակ էր և Հերակլի որդիների միջև պայքար էր գնում իշխանության համար:

1798 թ. հունիսի 7-ին Ֆաթալի շահը Խոյից նամակ է ուղարկում Գիորգի թագավորին, որով պահանջում է հնազանդվել իրեն և պատանդներ ուղարկել: Հակառակ դեպքում սպառնում է ավերել Վրաստանը: Այս մասին Հ. Արղությանը 1798 թ. օգոստոսի 20-ին գրել է.

«...այժմ Բաբախանն մարդ է առաքեալ առ Գիօրկի Արքայն մեր, թէ մէկ որդիդ, մէկ դուստրդ և 10 թուման եթէ ոչ տաս, քանդելոց եմ զերկիրն քո, վասն որոյ՝ երկիրն ամենայն սասանեալ կայ, և արքայն գրեալ է սաս և օգնութիւն խնդրեալ, այլ տակաւին պատասխան չկայ»[4]:

Վրացիները շահի նամակը ուղարկում են գեներալ-լեյ-

1 Մատենադարան, ձեռ. № 1501, էջ 469բ:

2 Ղ. Կարնեցու նամակներից երևում է, որ Երևանի խանը Գարսկաստանից վերադառնալուց հետո թշնամաբար էր տրամադրված Վրաստանի նկատմամբ: Կաթողիկոսը անգամ չի կարողանում ցավակցություն ուղարկել Հերակլի մահվան կապակցությամբ, որովհետև կասկածներ կարող էր հարուցել խանի մոտ: Նա այդ կարողանում է անել, ինչպես նաև Գիորգի ԺԲ-ի թագադրվելը շնորհավորել, երբ խանը մարդ է ուղարկում Վրաստան: Ղ. Կարնեցին 1798 թ. ապրիլի 24-ին Գիորգի թագավորին գրում է. «...ի յառաջընթաց ամսեանն, որ էր սաբեզլուին այլազգեաց, ի գնալն մեր յերևան, գժնդակ և կատաղի ղզլբաշացն զինչ անցոյց ընդ գործակալն մեր Դաւիթ վարդապետն, բարկանալով թէ՝ խարէութեամբ վարիք առ պետն մեր և խորհուրդն ձեր ընդ վրաց է, և այլն: Արդ, եթէ անզգուշաբար համարձակ գրութիւնք և մարդկան երթևեկութիւնք լինիցէին ընդ մէջ մեր և ձեր յայայտի վտանգաւոր ժամանակս, զի՞նչ չարիս անհնարինս ածէին ի վերայ մեր և սրբոյ տանս» (Մատենադարան, ձեռ. № 2922, էջ 40ա—40բ):

3 Մատենադարան, ձեռ. № 1501, էջ 473ա:

Նույն տեղում, ձեռ. № 2951, էջ 308բ:

տեսնանա Ի. Ի. Մարկովին և Պետերբուրգում վրաց դեսպան իշխան Գ. Ճավճավաձեին՝ հանձնարարելով վերջինիս օգնություն խնդրել ռուսաց կառավարությունից:

Բարեբախտաբար, այս ժամանակ Ֆաթալի շահը հնարավորություն չի ունենում Վրաստանի վրա արշավելու. նա տեղեկություն է ստանում, թե իր եղբայրը Շիրազում և Սպահանում զորք է հավաքել ու ապստամբել իր դեմ, ուստի թողնում է Խոյը և զորքով գնում նրա դեմ: Շահը շտապով իր մոտ է կանչում Սուլեյման սարդարին: Վերջինս Խոյը թողնում է Ջաֆարղուլիի եղբայր Հուսեյն խանին, իսկ Երևանը՝ Մահմեդ խանին, ինքը գնում է շահի մոտ: Մահմեդ խանը, որ մինչ այդ շահից կարողանում է փողով գնել Մակուի սուլթանի որդի Հասան խանին, որը Երևանում տիրել էր մեկ ամիս, կուրացնում է նրան, ուղարկում Երևան, հետո ինքը ևս գնում է այնտեղ ու փակվում բերդում[1]: Նրա բացակայության ժամանակ Արարատյան երկրում նորից ակտիվացել էին ավազակները: Ղ. Կարնեցին 1798 թ. հուլիսի 10-ին գրել է.

«...երկրիս իշխողն գնացեալ գոլով առ շահն, ամենայն ուսադակք կատաղեալ... վասն որոյ գաստուստ յայլ շէնս գնացող ոչ լինի, զի թէ գնան, սուսերօք և հրացանաւ վարեն»[2]:

Թուրքիա հեռացած Ջաֆարղուլի խանը շահի հեռանալու մասին լսելուց հետո, թուրքերից և քրդերից զորք է հավաքում և գալիս պաշարում է Խոյը: Հուսեյն խանը օգնություն է խնդրում Մահմեդ խանից: Ղ. Կարնեցին գրում է.

«Վասն որոյ և սա յամենայն բնակչաց երկրիս զօրաժողով արարեալ գնալ յօգնութիւն նմա ընդդէմ Ջաֆարղուլեայն»[3]:

Այս զորաժողովները, կռիվներն ու արշավանքները չափազանց մեծ վնասներ են հասցնում Արարատյան երկրի բնակչությանը: Ղուկասը գանգատվում է Մինաս վարդապետին. «Արդ՝ յայսցանէ եղելութեանց կարես իմանալ զբազմապատիկ վնասս թշուառալից երկրացս և զաստապանս բնակչացն և զմերս անմիջոց նեղսակրութիւն...»[1]:

1 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 471բ—472ա:

2 Նույն տեղում, էջ 422ա:

3 Նույն տեղում, էջ 472ա:



Երևանի խանը, որ գնում էր Խոյին օգնելու՝ ընդդեմ Ջաֆարղուլի խանի, սկզբում ուղղվում է Բայազետի կողմը. «...իբր փաշայի համակամութեամբն գնալ ի Խոյ. և յոչ արդիւնաւորել բանին գնաց ի Շարուր և ոչինչ վճարեալ դարձաւ ի բերդն»[2]:

Խոյը շարունակում էր պաշարված մնալ և սաստիկ ավերվում էր: Ժանտախտը հնձում էր նրա պաշտպանների շարքերը: Այս մասին 1798 թվականի հոկտեմբերի 18-ին Ղուկասը գրում է.

«...Ջաֆարղուլին դեռ պաշարեալ ունի զԽոյ. այն երկիր միայն էր մնացեալ ի շինութեամբ, այն ևս յայսմ ամի խանգարեցաւ և ի բազում տեղիս ևս ժանտախտն տարակուսեցուցանէ զբնակիչսն...»[3]:

Պաշարումը տևում է բավական երկար: 1798 թ. դեկտեմբերի վերջին Ղ. Կարնեցին Գիորգի թագավորին գրում է, թե ինքը չի կարողանում մարդ ուղարկել Պարսկաստանի հայերի մոտ, որովհետև ճանապարհները փակված են և Ջաֆարղուլի խանը շարունակում է Խոյի պաշարումը: Նա հայտնում է նաև, որ Թավրիզում ժանտախտ կա և հայերը դրա երկյուղից հեռացել են քաղաքից[4]:

Դեկտեմբեր ամսին Սուլեյման սարդարը և Խոյի Հուսեյն խանը մեծ զորաբանակով վերադառնում են Խոյ և այնտեղից հալածում Ջաֆարղուլի խանին: Երևանի խանը շահից ֆերման է ստանում Երևանում իշխելու մասին:

Ղ. Կարնեցին գրում է. «...տեղւոյս իշխողն այժմ ֆերման ընկալաւ ի շահէն՝ ի բերդն նստիլ, բայց զանազան հարկապահանջութեամբք տառապին բնակիչք երկրիս»[5]:

Երևանի խանից շահը պահանջում էր 300 000 ռուբլի

1 Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 472ա:

2 Նույն տեղում, էջ 473ա:

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում, էջ 477ա:

5 Նույն տեղում, էջ 483ա:

դրամ և 12 նշանավոր ընտանիքներ որպես պատանդ: Այս մասին Գիորգիի կարգադրությամբ Դավիթ արքայազնը 1799 թ. փետրվարի 3-ին հայտնում է իշխան Ճավճավաձեին: Փետրվարի 3-ին Երևանից եկել էր վաճառական Զաղատաշվիլին և բերել իր հետ Երևանի խանի նամակը, որով վերջինս հայտնում է Ֆաթալի շահի պահանջների մասին և վերջում ավելացնում, թե շահը նույն թվականի գարնանը մտադիր է գալ Սևանա լճի մոտ[1]:

Ինչպես տեսնում ենք, շահի պահանջները և սպառնալիքները Երևանի խանին ստիպում են կրկին օգնություն խնդրելու վրաց թագավորից: Շահի սպառնալիքը նպաստում է Երևանի խանին հաշտվելու Ջաֆարղուլի խանի հետ, որը Խոյի Հուսեյնղուլի խանի մահից հետո դարձել էր Խոյի տերը և աշխատում էր իր հավատարմությունն ու նվիրվածությունը ցույց տալ վրաց թագավորին՝ ակնկալելով նրանից օգնություն ընդդեմ Ֆաթալի շահի[2]:

1799 թ. ապրիլի 11-ին Թիֆլիս է հասնում Ջաֆարղուլի խանի սուրհանդակը, որը հայտնում է, թե Ֆաթալի շահը շուտով գալու է, և Խոյի համար օգնություն է խնդրում վրացիներից[3]:

Նույն այս դեպքերի մասին 1799 թ. ապրիլի 19-ին Ղուկասը գրում է, թե Ջաֆարղուլի խանը ապստամբվել է շահի դեմ և լուրեր կան, որ վերջինս գալիս է Խոյի վրա. «...իսկ մեր իշխողն ես զապստամբութեան նշանս երևեցուցանիցէ. և երկրիս բնակիչքն ի նեղութեանց բնաւ պակասութիւն չունին...»[4]:

1799 թ. կեսերին Սուլեյման սարդարը գահաժառանգ Աբբաս Միրզայի հետ գալիս է Թավրիզ ու այնտեղից՝ Սալմաստ, պատրաստվելով արշավել Խոյի և Երևանի խաների վրա: Ջաֆարղուլի խանը, իմանալով այս մասին, Խոյի ողջ բնակչությունը տեղափոխում է Բայազետ և ամայացնում երկիրը:

[1] Грамоты...., т. II, вып. II, стр. 202.

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Մատենադարան, ձեռ. № 2922, էջ 56բ:



Խոյում նա կայազոր է թողնում՝ բերդը թշնամուց պաշտպանելու համար, իսկ ինքը զորքով, որին միանում են նաև Երևանի խանի զորքն ու քրդերի ջոկատները, գնում է գահաժառանգին ընդառաջ: Տեղի է ունենում ճակատամարտ, որի ժամանակ երևանցիների և խոյեցիների միացյալ զորքը պարտություն է կրում ու նահանջում: Աբբաս Միրզան գրավում է Խոյը: Ջաֆարղուլի խանը ետ է դառնում և Բայազետ ուղարկված խոյեցիներին տեղափոխում Երևանի խանության սահմանները և ինքը իր ընտանիքով գալիս է Էջմիածին՝ Երևանի խանի հետ իրենց հետագա գործունեության մասին պայմանավորվածություն ձեռք բերելու համար: Այս նույն ժամանակ Սուլեյման սարդարը սուրհանդակ է ուղարկում Երևանի Մահմեդ խանի մոտ և առաջարկում «գիր ինն եղանակաւ» հնազանդություն հայտնել իրեն: Մահմեդ խանի տրամադրությունների մասին Ղուկասը գրում է. «...կարելի է, թէ հնազանդեսցի և մրրիկն անցցէ, բայց դեռ չէ հաստատ»[1]:

Ջաֆարղուլի խանը իր ընտանիքով և ավելի քան 700 մերձավորներով տեղավորվել էր Էջմիածնի վանքում և շրջակայքում: Նրանք այնտեղ մնում են 14 օր և ուզում էին տեսակցել Երևանի խանի հետ, բայց դա չի հաջողվում: Թեպետ Մահմեդ խանի քույրը երևանցի մի քանի մեծամեծների հետ երկու անգամ գալիս է Էջմիածին՝ Ջաֆարղուլի խանի հետ շահին դիմադրություն կազմակերպելու մասին խորհրդակցելու, բայց ոչինչ չի ստացվում[2]: Բանն այն է, որ Երևանի խանը այլևս վախենում էր դիմադրելու շահին:

Ջաֆարղուլի խանը համաձայնություն չհասնելով Երևանի խանի հետ, դուրս է գալիս Էջմիածնից և գնում Մաստարա գյուղը, իսկ հետո բանակ է դնում Սև ջրի մոտ: Այն ժամանակ, երբ նա գտնվում էր Էջմիածնում, Աբբաս Միրզայի և Սուլեյման սարդարի կողմից մարդ էր ուղարկվել Երևանի խանի և կաթողիկոսի մոտ: Բանակցություններ են գնում

[1] Մատենադարան, ձեռ. № 2922, էջ 62ա—62բ:

[2] Նույն տեղում, ձեռ. № 4501, էջ 498բ:

խանությունը կրկին շահին հպատակեցնելու և կաթողիկոսից նվերներ վերցնելու մասին: Շատ չանցած, Ֆաթալի շահի կողմից սուրհանդակներ են ուղարկվում, որոնք Մահմեդ խանին հրավիրում են շահի մոտ: Վերջինս վախենում էր գնալ և հրաժարվում է[1]:

Դրանից հետո լուր է գալիս, թե Աբբաս Միրզան և սարդարը Խոյում կայազոր թողնելով գնացել են Թավրիզ՝ Թեհրան վերադառնալու համար[2]: Այս մասին լսելով, Ջաֆարղուլի խանը Սև ջրի ափից գնում է Երասխաձոր և ամրանում Բարդուղ (Թաքալթլու) լեռան վրա եղած մի բերդում, որը Ղուկասի ասելով «ի ամմկաց կոչեցեալ Քեօր օղլուի»: Յոթ ամսից հետո նա իր մարդկանցով անցնում է Երասխը, բնակություն է հաստատում Թալիշում և իր ժողովուրդը տեղավորում Արագածի ստորոտի գյուղերում[3]: Հետո Ջաֆարղուլի խանը ամուսնությամբ բարեկամանում է Բայազետի փաշայի հետ, նրա օգնությամբ քրդերից զորք է հավաքում և գրավում է Մակուն[4]:

Վերևում տեսանք, որ Ղ. Կարնեցին 1797 թ. նամակ էր գրել Պավել Ա կայսրին և հրովարտակ խնդրել: Վերջինս 1798 թ. փետրվարի 26-ին բավարարում է նրա խնդրանքը: Կայսերական հրովարտակում, որի բնագիրը պահպանված է[5], ասվում է, որ Պավել Ա-ը իր նախորդների՝ Պետրոս Ա-ի, Եկատերինա Ա-ի և Եկատերինա Բ-ի նման հայոց կաթողիկոսին, հայ մելիքներին, յուզբաշիներին ու կառավարիչներին, այլև «ողջ հայ ազնիվ ժողովրդին» և առանձնապես ռուսական կայսրության սահմաններում բնակվող հայերին, վերցնում է

[1] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 498բ:

[2] Նույն տեղում, ձեռ. № 2922, էջ 65բ:

[3] Նույն տեղում, ձեռ. № 4501, էջ 498բ:

[4] Դիւան, հ. Ա—Բ, էջ 40—42:

[5] Մատենադարան, Արխիվային բաժին, Ռուսական ցարերի և Նապոլեոն Ա-ի հրովարտակները, № 2: Պատճեն տե՛ս Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 8, վավերագիր 9: Հրատարակվածը տե՛ս Полное собрание законов Российской империи с 1649 года, том XXV (1798—1799), СБП, 1830, стр. 108—109 (№ 18.402).



իր կայսերական ողորմածության և պաշտպանության ներքո և թույլ է տալիս կաթողիկոսի հոգևոր և եկեղեցական իշխանությունը Ռուսաստանում հաստատված հայ ազգաբնակչության նկատմամբ[1]:

Կանցլեր իշխան Բեզբորոդկին 1798 թ. դեկտեմբերի 2-ին Ղ. Կարնեցուն գրած իր նամակով հայտնում է, որ հրովարտակի հետ միասին կայսրը թանկարժեք նվերներ է շնորհել կաթողիկոսին, և որ հրովարտակ տալու գործում ինքն էլ որոշ դրական գործ է արել[2]:

Այդ նվերների մասին տեղեկություններ կան նաև Ղուկասի գրություններում: Ղ. Կարնեցին հետևյալ ձևով է նկարագրում դրանք.

«...զպնակէ մի ոսկէկազմ, ընդելուզեալ անդամանդ և զմրուխտ ակամբք պատուականօք, և ի մէջին տեղւոջ կանաչագեղ եաշմ՝ զարմանալի քանդակուածով սքանչելի պատկերի փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»[3]:

Պավել Ա-ի հրովարտակի պատճեն իշխաններ Բեզբորոդկին և Ալ. Կուրակինը ուղարկում են ռազմական նահանգապետներ՝ կոմս Գուդովիչին (Եգորևսկ), կոմս Կախովսկուն (Նովոռոսիյսկ), Բեկլեշևին (Կամենեց-Պոդոլսկի) ու Արշենևսկուն (Աստրախան) և հատուկ հրամանագրով կարգադրում կենսագործել այն[4]:

Նույն օրը նրանք հրամանագիր են ուղարկում նաև Կ. Պոլսում ռուսական արտակարգ և լիազոր դեսպան Տամարային և կարգադրում հնարավոր օգնություն ցույց տալ և պաշտպանել Ղուկաս կաթողիկոսի կողմից Թուրքաց մայրաքաղաքն ուղարկված հայ հոգևորականներին[5]:

[1] Մատենադարան, Արխիվային բաժին, Ռուսական ցարերի և Նապոլեոն Ա-ի հրովարտակները, № 2:

[2] Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. 8, վավերագիր 9:

[3] Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 444բ:

[4] Մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. 8, վավերագիր 8բ:

[5] Նույն տեղում, թղթ. 8, վավերագիր 15:

Ղ. Կարնեցին, ստանալով կայսերական հրովարտակը[1], 1799 թ. նոյեմբերի 15-ին նամակ է ուղարկում Պավել Ա-ին, որով շնորհակալություն է հայտնում հրովարտակի ու նվերների համար և խնդրում է «...զի ողորմական քաղցր խնամոցդ տէրութիւն, զոր գթաօրէն զեղուք ի վերայ մեր և ազգի մերոյ, անհուազ անցիցէք ամենայնս ողորմածութեամբդ»[2]:

Ղ. Կարնեցին շնորհակալություն էր հայտնում կայսրին, որ, ոչ միայն ռուսահայերին, այլև մյուս հայերին ևս օգնության խոստումներ է տվել «...նորայոյս յայսմ կողմանց դիմելոցն ևս խոստացեալ էք զխոստումն տիրաբար այցելութեանս»[3]:

Պավել Ա-ի կողմից հայերին վերահիշյալ հրովարտակի շնորհումը ցույց է տալիս, որ նա էլ իր նախորդների նման ձգտում էր ապահովել ռուսական կառավարությանը իրենց արհեստներով ու առևտրով շատ օգուտներ տվող ռուսահայերի անվտանգությունը, այլև իր հովանավորությունը տարածել նաև Անդրկովկասում բնակվող հայերի վրա, որոնք միշտ էլ այդ շրջաններում հանդիսացել են ռուսական պլանների իրականացմանը աջակցող և օժանդակող տարրեր:

Քանի որ պարսկական արշավանքի վտանգը դեռ կար, ռուսական կառավարությունը 1799 թ. նոյեմբերի վերջերին, գեներալ Լազարևի հրամանատարությամբ զորք է ուղարկում Թիֆլիս: Այնտեղ է գալիս նաև վրաց թագավորի մոտ ռուսական կառավարության լիազոր-մինիստր Կովալենսկին, որին հանձնարարված էր արգելք հանդիսանալ պարսկական նոր արշավանքին: Կովալենսկին 1800 թ. փետրվարի 16-ին նամակ է ուղարկում Ֆաթալի շահին, որով հայտնում է, թե Վրաստանը գտնվում է Ռուսաստանի հովանավորության տակ և ինքը հույս ունի, որ Պարսկաստանը չի դիպչի ոչ միայն

[1] Կաթողիկոսը ստանում է միայն նրա պատճեն, բնօրինակը մնում է Հ. Արղության մոտ, որը «...ոչ հաւատալով աննշան անձանց, խոստանայ ի ձեռն նշանաւոր և հաւատարիմ մարդոյ առաքելս», գրել է Ղ. Կարնեցին (Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 115բ):

[2] Նույն տեղում, էջ 115ա:

[3] Նույն տեղում:



նրա, այլև լեռնական այն իշխողների շահերին, որոնք ընդունել են ռուսական հովանավորությունը: Միևնույն ժամանակ Կովալենսկին նամակներ է ուղարկում Գանձակի և Ղարաբաղի խաներին, որպեսզի նրանք համոզեն Շիրվանի, Շաքիի, Երևանի և Ավարայի խաներին մտնել ռուսական հպատակության տակ[1]:

Ֆաթալի շահը չի ընդունում Կովալենսկու ուղարկած մարդուն և շարունակում է արշավանքի պատրաստությունները: Պարսիկները մտածում էին արշավանքն իրագործել հետևյալ կերպ. Նախիջևանի մոտ անցնել Արաքսը և իրենց զորքերը բաժանել երկու մասի, որոնցից մեկը պետք է գնար Ղարաբաղ—Գանձակ ուղղությամբ՝ այնտեղի խաներին, որ հպատակություն էին հայտնել շահին, ուժեղացնելու համար, իսկ հետո շարժվելու էին Շամախու վրա պատժելու Մուստաֆա խանին: Մյուս ջոկատը պետք է գնար Երևան և հետո՝ Թալիշ, որպեսզի Թալիշի խանին անջատեր իր դաշնակից Շամախու խանից: Ֆաթալի շահը մտադիր էր գրավել նաև Բաքուն: Այնուհետև, պարսկական զորքերը պետք է հավաքվեին Սևանա լճի մոտ, ուր գալու էին նաև Ղարաբաղի ու Գանձակի խաները՝ խորհրդակցելու Վրաստանի դեմ պատերազմական գործողություններ ծավալելու մասին[2]: Բայց այս պլանը չիրականացավ և արշավանքը ընթացավ այլ կերպ:

1800 թ. գարնան վերջերին պարսից զորքերը Աբբաս Միրզայի և Սուլեյման սարդարի հրամանատարությամբ դուրս են գալիս Թավրիզից՝ Երևանի վրա արշավելու համար: Այս մասին միաբանները գրել են. «...վերստին բորբոքեցաւ բոցն պարսկական բռնութեան յայսկոյս: Յորմէ զարհուրեալ ամենայն բնակիչք երկրիս, իշխօղն ամրացաւ ի գղեակն և այլքն ամենեքեան տարագիր եղեն յայգս և յայլ կողմնս»[3]:

Բնականաբար, Արարատյան երկրում սկսվում է մեծ իրարանցում: Նորից ամայացվում են գյուղերն ու ավանները, կրկին բնակչության տներն ու դաշտերը, արտերն ու այգի-

[1] Н. Дубровин, История войны..., т. III, стр. 290—291.

[2] Նույն տեղում, էջ 294—295:

[3] Մատենադարան, ձեռ. № 2922, էջ 73ա:

ները թողնվում են բախտի քմահաճույքին: Միաբանները գրում են, որ իրենց արտերի կեսը հնձեցին օտարները, իսկ մյուս կեսը ամբակահար եղավ:

Մահմեդ խանը մի զորախումբ է ուղարկում Էջմիածնի պարիսպները ամրացնելու և պահպանելու համար: Դրանից առաջ Էջմիածնում 1799 թ. դեկտեմբերի 28-ին մեռել էր Ղուկաս կաթողիկոսը և պատրաստություններ էին գնում նոր կաթողիկոս ընտրելու համար:

Էջմիածին ուղարկված զինվորները ոչ թե օգնում են վանքի պաշտպանության գործը կազմակերպելուն, այլ սկըսում են թալանել վանքի ունեցվածքը: Միաբանները դրանց մասին գրել են. «Բայց եկեալ զինուորքն աւազակք էին, քան թէ պահակք»[1]:

Միաբանները շարունակ դժգոհում էին նրանցից ու մի օր էլ այդ զինվորները վանականներին դուրս են հանում վանքի պարիսպներից և հայտարարում, որ նրանք թող գնան Կարս կամ Երևան, իսկ իրենք պարիսպները առանց նրանց էլ կարող են պաշտպանել: Միաբանները գնում են խանի մոտ և կաշառքով համոզում նրան վանքը ազատելու զինվորներից[2]:

Մինչ այդ, Աբբաս Միրզայի զորքը Թավրիզից ուղղվել էր Մակուի վրա: Ջաֆարղուլի խանը լավ դիմադրում է, Աբբաս Միրզան ստիպված հաշտություն է կնքում նրա հետ, առնում պատանդներ և Նախիջևանի վրայով շարժվում դեպի Երևան[3]:

Նրա զորքերը, որ 7—10 հազար մարդուց էին բաղկացած, շուտով անցնում են Արաքսը և մտնում Երևանի խանության սահմանները: Առջևից ուղարկվում են չորս հազար հոգի՝ Երևանի բերդը գրավելու և Վրաստանի մահմեդականներին իրենց միացնելու համար:

Էջմիածնի վանքի մի քանի միաբաններ 1800 թ. հուլիսի 1-ին ստեղծված վիճակի մասին գրել են Բալադեո-

[1] Մատենադարան, ձեռ. № 2922, էջ 73ա:

[2] Նույն տեղում էջ 73բ:

[3] АКАК, т. I, стр. 107.



«...կերեկոյին զօրք եհաս թէ առ ափն Երասխայ էլին եւ զարկեալ և ճանապարհքն լի են աւազակօք... մեք որպէս ի հնոցի տագնապիմք ոչ միայն ի յարուցելոցն պարսից, այլ և ի յԵրևան ամրացելոցն երկնչիմք»[1]:

